11326

1927
3 (02)
3И-47

3-76
3-76
3(02)
34-47
25 SEP 2006
09 DEC 2009

ԸՍՏ ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿՈՒ

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Հավելումներով

Թարգմ. Ս Ի Մ Ա Կ

1077
15790
4188

ՊԵՏՀՐԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ԵՐԵՎԱՆ — 1927

11326

09 .07. 2013

Գրալիազոր 232բ. Հ. 567. Տիրաժ 5000.

Պետհրատի 2-դ տպարան Յերեվանում—596

1076
40

ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ—ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչի՞ մասին է գրույցը

Այս գրույցի ընթացքում մենք կլուծենք այն հարցը, թե ով և ինչպես է կառավարում մեր յերկիրը։ Կիմանանք, թե ինչպես ամեն մի բանվոր ու գյուղացի մասնակցում է պետության կառավարությանը։ Կպարզենք, թե Խորհուրդներն ինչ աշխատանք են կատարում, և ինչպես պետք է ավելի լավ դնել աշխատանքը, մոտեցնել նրանց աշխատավոր մասսաներին։

Մեզնում ո՞ւմ է պատկանում իշխանությունը

Սկսած տեղական, ամենախուլ փոքրիկ գյուղից մինչև բարձրագույն պետական իշխանությունը, մեր յերկրում վողջ իշխանությունը պատկանում է բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների Խորհուրդներին։ Այդ Խորհուրդներն ընտրում է ինքը ազգաբնակությունը, և նրա առջև պատասխանատու յեն իրենց աշխատանքի համար։

Բայց ամբողջ ազգաբնակությունը Խորհուրդ ընտրելու իրավունքից չի օգտվում։ Միայն բանվորներն ու գյուղացիները, նրանք, վորոնք իրենց ապրուստի միջոցը հայթայթում են իրենց սեփական արտադրությամբ, հասարակականապես օգտակար աշխատանքով։ Գործարանատերերը, առևտրականները, տերտերներն ու ուրիշները, վորոնք վոչ-աշխատավորական արդյունքներով են ապրում, այդ իրավունքը չունեն։ Ամբողջ աշխարհում մեր յերկիրը միակն է, ուր իշխանությունը բանվորներին ու գյուղացիներին է պատկանում։

Ինչի՞ չէ ձգտում Խորհրդային իշխանությունը

Խորհուրդներն իշխանության գլուխն անցան 1917 թ. նոյեմբերին բանվորների ու գյուղացիների հաղթության հետևանքով։

Բանվորներն ու գյուղացիներն ինչու համար ստեղծեցին Խորհ. իշխանություն.

Վորպեսզի վերջնականապես ջախջախեն կալվածատերերի ու կապիտալիստների ընդդիմադրությունը, վոր դարերով ճնշել եյին աշխատավոր մասսաներին։

Վորպեսզի հականարված տան աշխատավորների բոլոր թշնամիներին, վորոնք ձգտում են վերականգնել հին կարգերը, վորոնք ձգտում են նորից ստրկացնել բանվորներին ու գյուղացիներին։

Վորպեսզի ամրապնդեն ամբողջ հողը բոլոր աշխատավորների ձեռքն անցնելը և հանձնեն օգտվելու նրան, ով նրա վրա աշխատում է, վորպեսզի օգնեն աշխատավոր գյուղացուն բարձրացնելու և ամրապնդելու իր տնտեսությունը։

Վորպեսզի պետության ձեռքն անցած գործարանները, գավոդները, հանքերը, յերկաթուղիներն այնպիսի բարձրության հասցնեն, վոր նպաստեն միլիոնավոր տառապողների կյանքի բարորությանը։

Վորպեսզի պաշտպանվեն ու ապահովվեն աշխատավորների նվաճած իրավունքներն ու ազատությունները, իրենց սեփական բախտի տերը լինելու իրավունքը, դեպի գիտությունը ձգտելու ազատ իրավունքը և այլն։

Այսպիսով Խորհրդային իշխանությունը ձգտում է, վոր շարունակ ավելացնի յերկրի բարորությունը, ամրապնդի և ընդլայնի ժողովրդական տնտեսությունը, միլիոնավոր յետամնաց գյուղացիական տնտեսությունները բարձրացնի և հասցնի խոշոր արդյունաբերության տնտեսության մակարդակին, բարձրացնի յերկրի կուլտուրական մակարդակը։ Հենց սրանով Խորհ. իշխանությունը մեզ մոտեցնում է այնպիսի հասարակության կառուցելուն, ուր ճնշողներ և ճնշվողներ չկան, ուր տերեր չկան, վորոնք աշխատավորների հաշվին են ապրում, ուր ժողովրդական ամբողջ տնտեսությունն ամբողջ հասարակության սեփականությունն է հանդիսանում։

Հենց դա յել սոցիալիզմն է։

Խորհրդային իշխանության կառուցվածքը

Գյուղերում, ավաններում, ստանիցաներում, մեստեչկաներում, աուլներում, ղշլաղներում, ուլուսներում, ագարակներում (զանազան տեղերի գյուղերն այսպես են կոչվում) ընտրում են Խորհուրդներ այն հաշվով, վոր ամեն մի հարյուր մարդուց մի պատգամավոր ընտրվի։ Յեթե գյուղը փոքր է, համենայն դեպս ընտրվում են Խորհրդի 3 անդամներ։ Պատգամավորներն ընտրվում են մի տարի ժամանակով։ Յեթե պատգամավորը լավ պաշտպանի բնակչության շահերը և ազնվաբար կատարի իր պարտականությունները, նոր ընտրություններին կարող են նրա ժամանակը յերկարացնել։ Խորհ. իշխանությունը շարունակ թարմանում է նոր ընտրություններով վերևից-ներքև։

Այնտեղ, ուր առաջ տեր ու տնօրեն եյին գավառապետները, պրիստավները, հրամայում եյին ուրյադնիկներն ու տանուտերները, այժմ իրենց ժողովրդի ընտրողներն են կառավարում։ Ամեն մի շրջանի գյուղխորհուրդները տարեկան մի անգամ հավաքվում են գյուղխորհուրդների շրջանային համագումարի։ Շրջանային այդ համագումարն ընտրում է շրջանային գործադիր կոմիտե։ Մինչև նոր համագումարը շրջանի իշխանությունը շրջգործկոմին է պատկանում։ Հենց այդ շրջանային համագումարները ներկայացուցիչներ են ընտրում Խորհուրդների գավառային համագումարի համար, այն հաշվով, վոր ազգաբնակության հազար հոգուց մի պատգամավոր ընտրվի։ Հենց այդ գավառային համագումարին պատգամավորներ են ուղարկում քաղաքային խորհուրդները և գործարանային բնակավայրերը, ամեն յերկու հարյուր ընտրող քաղաքացիներից մի պատգամավոր։

Գավառային համագումարը մի տարի ժամանակով ընտրում է իշխանության մշտական գործող մարմին—գավառային գործադիր կոմիտե։ Սովորաբար հենց այդ գավառական համագումարներում նահանգական համագումարի պատգամավորներ են ընտրում, գյուղերի 10 հազար ընտրող քաղաքացիներից մի պատգամավոր, և քաղաքների ու գործարանական վայրերի յեր-

կու հազար ընտրող քաղաքացիներից մի պատգամավոր։ Հիմնական Օրենքի (Սահմանադրության) համաձայն նահանգական համագումարի պատգամավորներ պետք է ընտրեն շրջանային և քաղաքային խորհուրդները, բայց վորովհետև դա շատ ավելի դժվար է ու ձգձգվող, ուստի ավելի պարզ ընտրություններ են լինում գավառական համագումարներում։

Խորհուրդների նահանգական համագումարն ընտրում է նահանգական գործադիր կոմիտե և պատգամավորներ Համառուսական համագումարի համար—նահանգի ազգաբնակության 125 հազար շնչից մի պատգամավոր։ Բացի դրանից խոշոր քաղաքների Խորհուրդներն էլ Խորհուրդների համառուսական համագումարին ուղարկում են իրենց պատգամավորները 25 հազար ընտրողին մի պատգամավոր։ Խորհուրդների Համառուսական Համագումարը—դա Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության ամենաբարձր իշխանությունն է։

Ճիշտ այս ձևով է կառուցված խորհ. իշխանությունը և մյուս խորհրդային հանրապետություններում՝ Բելոռուսիայում, Ուկրայնայում, Անդրկովկասյան հանրապետություններում, Ուզբեկստանում և Թյուրքմենստանում։ (Հայաստանում քանի վոր նահանգներ չկան, գավառների պատգամավորներն ուղղակի Համահայաստանյան Համագումարի պատգամավորներ են ընտրում, և այդ համագումարն էլ ընտրում է Հայ. Կենտ. Գործ. Կոմ.)։ Այդ բոլոր հանրապետությունները միանում են և կազմում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (Խ.Ս.Հ.Մ.)։ Խ.Ս.Հ.Մ. ամենաբարձր իշխանությունը Խորհուրդների Համամիութենական Համագումարն է։ Նա յե վճռում պետական բոլոր ամենակարևոր գործերը։ Յերկու համագումարների մեջ յեղող ժամանակը յերկիրը կառավարելու համար (համագումարը սովորաբար տարին մեկ անգամ է հավաքվում) Համագումարը հաստատում է Կենտրոնական Գործադիր Կոմիտե (Խ. Ս. Հ. Մ.-ի Կ. Գ. Կ.) իր նախագահությամբ և նախագահներով։ Պետական աշխատանքների զանազան ճյուղերը կառավարելու համար կան ժողովրդական կոմիսարիատներ։

Կոմիսարիատի գլուխն է ժողովրդական կոմիսարը, վորին նշանակում է Կ. Գ. Կ.-ն։ Բոլոր ժողովրդական կոմիսարները կազմում են խորհուրդ (Ժողկոմխորհ), վորի գլուխն է նախագահը։ Այսպիսով մեր ամբողջ իշխանությունը վերևից ներքև ընտրվում է. ընտրում են աշխատավորները կամ աշխատավորների պատգամավորները։ Բոլոր պաշտոնական պատասխանատու անձինք ընտրվում են։

Ու՞մից է կազմըված խորհուրդը

Սպիտակները, վորոնք ճաքում են զայրույթից՝ տեսնելով բանվոր-գյուղացու միությունը, պնդում են, թե մեզնում վոչ մի բանվորագյուղացիական իշխանություն չկա։ Ա՛յ, իբր թե այն ժամանակ եր լավ, յերբ այդ պարոն ազնվականները նստած եյին ժողովրդի վզին—ինչպես գավառապետներ, պրիստավներ, ազնվականների առաջնորդներ, մինիստրներ, նահանգապետներ, գեներալ նահանգապետներ և այլն։ Իսկապես, յեթե նայենք, թե ումից են կազմված մեր գյուղխորհուրդները, շրջգործկոմները, ապա հետևյալը կտեսնենք.

Իշխանության ամենաբարձր մարմնի—Կենտր. Գործ. Կոմիտեյի մեջ բավական մեծ քանակությամբ անկուսակցական գյուղացիներ կան։

Վերջերս, գյուղացիներին ավելի առաջ քաշելու համար—վոչ միայն իշխանության ստորին մարմիններում աշխատելու—մաճի գյուղացիների առաջքաշումն է կատարվում—գավառի, նահանգի և կենտրոնի հիմնարկություններում աշխատելու։

Բայց մեր իշխանությունը բանվորագյուղացիական է վոչ միայն իր կազմով, այլ և նրա համար, վոր պաշտպանում է բանվորների և գյուղացիների շահերը։

Ու՞մ շահերն են պաշտպանում խորհուրդները

Հիմնական Օրենքում կամ, ինչպես ասում են, Սահմանադրության մեջ գրված են այն իրավունքները, վոր նվաճեցին աշխատավորները հեղափոխությամբ։

Իշխանության բոլոր օրենքներն ու կարգադրությունները ձգտում են բարելավել աշխատավորների դրությունը, իշխանության բոլոր մարմինները պաշտպանում են բանվորների ու գյուղացիների շահերը։

Հին ժամանակ ու՞մ շահերն էր պաշտպանում բանակը։ Կալվածատերերի և կապիտալիստների շահերը։ Զինվորների, կազակների զորախմբերը խաղաղացնում էին գյուղացիական խռովությունները, քշում, ձերբակալում էին գործադուլավոր բանվորներին։ Իսկ մեր Կարմիր բանակը պաշտպանում է բանվորների ու գյուղացիների նվաճումները, կազմված է բանվորներից ու գյուղացիներից (վոչ-աշխատավորներին մենք զենք չենք վստահում), և նրա հրամանատարներն էլ բանվորներ ու գյուղացիներ են։ Հին ժամանակ ինչի՞ էին ծառայում վոստիկանությունը, դատարանը, բանտերը։ Նրա համար, վոր կալվածատիրական-կապիտալիստական կարգերը պահպանեն։

Իսկ մեզնում դատարանն ու միլիցիան պաշտպանում են բանվորների ու գյուղացիների հաստատած կարգերը։

Հին ժամանակ բարձրագույն դպրոցը փակ էր բանվորների ու գյուղացիների յերեխաների համար։ Սորին, գլխավորապես ծխական դպրոցներում բթացնում էին յերեխաների ուղեղը։ Աշխատում էին այն վոգով կրթել, վոր հնազանդ լինեն ցարին և տերտերին, հնազանդ լինեն այն կարգերին, «վոր աստված ինքն էր դրել»։ Իսկ մեզնում բոլոր դպրոցները բաց են բանվորների ու գյուղացիների համար, ու նրանք — այդ դպրոցներն աշխատում են պիտանի քաղաքացիներ պատրաստել, նոր կյանք կառուցելու ընդունակ մարդիկ տալ։ Կալվածատիրա-կապիտալիստական պետության ձեռքում յեկեղեցին էլ մի զենք էր.— նա ոգնում էր տերերին՝ աշխատավորներին, բանվորներին ու գյուղացիներին հնազանդ պահել։

Նույնիսկ լրագիրներն իր ժամանակին ծառայում էին աշխատավորներին բթացնելու համար։ Իսկ այժմ լրագիրները մեր աչքերը բաց են անում տեսնելու ամեն անցուդարձ, ոգնում են պայքարելու մեր թերությունների դեմ, ոգնում են բանվորներին ու գյուղացիներին՝ բարելավել իրենց կյանքը։

Այսպիսով իշխանության այն մարմինների տեղ, վորոնք առաջ ծառայում էին կալվածատիրա-կապիտալիստական կարգերի պահպանմանն ու ամրապնդմանը, աշխատավորներն իրենց իշխանությունը հաստատեցին, վոր պաշտպանում է բանվորի-

գյուղացու շահերը, իրականցում բանվորների ու գյուղացիների միությունը։

Բանվորների ու գյուղացիների շահերն արդյոք մի՞շտ նման են

Բայց բանվորների և գյուղացիների շահերն արդյոք միշտ միատեսակ են։ Վո՛չ. պատահում են դեպքեր, յերբ նրանց շահերը տարբերվում են։ Բացի դրանից հենց ինքը գյուղացությունը միատարր չէ, իր կազմով միատեսակ չէ և այնպիսի խմբերից է կազմված, վորոնց շահերը տարբեր են։

Վերլուծենք մի քանի որինակներ։

Քաղաքացիական կռվի ժամանակ Խորհ. իշխանությունը վորպեսզի հնարավորություն ունենա պաշտպանվել թշնամիներից, ստիպված էր մասնատրումն անցկացնել, այսինքն գյուղացիների հացի ավելցուկը վերցնել։ Գյուղացիք դժգոհ էին դրանից, բայց Խորհ. իշխանությունը, վորին ղեկավարում էր բանվոր դասակարգը, անց էր կացնում մասնատրումը, թեկուզ դրա համար յերբեմն ստիպված լիներ ուժով վերցնել հացը։ Ճիշտ էր այդ վարմունքը։ Անկասկած ճիշտ էր։ Առանց դրան մենք չեյինք կարող հարված տալ մեզ վրա յեկող թշնամուն։

Խորհ. իշխանությունը կվոչնչանար, կապիտալիստներն ու կալվածատերերը նորից կնստեյին ժողովրդի վզին։ Ո՞վ կտուժեր նրանից։ Յեվ բանվորները, և՛ գյուղացիները։

Այսպես, բանվոր դասակարգն իր քաղաքականությունը տանելով վոչ միայն իր անձնական շահերն էր պաշտպանում, այլ և գյուղացացիների շահերը։

Ուրիշ որինակ։ Գյուղացիների մեջ յերբեմն կասկածի ձայներ են լսվում.— Է՛, մի՞թե ավելի ձեռնտու չեր լինել մեզ համար, յեթե արտաքին առևտրի մենաշնորհը վերանար։ Զանազան յերկրներից մեզ մոտ վաճառականներ կգային, ապրանք կբերեյին, գները կընկնեյին, վաճառականները կսկսեյին գյուղացուց ապրանք առնել, և դրանց գները կբարձրանար։ Է՛, հետո՞, ինչ կլիներ, յեթե Խորհ. իշխանությունը լսեր այդ գյուղացիներին։ Սկզբի շրջանում, իսկապես, մեզ մոտ վաճառականներ կգային, ապրանք կբերեյին։ Մեր արդյունաբերությունն ու առևտուրը, վոր հազիվ հազ սկսում են վոտքի կանգնել, չեյին

կարող մրցել նրանց դեմ և արագությամբ կհյուծվեյին։ Իսկ ոտարերկրյա գիշատիչներին էլ հենց այդ է հարկավոր։ Այն ժամանակ նրանք յերկրի կատարյալ տերն ու տիրակալը կդառնային, իրենց ուզածի նման էլ գներ կնշանակեյին. մեր գյուղացիությունը գերի կդառնար նրանց, ինչպես գերի յեն այժմ գաղութային և կիսագաղութային յերկրների՝ Հնդկաստանի, Չինաստանի և այլ գյուղացիները։

Արդյոք բանվոր դասակարգը կարո՞ղ է թույլ տալ այդ բանը։ Ձեռնտու կլինի՞ արդյոք այդ բանը գյուղացիությանը։ Ամենևին։

Ահա թե ինչու բանվոր դասակարգի ղեկավարությամբ Խորհ. իշխանությունը պաշտպանում է արտաքին առևտրի մենաշնորհը—ինչպես սովորեցրել է մեզ Լենինը բանվոր դասակարգի և գյուղացության շահերի համար աշխատելով։

Բանվոր դասակարգի ղեկավարության անհրաժեշտությունը

Այս օրինակներից մենք տեսնում ենք, որ բանվորների ու գյուղացիների շահերի ժամանակավոր տարբերությունը կարող է առաջ գալ գյուղացիական տնտեսությունների բաժան-բաժան կտրտված լինելուց, իրենց սեփական ոգուտը չհասկանալուց, այն ձգտումից, վոր ուզում են իրենց հիմնական շահը զոհաբերեն հանուն այսօրվա շահի։

Այդ պատճառով անհրաժեշտ է, վոր բոլոր դեպքերում բանվորների և գյուղացիների միությունը ղեկավարի ավելի կազմակերպված, սեղմված ու պատրաստված բանվոր դասակարգը։

«Յեթե Ռուսաստանում յետամնաց, խավար, ինքնուրույն շինարարության միանգամայն անընդունակ, կալվածատերերից դարերով ճնշված, յեթե այդ գյուղացիների կողքին չլիներ քաղաքի բանվորների առաջավոր շերտը, վորոնց գյուղացին և՛ հասկանում է և՛ մոտ է, վորոնք վստահություն են վայելում, վորոնց գյուղացին հավատում է իբրև իրենցը, իրենց բանվոր մարդկանցը, յեթե այդ կազմակերպությունը չլիներ, վոր ընդունակ է համախմբել աշխատավոր մասսաներին, այն ժամանակ կոմունիզմը մի անհուսալի բան է»։ Այսպես էր սովորեցնում Լենինը։ Արդյոք բանվոր դասակարգն այդ ղեկավարությունն ի վնաս գյուղացիության է ոգտագործում։ Վոչ. դա հենց իրեն

էլ ձեռնտու չեր լինիլ, դրանով նա իր սեփական գոյությունը վտանգի կենթարկեր։

Ինչպես գյուղացին շահագրգռված է արդյունաբերության զարգացմամբ, այնպես էլ բանվորը շահագրգռված է, վորպեսզի գյուղացիական տնտեսությունը զարգանա, գյուղացու դրությունը բարվոքվի։ Այժմ այդ հիման վրա յել կառուցվում է բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Այդ դաշինքն սկիզբն առավ ցարի կալվածատիրա-կապիտալիստական կարգերի դեմ միասին մղած պայքարում։ Քաղաքացիական կռվի տարիներին աշխատավորները բանվոր դասակարգի ղեկավարությամբ պաշտպանում եյին իրենց նվաճումները, քաղաքացիական կռիվը վերջացնելուց հետո վերականգնում են տնտեսությունը։

Գյուղացիությունն իր գործնական կյանքում համոզվեց, վոր բանվոր դասակարգի ղեկավարությունը ձեռնտու յե և ճշմարիտ։ Բանվոր դասակարգի Խորհրդային իշխանության այդ ղեկավարությունն է, վոր կոչվում է պրոլետարիատի (այսինքն բանվոր դասակարգի) դիկտատուրա։

Բանվոր դասակարգն ինչո՞ւ պետք է հաստատի իր դիկտատուրան։ «Պրոլետարիատին անհրաժեշտ է պետական իշխանություն, ուժերի կենտրոնացրած կազմակերպություն, բռնության կազմակերպություն—և՛ շահագործողների դիմադրությունը ճնշելու համար և՛ բնակչության ահագին մասսային—գյուղացիությանը, մանր բուրժուազիային, կիսապրոլետարներին ղեկավարելու համար—սոցիալական տնտեսությունը կանոնավորելու գործում»։ Այսպես էր սովորեցնում Լենինը։

Ինչպես է իրականացվում այդ ղեկավարությունը

Բայց ինչ ճանապարհով է իրականացնում բանվոր դասակարգն այդ ղեկավարությունը։ Նախ Խորհուրդների մեջ բանվորների պատգամավորներն ավելի շատ են լինում, քան գյուղացիների։ Բարձր, ղեկավարող պաշտոնների համար ըստ մեծի մասին բանվորներն են առաջարկվում։ Բայց այդ ղեկավարությունը բանվոր դասակարգը գլխավորապես իրականացնում է կոմունիստական կուսակցության միջոցով։

Խորհրդային մարմինների մեծ մասի գլխին կոմմունիստներ են կանգնած։ Խորհրդային իշխանության բոլոր ամենակարևոր գործերը նախ քննում ե կոմմունիստական կուսակցությունը։ Այսպես վերջերս կուսակցության հրահանգով գյուղատնտեսական տուրքն իջեցրին, Խորհուրդների աշխուժացման կամպանիա յեն անցկացնում և այլն։ Բանվորներն ու գյուղացիները պետության կառավարելը վստահացել են կոմմունիստներին, որովհետև գիտեն, որ կոմմունիստական կուսակցությունը պաշտպանում ե իրենց շահերը։ Նա 17 թվի հոկտեմբերին դեպի հաղթություն տարավ նրանց, ամենածանր տարիներին դիմացավ, յերբ թվում եր, թե ոչ մի ուժ չի դիմանա բոլոր յերկիրներ կապիտալիստների գրոհին։ Վերջին տարիներում նա ցույց տվեց, որ տնտեսական գործն էլ ոչ թե վատ, այլ նույն իսկ լավ գիտե անել, քան կալվածատերերն ու բուրժուազիան։ Կուսակցությունը հարյուրհազարավոր անդամներ ունի—կարգապահ, բազմամյա պայքարով ամենածանր դրության պատրաստված, որոնք ցարիզմի ու կապիտալիզմի ժամանակ ոչ միայն ծանր ճանապարհ են անցել, ծեծվել ու կռվել ամենադժվար պայմաններում, այլև նոր պետական շինարարության տասը տարվա փակ դպրոցն են անցել։

Բայց, որպեսզի Խորհուրդները լավ աշխատեն, պետք ե որ սերտ կապված լինեն աշխատավոր մասսաների հետ, պետք ե որ նրանք իրենց աշխատանքը տանեն բոլոր աշխատավորների աչքի առջև, որ բանվորներն ու գյուղացիները տեսնեն ու հասկանան Խորհուրդների աշխատանքները, իրենք էլ այդտեղ գործոն մասնակցություն ունենան։

Խորհուրդների աշխուժացում

Չպետք ե աչք փակել, որ այդ տեսակետից մեզնում ամեն ինչ այնքան էլ բարեհաջող դրության մեջ չե։

Քաղաքացիական կռվի բուռն շրջանից հետո Խորհուրդները մի քիչ կտրվեցին ժողովրդից։ Նրանց մի մասը խելոք ղեկավարության և բանվոր բացատրության փոխանակ սովորեց հրամայել գյուղացիներին։ Մենք շատ Խորհուրդներ

ունենք, որոնք իրենք չեն աշխատում, իսկ նրանց տեղ նախագահն ե չարչարվում։ Հասկանալի չե, որ մենակ նրա ուժերից վեր ե այդպիսի մեծ գործ անելը, և բացի դրանից, ամեն բան իր վրա առնելով՝ նա չի կարողանում մասսայի մեջ աշխատանք տանել։

Այժմ կոմմունիստական կուսակցությունը Խորհուրդների աշխուժացման համար մեծ աշխատանք ե տանում։

Աշխատանքն սկսվեց նրանով, որ խորհուրդների նախավերջին վերընտրություններից շատերը չհաստատվեցին։ Դա այն դեպքերում եր արվում, յերբ բնակչության աննշան կամ փոքր մասն եր մասնակցում վերընտրություններին, յերբ գյուղացիությունը կողմնակի կերպով իր վզին փաթաթած թեկնածուներից գժգոհ եր լինում։ Ընտրությունների կանոնավորումը միանգամից մոտեցրեց գյուղացիությանը խորհուրդներին։

Դրանից հետո Խորհուրդների առջև հարց դրվեց—ժողովրդին մասնակից անել իր աշխատանքներին, իր գործունեության մասին իր ընտրողների առջև հաշվետու լինել։

Բայց որպեսզի Խորհուրդը կարողանա գյուղացիական մասսաներին իր շուրջը համախմբել, անհրաժեշտ ե որ նա գյուղի տնտեսական ու կուլտուրական կյանքի իսկական ղեկավարը դառնա։

Գյուղխորհուրդների յեվ շրջգործկոմների իրավունքներն ու պարտականությունները

Գյուղական տնտեսության համար առաջին հոգսը պետք ե լինի գյուղական տնտեսության բարձրացման գործում օգնել գյուղացիությանը։ Գյուղխորհուրդն օգնում ե գյուղացիներին բազմադաշտյան սիստեմի անցկենալ, ոչնչացնել հողացրվածությունը, նա հոգում ե, որ վարձու կայաններ և սերմազտիչ կայաններ հիմնվեն, գյուղատնտեսական գործիքները նորոգելու արհեստանոցներ սարքվեն, նա օգնում ե գյուղատնտեսի ու հողաչափի աշխատանքներին, նախազգուշական միջոցներ ե ձեռք առնում անասունների հիվանդությունների տարածման առաջն առնելու և այլն։ Գյուղխորհուրդը հոգում ե զանազան կոոպերատիվ միությունների կազմակերպման ու աշխատանքի մասին։

Գյուղխորհուրդը հոգում է գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացման մասին, ոգնում է անգրագիտության լիկկայաններ բացվելուն, միջոցներ է ձեռք առնում—նոր դպրոցներ բանալու, հսկում է, որ դպրոցը բոլոր անհրաժեշտ պարագաներն ունենա, ոգնում է նաև խրճիթ-ընթերցարանի աշխատանքին, աջակցում է գյուղում լրագիր, ամսագրեր ու գրքեր տարածելուն։

Գյուղխորհուրդը հոգում է և գյուղի բարեկարգության մասին, նա կամուրջներ ու ճանապարհները սարքին է պահում, կազմակերպում է հրդեհաշեջ խմբակ, հսկում է, որ քաղաքացիք հակահրդեհային միջոցները կատարեն, հետևում է գյուղի առողջապահիկ դրությանը։ Բացի դրանից գյուղխորհուրդը բազմաթիվ վարչական պարտականություններ ունի։

Այստեղ թվածը գյուղխորհրդի առջև դրած դեռ բոլոր պարտականություններն ու խնդիրները չեն, այն աշխատանքները, ուր նա կարող է իր նախաձեռնությունը ցուցաբերել։ Այդ բոլորը թված են գյուղխորհրդի կանոնադրության մեջ։ Այդ կանոնադրությունը բավական ընդլայնել է գյուղխորհուրդների գործունեության շրջանը։

Էլ ավելի ընդլայնված են շրջգործկոմների իրավունքներն ու պարտականությունները։

Վորպեսզի շրջգործկոմները կարողանան իրոք բարգավաճ կերպով տանել իրենց աշխատանքները, նրանց իրավունք է տրված շրջանային բյուջեներ կազմել։

Շրջանային բյուջե կազմելը

Ի՞նչ կնշանակի շրջանային բյուջե կազմել։ Դա կնշանակի—այն շրջանակում, վոր որենքով տրվում է շրջանային գործադիր կոմիտեյին, ծախքի վորոշված հոդվածների համաձայն հաշվել, թե շրջանն որենքով սահմանված վորքան արդյունք կարող է հավաքել, վորոշել, թե այդ արդյունքներն ինչ ձևով պետք է հավաքել և ազգաբնակության շահերի համեմատ ինչ ձևով ծախսել. այսինքն ծախսելու ծրագիր գծել։ Յեթե պակասորդ կը լինի, կրկին ի նկատի առնել, թե վորտեղից պետք է ծածկել այդ պակասորդը (դեֆիցիտ)։ Ահա հենց այս էլ կնշանակի շրջանային բյուջե կազմել։ Քանի վոր շրջանն ինքն է վորոշում իր արդյունքն ու ծախքը, ապա նա մի պարզ մարմին չէ միայն կառավարելու համար, վոր վերևից յեկած վորոշումներն է կատարում. Նա ինքն է վորոշում շրջանի կյանքի տնտեսական և այլ կարևոր հարցերը։ Այսպիսով շրջգործկոմները լավ հաշվող ու տնտես գործ անողներ պիտի դառնան, վորոնք շրջանային համագումարում, շրջանի ազգաբնակության առջև հաշիվ պիտի տան. թե ինչպիսի տնտեսություն են վարել։

Իհարկե ամենագլխավորն այն է, վոր շրջանի կառավարելը թանգ չնստի։ Խորհ. իշխանությունը գյուղացիների համար ամենաարժան կառավարությունը պետք է լինի։ Այն արդյունքները, վոր ստացվում են հարկերից կամ զանազան տեսակի հիմնարկների ոգուտներից պետք է գործադրվեն վոչ միայն կառավարելու վրա, վոչ միայն խորհուրդներում աշխատող ծառայողներին աշխատավարձ տալու վրա, այլ և պետք է ծածկեն շրջանի դպրոցների, հիվանդանոցների, խրճիթ-ընթերցարանների, մսուրների, մանկատների, տնկարանների, փորձադաշտերի, այլև գյուղացիության հասարակական այլ ծախքերի կարիքները։

Ազգաբնակությունն ի՞նչպես հսկել խորհուրդների աշխատանքին

Խորհուրդների ամենակարևոր խնդիրը գյուղական ազգաբնակությանն իր աշխատանքներին քաշելու, մասնակից անելու խնդիրն է։ Թե գյուղխորհուրդը, թե շրջգործկոմն իրենց աշխատանքների մասին հաշիվ պետք է տան ժողովրդին։ Անհրաժեշտ է ընտրական ժողովներին մասնակից անել տալ ընտրելու իրավունք ունեցող բոլոր քաղաքացիներին։ Գյուղխորհրդում և շրջգործկոմում առանձին աշխատանքներ տանելու համար պետք է գյուղացիներից հատուկ հանձնաժողովներ կազմել։ Խորհուրդներին կից պետք է մշտական հանձնաժողովներ կազմել, այսինքն մի խումբ գյուղացիներ, վորոնք կոգնեն Խորհրդին աշխատանքի վորոշ ճյուղում,—որինակ՝ գյուղական տնտեսությունը բարելավելու, ժողովրդական լուսավորություն, գյուղի բարեկարգություն և այլն։

Գյուղխորհուրդը պետք է համայնական ընդհանուր ժողով-

ներ հրավիրի և այնտեղ գյուղացիության համար ամենակենսական հարցերը դնի։

Այս ճանապարհով աշխատավոր մասսաներն իսկապես անմիջապես հանդես կգան և գործոն մասնակցություն կունենան խորհրդային աշխատանքին։

Հեղափոխական օրինականություն

Խորհուրդների աշխատանքի ամենակարևոր հարցերից մեկը հեղափոխական օրինականության ամրապնդումն է։ Անօրինականություն, կամայականություն, իշխանության ինքնակամ ու սխալ գործունեություն, կաշառքի միջոցով ունևոր և կուլակ տարրերի օրենքի զանցառություն,— ահա այն ծանր ժառանգությունը, վոր ստացել ենք մենք հին, անազատ կյանքից։ Դա այժմ էլ վորոշ վայրերում փչացնում է մեր խորհրդային մարմիններին։

Ահա ինչու առաջին հերթին պետք է ձգտել, վոր գյուղացիները գիտենան օրենքները, վոր իշխանության մարմիններն ամենից առաջ իրենք պահպանեն այդ օրենքները, վոր գյուղացին ամեն րոպե կարողանա իր իրավունքների տերը լինել և ապօրինի գործողությունների դեմ անպաշտպան չլինի։

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վ իրավունք ունի ընտրել և ընտրվել Խորհրդի անդամ, և ո՞վ է զրկված այդ իրավունքից։
2. Ի՞նչն էր դատարանի, բանակի, դպրոցի նպատակը ցարի ժամանակ, և ի՞նչն է այժմ — Խորհ. իշխանության ժամանակ։
3. Խորհրդային հանրապետություններն ինչո՞ւ սոցիալիստական էլ են կոչվում։
4. Ինչու բանվոր դասակարգը պետք է ղեկավարի գյուղացիությանը և ամբողջ Խորհ. իշխանությունը։
5. Վորո՞նք են գյուղխորհրդի և շրջգործկոմի գլխավոր պարտականությունները։
6. Ի՞նչպես պետք է ազգաբնակությունը Խորհուրդների աշխատանքներին մասնակից անել տալ։

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Խ.Ս.Հ.Մ. ՅԵՎ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր յերկիրը

Խորհուրդների Սոցիալիստական Հանրապետությունների մեր Միությունը հսկայական մի յերկիր է և յերկրագնդի մակերևույթի մի վեցերորդ մասն է բռնում։ Այդ ահագին տարածության վրա 140 միլիոնից ավելի բնակչություն կա։

Այդ ամբողջ ազգաբնակության կեսը վելիկոռուսներ են։ Բայց կան շատ տեղեր, ուր ազգաբնակության գլխավոր մասն ուրիշ ժողովուրդներ են — ուկրայինցիներ, բելոռուսներ, թուրքեր, ուզբեկներ, վրացիներ, հայեր և մի շարք այլ ժողովուրդներ։ Բացի այս մեծ ժողովուրդներից կան մի շարք մանր ժողովուրդներ էլ, վորոնք ապրում են յերկրի զանազան անկյուններում։ Խ. Ս. Հ. Միության մեջ մինչև հարյուր զանազան մանր ու մեծ ժողովուրդներ են ապրում։

1897 թվի աշխարհագրի համաձայն ցարական Ռուսաստանի ազգաբնակության 100 մարդուց 43-ը ռուսներ էին, 57-ը ուրիշ ազգեր։ Այդ ժողովուրդների մեծամասնությունն իրենց ինքնուրույն պետությունն են ունեցել, բայց ցարի իշխանությունը ձգտելով իր կայսրության սահմաններն ընդլայնացնել, ժամանակի ընթացքում զինված ուժով խլել է դրանց։ Ցարի իշխանությունն ամենևին չէր մտածում այն մասին, վոր ոգնի այդ բոլոր ժողովուրդների բարեկեցությանը. նա ձգտում էր իր ծայրագավառներից վորքան կարելի յե շատ շահ ստանա, հնարավորություններ ստեղծի, վոր ռուս արդյունաբերողները, վաճառականները ու չինովնիկները (պաշտոնյաները) հարստանան ոտար ժողովրդի հաշվին։

Ինչպե՞ս էր կողոպտում ցարի իշխանությունը ժողովուրդներին

Ցարիզմը կանգ չէր առնում նվաճած ժողովուրդներին ուղղակի կողոպտելու խնդրի առջև: Այսպես Իրտիշ և Ուրալ գետերի ափերին ապրող կիրգիզների հարուստ հողերը խլվեցին և տրվեցին ռուս կազակներին: Կիրգիզները ստիպված եյին կամ իրենց սեփական հողը կապալով վերցնել ռուսներից, կամ քաշվել անապատի խորքերը: Վոլգայի ափերին ապրող մարի ժողովուրդն յեվս դուրս քշվեց իր պտղաբեր հողերից, խլեցին նրանց անտառները, ժողովուրդն սկսեց մարել. Այդպես սկսեցին մարել և նողայցիները, վորոնց ցարիզմը քշեց իրենց բնակած վայրերից և ավազոտ ու աղի յենթակա անապատը շպրտեց: Իրենց տներից դուրս քշվեցին չերքեզները, նրանց բնակեցրին այնպիսի վատ հողի վրա, վորի մեծ մասն անպետք եր չերքեզների սովոր բույսերի մշակման համար: Նույն ձևով կողոպտեցին բաշկիրները և ուրիշ ժողովուրդներ: Սրանով կառավարությունը յերկու նպատակի յեր ձգտում. ռուս գյուղացիներին, վորոնք սակավահողության պատճառով պատրաստ եյին ապստամբել կալվածատերերի և ցարի կառավարության դեմ, ցարի կառավարությունը բնակեցնում եր լավ հողերի վրա ու այդպիսով գյուղացիների գայրույթը հեռացնում եր սակավահողության իսկական հանցավորներից—կալվածատերերից և ցարից, ու միաժամանակ կառավարությունը ռուսներին բնակեցնելով կիրգիզների, բաշկիրների, թաթարների և ուրիշների մեջ կարծես պահակ եր դնում: Յեվ իսկապես տեսնում ենք, թե ինչպես Թերեքի, Իրտիշի, Սեմիրեչյեյի հովիտներում և այլ ծայրագավառներում բնակություն են հաստատում կազակները, վորոնք ավելի սպառնալիքի տակ են պահում այդ «այլազգի» ժողովուրդներին: Հասկանալի յե, վոր այդպիսի բռնությամբ բնակություն հաստատած ռուսները, բացի ատելությունից, ուրիշ բան չեյին կարող ստանալ այդ ճնշված ժողովուրդներից: Հաճախ այդ ճնշված ժողովուրդները հուզվում ու ապստամբում եյին, ու այն ժամանակ ցարի կառավարությունն օգտվում եր այդ հանգամանքից, իբրև մի առիթ՝ եվ ավելի ճնշելու նրանց: Ամբողջ գավառներ, ամբողջ ցեղեր, նույնիսկ նրանց յերեխա-

ները դուրս եյին քշվում, բռնությամբ արտաքսվում եյին յերբեմն նույնիսկ ուրիշ յերկիր:

Թե ապրանքատուներն ու գործարանատերերը ինչպես էյին հարըստանում յետամնաց ժողովուրդների հաշվին

Դեպի Թուրքեստանի (այժմ այնտեղ յերկու հանրապետություն կա—ուզբեկական և թյուրքմենական), Սիբիրի, Կովկասի ամենահարուստ վայրերն եյին շտապում գնողները, վաճառականները:

Նրանք սկսեցին ժողովրդից, վոր պարապում եր գլխավորապես վորսով, ձկնորսությամբ, այգեգործությամբ, շատ աժան գնով մորթի, անասուններ, բուրդ, ձուկ և ուրիշ մթերքներ գնել: Մի շտոֆ օղիով, մի փափեթ ծխախոտով, մի գեղեցիկ չնչին բանով ամենաարժեքավոր ապրանքներ եյին գնում: Ցարի կառավարությունը· արդյունաբերողներին ու վաճառականներին ձեռնտու յեր այդ ծայրամասերի յետամնացությունը:

Այն միջոցին, յերբ կենտրոնում զարգանում եր խոշոր արդյունաբերությունը, ցարի կառավարությունը չեր եվ մտածում ծայրամասերում եվ զարգացնել արդյունաբերությունը և ամենևին չեր հետաքրքրվում այդ բանով, վորպեսզի այնտեղ եվ բարձրացնի տնտեսությունը, գործարաններ ու գավոդներ շինի այնտեղ: Դա այն նպատակով եր արվում, վորպեսզի ծայրամասերի ժողովուրդը շարունակի առաջվա նման զբաղվել անասնապահությամբ, վորսով, ձկնորսությամբ, հողագործությամբ և արդյունաբերության համար անհրաժեշտ նյութեր տա: Մյուս կողմից այդ ժողովուրդներն ստիպված եյին արդյունաբերական ապրանքները գնել ռուս գործարանատերերից:

Վերցնենք, որինակ, բամբակե գործվածքների արդյունաբերությունը (չիթը), այսինքն ամենաշատ ծախվող ապրանքներից մեկը:

Այդ կտորները վերամշակվում են բամբակից, իսկ բամբակը մշակում են գլխավորապես Թուրքեստանի գյուղացիները՝ ուզբեկներն ու թյուրքմենները: Իսկ բոլոր գործարանները, վոր բամբակը վերամշակում ու կտոր եյին պատրաստում, գտնվում են կենտրոնական Ռուսաստանում. Թուրքեստանում թույլ չեյին

տալիս գործարան շինել։ Ուստի և դեկխանները (գյուղացիները) կատարյալ կախման մեջ եյին չեկվոր ու ռուս վաճառականներից և արդյունաբերողներից։

Ինչո՞ւ էր արգելք լինում ցարի իշխանությունը ժողովուրդների զարգացման

Ցարի կառավարությունը վորպեսզի ավելի հեշտությամբ գերի դարձնի այդ բազմաթիվ ժողովուրդներին, դիտմամբ յետ եր պահում նրանց զարգացումը, խավարի մեջ եր պահում նրանց։ Որենքի մեջ «այլազգիների» վերաբերմամբ ամեն տեսակ բացառություններ և չնախատեսված սահմանափակումներ կային, իսկ վելիկոռուսների համար զանազան արտոնություններ։ Նույնիսկ ուղղափառ կրոնը տիրապետող եր. մյուսները կամ հալածվում եյին կամ մի կերպ տանելի համարվում։

Մեծ մասամբ բոլորովին արգելվում եր մայրենի լեզվով դպրոց բանալ։ Բոլոր դպրոցներում ուսումը ռուսաց լեզվով եր տարվում։ Դպրոց մտնելու համար յերեխան, ինչ ազգից ել լիներ, պետք ե ռուսերեն իմանար։ Իսկ այդ մատչելի յեր միայն փոքրաթիվ հարուստների յերեխաներին, իսկ ժողովրդի մեծագույն մասը մնում եր անգրագետ։ Այնպես վոր դեռ հիմա յել 100 թաթարից, կալմիկից, ուզբեկից 2—3-ն են գրագետ։ Դպրոցներում աշակերտներին արգելում եյին իրար հետ մայրենի լեզվով խոսել լեհերեն, ուկրայներեն, հրեարեն, հայերեն, ել չեմ ասում, վոր աշակերտների հետ մայրենի լեզվով խոսել փորձող ուսուցչին քշում եյին։ Բացի ռուսերենից ուրիշ լեզվով համարյա լրագիրներ ու գրքեր չեյին տպվում։ Մինչև ամենավերջին ժամանակներս ցարի կառավարությունն արգելել եր լրագիր հրատարակել կամ դպրոցներում դաս տալ ուկրայներեն։ Դրա փոխարեն ցարի կառավարությունը սիրով այդ վայրերն եր ուղարկում իր պաշտոնյաներին, ուրյադնիկներին ու տերտերներին։ Դրանք բոլորն այնպիսի ամուր սանձ եյին դնում ժողովրդի բերանը, վոր «ուռուս» (ռուս) բառով կանայք վախեցնում եյին իրենց յերեխաներին։

Վորպեսզի այդ չետամնաց ժողովուրդների հաշվին ավելի հեշտ հարստանան, վաճառականները խմեցնում եյին նրանց։

Խավար, անկուլտուրական ժողովուրդը սովորելով ռուսական օղուն, շուտով տարվում եր դրանով, վորից և շտապում եյին ոգտվել նախաձեռնություն ունեցող առևտրականները։

Այս բոլորի շնորհիվ այդ ժողովուրդների մեծամասնությունը դեռ յերկար ժամանակ պահել եր տնտեսության չետամնաց ձևերը. պահպանվել եր զանազան իշխանների, բեկերի, մելիքների, կուլակների. հոգևորականության իշխանությունը։ Զանազան ժողովուրդներ դրանց տարբեր անուններ են տալիս—բայ, բեկ, կնյազ, տայոն. իսկ հոգևորականներին՝ մոլլա, շաման, լամա, յեպիսկոպոս և այլն, բայց եյականապես միևնույն բանն են։ Ցարի իշխանությունը սիրով ոգտվում եր այն անսահման իշխանությունից, վոր ունեյին բնակչության վրա այդ իշխանիկները, վորպեսզի գերի դարձնի ժողովրդին։

Դրան պետք ե ավելացնել այն, վոր շատ ժողովուրդների մեջ սկսեցին տարածվել վարակիչ հիվանդությունները, հատկապես սիֆիլիսը։ Այդ հիվանդությունները ռուս չեկվորներն եյին բերում և այդ ժողովուրդների կեղտոտ, անկուլտուրական կյանքի պատճառով արագ տարածվում եյին և ժողովրդական աղետ դառնում։

Նյութական ծանր պայմանների ճնշման տակ, հիվանդությունների ազդեցության տակ այդ ժողովուրդներից մի քանիսն սկսեցին մարել։

Իր տիրապետությունը հեշտ պահելու համար ցարի կառավարությունը ժողովուրդներին իրար դեմ եր հանում։

Ինչո՞ւ չէր ցարի իշխանությունը բռնամոլություն սերմանում ժողովուրդների մեջ

Ցարիզմը ջանք եր թափում ներշնչել ռուսներին, վոր նրանք օրինավոր տերերն են նույնիսկ այն շրջանների, վոր նոր եյին տիրապետել հրով ու սրով և արյունով եյին հնազանդեցրել մի քանի ժողովուրդների, ինչպես, օրինակ, Կովկասում։ Պարզ բան ե, վոր այնտեղ տեր ու տիրական եյին հանդիսանում վոչ թե ռուս բանվորներն ու գյուղացիները, վոչ ռուս ժողովուրդը, այլ ռուս կալվածատերերը, ռուս արդյունաբերողները, ռուս վաճառականները, ռուս պաշտոնյաները, վոր թաքնվում եյին ժողովրդի անվան տակ։ Բայց, հա-

մենայն դեպս, նրանք կարողանում էին աջակցել ժողովուրդների անջատմանն ու թշնամանքին և վելիկոռուսների մեծամիտ վերաբերմունքին դեպի «այլազգիները»։ Այդ է պատճառը, որ ռուսներն այնպիսի ձևեր ունեն իրենց խոսակցության մեջ, ինչպես՝ «արմյաշկա», «ժիդ» և այլն, որը ցույց է տալիս, թե նրանք ոչ-ռուսական ծագումն ունեցող ժողովրդին վերևից էին նայում, ոչ թե իբրև հավասարի, այլ արհամարհանքով։

Ցարի կառավարությունը ձգտում էր ատելություն զարթեցնել հատկապես դեպի հրեաները։ Օրենքով հրեաներին թույլ էր տրվում ապրել միայն միքանի տեղերում. նրանք իրավունք չունեյին ապրել գյուղերում և գյուղական տնտեսությամբ պարապել։ Հրեա ժողովրդի մեծ մասը խեղդված մնում էր մի քանի փոքրիկ քաղաքներում և ավաններում և ստիպված էր պարապել մանր արհեստներով և մանր առևտրով. նրանց արգելում էյին պարապել հողագործությամբ, գործարաններն էլ մտնելու իրավունք չունեյին։ Հրեաների երեխաներին համարյա բոլորովին դպրոց չէյին ընդունում։

Հասկանալի չէ, որ հարուստ հրեաների համար այդ բոլոր արգելքները գոյություն չունեյին, բայց ժողովրդի մեծ մասը դատապարտված էր կիսաքաղց ու վողորմելի կյանքի։

Ամեն անգամ, երբ բանվորներն ու գյուղացիները ծառանում էյին ցարի ճնշման դեմ, կառավարությունն աշխատում էր այլազգիների (մանավորապես հրեաների) դեմ ուղղել ժողովրդին. ջարդեր էր սարքում, վորպեսզի հարվածն իրեն չհասնի։ Հաճախ այդ բանը հաջողվում էր նրան։ Այդպես էլ Թուրքեստանում ուզբեկներին թյուրքմենների դեմ էյին գրգռում, Կովկասում հայերին թուրքերի, թուրքերին—հայերի։ Ու մեր սարերում ու ձորերում շատ անգամ է հայ ու թուրքի արյուն հոսել։ Իրար դեմ էյին դուրս գալիս ցարի լրտեսների ու մարդկանց միջոցով գրգռված ժողովուրդները և մորթոտում էյին իրար. իսկ այդ ատելությունը սերմանում էյին նրանց մեջ, վորպեսզի ժողովրդի ցասումը շեղեն, բոլոր աղետների իսկական հանցավորներից այդ տրտունջը, այդ դայրույթը միայն առանձին ժողովուրդների դեմ ուղղեն։

Այսպես մեծ ու փոքր ժողովուրդների (ազգերի) ճնշմամբ կանգուն էր մնում ցարի կայսրությունը։ Իզուր չէյին այն ժամանակ «ժողովուրդների բանտ» անվանում մեր երկիրը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը յեվ ժողովուրդների ազատագրումը

Հոկտեմբերյան հեղափոխությունը, որ ռուս բանվորին ու գյուղացուն ազատեց ճորտությունից, ազատություն բերեց նաև բոլոր ճնշված ազգերին։ Խորհրդային իշխանության գոյության հենց առաջին օրերը վերացվեցին փոքր ժողովուրդներին ճնշող բոլոր սահմանափակումները։ Բոլոր լեզուները հավասար իրավունք ստացան։ Բոլոր ժողովուրդներին իրավունք տրվեց, որ իրենք տնօրինեն իրենց բախտը, հաստատեն իրենց կարգերը։

Այն երկիրը, որ բանտ էր ժողովուրդների համար, այժմ դարձավ բոլոր ժողովուրդների աշխատավորների, բոլոր ազգությունների հայրենիքը։

Խ. Ս. Հ. Մ.

Մեր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բաղկացած է մի շարք առանձին անկախ հանրապետություններից։ Նրա մասերն են.—Բելոռուսիայի Ս.Խ.Հ., Ուկրայնայի Ս.Խ.Հ., Ուզբեկների Ս.Խ.Հ. (Ուզբեկստան) Թյուրքմենների Ս.Խ.Հ. (Թյուրքմենստան), հետո Անդրկովկասի 3 Հանրապետությունների Ֆեդերացիան (միությունը)—Վրաստան, Ադրբեջան, Հայաստան, և վերջապես ամենամեծը՝ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.։ Բայց այս հանրապետության մեջ իր հերթին մտնում են մի շարք ավտոնոմ (այսինքն ոչ-բոլորովին ինքնուրույն, բայց լայն ինքնավարություն ունեցող) հանրապետություններ.—թաթարական, բաշկիրական, կազակական (նախկին կիրգիզական) և այլն։ Ավելի մանր ժողովուրդներն առանձնացած են իբրև ավտոնոմ շրջաններ, օրինակ. Վոտսկի. Տաճիկների և այլն։

Ուստի և Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ը ֆեդերատիվ հանրապետություն է կոչվում, որովհետև իր մեջ միացնում է զանազան հանրապետություններ։

Ամեն մի ինքնուրույն և ավտոնոմ հանրապետություն իր բանվորագյուղացիական կառավարությունն ունի, իր Խորհուրդների համագումարը, իր Կ. Գ. Կ. ը, իր Ժողկոմխորհը։

Խորհրդային հանրապետություններն ինչո՞ւ միացան, մի միություն կազմեցին

Սակայն ինչու համար է ստեղծված այդ ինքնուրույն հանրապետությունների Միությունը։ Նախ նրա համար, վոր միացյալ ուժերով պաշտպանվենք թշնամու հարվածներից. մենք մի հատ միացյալ Կարմիր բանակ ունենք, վորը պաշտպանում է մեր սահմանները դրսի հարձակումներից։ Յերկրորդ նրա համար, վոր միացյալ ուժերով վերականգնենք տնտեսությունը։ Ուկրաինայում հանում են ածուխ, յերկաթ, արտադրվում է հաց, Ուզբեկստանն ու Թյուրքմենստանը բամբակ են տալիս, Ադրբեջանը՝ նավթ, Ռ. Ս. Խ. Ֆ. Հ. է հաց ունի, է գործարաններ, մետաղներ էլ կան, անտառ էլ կա։ Ու յեթե այս բոլոր տնտեսությունը մի ձեռքով է ղեկավարվում, մի ծրագրով է աշխատում,—դրանից անհամեմատ ավելի մեծ օգուտ է ստացվում։ Այնպես էլ մեր ամբողջ Միության մեջ միևնույն փողն (դրամը) է գործածվում, յերկաթուղիները, փոստը, հեռագիրը՝ համամիութենական կոմիսարիատներն են ղեկավարում։ Օտար պետությունների հետ հարաբերության ունենալը յևս, ամեն տեսակ պայմանագրերն ու առևտրական գործերը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների ամբողջ Միության անունով են տարվում։

Իսկ այնպիսի հարցեր, ինչպես ժողովրդական լուսավորություն, ժողովրդական առողջապահություն, գյուղական տնտեսության բարձրացում և այլն,—տրված են առանձին հանրապետությունների կառավարություններին։

Յետամնաց ժողովուրդների կուլտուրական յեվ տնտեսական մակարդակի բարձրացումը

Այսպիսի կարգը հասցրեց այն բանին, վոր մեր Խորհ. Միության ընդամենը միքանի տարվա գոյության ընթացքում արագ քայլերով առաջ է գնում բոլոր ազգությունների կուլտուրական և տնտեսական վերածնունդը։ Բոլոր լեզուներով բազմաթիվ գրքեր ու լրագիրներ են հրատարակվում, դպրոցներում դասավանդումը մայրենի լեզվով է, գործավարությունն էլ տարվում է տեղական, ժողովրդին հասկանալի, մայրենի լեզվով։ Մի քանի հանրապետություններ նույնիսկ իրենց բարձրագույն դպրոցներն ունեն։

Բայց վորպեսզի յետամնաց ժողովուրդների աշխատավորներին իսկապես հնարավորություն տրվի զարգացման ճանապարհը դուրս գալու, պիտի օգնել նրանց տնտեսության կազմակերպմանը։ Մենք արդեն գիտենք, վոր ցարի կառավարությունը յերկար տարիներ ընթացք չեր տալիս այդ բանին։ Յեվ այժմ Խորհ. իշխանությունը պետք է շտկի, ուղղի այդ ծանր ժառանգության հետևանքները։

Այժմ մեծ աշխատանքներ են տարվում անջուր անապատները պտղաբեր հողեր դարձնելու։ Թուրքեստանում, Հայաստանում և ուրիշ տեղեր ջրանցքներ են փորում, արհեստական վոռոգումներ են սարքում, ու այն վայրերը, վոր մինչև այժմ տառապում եյին ջուր չլինելուց, կարող են հարյուր-հազարավոր գյուղացիներ կերակրել։

Շատ ժողովուրդներ (օրինակ՝ կալմիկները) նույնիսկ հողագործություն չգիտեն, այլ վաչկատուն (թափառական) կյանք են վարում։ Նրանք իրենց հոտերով տեղից-տեղ են քոչում, իրենց անասունների համար կեր փնտռելու։

Հասկանալի յե, վոր այդ ժողովուրդներին հարկավոր է օգնել, ամենից առաջ նստակյաց կյանքի անցնելու։ Այժմ, յերբ մեր արդյունաբերությունն սկսել է աճել և մենք ձեռնարկել ենք նոր գործարաններ կառուցելու գործին, դրանցից շատերը կկառուցվեն ազգային հանրապետություններում։ Այսպես, օրինակ, Ուզբեկստանում, Թուրքեստանում մանվածային գործարաններ կկառուցվեն, ուր տեղական բամբակից զանազան կտորեղեններ կպատրաստեն։ Նույն նպատակով Հայաստանում (Լենինականում) համարյա արդեն կառուցվել է մեծ մանվածային գործարան։ Ղաթարի և Ալլահվերդու պղնձահանքերն էլ վոչ միայն նորոգվում են և սկսել են աշխատել, այլև հավանականաբար մի քանի տարուց հետո ավելի կընդարձակվեն, քան պատերազմից առաջ եյին։

Խորհրդային յերկրներում ազգային բռնամանքը տեղ չունի

Ռուս բանվորներն ու գյուղացիները, վոր ռուս ցարին, կալվածատերերին և վաճառականներին դարերով թույլ եյին տալիս կողոպտել ու ճնշել յետամնաց ժողովուրդներին, այժմ պետք է օգնեն նրանց՝ դուրս գալ

նեղ դրությունից, ապրել կուլտուրական կյանքով։ Այժմ մեզ մոտ ազգային ջոկողություն և թշնամանք չի կարող լինել, վորովհետև բոլոր ազգերի աշխատավորների շահերը նույնն են։ Յեթե նա քրտինքով աշխատող ե, նա իմ յեղբայրն ե, ինչ հավատի ուզում ե լինի նա, ինչ լեզվով ուզում ե խոսի նա, մորթին ու մազերն ինչ գույնի յել վոր լինեն, քիթն ու շրթունքները ինչ ձեվ յել վոր ունենան. իսկ յեթե նա շահագործող ե, ուրիշի աշխատանքով ու քրտինքով ապրող, ապա նա իմ թշնամին ե, ինչ ազգից ել ուզում ե լինի նա։

Հ Ա Ր Ց Ե Ր

1. *Ցարի կառավարությունն ո՞ւմ ոգտին եր ձգտում նոր յերկիրներ ու նոր ժողովուրդներ տիրապետելու։*
2. *Ցարի կառավարությունը, վաճառականներն ու արդյունաբերողներն ինչպես եյին ճնշում Ռուսաստանի ժողովուրդներին։*
3. *Ցարի կառավարությունն ինչո՞ւ յեր զանազան ժողովուրդների մեջ թշնամություն սերմանում։*
4. *Ինչո՞ւ Խ. Ս. Հ. Մ. մեջ ազգային թշնամանք չպիտի լինի։*
5. *Ինչո՞ւ մեզ մոտ զանազան ազգային հանրապետություններ կան և ինչո՞ւ յեն միացել — մի Միություն կազմել։*
6. *Խորհ. իշխանությունն ինչո՞ւ յե ոգնում յետամնաց ժողովուրդներին՝ զարգացնելու իրենց տնտեսությունը և բարձրացնելու իրենց կուլտուրական մակարդակը։*

ՅԵՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ԳԱԼԸ

Բանվոր դասակարգի առաջին կազմակերպությունները արդեն զգում եյին, վոր անհրաժեշտ ե իրենց աշխատանքները միացնել։

Դեռ 1895 թվին, յերբ Լենինը ղեկավարում եր Բանվոր Դասակարգի Ազատության Պայքարի Պետերբուրգի Միությունը, աշխատանքի միություն ստեղծելու նպատակով նա շրջեց բանվորական շարժման ամենախոշոր կենտրոնները (Վիլնա, Մոսկվա Որեխովո-Զույևո)։ Մինչև այդ նա գնաց արտասահման և կապ հաստատեց «Աշխատանքի Ազատագրություն» խմբակի հետ։ Բայց հենց այդ տարվա վերջին Լենինը ձերբակալվեց ու հետո Սիբիր աքսորվեց։

Առաջին համագումարը

1898 թվին առաջին անգամ փորձ յեղավ զանազան քաղաքների բանվորական կազմակերպությունները միացնելու։ 1898 թվին Մինսկ քաղաքը հավաքվեցին ծածուկ Պետերբուրգ, Մոսկվա, Իվանո-Վոզնեսենսկ, Կիև և այլ քաղաքների պայքարի միությունների ներկայացուցիչները։ Այդտեղ կային նաև ուրիշ կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Այդ համագումարում վորոշվեց ստեղծել մի կուսակցություն՝ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցություն կամ սկզբնատառերով Ռ. Ս. Դ. Բ. Կ.։ Այդ համագումարն ել (վոր համարվում ե կուսակցության առաջին համագումարը) ընտրվեց կուսակցության Կենտրոնական Կոմիտե։ Համագումարի ղեկավարները ձերբակալվեցին, ցարի վոստիկանությունը մի քանի կազմակերպություններ ջախջախեց, ցրեց, այդ պատճառով ել զանազան կազմակերպություն-

ների մի միասնական կուսակցություն դառնալը ժամանակավորապես յետ ընկավ։

Էկոնոմիստները

Այդ ժամանակներում ել, դեռ յերիտասարդ կազակերպությունների միջև արդեն տարաձայնություններ սկսվեցին բանվոր դասակարգի անելիք խնդիրների առթիվ, հեղափոխական պայքարի նպատակների առթիվ։ Աշխատողներից վոմանք սկսեցին ապացուցել, վոր բանվոր դասը քաղաքականությանը խառնվելու գործ չունի, վոր նա ցարի միահեծան իշխանության դեմ չպիտի կռվի, վոր նրա գործը չե՝ քաղաքական ազատության համար կռվել. բանվորները պետք ե ձգտեն միայն, վոր իրենց աշխատավարձը բարձրանա, բանվորական որը կրճատվի, տուգանքներ չլինեն և այլն, իսկ մյուս բաների հետ նրանք գործ չունեն։ Այդպիսի սոցիալ-դեմոկրատներին սկսեցին «եկոնոմիստներ» ասել։ Պլեխանովն ու Լենինը վճռական պայքար մղեցին «եկոնոմիստների» դեմ, աշխատելով ամեն կերպ ապացուցել նրանց սխալ լինելը։ Լենինը նախ ապացուցում եր, վոր առանց քաղաքական պայքարի անհնար ե, վոր բանվորների տնտեսական դրությունն իսկապես լավանա։ Յերկրորդ՝ Լենինը բանվորներին կոչ եր անում վոչ թե միայն իրենց համար լավ կյանք ձեռք բերելու, այլ վոր նրանք իրենց կողմը գրավեն բոլոր ճնշված աշխատավորներին և գլխավորապես գյուղացիությունը և նրանց բոլորին տանեն դեպի ազատություն։ Լենինը մեղադրում եր «եկոնոմիստներին», վոր նրանք ուզում են սառեցնել բանվորական շարժումը և անջատել նրան գյուղացիությունից։ Սակայն այդ վնասակար հոսանքն աճում եր և սպառնում բանվոր դասակարգին շեղելու ուղիղ ճանապարհից։

«Իսկրա» (Կայծ) լրագիրը յեվ նրա դերը բանվորական շարժման գործում

Լենինը պարզ տեսնում եր, վոր ամենից առաջ անհրաժեշտ ե մի այնպիսի կենտրոն ստեղծել, վոր կարողանա ղեկավարել ամբողջ շարժումը, ուղղություն տալ նրան։ Ու Լենինի կարծիքով այդպիսի կենտրոն պիտի դառնար մի համառուսական լրագիր։ Լրագիր կարելի յեր հրատարակել միայն արտասահմանում, և Լենինը հենց նույն տարին գնում ե Ռուսաստանից և սկսում

ե «Իսկրա» թերթի հրատարակությունը։ Ու այդ լրագրի միջոցով, վոր ծածուկ սահմանն անց եյին կացնում ու Ռուսաստան բերում, նա մեծ աշխատանք սկսեց հեղափոխական ուժերը հավաքելու, հեղափոխական մարտիկներ պատրաստելու, նրանց միացնելու գործում։ «Իսկրան» Ռուսաստանի բանվորական շարժման մեջ հսկայական դեր խաղաց։ Նա ոգնում եր բանվորական կազմակերպություններին ճիշտ ըմբռնելու իրենց խնդիրները, նա մերկացնում եր «եկոնոմիստներին», նա միացնում եր բանվորներին իրենց պայքարի ընթացքում, նա նախապատրաստում եր միասնական բանվորական կուսակցություն ստեղծելու գաղափարը։

Բանվորական շարժման վերելքը

Այդ ժամանակ բանվորական շարժումը Ռուսաստանում սովորականից դուրս աճում ե։ Մանավանդ 1902—1903 թվերին այդ շարժումը ծավալվեց։ Բանվորական գործադուլների ալիքը տարածվեց Ռուսաստանի ամբողջ հարավում։ Միայն Ռուսաստանի հարավում 1903 թվին գործադուլ արին մոտ քառորդ միլիոն բանվոր։ Այս շարժման մեջ ինչն եր նորը. այն, վոր շարժմանը մասնակցում եյին բանվորական նոր խավեր և նույնիսկ գյուղացիական բանվորները — բատրակները։ Բայց հենց նրա համար, վոր այդ ժամանակ բանվորական շարժմանը մասնակցում եյին բանվորների հսկայական մասսաներ, բանվորներն սկսեցին ավելի ու ավելի հաճախ, վոչ թե առանձին այս կամ այն գործարանի պահանջները դնել, այլ ամբողջ բանվոր դասակարգի ընդհանուր պահանջներ (որինակ՝ 9 ժամվա բանվորական որ, մամուլի, ժողովների, միությունների, գործադուլների ազատություն)։ Այդ ժամանակվա բանվորական շարժման մեջ ելի մի գիծ յերևաց։ Բանվորներն սկսում են ցույցեր կազմակերպել, այսինքն կանոնավոր շարքերով, կազմակերպված դուրս են գալիս փողոց, յերբեմն և կարմիր դրոշակ են բարձրացնում, հեղափոխական յերգեր են յերգում, փողոցներով անցնում են «կորչի միապետությունը» հեղափոխական լոզունգներով։ Բանվորներին միանում են ուսանողները, ընդհանրապես ինտելիգենցիան, ու յերբեմն այդ ցույցերին մասնակցում են արդեն

տասնյակ հազար մարդուց ավելի։ Իհարկե, կառավարությունն այդպիսի ցույցարարների հետ հաշիվ էր տեսնում կազակների մտրակներով ու թրերով. վոչվոքի չէյին խնայում և շատ հաճախ այդ ցույցերը վերջանում էյին արյունլվա մեծ ու ջարդով։ 1901 թվին ցույցարարները Մոսկվայում, կազակներից ու վոստիկանությունից պաշտպանվելու համար, առաջին անգամ բարրիկադներ են շինում, այսինքն պատնեշներ՝ կազակների ու վոստիկանության դեմ։ Նույն 1901 թվին վճռական ընդհարում տեղի ունեցավ Օբուխովի գործարանի բանվորների և զորքի միջև, վոր հայտնի յե «Օբուխովի պաշտպանություն» անունով։ Բանվորներից 6 հոգի սպանվեցին, 8-ը ծանր վիրավորվեցին, 37-ը դատի տրվեցին, սրանցից եվ շատերին տաժանակիր աշխատանքի դատապարտեցին, մյուսներին բանտարկության։ Բանվորական շարժման ալիքը շարունակ ավելի ու ավելի մեծ քանակությամբ քաղաքներ էր ընդգրկում։ 1902 թվ. նոյեմբերին Ռուսաստանի հարավում բռնկեց նշանավոր Ռոստովի գործադուլը։ Այդ գործադուլը նշանավոր է նրանով, վոր առանց բացառության բոլոր բանվորները մասնակցում էյին, վոչ միայն Ռոստովի, այլ և մոտակա բոլոր քաղաքների։ 1903 թվին գործադուլ են անում Օդեսայի, Կիևի, Յեկատերինոսլավի, Բաթումի և մի շարք այլ քաղաքների բանվորները։ Վոչ գնդակահարությունները, վոչ ձերբակալությունները, վոչ աքսորները, վոչ ծեծը — արդեն եվ չէյին կարողանում կանգնեցնել բանվորական շարժումը. նա դարձավ դասակարգային, քաղաքական։ Այդ ժամանակ արդեն բանվոր դասակարգն ստեղծեց իր առաջավոր զորամասը իբրև Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության։

Քաղաքներում ամեն տեղ արդեն կային մեր կուսակցության կոմիտեները, վորոնք ղեկավարում էյին բանվորական շարժումը, թռուցիկներ էյին հրատարակում, ծածուկ և ազատ տարածում էյին, կպցնում էյին փողոցներում, ցրվում էյին գործարաններում, հեղափոխական աշխատանք էյին տանում զորքի մեջ, սկսում էյին հեղափոխական աշխատանք տանել և գյուղացիության մեջ։

Գյուղացիական հուզումներ

Գյուղացիության անհագին զանգվածի մեջ խուլ անբավականություն և ատելություն էր թաքնված աղա-կալվածատերերի դեմ։ Այդ դժգոհությունը յերբեմն դրսևորվում էր գյուղացիական շարժումներով։ Բայց անջատ-անջատ, բաժան բաժան գյուղացիությունը դեռ ընդունակ չեր ընդհանուր հեղափոխական շարժման։ Գյուղացիությանը խանգարում էր նույնպես նրա յետամնացությունը, նրա հնազանդությունը, նրա կրոնը։ Չէ՞ վոր դարերով սովորեցրել էյին նրան, թե «Քրիստոսը համբերեց ու մեզ ծառայեց. — ծառաներ, հնազանդ յեղեք ձեր տերերին»։ Վոչ միայն շուրջառավոր տերտերներն էյին սովորեցնում, այլ և բազմաթիվ աղանդավորական քարոզիչներ։

Սակայն, համենայն դեպս, տնտեսական պատճառներն ստիպեցին գյուղացուն նորից հեղափոխության մեջ փնտռել յելքը։ Այդ ժամանակ արտասահմանում հացի գինը բարձրացավ, դրա հետ միասին բարձրացավ և բահրան և հողի գինը։ Իհարկե, գյուղացիներին կատաղեցնում էյին կալվածատերերի դաշտերը, վոր հարյուր-հազարավոր դեսյատիններով տարածվում էյին գյուղացիների լղրճուկ ու խեղճ հողամասերի չերտերի շուրջը. արթնանում էր գեղջուկի դարավոր ատելությունը դեպի աղան, դեպի տերերը։ Ու իննհարյուրական թվականների սկզբում տեսնում ենք, թե ինչպես ամբողջ յերկրում ծավալվում են ընդհանուր գյուղացիական շարժումները։ 1902 թվին՝ դաշտային աշխատանքներից առաջ, Պոլտավայի, Վորոնեժի, Խարկովի, Տամբովի, Չերնիգովի, Վոլինի և ուրիշ նահանգներում, Կովկասում, Ուրալում, Հյուսիս-Արևմտյան յերկրում ամեն տեղ տարածվեց գյուղացիական ընդհանուր շարժումը։ Այստեղ արդեն վոչ մի վոստիկանություն վոչինչ չեր կարող անել, ստիպված էյին հետևակ զորքի ամբողջ գնդեր, կազակների և դրագունների ավելի մեծ զորամասեր ուղարկել։ Միայն Պոլտավայի նահանգում, մարտին, մի քանի որվա ընթացքում կողոպտվեց 54 կալվածատիրական ագարակ, Խարկովի նահանգում՝ 25-ից ավելի։ Ապստամբում էր գլխավորապես գյուղի չքավորությունը, վորին կարիքն ու գերությունը համբերությունից դուրս էյին բերում։

Բայց այդ գյուղացիական շարժմանը միայն չքավորությունը չէր մասնակցում: Այն ունևոր գյուղացիները, վորոնք սկսել էյին աղքատանալ ու ընկնել ու տեսնում էյին, վոր իրենք չքավորության ու քայքայման անդունդի ծայրին են, սրանք էլ այդ ապստամբությունների գործոն մասնակիցներից էյին: Իսկ չքավորությունը գյուղացիական շարժման գլխավոր բանակն էր:

Հետո—1902, 1903, 1904 թվերին շարժումն արդեն ավելի կազմակերպված բնույթ է ստանում, նոր շրջաններ է բռնում: Գյուղացիները բոյկոտ են հայտարարում կալվածատիրական տնտեսությանը (այսինքն հրաժարվում են բահրով հող վերցնել, մշակել հողը, կալվածատիրոջ կողմից վարձվել վորևե աշխատանք կատարելու, հրաժարվում են նրան վորևե ծառայություն անել թեկուզ փողով, նրան վորևե բան վաճառել), գյուղատնտեսական բանվորների գործադուլ են կազմակերպում: Գյուղացիները հրաժարվում են հարկ տալ. տեղ-տեղ զայրույթն այնտեղ է հասնում, վոր սպանում են կալվածատիրոջը. կալվածներ հրդեհելն ավերը շարունակվում է: Չպետք է մոռանալ, վոր այդ ժամանակ գյուղացիական այս շարժումներն արդեն կապված էյին բանվորական շարժման հետ, ճիշտ է, դեռևս վոչ այն աստիճան, վոր հաստատ հաղթությունն ապահոված լիներ: Բանվորական կազմակերպության կոմիտեների հրատարակած գրքերն ու թռուցիկները տարածում էյին գյուղացիության մեջ:

Գյուղացիական շարժման ջախջախումը յեվ նրա անհաջողության պատճառները

Բայց գյուղացիական այս բոլոր շարժումները վերջանում էյին գյուղացիների պարտությամբ: Ահա ինչպես էր բացատրում Լենինն այն ժամանակ գյուղացիական շարժման անհաջողության պատճառները.

«Գյուղացիության ապստամբությունը ճնշվեց, վորովհետև դա մութ, անգիտակից մասսայի ապստամբություն էր. ապստամբությունը վորոշ պարզ քաղաքական պահանջներ չուներ, այսինքն պահանջ չէր դրվում պետական կարգերը փոխելու: Գյուղացիական ապստամբությունը ճնշվեց, վորովհետև նախապատրաստված չէր: Գյուղացիական ապստամբու-

թյունը ճնշվեց, վորովհետև գյուղի պրոլետարները դեռ միություն չէյին կազմել քաղաքի պրոլետարների հետ—ահա գյուղացիական ապստամբության առաջին անհաջողության յերեք պատճառները: Վորպեսզի ապստամբությունը հաջող ընթանար, պետք է վոր նա գիտակցական ու նախապատրաստված լիներ, պետք է վոր նա տարածվեր ամբողջ Ռուսաստանում և քաղաքի բանվորների հետ կապված լիներ:

Ապստամբներին խիստ պատժեցին, գյուղերն ուղարկեցին հատուկ զորամասեր, զինվորների, կազակների ու դրագունների նույնիսկ ամբողջ գնդեր: Յերբ զորքերը գալիս էյին, գյուղացիք սովորաբար աղ ու հացով էյին դիմավորում նրանց, ծունկ էյին չոքում, հազվագյուտ դեպքերում էյին միայն զենքը ձեռքներին պաշտպանվում: Հենց այդտեղ նրանց ծեծում էյին, սկսելով ծերունիներից. կանանց էլ չէյին խնայում, գնդակահարում էյին, յերբեմն ամբողջ գյուղեր էյին ծեծում, այնպես վոր, ինչպես գյուղացին է ասում, «թան ծամելուց գցում էյին»:

Բայց նույնիսկ այսպիսի խիստ պատիժը գյուղացիներին կարող էր խաղաղացնել միայն ժամանակավորապես: Բազմամիլիոն գյուղացիության ծանր դրությունը շարունակ մղում էր նրանց դեպի ավելի ու ավելի վճռական պայքարի ճանապարհը:

Բանվորական և գյուղացիական շարժման աճման այսպիսի պայմաններում մեր կուսակցությունն ուժեր էր հավաքում: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների թիվն աճեց, ամրացավ նրանց կապը բանվորական մասսաների հետ, ուժեղացավ նրանց գործունեությունը: «Իսկրան» Լենինի ղեկավարությամբ այդ կազմակերպությունների նոր համագումարն էր նախապատրաստում, վորպեսզի նրանց իսկապես միացնի և մի բանվորական կուսակցություն կազմի:

Յերկրորդ համագումարը: Պառակտում. բոլշևիկներ յեվ մենշևիկներ:

Այդ համագումարը (հաշվով արդեն յերկրորդը) հավաքվեց 1903 թվին արտասահմանում (Անգլիայի մայրաքաղաք Լոնդոնում): Այդ համագումարին մասնակցում էյին բազմաթիվ կազմակերպություններ, ընդամենը մոտ հարյուր մարդ: Համագումարն ընդունեց մի ծրագիր, ուր վորոշված էր պայքարի

վերջնական նպատակը և այն միջոցները, վորով բանվոր դասակարգը պետք է հասնի նրանց իրականացմանը։ Ծրագիրն ընդունվեց միաձայն։ Բայց մի քանի խնդիրների վերաբերմամբ համագումարում մեծ տարաձայնություններ կային։

Այսպես, առաջին տարաձայնությունը այն հարցի մասին եր, թե ում պետք է կուսակցության անդամ համարել։ Լենինը և նրա կողմնակիցները պահանջում եյին, վոր կուսակցության անդամ համարվի վոչ թե ամեն մի համակրող, այլ միայն նա, ով ոգնում է կուսակցությանը անձամբ մասնակցելով կուսակցության վորևե կազմակերպության։ Մյուսները, Մարտովի գլխավորությամբ, առաջարկում եյին կուսակցության դռները լայն բաց անել ամեն մի համակրողի առաջ։ Համագումարն ընդունեց Մարտովի առաջարկությունը, և միայն կուսակցության հետագա համագումարում ուղղվեց այդ սխալը։ Մյուս տարաձայնությունն առաջացավ այն հարցի առթիվ, թե բանվոր դասակարգն ինչպես պետք է վերաբերվի բուրժուազիային։

Բանն այն է, վոր ամենաառաջավոր բուրժուազիայի և նրա ինտելիգենցիայի մեջ շատ կային Ռուսաստանում տիրող կարգերի փոփոխման կողմնակիցներ։ Նրանցից շատերը համաձայն եյին, վոր միահեծան իշխանությունը սահմանափակված լինի (սահմանադրությամբ) հատուկ որենքներով, վոր ժողովրդին քաղաքական ազատություններ տրվեն։ Այդ ազատամիտ բուրժուազիան (ինչպես ասում եյին նրանց) սկզբում փորձեց պոչ խաղացնել բանվորների հետ, ցանկանալով ոգտագործել բանվորական շարժումը, վորպեսզի ստիպի ցարի կառավարությունը — իշխանությունից իրեն ել բաժին հանել։ Բայց այդ բուրժուազիան յերբ վոր տեսավ, վոր բանվորական շարժման աճման հետ միասին բանվոր դասակարգն սկսում է մտածել վոչ միայն փոքրիկ փոփոխությունների մասին, այլ և այն մասին, վոր խորտակի ամբողջ կապիտալիստական հասարակարգը, այդ բուրժուազիան իսկույն զգաց, վոր բանվոր դասակարգն իր մահացու թշնամին է։ Լենինը լավ եր հասկանում, վոր ազատամիտներն ուզում են իրենց նպատակների համար միայն

ոգտագործել բանվորական շարժումը ու հետո բանվորներին սղմել լծի տակ։ Նա ասում եր, վոր ազատամիտ բուրժուազիան անհույս դաշնակից է, վոր բանվոր դասակարգն ինքը պետք է անցնի ազատագրման շարժման գլուխ ու իր յետևից տանի գյուղացիությանը։ Իսկ Մարտովն ու իր կողմնակիցները Լենինի այս առաջարկության հակառակորդներն եյին։ Ու այս հարցում Լենինի կողմն անցավ համագումարի մեծամասնությունը։

Շատերին բոլշևիկների (Լենինի կողմնակիցներին սկսեցին այսպես կոչել) և մենշևիկների (այսպես կոչվեցին Մարտովի կողմնակիցները) միջև յեղած այս տարաձայնությունն ըստ եյության դատարկ բան եր թվում։ Բայց կյանքը ցույց տվեց, վոր կուսակցության այս յերկու մասերի միջև հսկայական անդունդ կար։ Հետզհետե նրանց այդ տարաձայնություններն ավելի ու ավելի մեծացան։ Ու դա վերջացավ նրանով, վոր բոլշևիկներն անցան ղեկավարելու ամբողջ բանվոր դասակարգին ու գյուղացիությանը, իսկ մենշևիկները գլորվեցին մինչև սպիտակների հետ դաշնակից դառնալը, մինչ այնտեղ, վոր զինված կռվի դուրս յեկան Խորհրդային իշխանության, բանվորների ու գյուղացիների իշխանության դեմ։

Կառավարությունը տեսավ, վոր բանվորական շարժման առաջն առնել այլևս չի հաջողվի, սկսեց խորամանկության դիմել, խաբել բանվորներին։ Կառավարությունը մտածում եր. չի՞ կարելի արդյոք բանվորական շարժումը մի ուրիշ հունի մեջ դնել այնպես, վոր նա ուղղված չլինի ցարի դեմ, կալվածատերերի դեմ. չի՞ կարելի արդյոք անվնաս դարձնել այդ շարժումը։

Առաջավոր բանվորներին ձերբակալելու ժամանակ ժանդարմներն սկսում եյին համոզել, վոր իբր թե կառավարությունն ամենևին ել բանվորներին դեմ չի և պատրաստ է բավարարել նրանց որինավոր պահանջները։ Յեթե միայն հըմաորեն աշխատեն, բանվորներին հեղափոխական ճանապարհով չտանեն, ապա կառավարությունը խոստանում է նրանց աջակցել։ 1902 թվին Մոսկվայում Մոսկվայի պահնորդական բաժնի պետ Զուբատովը մեքենայական արդյունաբերության

բանվորների փոխադարձ օգնության ընկերություն ե հիմնում։ Այստեղ նրան օգնում են պրոֆեսոր Դենը, Ոզերովը և այլք։ վորունք բանվորներին դասախոսություններ են կարդում. միևնույն ժամանակ բանվորների հետ կրոնական խորհրդակցություններ են ունենում ու դրանով աշխատում են հեռացնել նրանց քաղաքական պայքարից։

Բայց շատ շուտով պարզվեց, վոր ժանդարմներն իզուր են աշխատում այդ ճանապարհով խաբել բանվորներին։ Յերբ բանվորներն ընդհարվում եյին իրենց տերերի հետ, նրանք դիմում եյին ժանդարմների հիմնած այդ կազմակերպություններին։ Յեվ ահա նրանց աչքի առջև ստուգումն եր տեղի ունենում, թե ում կողմը կպահեն այդ զուբատովական կազմակերպությունները — բանվորների՞, թե կապիտալիստների։ Յերբ մի քանի դեպքերում Զուբատովի կազմակերպությունները բանվորների կողմը պահեցին, այն ժամանակ կապիտալիստները սեղմեցին կոճակները. իսկ վորովհետև կառավարությունը կապիտալիստների կամքն եր կատարում, ապա, իհարկե, նա ստիպված եր այդ զուբատովական պաշտպանությունները դադարեցնել։ Զուբատովի գործն այլևս վոչ մի կերպ չեր կարող բանվորներին խաբել։

Բանվորներին այդ ձևով խաբելու վերջին և ամենավտանգավոր փորձը այսպես կոչված «գապոնովշչինան» եր։

1903 թվին, ցարի մինիստր Ֆոն Պլեվեյի թույլտվությամբ, հիմնվեց այսպես կոչված «Ռուս գործարանային բանվորների ընկերությունը»։ Այդ ընկերության գլուխն եր Գապոն քահանան, վորը բանվորների մոտ սրտաբաց բարեկամ եր ցույց տալիս իրեն, այնինչ ծածուկ ցարի պահնորդական բաժնի գրասենյակներում խորհուրդ եր անում, թե բանվորներին ինչպես հեռացնեն, շեղեն հեղափոխական ճանապարհից։

Բայց, ինչպես գիտենք, ինչպես նման բոլոր գործերը, սա յել հաջողություն չունեցավ։ 1905 թվի վճռական դեպքերը վրա հասան. և կեղծիքը բացվեց բանվորների առջև։

Բանվորների և գյուղացիների հուզմունքը չեր դադարում։ Յեվ ահա ռուս յապոնական պատերազմը յեկավ կրակի վրա

յուղ ածելու։ Բանն այն ե, վոր օտարերկրյա կապիտալիստները, վոր իրենց կապիտալները դրել եյին Ռուսաստանի արդյունաբերության գործում և ռուսական համարյա ամբողջ արդյունաբերությունը գրավել եյին, շարունակ նորանոր յերկիրներ եյին փնտրում, վոր ավելի մեծ օգուտներ ստանան։ Ցարի կառավարությունը նրանց հաճոյանալու համար սկսեց մտածել, վոր հեռավոր Արևելքի (Սիբիրից դենը) հարուստ, բայց անպաշտպան յերկիրները՝ Կորեան, Մանջուրիան իր ձեռքը գցի։ Ընդսմին ցարն ու իր յեղբայրներն ել մտածում եյին, թե այնտեղից նոր միջոցներ կստանան իրենց խենթ ու շռայլ կյանքի համար։ Բայց դեպի Կորեա իր թաթը մեկնում ե և մի ուրիշ գիշատիչ պետություն՝ Յապոնիան։ Հետևանքը լինում ե պատերազմը։

Միևնույն ժամանակ ցարի կառավարությունն այն ել ե մտածում, վոր պատերազմը աշխատավորության ուշադրությունը կհեռացնի իրենց ներքին, ընտանեկան անկարգություններից, և աղմուկի մեջ ավելի հեշտ կլինի հեղափոխական շարժման հետ գործ տեսնել։

Պատերազմը հենց սկզբից ցարի կառավարության համար անհաջող գնաց։ Ռուսական հրամանատարներն անշնորհք եյին, կողոպտում եյին զինվորներին, և հետևանքն այն յեղավ, վոր յապոնացիք ջարդեցին ռուսական զորքը, ջրասույզ արին ռուսական նավատորմիղը։ Յեվ ապա պատերազմն իր անհաջողություններով, հազարավոր զոհերով, թանգություն առաջացնելով ինքն արդեն մեծ թափ տվեց հեղափոխական շարժման աճմանը թե բանակում, թե նավաստիների մեջ, թե բանվորների և թե բազմամիլիոն գյուղացիության մեջ։ Իրենց ձայնը բարձրացրին նաև ազատամիտ պրոֆեսորները և մնացած ազատամիտ բուրժուազիան, վոր ցարի կառավարությունից զանազան ազատություններ և ժողովրդական ներկայացուցչական ժողով եյին պահանջում։

Մոտենում եյին 1905 թվի հեղափոխական օրերը։ Այդ օրերին պետք եր ճշտել, վորոշել, թե ինչ ճանապարհներով, ինչ միջոցներով պետք ե պայքարել ցարիզմի դեմ։ Այստեղ եր,

վոր բացվեց, թե ինչ անդունդ կա բոլշևիկների ու մենշևիկների միջև։

Լենինը բոլշևիկների գլուխն անցած պայքարում է բանվոր դասակարգի յեվ գյուղացիության միության համար

Ի՞նչ էին առաջարկում բոլշևիկները Լենինի գլխավորությամբ։ Նրանք ասում էին, վոր ցարիզմը տապալելու ժամանակը յեկել է։ Վոր միակ դասակարգը, վոր կարող է պայքարի գլուխ հանդիսանալ, դա բանվոր դասակարգն է։ Վոր այդ պայքարի միջոցները պիտի լինեն ընդհանուր գործադուլը և զինված ապստամբությունը։ Վոր ազատամիտ բուրժուազիան հուսալի դաշնակից չե, վոր հենց առաջին դեպքում նա կդավաճանի իրենց։ Վոր բանվոր դասակարգի միակ դաշնակիցը գյուղացիությունն է։ Բանվորները պետք է աջակցեն գյուղացիության պայքարին կալվածատերերի դեմ, հողի համար մղվող պայքարին։ Վոր բանվորներն ու գյուղացիները պետք է տապալեն ցարին, իրենց հեղափոխական կառավարությունն ստեղծեն, վորը և նոր կարգեր կհիմնի։ Ի հարկե, պրոլետարիատն այն ժամանակ չեր կարող իր վերջնական ծրագիրը — սոցիալիզմն իրագործել։ Բայց առաջին հաղթությունը պետք է հեշտացներ այդ հետագա աշխատանքները։

Կնշանակի Վլադիմիր Իլյիչը վոչ թե փետրվարյան և վոչ էլ հոկտեմբերյան հեղափոխությունից է սկսել քարոզել բանվորների ու գյուղացիների դաշինքի մասին. այլ քսան տարի առաջ էլ նա քարոզել է այդ բանը, ստեղծել ու ամրապնդել։ Դեռ 1903 թվին Վլադիմիր Իլյիչը մի գրքույկ գրեց «Գյուղական չքավորներին» անունով։ Այդ գրքույկում նա ամենապարզ լեզվով (այնքան պարզ, վոր մինչև այն ժամանակ վոչ վոք այդպես չի դիմել գյուղացիությանը) բացատրում է, թե ինչով է լավ մեր կուսակցությունը, ինչի՞ յե ձգտում նա և ինչ ճանապարհներով։

Գյուղացիների համար գրված այդ գրքույկում Լենինը բացատրում է, թե քանի կապիտալիզմը գոյություն ունի, գյուղացին չի կարող վստահ լինել, թե նա չի քայքայվի, հարուստի ու կալվածատերի գերին չի դառնա. և դրա համար էլ գյու-

ղի չքավորությունը պետք է միանա քաղաքի բանվորների հետ և միահամուռ ուժերով գործեն։ Նա դեռ են ժամանակ եր ցույց տալիս, վոր գյուղացիները պետք է վերցնեն բոլոր հողերը —վոչ միայն կալվածատերերի, այլ յեկեղեցական, վանքական, ցարին ու նրա ընտանիքին պատկանող հողերը։

Կալվածատիրական հողերի պայքարի համար, ճորտատիրության ժամանակներից մնացած սովորությունները վերացնելու համար ասպարեզ դուրս կգա վոչ միայն գյուղի չքավորությունը, այլ և ամբողջ գյուղացիությունը, նույնիսկ նրա ունևոր շերտերը։

Ու բանվոր դասակարգն առաջին շրջանում պետք է աջակցի ամբողջ գյուղացիությանը, նրա պայքարին կալվածատերերի դեմ։

Բայց գյուղի չքավորությունը (գյուղի պրոլետարներն ու կիսապրոլետարները) հարուստների հետ յերկար ժամանակ չի կարող առաջ գնալ։ Միայն առաջին քայլը, այն է՝ կալվածատիրական լծի թոթափելը—նրանք միասին կանեն։ Իսկ յերբ պայքար կսկսվի ամբողջ կապիտալիստական կարգերի դեմ բուրժուազիայի տիրապետությունը տապալելու դեմ,—այստեղ արդեն գյուղի հարուստները դուրս կգան գյուղի չքավորների դեմ։

«Թող գյուղում ապրող ամեն մեկը լավ նայի իր շուրջը —գրում եր Լենինը են միևնույն գրքույկում—թե ինչպես հաճախ հարուստ գյուղացին խոսում է ազաների ու կալվածատերերի դեմ։ Թե ինչպես են նրանք գանգատվում, վոր ժողովրդին նեղում են, վոր ազաների հողերը զուր տեղն անմշակ մնում են։ Ինչպես են նրանք սիրում զրույց անել (յերես առ յերես), վոր հարկավոր է, ախար, հողը գյուղացու ձեռքը տալ։ Հարուստի ասածին կարելի՞ է հավատալ։ Վո՛չ։ Նրանք վոչ թե ժողովրդի համար են հողն ուզում, այլ իրենց։ Նրանք հենց հիմա յել թե գնած, թե այլ հող շատ ունեն, բայց դրանով չեն բավականանում։ Կնշանակի գյուղի չքավորությունը հարուստների հետ չեր կարող յերկար ժամանակ առաջ գնալ կալվածատերերի դեմ։ Նրանց հետ մենք միայն առաջին քայլը կարող ենք անել, իսկ հետո պետք է ջոկ-ջոկ գնանք»։

Ուստի գյուղական չքավորությունը պետք է պատրաստվի, որ քաղաքի բանվորների հետ շարունակի իր հետագա պայքարը քաղաքի և գյուղի բուրժուազիայի դեմ։

Իսկ միջակն ում հետ պիտի գնա այդ պայքարի ընթացքում։ Ու դեռ քսան տարուց էլ ավելի առաջ Լենինն ուղիղ և պարզ պատասխան է տվել այդ հարցին. «Ամեն տեղ, ուր պայքար է սկսվում հարուստների ու չքավորների միջև,— միջակ գյուղացին մեջտեղն է ընկնում և չի իմանում ուր գնա։ Հարուստներն իրենց կողմն են կանչում.— Չէ՞ որ դու էլ սեփականատեր ես, դու ինչ գործ ունես տկլոր բանվորի հետ։ Իսկ բանվորներն ասում են.— Հարուստները քեզ խաբում են ու հետո հենց քեզ էլ կզբնեն. քեզ համար ուրիշ փրկություն չկա, քան օգնել մեզ բոլոր հարուստների դեմ պայքար մղելու»։

Եվ բանվոր դասակարգը, և գյուղական չքավորությունը միջակ գյուղացուն իրենց դաշնակիցը պիտի դարձնեն։

Բոլորովին ուրիշ կողմն էին ձգում մենշևիկները։ Նրանք կարծում էին, որ գյուղացիությունը չի կարող հեղափոխական դեր խաղալ, որ պրոլետարիատը չպետք է մտածի ցարիզմի դեմ վճռական պայքար մղելու մասին։ Նա պետք է միայն աջակցի ազատամիտ բուրժուազիայի շարժմանը։

Մենշևիկներին հարեց Պլեխանովը։ Այն ժամանակ իր առանձին ծրագիրն էր մեջտեղ բերում Տրոցկին։ Նա ասում էր, թե պետք է տապալել ցարին և բանվորական կառավարություն ստեղծել։ Իսկ գյուղացիությունը; Իսկ գյուղացիությունը, նա էլ մենշևիկների նման հաշվի չէր առնում։ Նա ասում էր, որ բանվոր դասակարգը գյուղացիության հետ չը պիտի գնա, որ յեթե պրոլետարիատին հաջողվի հաղթել ցարիզմին, ապա նրա շահերը կընդհարվեն գյուղացիության շահերին, և նրանց միջև պայքարն անխուսափելի է։ Այս վնասակար հայացքների դեմ կռվում էր այն ժամանակ Լենինը, և, ինչպես գիտենք, այժմ կյանքը ցույց տվեց, որ սխալ էին այդ տեսությունները՝ ինչպես ասում էին, «պերմանենտ» (չընդհատվող) հեղափոխության տեսությունը։

Այն ժամանակ մի ուրիշ քաղաքական կուսակցություն էլ ստեղծվեց, որ կոչվում էր սոցիալիստ-հեղափոխականների (կամ, ռուսերեն սկզբնատառերով՝ էս-էռների) կուսակցություն։ Խոսքով գյուղացիության պաշտպան հանդիսանալով, գործնականում նրանք միայն այն պահանջներն էին առաջադրում, որ գյուղի կուլակ, ունևոր մասի շահերին էին միայն համապատասխանում։ Ու հետո էլ, ինչպես գիտենք, էսէռները գլորվեցին մինչև այն անդունդը, որ զինված կռիվ դուրս եկան գյուղացիական իշխանության դեմ։

Ինչպես մենք արդեն անցել ենք, 1905 թվի հեղափոխությունն ամբողջովին հաստատեց Լենինի և բոլշևիկների ուսմունքը։

ՀԱՐՑԵՐ

1. «Եկոնոմիստներն» ինչո՞ւ համար վնասակար էին բանվոր դասակարգին։
2. «Իսկրա»-ն ինչ նշանակություն ունեցավ Ռուսաստանի բանվորական կուսակցություն ստեղծելու գործում։
3. Կուսակցության անդամ լինելու խնդրի նկատմամբ առաջացած տարաձայնությունն ինչո՞ւ սկիզբ դարձավ ամբողջ կուսակցության պառակտման։
4. Ինչո՞ւ ճիշտ էր Լենինի ասածը, որ բանվորներին առաջարկում էր չվստահել ազատամիտ բուրժուազիային, անձամբ անցնել բոլոր աշխատավորների գլուխը՝ պայքարելու նրանց ազատության համար։
5. Լենինն ինչպես էր պատկերացնում բանվոր դասակարգի և գյուղացիության միությունը։

ՉՈՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Յերկրորդ գլխի մեջ պատմեցինք, թե ինչքան ծանր եր գյուղացիության դրությունը կալվածատիրական-կապիտալիստական կարգերում։ Ինչքան ավելի յեր զարգանում կապիտալիզմը, այնքան ավելի յեր ծանրանում գյուղացիության հիմնական զանգվածի դրությունը, վորի զգալի մասն ստիպված եր լինում թողնել իր տնտեսությունը և քաղաք գնալ աշխատանքի։ Այստեղ նա աշխատանք եր գտնում գործարաններում ու գավոդներում։

Այս բանվոր պրոլետարների* դրությունը գյուղացիների դրությունից ավելի լավ չեր։ Իրենց ձեռքերով, գործարաններում, ստեղծելով բոլոր արժեքները, բոլոր հարստությունները, նրանք իրենց աշխատանքի համար վողորմելի վարձատրություն եյին ստանում, այնինչ ձեռնարկության տերը հսկայական արդյունքներ եր ստանում։

Մենք գիտենք, վոր կալվածատերն ապրում եր գյուղացիների հաշվին, անհելի չափով բահրա ստանալով, վոր վաճառական-գնորդը հարստանում եր՝ գյուղացուց շատ աժան գնելով նրա բերքի արդյունքը։ Բայց ինչ ճանապարհով է հարստանում կապիտալիստը։

Թե կապիտալիստներն ինչպես են շահագործում բանվորներին

Ա՛յ, ինչպես է լինում այդ։ Կապիտալիստը գործարան, զավոդ է շինում։ Նա կապիտալի մի մասը ծախսում է շենք է շինում, մեքենաներ է գնում, նա արդյունաբերության համար հարկավոր վառելիք (փայտ, տորֆ, ածուխ, նավթ) է գնում, հողատիրոջը վճարում է այն գետնի արժեքը,

* Պրոլետարը — դա բանվոր է, վոր սեփական միջոցներ ու արտադրության գործիքներ չունի և վորն ապրում է իր բանվորական ուժը վաճառելով։

վորի վրա շինվում է գործարանը (հողի ռենտա), բանվորներին աշխատավարձ է տալիս։ Բայց վերջիվերջո նա վորտեղից է իր ծախսածից ավելի փող ստանում։ Միթե գործարանի շենքը նրան մի արդյունք է տալիս։ Վոչ։ Մեքենաներն առանց մարդու, միթե նրան վորևե արդյունք կտային։ Իհարկե վոչ։ Նրանք հազար տարի անշարժ կկանգնեյին, յեթե բանվորները չաշխատեյին. նրանք կժանգոտեյին և իրարից կընկնեյին, յեթե բանվորները չաշխատեյին։ Հում նյութը յերբեք ինքն իրեն արդյունք չի տալիս։ Միայն մեքենաների գործողությամբ ու մարդկային աշխատանքի ոգնությամբ փոխում է իր ձևը՝ վերամշակվում է։ Ուրեմն վոչ թե հում նյութն է ինքն իրեն արդյունք տալիս, այլ այն աշխատանքը, վոր գործադրվում է նրան վերամշակելու համար։ Բայց յեթե շենքն արդյունք չի տալիս, հում նյութը, վառելիքը, մեքենաներն արդյունք չեն տալիս, հապա գործարանատերն ինչո՞ւ յե գործարան շինում, բանվորներ բռնում։ Ա՛յ, թե ինչու համար է շինում.— բանվորը պետք է կերակրվի ու հագնվի թե՛ ինքը և թե իր ընտանիքը, և որեոր վերականգնի իր բանվորական ուժը։ Դրա համար վորոշ քանակությամբ փող է հարկավոր։ Այդ քանակով փող նա ստանում է կապիտալիստից աշխատավարձի ձևով։ Բայց այդ աշխատավարձը նա ամբողջ որը բանելով չի աշխատում։ Յեթե նա որական ութ ժամ է աշխատում, ապա այդքան փող նա աշխատում է, ասենք, առաջին յերեք-չորս ժամին։ Այդ ժամանակամիջոցում նա այնքան ապրանք է արտադրում, վոր յեթե վաճառենք, կապիտալիստի շենքի վրա ծախսածն էլ դուրս կգա — մեքենաներին, հում նյութին, վառելիքին տվածն էլ — և բանվորի աշխատավարձն էլ, իսկ մնացած ժամանակը, կամ հավելյալ ժամանակը բանվորն աշխատում է վոչ թե իր, այլ կապիտալիստի համար։ Դա արդեն հավելյալ աշխատանք է, իսկ այդ ժամերին աշխատածը կոչվում է հավելյալ արժեք։ Յերբ կապիտալիստը գործարանում պատրաստված ապրանքը վաճառում է, ապա նա ստացած գումարի մի մասը գործադրում է շենքի ծախքերի, գործարանի վերանորոգության վրա, մեքենաներ գնելու, մաշվածի և նորոգման վրա, մի մասը գործարանը կա-

ռավարելու և ամեն տեսակ պետական տուրքեր տալու վրա, մի մասը բանվորներին աշխատավարձ տալու վրա, մի մասը հողատիրոջը--վորի հողի վրա շինված է գործարանը. դրանից ավելի ինչ վոր մնում է, դա յել կապիտալիստի օգուտն է: Այդ օգուտն ամբողջությամբ ստեղծվում է նրա համար բանվոր-պրոլետարիատի ձեռքերով: Կապիտալիստը բանվորի հավելյալ աշխատանքն իրեն վերցրեց:

Հիմա հասկանալի յե, թե ինչու կապիտալիստները շահագրգռված են բանվորական օրի յերկարացմամբ: Վորովհետև ամեն մի ավելի ժամը նորանոր հավելյալ արժեքներ կտա և կավելացնի կապիտալիստի օգուտը: Կապիտալիստը շահագրգռված է բանվորի աշխատավարձի կրճատմամբ, վորովհետև այդ դեպքում նրա օգուտն ելի կմեծանա: Հասկանալի յե նույնպես, թե ինչու կապիտալիստը ձգտում է իր մոտ աշխատելու ընդունել մանկահասակ յերեխաների, վորոնց կարելի յե ստիպել ավելի հնազանդ աշխատելու, ձգտում է նույնպես գյուղից յեկած աղջիկներին ու յերիտասարդներին ընդունել, վորոնց հեշտ է ադմել, վորոնք դեռ չգիտեն, դեռ չեն սովորել կապիտալիստների դեմ պայքարել.

Կապիտալիստական կուտակում յեվ սոցիալիստական կուտակում

Կարող են հարցնել, հապա հիմա ինչպես է, յերբ գործարանները բանվորագյուղացիական պետության ձեռքին են, արդյոք գործարաններում ելի՞ ստացվում է հավելյալ արժեք: Իհարկե, յերբ գործարանի ու գավոդի արտադրած ապրանքը վաճառվում է, ապա այդ տնտեսական գործունեությունից գործարանը, գավոդը, որոշ օգուտ է ստանում, իսկ այդ օգուտն այժմ ել հավելյալ արժեքից է առաջ գալիս: Բայց տարբերությունը խիստ եյական, խիստ կարևոր է:

Բուրժուական պետության մեջ կապիտալիստական կուտակում է կատարվում, իսկ Խորհրդային պետության մեջ՝ սոցիալիստական: Բուրժուական պետություններում կապիտալ են կուտակում անհատ կապիտալիստներ կամ շահագործող-կապիտալիստների մի խմբակ: Իսկ Խորհրդային պետության մեջ կուտակում է բանվոր դասակարգը և նրա համար, վոր այդ

միջոցները գործադրի աշխատավորների ընդհանուր կարիքների համար, ժողովրդական տնտեսության համար, աշխատանքի լիակատար ազատության համար, մարդը մարդով շահագործվելն իսպառ վոչնչացնելու համար:

Պրոլետարիատի տարբերությունը արհեստավորից

Ի՞նչ տարբերություն կա արհեստավոր գյուղացու, տնայնագործ գյուղացու, կապալառու գյուղացու մի կողմից և պրոլետարիատի միջև մյուս կողմից:

Գյուղացի արհեստավորը, գյուղացի տնայնագործը, գյուղացի կապալառուն սեփականություն ունի, պրոլետարիատը չունի: Ճիշտ է միջին թվով տնայնագործ արհեստավորի ընդհանուր վաստակը նույնիսկ քիչ է, քան վարձու բանվորինը: Շատ հաճախ այդպիսի տնայնագործները միայն հացի փող են վաստակում: Բայց, այնուամենայնիվ, ամեն մի փոքրիկ արհեստավոր-տնայնագործ ինքն իր մեջ մտածում է, թե, համենայն դեպս, ինքը պրոլետար չէ, վորը գործարան է գնում աշխատելու: Նա յերազում է այն մասին, վոր «գործերը կարգի կընկնեն», անկախ գործատեր կդառնա, վաշխառուի պարտքից կազատվի, մի յերկու-յերեք բանվոր կբռնի և կապրի իբրև տեր: Պրոլետարը շատ հազվադեպ կարող է այդպիսի բան հուսալ: Ուստի յեվ նա պետք է ճանաչի այն միտքը, վոր պետք է կապիտալի իշխանությունը տապալել:

Բանվոր դասակարգի ծանր ու իրավազուրկ դրությունը կապիտալիզմի ժամանակ

Գործարանում բանվորների դրությունը շատ ծանր եր: Իշխանությունը տիրոջ կողմն եր, որենքն ամեն բան թույլ եր տալիս տերերին: Ուստի շատ գործարաններում ու գավոդներում (այդ բանը ծերունիները մինչև հիմա յել հիշում են) բանվորական օրը 12—14 ժամից պակաս չեր, հասնում եր մինչև 18 ժամի: Ամեն տեղ գիշերն ել եյին բանում. շատ տեղ տոն օրերն ել եյին բանում: Յերեխաները, դեռահասները ու կանայք շատ ավելի եյին յենթարկվում շահագործման, վորովհետև նրանք ավելի անպաշտպան եյին: Մանկան աշխատանքի շահագործումը վոչ մի բանով չեր սահմանափակված 8 - 10 տարեկան յերեխաներն օրական 14 ժամ բանում եյին:

Թեև 1845 թվին որենք հրատարակվեց, վոր 12 տարեկանից փոքր յերեխաներին գիշերը բանեցնելն արգելվում եր, բայց այդ որենքը մնաց թղթի վրա, վորովհետև որենքը խախտելու համար վոչ մի պատիժ չեր տրվում և վոչվոք չեր հետևում, վոր կատարվի որենքը։ Այդ որենքը հրատարակվել եր մարդկանց աչքը թոզ փչելու համար։ Գործարանի տերը, գլխավոր վարպետը, գործարանատիրոջ գործակատարը կարող եյին իրենց (քմահաճույքով) քմքի համաձայն ընդունել և արձակել բանվորներին, պայմանից շուտ նրա աշխատավարձն իջեցնել, ամենափոքր հանցանքի համար և նույնիսկ առանց վորևե հանցանքի տուգանել։ Վարձը վճարելու վորոշ ժամանակ չկար. ամեն ինչ տիրոջ բարի կամքից եր կախված. բանվորը գալիս և խոնարհվում եր տիրոջ առջև, վորպեսզի իր վարձի գոնե մի մասը տա։ Աշխատանքի վոչ մի պաշտպանություն չկար. աշխատում եյին խոնավ, մութ, խեղդող շենքերում, իսկ ապրում եյին այնպիսի շենքերում, վոր այժմ հազիվ թե մեկը համաձայնվի ապրել։

Այն ժամանակ բանվորական մասսան յետամնաց եր, մութ ու անկազմակերպ։ Սակայն այնքան ծանր եր տիրոջ ձեռքը, այնպես անտանելի յեր ճնշումը, վոր ժամանակ առ ժամանակ բարկությունը բռնկվում եր գործադուլի կամ խռովության ձևով։

Պայքարի սկիզբը

Ճորտատիրության ժամանակ տերը կարող եր բանվորին պատժել առանց դատի, «անավարի», կարող եր նույնիսկ նրան Սիբիր աքսորել ու ծեծել։ Բանվորների տերերին չհպատակվելը հավասար եր կառավարության դեմ ապստամբելու և սովորական պատիժը բանտն ու տաժանակիր աշխատանքն եր։ Իհարկե, սկզբնական շրջաններում բանվորների այդ գայրույթն խակական խռովության նման եր։ Սովորաբար բանվորները նախ ուզում եյին, փորձում եյին համոզել գործակատարին, վարպետին, տիրոջը, վոր ավելի մարդավայել գոյության պայմաններ ստեղծեն իրենց համար, բայց վորովհետև խնդրելն ոգուտ չեր բերում, ապա յերբեմն մարդիկ եյին ուղարկում իշխանությունների մոտ, մինչ ցարը։ Դրանից ել չեր բան դուրս գալիս։ Այն ժամանակ բանվորները թողնում եյին աշխատանքը կամ, ինչպես ասում եյին, գործադուլ եյին անում. հաճախ այդ ժամանակ ծեծում եյին գործարանի վարչության պաշտոնյաներին, վոչնչացնում եյին գործարանի ունեցվածքը։ Իհարկե, բանվորներին շատ խիստ պատժում եյին, բայց վորովհետև կարգը չեր փոխվում, մի քանի ժամանակից հետո նույնը կրկնվում եր մի ուրիշ տեղում։

Գործադուլների մեծ մասն առաջ եր գալիս առանց վորևե նախնական պատրաստության, խոսքի, կազմակերպության։ Բանվորները պաշտպանվում եյին տերերի սոսկալի շահագործման դեմ—պահանջում եյին կրճատել ուժից վեր բանվորական որը, բարձրացնել աշխատավարձը, վորով այն ժամանակ բանվորները միայն իրենց կիսաքաղց գոյությունն եյին պահում։ Բանվորները իշխանության վրա դեռ հույս ունեյին, մարդիկ եյին ուղարկում, գանգատվում իրենց տերերից։

Բանվորները սկսում են գիտակցել դասակարգային շահերը յեվ կազմակերպության անհրաժեշտությունը

Բայց կյանքը սովորեցրեց բանվորներին, և նրանք անցյալ դարու յոթանասունական թվականներին պայքարի նոր ձևերի յեն անցնում։ 1878 թվին Լենինգրադի Նևսկի բամբակ մանելու գործարանի բանվորներն աշխատավարձն իջեցնելու պատճառով գործադուլ արին։ Նրանք այդ մասին գանգատ ուղարկեցին վոստիկանատուն—քաղաքապետին և նույնիսկ գահաժառանգին։ Դրա հետևանքն այն յեղավ, վոր սկսեցին գլխավորներին ձերբակալել ու աքսորել։ Այն ժամանակ 1879 թվին բանվորները նորից գործադուլ արին, բայց այս անգամ նրանք դիմեցին արդեն վոչ թե իշխանությանը, այլ մյուս գործարանների բանվորներին և ոգնություն կանչեցին։ Նրանց միացան ուրիշ գործարանների բանվորներ, գործադուլավորներին ոգնելու համար փող հավաքեցին, նրանց հետ միասին պահանջներ մշակեցին տերերին ներկայացնելու։ Գործարանատերերն այնպես վախեցան, վոր պատրաստ եյին զիջումներ անել, բայց կառավարությունը ճնշեց գործադուլը, մասսայական ձերբակալություններ տեղի ունեցան, բոլոր գործադուլավորներին մարմնական պատ-

մի չենթարկեցին։ Այս գործադուլը ցույց տվեց, վոր բանվորներն սկսել են գիտակցել իրենց ընդհանուր դասակարգային շահերը։ Այստեղից արդեն սկսվում է բանվորական կազմակերպությունների առաջ գալը։ 1885 թվին Ոռեխովո-Զույևոյի Մարոզովի հայտնի գործադուլն արդեն կատարելապես կազմակերպված առաջ յեկավ։ Գործադուլը ղեկավարում եյին յերկու բանվորներ. ու թեև այս գործադուլը ճնշվեց զինվորական ուժով, ձերբակալություններով ու աքսորներով (800 մարդ աքսորվեց), սակայն այս շարժումը ցույց տվեց կառավարությանը, ամբողջ հասարակությանը և բանվոր դասակարգին բանվորների ուժը։

Բանվորական առաջին կազմակերպությունները։ Հարավ-Ռուսական Բանվորական Միություն։ Ռուս Բանվորների Հյուսիսային Միություն

Տերերի դեմ մղած յերկար ու համառ կռվի ընթացքում բանվորների միջից սկսում են առաջ գալ այնպիսի բանվորներ, վորոնք հասկանում են բանվոր դասակարգի խնդիրները։ Յերբ 1874 թվին դատում եյին ջուլհակ բանվոր Պյոտր Ալեքսեյևին, նա պատմեց այն ծանր դրության մասին, վորի մեջ գտնվում եյին բանվորները, պատմեց, թե ինչպես բանվորներն իզուր հույս եյին դրել կառավարության վրա և իր ճառը վերջացրեց այս բառերով. «Ռուս բանվոր դասակարգը միայն իր վրա պետք է դնի իր հույսը և ել վոչվոքից ոգնություն չսպասի...։ Բարձրանում է բանվոր մարդու հզոր բազուկը ու զինվորների սվիններով պաշտպանվող բռնակալության լուծը փոշի կդառնա»։

1878 թվին Պետերբուրգում առաջ յեկավ Ռուս Բանվորների Հյուսիսային Միություն։ Այդ Միության կազմակերպողները՝ յերկաթագործ Վիկտոր Ոբնորսկին և ատաղձագործ Ստեփան Խալտուրինը կարծում եյին, վոր այս Միությունը համառուսական բանվորական կազմակերպության հիմնելու սկիզբն է հանդիսանալու։ Շուտով նրանց հաջողվեց իրենց միության մեջ մտցնել 200 առաջավոր բանվորներ։

Սրանք բանվոր դասակարգի առաջին կազմակերպություններն եյին, նոր ու կազմակերպված պայքարի նախակարապետները։

Ցարական կառավարությունը կարճ ժամանակում ջախջախեց այս կազմակերպությունները։

Բայց հետզհետե ավելի ու ավելի աճեց բանվորների սերտ միությունը։ Սկզբում բանվորները միայն մի գործարանի պահանջներն եյին դնում, բայց յերբ համոզվում եյին, վոր դրանից բան չի դուրս գալիս, վոր կենտ-կենտ ավելի հեշտ է ճնշել ու ջարդել, այն ժամանակ զանազան գործարանների առաջնակարգ բանվորներն սկսում են համաձայնության գալ միմյանց հետ՝ ընդհանուր պայքարի, ընդհանուր պահանջների համար։ Շուտով նրանք հասկացան, վոր զանազան գործարանների ու գավառների բանվորները մի ընդհանուր շահ, մի ընդհանուր պահանջ ունեն։ Ինքն իրեն նրանք արդեն սկսում են մտածել միասին պայքարի, մի ընդհանուր, կանոնավոր ծրագրի մասին։ Յեվ ահա նրանք իմանում են, վոր ուրիշ ավելի առաջավոր յերկրներում, ուր արդյունաբերությունն ավելի շուտ է (քան թե Ռուսաստանում) սկսել զարգանալ — կապիտալիստական կարգերը, հետևապես և բանվոր դասակարգն ավելի վաղ են ծագել, — նույնպես պայքար կա բանվորների ու կապիտալիստների միջև. վոր բանվորներն այնտեղ իրենց կազմակերպություններն են ստեղծել, վորոնք և ղեկավարում են նրա պայքարը, իրենց կուսակցությունն են ստեղծել, վոր կոչվում է սոցիալիստական։

Նրանք իմացան, վոր բանվորներն սկսել են շրջապատող պայմաններն ըմբռնել և ճիշտ վորոշել իրենց անելիքներն ու նպատակները, վորին ձգտում եյին նրանք Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի ուսմունքի ոգնությամբ։ Այդ ուսմունքը (ինչպես ասում են՝ մարքսիզմը) սկսեց մեր աշխարհն ել գալ։

Ի՞նչ է մարքսիզմը և ինչպես է բանվոր դասակարգին ոգնում։

Ինչ է Մարքսի ուսմունքը

Մարքսն իր աշխատություններում մանրամասն վեր է լուծել կապիտալիստական հասարակության կառուցվածքը։ Նա բացատրել է, թե ինչպես է ծագել կապիտալիստական հասարակարգը, ինչպես է զարգանում, կապիտալիստներ ինչ ճանապարհով են

սատնում իրենց շահույթը։ Նա սովորեցրեց, վոր կապիտալիզմի աճման հետ աճում է և բանվոր դասակարգի ուժն ու միությունը, վոր վերջիվերջո կապիտալիզմի զարգացումն իր սեփական կործանմանն է հանգելու։ Նա սովորեցրեց, վոր բուրժուական հասարակարգի գերեզմանափորը բանվոր դասակարգը կլինի, վորն իր դրության պատճառով ստիպված է մըշտական պայքար մղել կապիտալիստների դեմ։ Մարքսի ուսմունքն այդ պայքարի նպատակն էլ է ցույց տալիս,—կապիտալիզմի իշխանության վոչնչացումն, պետական իշխանության գրավում, բոլոր միջոցների և արտադրության գործիքների գրավումն (գործարանների, հանքերի, յերկաթգծի և այլն)։ Բանվոր դասակարգը պայքարի համար պետք է միանա - մի կուսակցություն ստեղծի, նա պետք է իր կողմը գրավի և մյուս աշխատավորներին (որինակ՝ ամենաաղքատ գյուղացիությունը)։ Բանվոր դասակարգն իր իշխանությունը պետք է հաստատի նրա համար, վոր ազատություն տա բոլոր աշխատավորներին, իր տնտեսությունը համայնական դարձնի, վոչնչացնի մարդու մարդին շահագործելը—կոմմունիստական հասարակություն կառուցի։

Առաջին ռուս մարքսիստները

Մարքսիզմի կողմնակիցներն սկսեցին յերևալ և Ռուսաստանում։ Այսպես՝ 1883 թվին ցարի կառավարության հալածանքներից փախած հեղափոխականների մի խումբ արտասահմանում Պլեխանովի գլխավորությամբ առաջին մարքսիստական կազմակերպությունը հիմնեց և ինքն իրեն «Աշխատանքի ազատագրության խմբակ» անվանեց։ Այս խմբակը մարքսիզմի մասին արած իր քարոզներով հեղափոխական շարժմանը մեծ ոգուտ բերեց։

1895 թվին Պիտերում կազմակերպվում է «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն»։ Այս Միությունը կազմակերպեց Վլադիմիր Իլյիչ Լենինը։ Ու թեև Լենինը 1896 թվին ձերբակալվեց և 3 տարով աքսորվեց Յենիսեյսկի նահանգի Մինուսինսկի գավառը, Միության պայքարի գործը կանգ չառավ։ Նա Պետերբուրգում շուտով կրկին ծնունդ առավ։ Իսկ 1896 թվին առաջ է գալիս Մոսկվայի Միությունը, 1897-ին

Կիևինը, ու բանվորական շարժմանը զուգընթաց նաև մյուս արդյունաբերական քաղաքներում, Բանվոր Դասակարգի Ազատագրության Պայքարի Միությունը — իբրև գեղեցիկ խոսք չեր վոր պայքարի միություն եր կոչվում։ Նա իսկապես շատ գործոն մասնակցություն եր ունենում այդ ժամանակներում կատարվող բանվորական պայքարին։

Մինչև բանվորական շարժման առաջ գալը հեղափոխական պայքար եյին մղում մեծ մասամբ ինտելլիգենցիայից յելած մարդիկ և ուսանողները։ Նրանք մտածում եյին հենվել գյուղացիության վրա, ու թեև վերջինս անկազմակերպ եր, խավար ու անգիտակից, ջանում եյին պայքարի քաշել նրան։ Նրանք սպանության փորձեր եյին անում ցարի ու նրա արբանյակների դեմ։ Մենք գիտենք հերոս հեղափոխականներ Ժելյաբովի, Սոֆիա Պերովսկայի անունները, վոր մահ հասցրին Ալեքսանդր Յերկրորդին, մենք հարգում ենք և ուրիշ նարոդնիկ-հեղափոխականների հիշատակը, վոր իրենց կյանքը զոհեցին հեղափոխական պայքարում։ Բայց ինչքան էլ մեծ լիներ նրանց հերոսությունը, այնուամենայնիվ բարձրացնել ու միացնել իրարից անջատված ու հեռու ընկած գյուղական մասսաները նրանք չկարողացան. իսկ ցարի անհատ պաշտոնյաներին սպանելը չեր սպանում միահեծան կարգը։ Շարժումը ջախջախվեց։ Յեվ ահա նրանք, ովքեր ուզում եյին պայքարել աշխատավորների ազատության համար, սկսեցին դիմել այն միակ ուժին, վոր կարող է ձեռք բերել բոլոր աշխատավորների ազատությունը։ Այդ ուժն այն ժամանակ առաջ յեկող բանվոր դասակարգն եր, վոր աճելով պետք է ազատագրական շարժման գլուխն անցներ։ Առաջին ռուս մարքսիստներն էլ այդ սկսեցին քարոզել։

Պայքար նարոդնիկների դեմ

Բայց շատ հեղափոխականներ, վոր «ժողովրդի մեջ» եյին գնում և ժողովրդի բարեկամն եյին համարում իրենց, չեյին հասկանում այս բանը, չեյին համաձայնվում այս բանի հետ։

Նրանք չեյին տեսնում և չեյին ուզում տեսնել բանվոր դասակարգի ուժը։ Մարքսիստներն ապացուցում եյին, վոր

ճորտատիրությունը վերացնելուց հետո Ռուսաստանում զարգանում է կապիտալիզմը, և նրա հետ միասին աճում ու ամրանում է բանվոր դասակարգը։ Իսկ նարոդնիկները հայտարարում եյին, թե Ռուսաստանն ամենևին էլ են ձևով չպիտի զարգանա, ինչ վոր մյուս յերկիրները, վոր Ռուսաստանում կապիտալիստական կարգերը չեն զարգանալ, դրա համար էլ բանվորական շարժումն առաջնակարգ նշանակություն չի ունենալ։ Նարոդնիկներն ասում եյին, վոր դեպի սոցիալիզմ տանող ճանապարհը վոչ թե կապիտալիզմի զարգացման վրայով է, վոր գյուղացիական Ռուսաստանում իսկի չի յել լինիլ, այլ գյուղացիական համայնքների (община) վրայով, ուր բնությունից արդեն սոցիալիզմի սաղմեր կան։ Նրանք չեյին տեսնում, վոր այդ համայնքը հետզհետե ավելի յե քայքայվում ներսից, վոր ինքը գյուղացիությունը շարունակ ավելի զգալի կերպով բաժանվում է կուլակների ու չքավորների։

Ռուս մարքսիստները Պլեխանովի ու Լենինի գլխավորությամբ ապացուցում եյին, վոր ժողովրդի այդ սուտ «բարեկամները» սխալվում են։ Լենինը մի գիրք գրեց — «Ինչ է ժողովրդի բարեկամը»։ Այդ գրքում նա ցույց եր տալիս, վոր նարոդնիկ-գրողների գեղեցիկ խոսքերն իսկապես վնասում են ժողովրդին։ Նա ցույց եր տալիս, վոր ինչքան էլ կապիտալիստները ժխտեն կապիտալիզմի զարգացումը, բայց, այնուամենայնիվ, նա կա, նրան կանգնեցնել չի կարելի, նրանից խուսափել չի լինիլ, ուրեմն պետք է ուսումնասիրել, բանալ կապիտալիզմի օրենքները, գտնել ու կազմակերպել այն ուժը, վորն ընդունակ է խորտակելու կապիտալիզմը։

Ու այդ գրքում նա հայտարարեց, վոր այդ ուժը բանվոր դասակարգն է, վոր իր յետևից տանելով գյուղացիությունը, Ռուսաստանում կոմունիստական հեղափոխություն կանի։

Իսկ նարոդնիկների ուսմունքն ինչո՞ւ յեր վնասակար։

Ապացուցելով, վոր կապիտալի զարգացումը Ռուսաստանին չի վերաբերում, հենց դրանով նարոդնիկներն աշխատավոր մասսան և նրանց կազմակերպություններին շփոթեցնում եյին։ Յեթե Ռուսաստանում կապիտալիզմ չի լինիլ, ապա էլ ինչ խոսք

կարող է լինել բանվոր դասակարգի առաջնորդության ու ղեկավարության մասին։ Ըստ նարոդնիկների այդպես եր։

Հենց դրանով, վոր նրանք ժխտում եյին բանվոր դասակարգի ղեկավարող դերը, հենց դրանով իրենք իրենց «ժողովրդի» «կեղծ բարեկամներ» եյին դարձնում։ Ինչպես այժմ գիտենք, կյանքն ամբողջովին արդարացրեց Լենինի հայացքները, վոր արդեն սրանից շատ տարիներ առաջ եր արտահայտել։

Աշխատավորների գիտակցության զարգացման և նրանց հեղափոխական կազմակերպությունների համար ահագին նշանակություն ունեցավ նույնպես Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքույկը։ Այդ գրքում Վլ. Իլյիչ Լենինը ցույց եր տալիս, թե ինչպես կապիտալը մեր գյուղացիական Ռուսաստանում քայլ առ քայլ մեծ նվաճումներ է անում, ինչպես կապիտալը քայքայում է գյուղացիներին, ինչպես կապիտալիզմի շնորհիվ շատանում են ձի չունեցող, հողազուրկ գյուղացիները, գյուղատնտեսական բանվորներն ու կիսաբանվորները, ինչպես կապիտալիզմը քայքայում է տնայնագործներին, ինչպես ուժեղացնում է հարուստ գյուղացի-կուլակներին։ Այս գիրքը ցույց տվեց շատերին, վոր թե բանվոր դասակարգի, թե գյուղացիության համար, բացի հեղափոխությունից, ուրիշ վոչ մի յելք չկա։

ՀԱՐՑԵՐ

1. Բանվորի և գյուղացու ու տնայնագործի միջև ինչ տարբերություն կա. հեղափոխական պայքարում բանվոր դասակարգն ինչո՞ւ պետք է առաջավոր հանդիսանա։
2. Կապիտալիստի շահույթը վո՞րտեղից է գոյանում։
3. Ինչո՞ւ բանվորի իր տիրոջ դեմ մղած պայքարն ամբողջ բանվոր դասակարգի պայքար դարձավ — ամբողջ կապիտալիստական հասարակակարգի դեմ։
4. Մարքսի ուսմունքն ինչո՞վ օգուտ բերեց բանվորական շարժմանը։
5. Ինչո՞ւ նարոդնիկները, վոր իրենք իրենց «ժողովրդի բարեկամներ» եյին անվանում, իսկապես կեղծ բարեկամներ եյին։

ԶՐՈՒՅՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆ ՈՒԺԵՐԸ

Զրույցի նյութը

Այս զրույցի ընթացքում մենք կծանոթանանք այն գլխավոր յերկու ուժերի հետ, վորոնք մեր Միության հենարանն են—վորոնցից մեկը պաշտպանում ե այժմ մեր յերկրի խաղաղությունը և շինարարական աշխատանքի հնարավորություն ե տալիս, մյուսը այն ապագա սերունդը՝ վորը պետք ե այժմյան սոցիալիստական շինարարությունը հասցնի իր վախճանին և կառուցանի, կերտի կոմմունիզմը—դա կոմյերիտմիությունն ե և պիոներական կազմակերպությունը։ Կծանոթանանք այդ յերկու ուժերի կազմակերպության, կյանքի, գործի և նշանակության հետ։

Նոր սերունդ պատրաստելու հարցը

Մենք գիտենք, վոր մեր յերկրի բանվոր դասակարգը իր յետևից տանելով նաև աշխատավոր գյուղացիությանը տապալեց ցարի ու բուրժուազիայի իշխանությունը և հաստատեց բանվորների ու գյուղացիների իշխանությունը—կամ պրոլետարիատի դիկտատուրա։ Իսկ բանվոր դասակարգին առաջնորդում, ղեկավարում ե նրա ամենատոկուն, ամենաանձնվեր ու ամենաառաջավոր մասը, նրա կուսակցությունը—կոմմունիստական կուսակցությունը։ Կոմմունիստական կուսակցությունը, ինչպես տեսանք, յերկար տարիններ, ամեն տեսակ չարչարանքների միջով անցնելով, կոփվեց և պատրաստվեց այն մեծ ու հզոր գործի համար, վորին կոչված եր։ Իր իշխանությունը հաստատելուց հետո, բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը պետք ե ձգտեր ունենալ մի հենարան, մի նեցուկ—վոր նրան հույս ներշնչեր, թե իր անցյալ աշխատանքը և այժմյան սոցիալիստական շինարարությունը շարունակող կլինի, իր վերջնական վախճանին հասցնող կլինի։

Ու իր մեծ առաջնորդի հանճարեղ խորհրդով կազմակերպվեց կոմյերիտմիությունը, վոր իր մահից հետո կոչվեց Լենինկոմյերիտ Միություն։

Յերեք սերունդ

Ինչպես կոմյերիտմիությունը կոմկուսակցության փոխարինողն ե. ինչպես հոգնած ու շարքից դուրս յեկող կոմմունիստներին փոխարինում են պատրաստված ու հասուն կոմյերիտականները, այնպես ել կոմյերիտականներին փոխարինում են պիոներները, կամ յերրորդ սերունդը, վորոնք մեր կարգերի, մեր որերի սերունդ լինելով, դաստիարակվում են նոր վոգով, նոր սկզբունքներով, պատրաստ լինելու ապագայում Մեծ գործի իրական կառուցողներ լինելու։

Այսպիսով յերեք սերնդի կապն ու հաջորդականությունն ապահովվում ե կենսագործելու աշխատանքի թագավորության ամենայերջանիկ ժամանակը։

ԼԿՅԵՄ-ի կազմակերպության ձևերը նրա անդամների թիվը ԽՍՀՄ-ում Անդրկովկասում յեվ Հայաստանում.

Յերիտասարդական Միությունը իր կազմակերպչական ձևով միանգամայն նույնն ե ինչ վոր կոմկուսակցությունը։ Ամեն մի հիմնարկին կամ գործարանին կից (քաղաքներում) և ամեն մի գյուղում կա յերիտմիության բջիջ, վոր ունի իր բյուրոն ու քարտուղարը.—շրջաններում կան շրջկոմներ, շրջքարտուղարներ և հրահանգիչներ—վորոնք և ղեկավարում են բջիջների աշխատանքները. ապա կան գավկոմներ, նահկոմներ, և կենտկոմ։ Մեզ մոտ Հայաստանում գավկոմներից բարձր որգանը դա Հայաստանի Միության Կենտկոմն ե։ Ինչպես կուսակցության, այնպես ել յերիտմիության բոլոր աշխատակիցներն ընտրովի յեն և Միության ներքին դեմոկրատիան կիրառվում ե ամենալայն չափերով, թեև իր կազմակերպչական ձևով միանգամայն կենտրոնաձիգ կազմակերպություն ե։ Միությունն ունի իր կարգապահությունը, վոր խիստ ե և որինակելի։ Կոմյերիտմիությունն ունի նաև իր կանոնադրությունը, վոր շատ բաներում նմանեցրած ե կուսակցության կանոնադրությանը, բայց վորոշ կետեր—իր բնույթի և այլ պարագաների համաձայն փոփոխված ե։ ԼԿՅԵ Մի-

ությունը այժմ մի հսկա բանակ է և մեր շինարարության ու այլ աշխատանքների մեջ իր պատվավոր տեղն է բռնում։

Միության անդամների թիվը մեր ամբողջ Միության մեջ հավասար է այժմ 2,026,445 հոգու, թեկնածուներինը՝ 1,020,295 հոգու առանց Կ. բանակում յեղող կոմյերիտականների, վորոնք չեն մտնում այս թվի մեջ։ Անդրկովկասում կոմյերիտականների թիվն է 134,364 անդամ և 7,644 թեկնածու։ (Նույնպես չհաշված Կ. բանակային կոմյերիտականները), իսկ Հայաստանում կա 20,249 միության անդամ և 674 թեկնածու —բացի դրանից Հ. Կ. բանակում կան, բոլոր զորամասերում էլ, բավականաչափ անդամներ և թեկնածուներ։

Կոմյերիտմիությունը իբրև շեֆ կարմիր նավատորմղի

Այսպիսի մի մեծ, տարածված ու հզոր կազմակերպություն, վոր դեռ հեղափոխության յեռուն շրջանում, դեռ քաղաքացիական կռիվների ժամանակ իր գործուն մասնակցությունն է ունեցել, այժմ շեֆն է—այսինքն հովանավորող, առաջնորդող, ոգնողն է մեր կարմիր նավատորմիղին և չի բավականանում նյութական ու բարոյական ամեն տեսակի աջակցությամբ, այլ և նրա շարքերում աշխատելու կարմիր ու հզոր նավորդ դառնալու յե ուղարկում իր միջից ամեն տարի տասնյակ ու հարյուր հազարավոր շնորհալի ու քաջառողջ յերիտասարդներ։

Պիոներ կազմակերպության կառուցվածքը. պիոներների թիվը ԽՍՀՄ-ում յեվ Հայաստանում

Ինչպես հայտնի յե պիոներական կազմակերպությունն ամենից առաջ կազմակերպվել է Հայաստանում 1921 թվին։ Ճիշտ է, դրանից առաջ Ռուսաստանում կային նման կազմակերպություններ, բայց նրանց թե կազմակերպչական ձևերը և թե ղեկավարող-հիմնական սկզբունքները տարբեր եյին և այլ նպատակի եյին ձգտում։ 1921 թվին, այն ժամանակվա Հայաստանի լուսժողկոմը կամենալով մաքառել Ամերկոմի մանկատներում ուժեղ կազմակերպություն ունեցող սկաուտների դեմ, վորոնց ղեկավարող ըսկզբունքներն անհանդուրժելի եյին մեր կարգերում, ծրագրում է մի նոր կազմակերպություն, վոր այդ, սկզբնական շրջանում պիոներների (այն ժամանակ կոչվում եյին պատանի —

պատանի կոմմունար) կազմակերպությունն էր և շատ փոքր էր ու թույլ։ Սակայն հետզհետե շատ չի անցնում սկաուտական կազմակերպությունը միանգամայն քայքայվում է, և նրանց ղեկավարները ասպարեզից հեռանում են։

Պիոներական կազմակերպության հիմնական սկզբունքը պատանիներին կոմմունիստական դաստիարակություն տալն է—հակադրելով (մանավանդ սկզբնական շրջանում) մեր ընտանիքների և դպրոցների հին կարգերից մնացած ժառանգություններին։ Այս վեց տարվա ընթացքում պիոներական կազմակերպությունը աշխատանքի և կազմակերպչական մի քանի շրջաններ է անցել։ Այժմ հիմնական կորիզը կամ բջիջը գանազան հիմնարկներին կամ գործարաններին կից կոլլեկտիվն է —քաղաքներում, իսկ գյուղերում – դպրոցական կոլլեկտիվները, վորոնց ղեկավարում է կոլվարը։ Մեծ դպրոցներում, ուր մի քանի կոլլեկտիվներ կան, կազմակերպվում է ֆորպոստ, վոր դպրոցական աշակերտական ինքնավարության հետ կազմակերպում է դպրոցական աշխատանքները (իրենց վերաբերող)։ Շրջաններում կան շրջբյուրո և հրահանգիչներ, վորոնք ղեկավարում են շրջանի բոլոր կոլլեկտիվներին։

Շրջբյուրոները յենթարկվում են գավբյուրոներին, իսկ գավբյուրոները՝ կենտբյուրոյին—վոր մեր յերկրում աշխատում է ամբողջ Հայաստանի մասշտաբով։

Այժմ պիոներ կազմակերպության մեջ կան ամբողջ ԽՍՀՄ 2,000,000 պատանի—իսկ Հայաստանում 40,000 և մեր 12—16 տ. աշակերտության խոշոր տոկոսը այժմ պիոներ են։

Ինչպիսի պաշտպաններ են այս կազմակերպությունները մեր Միության համար

Այսպես ԼԿՅԵՄ և պիոներական կազմակերպությունը մեր խորհրդային միության հույսն ու նեցուկն են և պաշտպան Մեծ Հոկտեմբերի բոլոր նվաճումների։ Արտասահմանի մեր թշնամիները, վորոնք սարսափում են մեր կարմիր բանակից, վորքան ահ ու դողի մեջ են ընկնում մեր յերկրի յուրահատուկ անտեսական վերելքից ու սոցիալիստական շինարարությունից, այնքան էլ սոսկում է առաջացնում նրանց մեջ մեր յերեք սերունդների կապը, մեր

նոր սերնդի գիտության և կոմմունիստական վոգով զինվելը, վոր ապագայում — գուցե վոչ հեռու — փորելու յե յերկրի մեծ մասում դեռ կանգուն կապիտալիստական կարգերի գերեզմանը:

Ո՞վ է բանվորների յեվ գյուղացիների նվաճումների իրական պաշտպանը

Սակայն այժմ իրական և իսկական պաշտպանը մեր աշխատանքի, բանվորների և գյուղացիների նվաճումների, դա մեր կարմիր բանակն է: Կարմիր բանակայինները, դրանք նույն բանվոր և գյուղացի յերիտասարդներն են. բայց այն էական տարբերությունը կա կարմիր բանակի և նախկին ցարական բանակի մեջ, վոր կարմիր բանակում հրամանատարներն էլ բանվորներ ու գյուղացիներ են, իսկ ցարի բանակում հրամանատարները կալվածատերերն ու ազնվականներն էին: Բացի դրանից հիմի մեր կարմիր բանակայինը շատ ավելի հասկացող է, քաղաքականապես բարձր, և գիտե, թե ինքը ում և ինչի պաշտպանն է և ինչի համար պետք է կռվի, իսկ ցարի զինվորը տգետ էր, անհասկացող և չգիտեր, թե ինչու յե կռվում և ում է պաշտպանում:

Կարմիր բանակի հրամանատարները բանվորի ու գյուղացու ծոցից դուրս գալով շատ լավ գիտեն իրենց դասակարգի շահերը, գիտեն թե ինչ դժվարությամբ է ձեռք բերված հոկտեմբերյան նվաճումները և ամեն կերպ պաշտպան կհանդիսանան այդ նվաճումներին: Իսկ ցարական սպաները — նույնպես դասակարգային շահերից դրդված, ճնշում ու հալածում էին բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին:

Մեր ի՞նչին է պետք կարմիր բանակը

Բայց չէ՞ վոր մեր Միության մեջ բուրժուազիան հաղթված է, կործանված ու մենք խաղաղ շինարար աշխատանքով ենք զբաղված. ապա էլ մեր ինչի՞ն է պետք կարմիր բանակը, ինչու ենք այդքան յերիտասարդների աշխատանքից կտրում ու կերակրում: Լավ պետք է գիտենանք, վոր մեզ շրջապատող բուրժուական պետությունները թեև մեզ հետ և առուտուր են անում և հարաբերություն ունեն, բայց նրանք բոլորը մեզ թշնամի են ու հարմար րոպեյին, յեթե կարողանան, մեզ կխեղդեն: Մանավանդ հիմի նրանք շատ են ատամները սրում մեր դեմ և կարծես շղթա-

յում, մեզ կռիվ տալ են ուզում — Անգլիայի գլխավորությամբ. — բայց, միթե, կարող են — իհարկե վոչ: Մենք ունենք ամուր ու հզոր կարմիր բանակ, վոր պաշտպանում է մեր սահմանները և թույլ չի տալ թշնամիներին մեր յերկիրը մտնելու: Ճիշտ է, մեր կարմիր բանակը քանակով մեծ չէ, բայց մեծ է ներքին բարոյական ուժով. բացի դրանից մեր խորհրդային յերկրի ամեն մի քաղաքացի պատրաստ է պաշտպանել իր ազատությունը, և կարմիր բանակը միայն թշնամու առաջին գրոհն է, վոր պահելու յե: Յեթե արտաքին չար ու վատ թշնամիները — բուրժուական կառավարությունները չլինեյին, մենք այս ձևի կարմիր բանակ չեյինք ունենալ: Ուրեմն կարմիր բանակ կունենանք մինչ այն որը, յերբ ամբողջ աշխարհում խորհրդային կարգեր կհաստատվեն:

Կյանքը կարմիր բանակում — ինչ է սովորում կ. բանակայինը

Կյանքը մեր կարմիր բանակում դա — կոլեկտիվ ընկերական կյանք է, դա ամեն բան ընկերովի, ամենքը մեկի և մեկն ամենքի համար աշխատելու մի գեղեցիկ դպրոց է, վոր կարող է գոյություն ունենալ միայն սոցիալիստական յերկրում: Այժմ առաջվա նման զինվորները ծեծի, հայհոյանքի, անարգանքի չեն մատնված. — այժմ հրամանատարն ու կ. բանակայինն ընկերներ են, հավասար իրավունքներով ու պարտականություններով — բացի պարապմունքի ժամերից: Կարմիր բանակը իսկապես մի հսկա, մի մեծ դպրոց է, ուր գործարանից ու գյուղերից յեկող յերիտասարդները վոչ միայն զինվորական արհեստն են սովորում — վոր այժմ դուրեկան է, գրավիչ ու հեշտ, այլ և սովորում են կարդալ, գրել, հաշվել — և վոր գլխավորն է, սովորում, թե ովքեր են իրենք, ում են ծառայում, ինչու համար են սովորում և ինչ պարտականություններ ունեն — մեր յերկրի պաշտպանության նկատմամբ: Կարմիր բանակայինը սովորում է, վոր առաջ բանվորը ճնշված էր, և յենթակա ամեն տեսակ հալածանքի - գյուղացին հողազուրկ, ու աղքատ. սովորում է, վոր առաջ որենքը, կարգը, դատարանն ու դպրոցը — ամեն ինչ հարուստների ու ազնվականների համար էր: Սովորում է, վոր տերտերները միշտ իրենց խա-

բել են, վախեցրել աստծու և դժողքի անունով։ Սովորում է, թե ով է բանվոր դասակարգը, վորն է նրա կուսակցությունը —ինչպես է կազմվել, ինչ նպատակ ունի և էլի ուրիշ շատ բան են սովորում կարմիր բանակում։ Ու յերբ կարմիր բանակայինը յետ է գնում իր գործարանը կամ գյուղը, նա արդեն շատ բան հասկացող ու լուրջ մարդ է լինում։

Կարմիր բանակում ծառայելու կարգը

Կարմիր բանակը, ինչպես և բոլոր բանակներն, ունի շատ բաժիններ ու տեսակներ —ինչպես, հետևակ, հեծելազոր, գնդացիրային, թնդանոթաձիգ, նավաստի, թռչող (սավառնակներով) և այլն, ու դրանցից ամեն մեկը իր կարգը, իր ժամանակաշրջանն ունի ծառայելու, սովորելու։ Այժմ մեր բանակը փոքր է—կես միլիոնից քիչ ավելի, ու դրա մի մասն էլ տևական ծառայություն չէ—մնայուն զորամասեր չեն, այլ յերկրային զորամասեր են։ Մնայուն զորամասերում կ. բանակայինը ծառայում է 2—4 տարի, նայած վոր տեսակի զորամասում է ծառայում, իսկ յերկրային զորամասում փոփոխական ծառայում է հինգ տարի բայց հինգ տարվա ընթացքում ընդամենը 5 ամիս և տարվա այն ամիսներին, վոր իր շինարարական կամ յերկրագործական աշխատանքից չկտրվի։ Այժմ բանակ գնալն այնքան ցանկալի բան է, վոր ամենքը սիրով են գնում և նույնիսկ շատերը ցավում են, վոր արտոնություն ունեն և չեն գնում ծառայության. այն ինչ ցարի ժամանակ զինվոր գնալը դա ամենամեծ դժբախտություններից մեկն էր համարվում։

«Պաշ» ընկերությունը, նրա դերըն ու նշանակությունը

Իհարկե միայն կարմիր բանակը չէ, վոր մեր շինարարական աշխատանքը ապահով է դարձնում։ Մեր կառավարությունը ցանկանում է, վոր ամեն մի քաղաքացի և զենք գործ ածել գիտենա և զինվորական արհեստը, այլ և այժմյան օդային ու քիմիական կռվին դիմավորելու պատրաստ լինի։ Դրա համար առաջ կային զանազան հասարակական կազմակերպություններ, վորոնք այժմ բոլորը միացել են «Պաշ» ընկերության մեջ—այսինքն «պաշտպանության աջակցող ընկերություն»։ Սա յել կարևոր մի կազմակեր-

պություն է, վոր պարտականություն է վերցրել իր վրա—պատրաստել իր անդամներին զինվորական արհեստին և պաշտպանության բոլոր միջոցներին։ Այս կազմակերպությունը շատ մեծ նշանակություն ունի, վորովհետև ժողովրդի մեծամասնությունը ռազմականացնելու համար ամեն տեսակ հարմարություններ է ստեղծում։

Կարմիր բանակն իբրև համաշխարհային հեղափոխության բանակ

Մի բան չպետք է մոռանանք, վոր կարմիր բանակը միայն մեր Խորհրդային միության պաշտպան բանակը չէ. նա միևնույն ժամանակ բոլոր շահագործվողների, բոլոր ճնշվածների հույսն ու ապավենն է։ Ամեն տեղ, ուր ըմբոստ բանվորությունն ապստամբության դրոշ կբարձրացնի իր հարստահարողների դեմ, կ. բանակն օգնության կհասնի և հեղափոխությունը ցանկալի վախճանի կհասցնի։ Կարմիր բանակը համաշխարհային հեղափոխության բանակն է և բոլոր ճնշված ժողովուրդները նրան են նայում։

Ինչ էր ասում Լենինը նոր սերնդին—պատերազմի մասին

Կգա ժամանակ, վոր էլ վոչ մի բանակ չի լինի, պատերազմ էլ չի լինի։ Բայց դա միայն այն ժամանակ կլինի, յերբ վոչնչացրած կլինենք ամբողջ աշխարհի կապիտալիստներին։ Իսկ քանի դեռ այդ ժամանակը չի հասել, ահա ինչ էր ասում Լենինը յերիտասարդությանը և ամեն մի դեռահասի. «Շուտով դու կմեծանաս։ Քեզ հրացան կտան։ Լավ պահպանիր հրացանդ և լավ սովորիր զինվորական գործը։ Պրոլետարին այդ գիտությունն անհրաժեշտ է.—վոչ թե նրա համար, վոր կրակի ուրիշ յերկրների իր յեղբայր բանվորների վրա, այլ նրա համար, վորպեսզի կռվի բուրժուազիայի դեմ, վորպեսզի վերջ տա հարստահարությանը, աղքատությանն ու պատերազմներին»։

ԶՐՈՒՅՑ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ինչի՞ մասին է գրույցը

Մեր այս գրույցն այն մասին կլինի, թե ինչ դրության մեջ է գտնվում գյուղական տնտեսությունը վոչ միայն մեր գավառում, Հայաստանում, այլ Խ. Ս. Հ. ամբողջ Միության մեջ։ Մեր գլխավոր անելիքն այն է, վոր պարզենք այն պատճառները, թե առաջավոր յերկիրների համեմատությամբ ինչու մեր յերկրի տնտեսությունն այդպիսի վատ դրության է հասել։— Այդ յերկիրներում գյուղացիք ավելի վատ հողից ավելի շատ բերք են ստանում։

Վատ բերք

Ամենից առաջ պետք է ուշադրություն դարձնենք մեր տնտեսության վատ բերքի յեվ քիչ արդյունավետության վրա։ Նույնպես, յերբեմն և ավելի վատ հողի մի դեսյատինից արտասահմանցի գյուղացին յեռապատիկ, քառապատիկ ավելի յե ստանում, քան մեր գյուղացին։ Զանազան յերկիրներում մի դեսյատինից հացահատիկ ստացվում է—Հոլլանդիայում՝ 170 փ., Բելգիայում՝ 156 փ., Անգլիայում՝ 147 փ., Գերմանիայում՝ 132 փ., իսկ մեզնում՝ 45 փ.։ Բայց ինչու հեռու գնանք։ Մեզ մոտ էլ կան առաջնակարգ տնտեսություններ, վորոնք դեսյատինից 200 փութ ցորեն, 150 փ. հաճար են ստանում, այնինչ մեր գյուղացիներն ընդհանրապես ստանում են 30—40, ամենալավ դեպքում 60 փութ։

Բայց գյուղացու այս չնչին բերքն էլ միշտ ապահոված չէ։ Մեզնում հաճախ է վատ բերք լինում, կամ տեղ-տեղ հացը չի բուսնում։ Վերջին հինգ տարում յերկու անգամ վատ բերք է յեղել։ Սարսափելի յեր մանավանդ 1921 թվի վերջի, 1922 թվի սկզբի յերաշտն ու սովը։ Մեր Միության մեջ այդ ժամանակ 35 միլիոն դեսյատինից ավելի ցանքադաշտ տուժեց

յերաշտից։ Այդ 2 տարվա ընթացքում մոտ 10 միլիոն ցանքս բոլորովին փչացավ։ Այդ փորձանքին մոտ 36 միլիոն մարդ յենթարկվեց։

1924 թ. մի քանի նահանգներում կրկնվեց վատ բերքը։ Մեզ համար հեշտ եր դրա հետևանքները հարթել, վորովհետև մեր տնտեսությունն արդեն միքիչ վոտքի յեր կանգնել։

Առաջ էլ մեր աշխարհում շուտ-շուտ սով եր լինում։ 21 տարվա ընթացքում (1891—1911 թ.) յերեք տարի սով եր, 13 տարին վատ բերք յեղավ և միայն հինգը բարեհաջող անցավ։

Անասունների վարակի ցածությունը

Մեր գյուղացու, գյուղական տնտեսության մի ուրիշ կարեվոր ճյուղից, անասնապահությունից ստացած արդյունքի վորակն էլ բարձր չէ։ Մեր կովը տարեկան ամենալավ դեպքում 100 դույլ կաթ է տալիս, իսկ միջինը 50—60 դույլ է։ (Հայաստանում իսկի այդքան էլ չկա)։ Իսկ Դանիայի գյուղացին տարեկան 180 դույլ կաթ տվող կովը պահելը ձեռնտու չի համարում և իբրև մսացու յե կերակրում։ Դրա պատճառն այն չէ, վոր դանիական կովը մի ուրիշ տեսակ հատկություն ունի։ Մեր յերկրում էլ զանազան տեղեր կովի շատ լավ ցեղեր կան (օրինակ՝ Յարոսլավլի ցեղը կամ մեր Ղազախի կարմիր կովերի ցեղը), վոր մեր պայմաններում ավելի ձեռնտու յեն, քան արտասահմանյանը։ Բայց մեծ մասամբ մեր անասունները մանր են, նրանց շատ վատ են պահում ու կերակրում, առանց հաշվի, անգութ կերպով։ Մեզնում մորթելու յեղջերավոր անասունների քաշը 7 փութ է, և նույնիսկ մեր ամենալավ անասունը— հարավային տափաստաններում—15 փթից ավելի չէ։ Հյուսիսային Ամերիկայում յեղջերավոր անասունի քաշը 25—33 փութ է. անգլիական յորկշիր և բերկշիր խոզերը 25 և էլ ավելի փթի յեն հասնում (նրանց կենդանի քաշը 60 փթից էլ է բարձրանում)։

Խոտի բերքը, մի դեսյատինից, Ռուսաստանում 70—80 փութ է (մեզնում 40—50), արտասահմանում՝ 200—300 փ. (մինչև 500-ի յել է հասնում)։

Այն, ինչ որ մեզանում դեռ սաղմային դրության մեջ է և դեռ լուրջ բան չի համարվում, այլ մի կողմնակի գործ, ինչպես սերմաբուծությունը, թռչնաբուծությունը, այգեգործությունը,—Հյուսիսային Ամերիկայի Նահանգներում, օրինակ, շատ մեծ գործ է և հաճախ աշխատողների համար ծառայում է իբրև արդյունքի հիմնական աղբյուր։ Օրինակ՝ պտղաբուծությունը սրանից դեռ 20 տ. առաջ այնտեղ տարեկան 300 միլ. ռ. արդյունք էր տալիս. կաթնային գործը—մի միլլիարդից ավելի։ Միայն հավերը տարեկան միջին թվով ամեն մի ամերիկացու համար 245 ձու էյին ածում։

Մեր յեվ արտասահմանի գյուղը

Արտասահմանի գյուղը շատ չի տարբերվում քաղաքից։ Հարթ քարած փողոցներ, լավ-լավ տներ, հաճախ ելեկտրական լուսավորություն, ջրմուղներ։ Գյուղում կան ամեն տեսակ կոոպերատիվներ, զանազան տեսակի կոոպերատիվ գործարաններ—գյուղական տնտեսության մթերքները վերամշակելու համար, պանրագործական, յուղագործական, շաքարի և այլ գործարաններ։ Մաքրություն ու կարգ կա վոչ միայն տներում ու փողոցներում, այլ և անասունների ցեմենտե ու փայտե հատակ ունեցող բակում։ Անասունները կուշտ են, մաքրած։ Մեզնում դեռ մինչև հիմա յել ցեխ է, ճանապարհ չկա, վայրենի յենք, անգրագետ, հարբեցող։ Ձմեռը գյուղացու տան մեջ են և նրա յերեխաները, և հորթերը, և նոր ծնած կովը, և ճուտեր ունեցող խոզը. հատակը կեղտոտ է, պատուհանը փալասներ խցկած, նստարաններն ու մահճակալները կեղտոտ, պատերը փայտոջիլով և բոզոջներով լի։ Անասունների գոմն ու մթերքները պահելու մառանն ավելի յեն կեղտոտ։

Բայց ինչն է գյուղական տնտեսության այս ցած դրության, մեր գյուղացու այս աղքատության պատճառը։ Այս պատճառները հասկանալուց հետո միայն կարող ենք ճիշտ վորոշել, թե ինչ ճանապարհով կարող ենք բարձրացնել մեր տնտեսությունը և դրա միջոցով բարելավել մեր ամբողջ կյանքը։

Գյուղացու դարավոր ստրկությունը

Առաջին պատճառն այն դարավոր ստրկությունն է, վորին յենթարկել էյին գյուղացուն կալվածատերերը, հարուստներն ու ցարի իշխանությունը։ Դարերի ընթացքում նրանք քամել են գյուղացու ու գյուղական տնտեսության ուժը։ Գյուղացիներին թալանելն սկսվեց այսպես կոչված ճորտությունից ազատելուց հետո։ Գյուղացիներին ազատություն տվեցին, բայց հող քիչ տվեցին և այն էլ թալանչիական գներով։ Այնպես վոր ազատությունից միայն «յերևույթը» մնաց։ Այսպես արդեն 65 տարի սրանից առաջ մոտ յերկու միլիոն անհող գյուղացի կար և բազմամիլիոն գյուղացիներ, վորոնց հողաբաժինը շատ փոքր էր և բոլորովին անբավարար։

Յետգնման վճարումները

Մինչև 1905 թիվը գյուղացիք հեծում էյին յետգնման վճարումների ծանրության տակ, վոր ցարն ու կալվածատերերը ճորտությունից ազատելիս դրեցին նրանց վզին։

Ազնվականներն այն ձևով ազատեցին գյուղացուն, վոր գյուղացին առանց կալվածատիրոջ ապրել չէր կարող։ Միևնույն է, նա պետք է գար, խոնարհեր նրան, նրա ծառան դառնար, նրա հողը կիսու մշակեր։ Կալվածատերերն իրենց պահեցին ձրի բանվորին, ծառային, վարձ տվողին։ Կալվածատերերը տարեկան մոտ 500 միլ. ռուբլի միայն բահրա էյին ստանում։ Տարեկան մի դեսյատին հողի բահրան հասնում էր մինչև 15 ռուբլու։ Կարիքն ստիպում էր գյուղացուն վճարել այդ սոսկալի բահրան։ Դրանից ժողովրդական տնտեսությունը քայքայվում էր։ Այսպես մինչև հեղափոխությունը կալվածատերերը քամում էյին գյուղացիներից այն ամենը, ինչ կարելի յեր քամել յետգնման, բահրայի, հողը գնելու և նման բաների միջոցով։

Հարկերը

Գյուղացու արդյունքի մեծ մասը պետությանն էր անցնում։ 1913 թվին ուղիղ հարկերի միջոցով պետությունն ամեն մի տղամարդուց տարեկան 9 ռ. հարկ էր վերցնում։ Կալվածատիրական պետությունն էլ ավելի յեր քամում գյուղացիներից, ամեն տեսակ հարկեր դնելով

լուցկու, աղի, շաքարի, նավթի վրա, ողու մենաշնորհով, հողային և հասարակական հարկերի միջոցով։

Կուլակ-ապրանքատուն

Ինչ վոր մնում եր պետության և կալվածատերերի թալանից հետո, նրա վրա յել իր թաթն եր դնում առևտրական-ապրանքատուն և գյուղական կուլակը։ Հում նյութ ու հաց գնողները քիթները խոթում եյին ամեն տեղ։ Նրանք շատ աժան գնում եյին հացը, անասունները և այլն։ Գյուղացին աշնանն իր հացը վաճառում եր ապրանքատուին, վորպեսզի հարկը վճարի. իսկ գարնանը նույն վաշխառու կուլակից ցորեն եր գնում ցանելու համար և նրա գերին դառնում։ Ամեն տեղ փթի տեղ վոչ թե փութ, այլ յերկուսից չորս փութ եյին տալիս. մի, ինչպիսի վաստակ եյին ստանում կուլակն ու վաշխառուն։ Կուլակները գյուղացու քրտինքը լափելու գործում նույնիսկ կալվածատերերից առաջ անցան։

Գյուղացին իրավազուրկ

Ընդամենը գյուղացին համարյա իրավազուրկ եր կամ լրիվ իրավունքներ չուներ։ Ամեն մի վոստիկան իրավունքներ ուներ նրա վրա։ Զանազան տեսակ պետական պաշտոնյաները սանձ եյին դրել գյուղացու բերանը։ Առանց նրանց թույլտվության և հաստատելու գյուղական վոչ մի համախոսական ուժ չուներ. վոչ մի հասարակական գործ սկսել չեր կարելի։ Այդ պաշտոնյաները նույն կալվածատերերն եյին. նրանք դատում և նույնիսկ առանց դատի յել (վարչական կարգով) պատժում եյին։ Նրանք իրենց ստորադրվող պաշտոնյաների ամբողջ մի թագավորություն ունեյին, իսկ տեղ տեղ դրանց ոգնության եյին ուղարկում կազակ զորախմբեր և վոստիկաններ։ Համարյա մինչ 1905 թիվը կարելի յեր գյուղացիներին ծեծել, հասարակական համախոսականով Սիբիր աքսորել, մի խոսքով՝ գյուղացին կատարելապես իրավազուրկ եր։ Գյուղացիների համար հատուկ շրջանային դատարան եր ստեղծվել։

Տգիտություն յեվ անգրագիտություն

Գյուղացին մնում եր անգրագետ։ Ցարի կառավարությունը ժողովրդին ճնշելու վրա ավելի յեր ծախսում, քան թե լուսավորության վրա։ Պատերազմից առաջ բնակչության ամեն մի շնչին

լուսավորության համար միայն 92 կ. եր ծախսվում, իսկ զորքի համար—5 ռ. 60 կ.։

Ժողովրդական լուսավորության այդ ծախքին գյուղացիք իրենք ել շատ քիչ բան եյին ավելացնում։ Այսպես կոչված հոգեկան բոլոր պետքերի վրա տարեկան ամեն մի հոգուն գընում եր 2 ռ. 50 կ. ծախք։ Բայց ինչ ծախքեր եյին դրանք։ Գլխավոր ծախքը տերտերին տվածն եր, մոմ, մկրտություն, գերեզմանորհներ, պսակ, թաղում և այլն, և այլն։ Սովորողներն ել մեր յերկրում 4—6 անգամ ավելի քիչ եյին, քան Արևմտյան Յեվրոպայի յերկրներում։ Կառավարությունն արգելում եր գյուղացիներին լուսավորվել։ Գյուղացիների գիտակցությունը մթագնելու համար գյուղը վողողում եյին տերտերամիապետական բովանդակության գրքույկներով։ Գյուղացիներին լուսավորողներն եյին տերտերը, հեքիմը, փալչին, ուրյադնիկը և դրանց նման «ինտելլիգենցիան»։ Գյուղացիները գյուղատնտեսական կրթություն չեյին ստանում, չգիտեյին իրենց ուժերը տնտեսության մեջ գործադրել։

Սակավահողություն

Գյուղատնտեսության այսպիսի ցած մակարդակի հետ միասին գյուղացուն տանջում եր և սակավահողությունը։ Դա չի նշանակում, թե Ռուսաստանում քիչ հող կար և հողագործ ժողովրդին չեր բավականանում։ Բանն այն ե, վոր մեր յերկրում մեծ քանակությամբ հողեր կան, վոր չեն մշակվում, չեն ոգտագործվում (ինչպես ասում են՝ դա «դեն գցած» հողերն են)։ Ռուսաստանում մինչ պատերազմը հարյուր դեսյատինից միայն հինգ դեսյատինն եր ցանվում։ Իսկ յեթե գյուղացիությունն այդպես յետ ընկած չլիներ, միքիչ զարգացած լիներ, այդպես ճնշված չլիներ ամեն տեսակ տուրքերով ու հարկերով, իր տրամադրության տակ միքիչ ավելի միջոցներ ունենար, — ապա այդ ահագին «դեն գցած» հողերը, անպետք ավազուտները, ձորերն ու թփուտները կարելի յեր ամենաբերրի հող ու մարգագետին դարձնել—ամենաքիչը մոտ 40 միլ. դեսյատին։

Բացի դրանից հողը շատ անհավասար եր բաժանված։

Բանից դուրս եր գալիս, վոր 30 հազար կալվածատերերը

նույնքան հող ունեյին, վորքան 10 ու կես միլիոն գյուղացիներն, յեվ այդքան էլ ունեյին մի միլ. կուլակներն։ Ամենալավ ու ամենահարմար հողերը հենց կալվածատերերին ու կուլակներին եյին պատկանում։ Այս սակավահողությունը, գյուղատնտեսական գիտության բացակայությունը, գործիքներ չլինելը, հողն ինչպես հարկն ե մշակել չգիտնալը, լավ կուլտուրաներ չմշակելն ամեն կողմից արգելք եյին լինում գյուղական տնտեսության զարգացմանը։ Ու թեև գյուղացիները շարունակ Սիբիր եյին գաղթում—ազատ հող ունենալու,—այնուամենայնիվ գյուղացիների տարեկան աճումն այնքան մեծ եր, վոր 1916 թվին գյուղացիների յերկու յերրորդը տանջվում եր սակավահողությունից։

Ցարի պատերազմը

Ցարի և քաղաքացիական կռիվները մեծ վնաս հասցրին գյուղական տնտեսությանը։ Ցարի կռվի առաջին յերեք տարին 17 միլ. մարդ զորահավաքի յենթարկվեց։ Դրանց մեծ մասը գյուղացիներ եյին։ Զորահավաքը ուժ ավելի վնասեց։ Գյուղական թույլ տնտեսություններին։ Տնտեսությունները մնում եյին առանց աշխատավորի։

Գյուղական տնտեսության վրա մարդկանց զորահավաքից ավելի ձիերի ու առհասարակ լծկանների զորահավաքն ազդեց։ Իմպերիալիստական պատերազմը գյուղական տնտեսության համար աշխատող արդյունաբերությունն էլ վոչնչացրեց։ Գյուղատնտեսական մեքենաներ շինելը համարյա դադարեցրին։ Մետաղները,—յերկաթը, պողպատը, կապարը, պղինձը—հարկավոր եյին ռումբեր, թնդանոթներ, հրացաններ շինելու։

Քաղաքացիական պատերազմը

Մեր տնտեսությանը մեծ քայքայում պատճառեց և քաղաքացիական պատերազմը։ Հաճախ գյուղացին չեր կարողանում ամենևին դաշտային աշխատանքով զբաղվել, վորովհետև նրա արտը պատերազմի դաշտ եր և ձեռքից ձեռք եր անցնում։ Ցանքադաշտի տարածությունը, վոր իմպերիալիստական կռվի ժամանակ կրճատվել եր, քաղաքացիական կռվի ժամանակ ավելի ևս փոքրացավ։ Քաղաքացիական կռվի ժամանակ Խորհրդային պե-

տությունն, ամեն կողմից ողակված թշնամիներով, իր տրամադրության տակ պաշարներ չունենալով, ստիպված եր պարեն-մասնատրման միջոցին դիմել, այսինքն գյուղացու պաշարից ավելի ունեցածը բոլորը վերցնել։ Պարենմասնատրումը չափազանց ծանր եր գյուղացու համար։ Գյուղական շատ տնտեսություններ եդ պատճառով սոսկալի կրճատվեցին։

Արդյունաբերության թուլության և անկման պատճառով քաղաքը գյուղին համարյա չեր կարողանում ապրանք տալ։ Գյուղն սկսեց իրեն հարկավոր ամեն բանն ինքը պատրաստել—տնական յեղանակով։

Փլուզումը

Այդ բոլորի հետևանքը գյուղական տնտեսության ահռելի փլուզումն եր։ Բանվոր անասունների քանակն էլ կրճատվեց (ձիերի, յեզների)։ 1922 թվին մեկուկես անգամ ավելի քիչ եր, քան 1916 թվին։

Այդպես, և նույնիսկ դրանից էլ ավելի կրճատվեցին նաև անասունների մյուս տեսակները. այնտեղ, ուր 1910 թվին 100 գլուխ ապրանք կար, 1922 թվին մնացել եր 60 ձի, 63 մեծ յեղջերավոր անասուն, 39 այծ ու վոչխար, 50 խոզ։

Բանը միայն քանակը չե, այլ և վորակը։ Այս տարիներում անասունների վորակն էլ վատացավ։ Որինակ՝ Որլովի լավ տեսակի ձիերի 14 թվին յեղածի մի տասնհինգերորդ մասն եր մնացել։ Փափկամազ մերինոս վոչխարների $^{1}/_{25}$ մասն եր մնացել։

Շատ տեղերում անասունների այսպես քչանալը գյուղական տնտեսությունը խիստ կրճատեց։ Գյուղացիները միջոց չունեյին աշխատելու։ Ինչքան անասունները փչանում եյին, այնքան քիչ եյին պարարտացնում հողերը։ Ինչքան քիչ պարարտացում, այնքան վատ բերք, և այսպես շարունակ։ Գյուղատնտեսական գործիքներն էլ այս տարիներում չեյին նորոգվել։ Ութ տարում (1916—1924 թ.) գյուղատնտեսական մեքենաներ ավելի քիչ են շինվել, քան մի տարում պատերազմից առաջ։ 1919 թվին բանն այնտեղ հասավ, վոր հարյուր մեքենայի ու գործիքի տեղ մեկը կամ յերկուսն եր շինվում։ Բայց մինչ պատերազմը միայն Ռուսաստանում շինված մեքե-

նաներ չեյին գործածում։ Այդ գործիքների մի մեծ մասն արտասահմանից եյին բերում։

Պատերազմի ժամանակ 1914—1917 թվերին արտասահմանից համարյա վոչ մի գյուղատնտեսական գործիք չստացանք 1917—1921 թվերին վոչինչ չեր կարող ստացվել, վորովհետև թշնամիները շրջապատել եյին մեզ ամեն կողմից և վոչ մի ապրանք ներմուծել չեյին թողնում։ Գյուղատնտեսական գործիքների արտադրության վերացումը և արտասահմանից չստացվելն այն հետևանքն ունեցավ, վոր յեղածը սաստիկ մաշվեց և մասամբ գործածությունից դուրս յեկավ։ 1922 թվին գյուղատնտեսական բոլոր գործիքների արժեքը գնահատվում եր ընդամենը 150 միլ. ռ., իսկ նրա համար, վորպեսզի այդ գործիքներն այն դրության հասնեն, ինչպես եյին պատերազմից առաջ, հարկավոր եր առնվազն 250 միլ. ռ.։ Ցանքադաշտն զգալի կերպով կրճատվեց։ 1913 թվին ցանած 86 միլ. դեսիատինից 1921 թվին հասավ 57 միլիոնի, իսկ 1922 թվին՝ 51 միլիոնի։

Այսպիսով 1913 թվի 100 դես. ցանքից մնաց միայն 60 միլիոն։

Ընդամին պետք ե նկատել, վոր ամենից ավելի տուժեցին ժողովրդական տնտեսության ամենաարժեքավոր կուլտուրաները, վոր արտադրվում եյին գլխավորապես վաճառքի, շուկայի համար և մեծ մասամբ արտասահմանի։ Որինակ՝ ցորենի ցանքի տարածությունը 1922 թվին 1913 թվի հետ համեմատած ընկավ մինչ $28^0/_0$-ով։ Եվ ավելի խիստ տուժեցին վուշի, բամբակի, կանեփի, շաքարի, ճակնդեղի, ծխախոտի, կարտոֆիլի ցանքերը, այսինքն ժողովրդական տնտեսության ավելի արժեքավոր ճյուղերը և գյուղացու համար ավելի արդյունավետ կուլտուրաները։ Առանց այս կուլտուրաների անհնար ե մեր սեփական արդյունաբերության զարգացումը—ինչպես մանվածային, շաքարին և այլն. և զգալի չափով կրճատվում ե արտասահման արտահանելը և գյուղական տնտեսության մթերքների փոխարեն մեզ հարկավոր մեքենաներ ձեռք բերելը։

Սրան պետք ե ավելացնել և այն, վոր հողն ավելի վատ եր մշակվում։ Շատ գյուղացիներ ինչպես հարկն ե չեյին ել

կարողանում մշակել հողը։ Անասունները քչացան, աղբը քչացավ։ Շատ բան ճակատ տարվեցավ, շատ տեղ քաղաքացիական կռիվը տնտեսությունը վոտնատակ արեց։ Պարենմասնատրումը և բոլոր ավելցուկների բռնագրավումը շատերին յետ եր պահում մշակել հողն ինչպես պետք ե, լավ բերք ստանալ։ Շատերը մտածում եյին. գործիքներ ձեռք բերելու և տնտեսությունը լայնացնելու ժամանակ չե.—միայն թե մի կերպ ապրենք, իսկ պետության հետ՝ գործ չունեմ։

1918—19 թվերին դաշտերը համարյա չեյին աղբում։ Ինչ վերաբերում ե արհեստական պարարտացմանը, ապա պատերազմից առաջ ել շատ քիչ եյին ոգտվում դրանից։ Գարնանացանի համար համարյա ել աշնանից չեյին վարում։ 1918—21 թվերին սերմը շատ աղքատվեց. ել չեյին ջոկում։ Այս բոլորի հետևանքով բերքատվությունը խիստ ընկավ։ 1921 թվին միջին թվով դեսիատինից 33 փութ հաճար հավաքեցին։ Հացի ընդհանուր թիվը կրճատվեց։ Այժմյան Խ. Միության յերկրամասում մինչև պատերազմը միջին բերքը լինում եր $4^1/_2$ միլլիարդ փութ, իսկ 1921 թվին ստացվեց ընդամենը մեկ միլլիարդ ութ հարյուր միլիոն փութ։ Բացի դրանից պետք ե նկատել, վոր պատերազմից ու հեղափոխությունից հետո (մինչև Ն. Տ. Ք., մինչև 1921 թ.) վորոշ չափով կրճատվեցին և արդյունաբերական բանջարաբուծությունը, այգեգործությունը, սերմաբուծությունը, կաթնատնտեսական գործը և գյուղական տնտեսության այլ արդյունավետ ճյուղերը։

Տնտեսության վերականգնման սկիզբը

Քաղաքացիական կռվից, նոր տնտեսական քաղաքականությունը մտցնելուց հետո, տնտեսությունն սկսեց վերականգնել։ Նայեցեք աղյուսակին և կտեսնեք, թե ինչպես վերջին տարիներում վերականգնվում ե ցանքի տարածությունը, աճում ե բանվոր ու կաթնատու անասունների քանակը։

	1916 թվին կար	1922 թ. մնացել եր	1924 թ. դարձավ
Ձի	30 միլ.	20 միլ.	21 միլ.
Կով	50 »	35 »	$47^1/_2$ »
Խոզ	$19^1/_2$ »	9 »	17 »
Ցանքս	$86^1/_2$ միլ. դես.	57 միլ. դես.	75 միլ. դես.

Մենք արդեն հասել ենք նախապատերազմյան չափին։ Բայց դա քիչ է։ Չէ՞ որ նախապատերազմյան մակարդակն էլ շատ ցածր էր։ Որպեսզի բարելավենք մեր կյանքը, ավելի քաղաքակիրթ ու գրագետ լինենք, պետք է հարստանանք, պետք է մեր ժողովրդական տնտեսության արդյունաբերությունը բարձրացնենք և առաջին հերթին գյուղական տնտեսությունը։ Գյուղական տնտեսության դրությունից է կախված ոչ միայն 100 միլիոն գյուղացիության դրությունը այլ և մեր ամբողջ Միության։ Գյուղացին այժմ արդյոք հնարավորություն ունի՞ իր տնտեսությունը բարձրացնելու։

Այո, գյուղացին այդպիսի հնարավորություններ շատ ավելի ունի, քան ցարի ժամանակ, կալվածատիրական, կապիտալիստական կարգերում։

Մեր գյուղական տնտեսության պայմանները

1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունը ջնջեց կալվածատերերին։ Դարերով գյուղացիներին տիրապետող ազնվականությունն անհետացավ։ Բացի խորհրդ. տնտեսություններին պատկանող միքանի տոկոսից, ամբողջ հողը գյուղացիների տրամադրության տակ է։ Գյուղացիք հեղափոխությունից ստացան 40 միլ. դես. հող՝ 5 միլլիարդ ռուբլի արժողությամբ, ազատվեցին $1^1/_2$ միլլիարդ հողային պարտքից, ազատվեցին տարեկան 500—650 միլ. ռուբլի հողի բահրա կամ գին տալուց։

Խորհրդային իշխանությունը թեև աղքատ է, բայց ամեն մի հնարավորություն գործ է դնում իր տնտեսությունը բարձրացնելու ձգտման գործում աջակցելու գյուղացիներին։ Մեծ նշանակություն ունեցավ սերմացու բաժանելը։ Շնորհիվ այդ փոխառության 1924 թվին վնասված նահանգներից շատերում կարողացան ոչ միայն վոտքի կանգնել, այլ և ընդլայնել իրենց ցանքսերը։

Այն տնտեսություններին, վորոնք հողը մշակում են լավացրած միջոցներով, կլեվերի սերմ, բամբակ և այլ թանգարժեք բուսական կուլտուրաներ են ցանում, կամ զանազան չորացնելու ու վոռոգելու աշխատանքներ են կատարում, այդ տնտեսություններին արտոնություններ են տրվում հարկի նկատմամբ, ինչպես մեզնում բամբակ մշակողներին։

Տարեցտարի ավելանում է գյուղատնտեսների թիվը, վորոնք բացատրում և ոգնում են գյուղացիներին իրենց խորհուրդներով, թե ինչ ճանապարհներով պետք է բերքատվությունը բարձրացնել և իրենց տնտեսությունն արդյունավետ դարձնել։ Որպեսզի գյուղացիներին հնարավորություն տրվի յերկրագործական մեքենաներ ձեռք բերել, կազմակերպված է վարկով բաց թողնել մեքենաներ, արտասահմանից մեքենաներ են գնում, ռուսական գործարաններն սկսում են գյուղատնտեսական մեքենաներ և նույն իսկ տրակտորներ շինել։

Գյուղատնտեսական բանկ է հիմնված, վոր գյուղատնտեսական ընկերությունների միջոցով գյուղական տնտեսություններին վարկ է տալիս։ Յերաշտին յենթակա տեղերում կազմակերպված են ջրաբաշխական աշխատանքներ։ Քաղաքացիական պատերազմից ամենից շատ վնասված նահանգներին հատուկ միջոցներ են տրվում՝ իրենց տնտեսությունը վերականգնելու։ Այս բոլորը մեզ հնարավորություն տվեց մեր տնտեսությունը վերականգնելու։ Բայց մենք ոչ թե այնպես պետք է վերականգնենք, ինչպես պատերազմից առաջ էր, յերբ շարունակ գյուղը տանջվում էր վատ բերքից, կուշտ չէր ուտում, և ժամանակ առ ժամանակ սովը էր խեղդում նրան. վո՛չ, մենք պետք է 2—3 անգամ ավելի բարձրացնենք, քան թե նախապատերազմյան տնտեսությունն էր։ Ուր մի հասկ էր բուսնում, պետք է միջոցներ գտնենք, վոր 2—3 հասկ բուսնի․ ուր հասկի մեջ 10—15 հատիկ կար, 40—50 լինի։

Ի՞նչ միջոցով կարելի յե անել այդ։

Գյուղական տնտեսության առաջին քայլերը

Մենք մեր բերքի մի խոշոր մասը կորցնում ենք ոչ միայն յերաշտի տարիներում, այլ և ամենահաջող տարիներում։ Ի՞նչքան են ուտում մեր յերկրում մորեխը, դաշտային մկները, ձմեռային վորդը և հացի մյուս վնասատուները։ Յեթե ջանք գործ դնենք նրանց դեմ պայքարելու, կարելի յե միքանի միլիոն փութ հաց փրկել։ Մեր ցանքերի մոտ մի հինգերորդը վարակված է սնունկով, այնինչ յեթե սերմը ցանելուց առաջ ֆորմալինով լվանանք, այդ վնասատուն կվոչնչանա։

Սերմը ջոկելը. Տարեկան մոտ 600 միլ. ռուբլի յենք կորցնում մենք միայն նրա համար, վոր վատ, չջոկած սերմ ենք ցանում։ Թե զտիչ մեքենայով սերմը մաքրելն ինչ կտա, յերևում է Մինսկ նահանգի այս օրինակից։ Գյուղացիները փորձարին—գյուղացու մի կտոր հողի վրա ցանեցին սովորական չջոկված սերմ. բերք ստացվեց մի դեսիատինից 34 փութ, իսկ ջոկած սերմ ցանած հողի մի դեսիատինից բերք ստացվեց 126 փութ, այսինքն չորս անգամ ավելի։ Կնշանակի, վոր միայն սերմազտիչն օգնում է մի հասկի տեղ յերեքը՝ չորսը բուսցնելու։ Յեթե նույնիսկ վոչ թե սերմազտիչ մեքենայով, այլ հասարակ սերմ մաքրող գործիքով անցկացվի բոլոր սերմը, ապա մեր յերկրում գոնե 300—500 միլ. փ. հաց ավելի կստացվի.—բացի դրանից դեսիատինին 2. փ. էլ պակաս կը ցանվի, վոր կանի ամենաքիչը 150 միլ. փութ։ Իր դաշտն անմաքուր սերմ ցանողը վոչ միայն իր տնտեսությանն է վնասում, այլ և հարևանների, վորովհետև անմաքուր դաշտը տեղ է տալիս բույսերի ամեն տեսակ հիվանդությունների և վնասատուների։

Յեթե լայնամարգ ցանող մեքենայով ցանեն, ապա դեսիատինին 10—12 փ. սերմի փոխարեն կգնա ընդամենը 6—7 փ., ու բերքն էլ համարյա մեկուկես անգամ ավելի կլինի։ Ճիշտ է, դրա համար պետք է լավ մշակած, փխրուն ու հարթ հող։

Վաղ ցել Մեզնում գյուղացին մեծ մասամբ ցել է անում հունիսին, յերբեմն էլ հուլիսին։ Մինչդեռ մայիսի վաղ ցելը բերքը բարձրացնում է, նայած տեղին, 2—3 անգամ։ Տասնյակ հազարավոր գյուղական տնտեսություններ, վոր փորձել են այս բանը, նույն արդյունքն են ստացել։ Աշնանացանի բերքը հավաքելուց հետո, յեթե մի թեթև, վերշոկ-ուկեսանոց խորությամբ վարեն տեղը, իսկ հետո սառչելու համար ավելի խորը վարեն, ապա գարնանացանի բերքն ամենաքիչը մեկուկես անգամ կբարձրանա, քան թե գարնան վարին։ Նույնիսկ աշնանացանի հնձելուց անմիջապես հետո թեթև վարը բերքը դեսիատինին 10—15 փ. ավելացնում է։ Սա դեռ վոչ-սևահողային նահանգներում։ Սևահողային նահանգներում գարնանացանի համար նախավարն անհրաժեշտ է։

Այս բոլորը ծախք պահանջո՞ւմ է Այս բոլորը գործադրել՝ նշանակում է Միության հացի բերքը գոնե 2 անգամ ավելացնել— յեթե նախապատերազմյան չափով վարենք։ Դա մեր պետությունն ու գյուղական տնտեսությունը չտեսնված բարձրության կհասցներ։ Յեվ այդ բոլորը կարելի յե անել համարյա առանց վորևե ծախքի. վոչ կատարելագործված մեքենաներ են հարկավոր, վոչ էլ արհեստական պարարտացում։

Իսկ յեթե դրան ավելացնենք և պարարտացումը, ապա կստացվի այն, վոր միևնույն հողից, վոր պարարտացրած չէ, կստացվի 28 փ. հատիկ և 59 փ. հարդ, իսկ նրա կողքի պարարտացրած հողից կստացվի 164 փ. հատիկ և 287 փ. հարդ, ուրիշ խոսքով 5 անգամ ավելի։

Բազմադաշտյան ցանքս Իսկ յեթե լավ մշակելու հետ միասին մտցնենք բազմադաշտյան սիստեմը և խոտացանությունը և վորոշ դաշտեր կարտոֆիլ, տուրնիփս, ճակնդեղ, յեգիպտացորեն և նման բաներ ցանենք, ապա քիչ պարարտացումով էլ բերքը կբարձրանա գոնե $2^1/_2$— 3 անգամ։

Անասունների խնամքը Յեթե անասուններին լավ խնամենք, քաշով կերակրենք, ձմեռը տաք գոմում պահենք, ապա այդ ծախքերը յետ կդարձնեն ու մի բան էլ ավելի։

Յեթե գոնե մի քիչ ուշադրություն դարձնենք հողի վրա, ձմեռը տաք շենքում պահենք, լավ կերակրենք (դա այնքան էլ մեծ ծախք չի պահանջում). ընտրենք ամենալավ ձուածան հավեր, ապա միայն հավաբուծությունը կարող է մեր գյուղացիությանը 500 միլ. ռ. օգուտ տալ։ Նույնն է նաև գյուղական տնտեսության մյուս արդյունավետ ճյուղերի նկատմամբ, ինչպես բանջարանոցը, այգին, մարգագետինը և այլն, մեր յերկրում՝ բամբակաբուծությունը, այգեգործությունը, շերամապահությունը։

Կոոպերացիա Առանձին գյուղական տնտեսություններին օգնության պետք է հասնի կոոպերացիան։ Ինչ վոր մեկի ուժից վեր կլինի, դա հնարավոր կլինի անել, յեթե միքանի տնտեսություններ միանան։

Կոոպերատիվ միություններն ու ընկերությունները պետք է օգնեն գյուղացիներին գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերել, միացյալ ուժերով տրակտոր գնել, ցանքի համար լավ տեսակի սերմ ձեռք բերել, ցեղական անասուններ ճարել, անհարմար համարված հողերը մշակել, մարգագետինները լավացնել։

Ի՞նչ կտա մեզ գյուղական տնտեսության բարձրանալը

Ամեն մի, ըստ յերևույթին թեկուզ հասարակ բարելավումը, վոր կմտցնենք գյուղական տնտեսության մեջ, խթան կհանդիսանա հետագա զարգացման։ Գյուղացին հենց վոր մի փոքր միջոցներ ունենա, նա կարող է իր տնտեսության վրա ծախսել, մեքենաներ կգնի, ջրաշինարարական աշխատանքներ կանի։ Իսկ դա կազդի տնտեսության աճման վրա։ Ինչքան մեծ արդյունք տա գյուղական տնտեսությունը, այնքան կհարստանա ազգաբնակչությունը, այնքան կբարելավվի գյուղացու կյանքը, լավ կաշխատեն գավոդներն ու գործարանները, կավելանան բանվորագյուղացիական պետության միջոցները։ Ժողովրդական լուսավորության վրա ավելի շատ փող կարելի կլինի ծախսել։ Իսկ դա մեր բարորության ապագա ճանապարհը կբանա, կբարվոքի մեր կյանքը։ Այն ժամանակ մենք շատ յետ կթողնենք այն պետություններին, ուր այժմ գյուղական տնտեսությունը շատ ավելի բարձր է, քան մեզ մոտ։

Մի բան էլ չպետք է մոռանալ, վոր ուրիշ յերկրների գյուղական տնտեսության ծաղկումը դեռ չի նշանակում, վոր աշխատող մասսան այնտեղ բարոր վիճակում է։ Արդյունքի մեծ մասն անցնում է խոշոր կապիտալիստների, վաշխառուների, վաճառականների ձեռքը, իսկ հիմնական մասսան (վոչ միայն վարձու բանվորների, այլ նույնիսկ ինքնուրույն տնտեսություն ունեցողների) մշտապես կախման մեջ են նրանցից։

Իսկ մեզ մոտ տնտեսության աճման հետ կբարվոքվի և աշխատող մասսայի վիճակը։

ՀԱՐՑԵՐ

Վորպեսզի ստուգենք, թե հասկացել և հիշում եք այս գրույքի գլխավոր մտքերը, մտածեցեք և պատասխանե-

ցեք հետևյալ հարցերին (հարց ու պատասխանը գրեցեք տետրերում.)—

1. Թվեցեք այն պատճառները, վոր արգելում են գյուղական տնտեսության զարգացմանը և ցած մակարդակի վրա յեն պահում, վորի վրա գտնվում է այժմ։
2. Ինչու հեղափոխության առաջին տարիներում գյուղական տնտեսությունը շարունակում եր քայքայվել։
3. Ինչու գյուղական ամբողջ մասսան այժմ ավելի հեշտությամբ կարող է ամրանալ և զարգացնել իր տնտեսությունը, քան կալվածատերերի ու կապիտալիստների ժամանակ։
4. Գյուղացին իր տնտեսությունը բարձրացնելու համար ինչ պետք է և կարող է անել։
5. Գյուղական տնտեսության բարձրացումն ինչ նշանակություն ունի գյուղացիության և ամբողջ յերկրի համար։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն տեղեկություններն ու յեզրակացությունները, վոր ստացաք այս գրույքից, աշխատեցեք կիրառել ձեր գործնական աշխատանքի միջոցով։ Դիտեցեք, թե ինչ դրության մեջ է գտնվում գյուղական տնտեսությունը ձեր գյուղում (շրջանում). ինչպես պետք է անել, վոր գյուղացիական մասսան փորձ անի հասնել առաջնակարգ տնտեսություններին. գյուղատնտեսական խմբակի աշխատանքն ինչպես տանել, վոր նա օգնի գյուղացիությանը—բարձրացնելու գյուղական տնտեսությունը։

ԶՐՈՒՅՑ ՅՈԹԵՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ-ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ

Ինչի՞ մասին է զրույցը

Այս զրույցի ժամանակ կծանոթանանք, թե ինչպես կալվածատերերը, կապիտալիստներն ու ցարի իշխանությունը ստրկացնում, ճորտացնում էին գյուղը մինչև 1917 թ.։ Կիմանաք, թե ցարի, կապիտալիստների ու կալվածատերերի ժամանակ ամբողջ գյուղացիությունն ինչու անելանելի դրության մեջ էր, կտեսնենք, թե գյուղացիությունն ինչպես էր փորձում պայքարել իրեն ճնշող այդ կարգերի դեմ, և թե ինչպես այդ հուզումներն ու խռովությունները կոտորածներով էին վերջանում։

Գյուղի դարավոր ստրկությունը կալվածատերերին մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը.

Գյուղացիությունն ինչու պետք է իմանա, թե ինչպես և ինչ պայմաններում էր ապրում նա անցյալում։ Վորովհետև այդ անցյալից մի ծանր ժառանգություն է մնացել մեզ, վորը դեռ յերկար պետք է խանգարի մեզ նոր հասարակարգ կառուցել, բարձրացնել գյուղի տնտեսական ու կուլտուրական մակարդակը։

Մենք պետք է պայքարենք այն ամենի դեմ, վոր ազնվականությունը հին, նախահեղափոխական կարգերի մեջ մտցրել է — ծառայամտություն, հարբեցողություն, կաշառակերություն, յետամնացություն, գռեհկություն, անգրագիտություն, տնտեսության յետամնաց ձևեր։

Իսկ դրա համար լավ պետք է գիտենալ, թե մեր տգիտությունն ու աղքատությունը վորտեղից են ծագել։

Մանավանդ գյուղացի և բանվոր յերիտասարդությունը պետք է իմանա գյուղացիության մոտիկ անցյալը, պետք է

իմանա, թե գյուղացու կյանքում ինչ կնշանակի կալվածատիրոջ իշխանությունը։ Ախար նորահաս յերիտասարդությունն իր վզին չի զգացել կալվածատիրոջ լուծը, միայն իր ծեր պապից կլսի ճորտատիրական իրավունքի մասին, ստրկության սարսափների մասին։

Ճորտատիրական իրավունքի ժամանակ կալվածատերերն ինչպես էին շահագործում գյուղացիներին

Ճորտատիրական իրավունք, այսինքն այնպիսի կարգ, յերբ գյուղացին ազատ մարդ չէր, այլ ստրուկ, պատկանում էր իր տիրոջը, ազնվական կալվածատերերին — այդ կարգերը Ռուսաստանում հաստատվել են սրանից մի քանի հարյուր տարի առաջ։ Գյուղացիների տերերն էին բոյարները, ազնվականները, իշխաններն ու վանքերը։ Վանքն էլ մի տեսակ կալվածատեր էր, վորի գյուղացիներն աշխատում էին ավելի վատ դրության մեջ, քան բոյարներինն ու իշխաններինը։

Անդրկովկասում, հատկապես Վրաստանում կար ճորտատիրական իրավունք, իսկ Հայաստանում թեև ճիշտ ու վորոշ տվյալներ չկան, բայց մեր պատմագիրների մեջ յեղած հատուկտոր տեղեկություններից կարելի յե յեզրակացնել, վոր ճորտատիրություն յեղել է նաև Հայաստանում հին դարերից սկսած, հատկապես մեծ կալվածատերեր են յեղել հայկական վանքերը։

Որենքներ հրատարակվեցին, վորոնք արգելում էին գյուղացիներին ինքնակամ թողնել իրենց կալվածատերերին։

Յեթե գյուղացին ինքնակամ գնում էր, նրան փախած էին հայտարարում, նրան փնտրում, պատժում էին, և վերադարձնում իր տիրոջը։ Հետագայում ճորտերի թիվը շատ շատ ավելացավ։ Թագավորներն ու թագուհիները գյուղացիներին նվիրում էին իրենց սիրելիներին, յերբեմն վորևէ ծառայության համար։ Յեկատերինա II թագուհին իր անթիվ սիրեկաններին հազարներով գյուղացիներ էր բաշխում։ Հետագայում ցարերն ավելի ևս ստրկացնելու որենքներ հրատարակեցին։ Գյուղացիներին արգելեցին սեփականություն ունենալ, կալվածատերերն իրավունք ունեին գյուղացիներին զին-

վոր տալ, իրենց դեմ մեղանչելու դեպքում Սիբիր աքսորել։ Գյուղացու ընտանիքը, ունեցվածքը և նույնիսկ կյանքը կալվածատիրոջ կատարյալ իշխանության տակ էր։ Որենք հրատարակվեց, վոր արգելում եր գյուղացիներին գանգատվել դատարանին կալվածատիրոջ դեմ։ Շատ կալվածատերեր հռչակված եյին իրենց գազանություններով։ Այսպես, կալվածատիրուհի Սալտիչիխան։ Նա Մոսկվայի մոտ մի կալվածք և մի գյուղ ուներ, վորը մինչև հեղափոխությունը կոչվում եր «Տառապանք»։ Յեվ իրոք ժողովուրդն այստեղ տառապում եր. իր կալվածքում 139 ճորտերի տանջում եր Սալտիչիխան մահու չափ. հոշոտում եր նրանց ամենագազանային ճանապարհներով, և վոչ մի դատ, վոչ մի իրավունք չկար նրա համար։ Իր կալվածատիրական իրավունքով, կաշառակերությամբ բոլորը ծածկում եր։ Մյուսներն էլ շատ չեյին քաշվում։ Կալվածատերն իրեն տեր եր համարում վոչ միայն իր կալվածքի, այլ և գյուղացու վողորմելի տնտեսության, նույնիսկ նրա ընտանիքի։ Հավաքում եր պերեցիկ աղջիկներին, խլում եր գյուղացիների կանանց։ Յերիտասարդ տղաներին ամուսնացնում եյին, ծիծաղի համար, պառավների հետ, և ընդհակառակը՝ պառավներին՝ յերիտասարդ աղջիկների հետ. գեղեցկուհուն ամուսնացնում եյին շեղաչքի, սապատավորի հետ, իրենց գյուղացիներին վաճառում եյին, հարբած ժամանակը թղթախաղում տանուլ եյին տալիս, փոխում եյին կենդանիների հետ։ Դեպքեր են յեղել, վոր կալվածատերը մոր նորածին յերեխան վերցրել է և ստիպել է նրան իր ծծով կերակրել շան լակոտներին. ընտանիքի անդամներին ջոկում եյին միմյանցից, հասարակ բանի համար զինվոր ուղարկում։ Ծիպոտն ու մտրակը պահվում եր ամեն մի կալվածքում և անխնա շրմփում եյին գյուղացու մեջքին։ Ամեն մի կալվածքում բանտ կար։ Մինչև այժմ էլ հին կալվածքներում պահպանվել են այդպիսի շենքեր ներքնահարկերում, ուր գյուղացիներին շղթաներով կապում եյին պատից։ Գյուղացիներին յերբեմն ծեծում եյին պարզապես տխմար կալվածատիրոջ քմահաճույքի համար։

Կոռ, բահրա

Այս բոլորի հետ միասին սոսկալի կերպով քամում եյին գյուղացու քրտինքը կոռով—այսպես եր կոչվում կալվածատիրոջ համար աշխատելը, սովորաբար շաբաթը յերեք որ, իսկ յերբեմն և ավելի։ Կոռի ժամանակ գյուղացիներն աշխատում եյին բոլորը միասին կալվածատիրոջ գործակատարի հսկողության տակ։ Տված աշխատանքը լրիվ չկատարելու համար անխնա ծեծում եյին։ Յերբեմն կալվածատերերին ձեռնտու չեր լինում կոռ բահրայով փոխարինել։ Այսինքն գյուղացին կարող եր աշխատել, ուր ուզում եր, բայց կալվածատիրոջը վորոշ քանակությամբ մթերք կամ փող պետք է վճարեր։ Գյուղացու համար մեծ մասամբ բահրան ավելի գրավիչ եր, քան կոռը, բայց ավելի մեծ դժվարությամբ եր ձեռք բերվում։ Վոչ կոռը, վոչ բահրան գյուղացուն չեյին ազատում պետական հարկը վճարելուց։ Գյուղացին պետք է վոչ միայն իր աշխատանքը, այլ և իր կյանքը տար. ճորտատիրության կարգերում նա 25 տարի զինվորական ծառայության եր լինում։

Գյուղացիական հուզումներ

Գյուղացիության ծանր, իրավազուրկ դրությունը գյուղացիական հուզումներ եր առաջ բերում, խռովություններ եյին լինում, վորոնք մեկը մյուսի յետևից բռնկում եյին, յերբ կալվածատերերի ճնշումներն ու ծաղրը միանգամայն անտանելի եյին դառնում։

1670 թվին ամբողջ Մերձվոլգյան շրջանում տարածվեց գյուղացիական սոսկալի ապստամբությունը ատաման Ստեփան Ռազինի ղեկավարությամբ։ Ստ. Ռազինն արագ կերպով յոթհազարանոց մի բանակ հավաքեց, վերցրեց Ցարիցին քաղաքը և ապա Մերձվոլգյան ամբողջ շրջանը գրություններ ուղարկեց, թե՝ ազնվականներին ջարդեցեք, զորականներին, բոյարներին ու կալվածատերերին կոտորեցեք և տիրացեք «ազատ, կազակի նման»։ Գյուղացիք ամեն կողմից հավաքվում եյին Ռազինի շուրջը, նրան իրենց փրկիչն եյին համարում։ Ռազինը ջարդեց ցարի զորքը, վերցրեց Աստրախան, Սարատով և Սամարա քաղաքները։ Կալվածատիրական ագարակները հրդեհվում եյին, ցարի զինվորականներին ու մյուս ծառայողնե-

րին ջարդում եյին։ Ու թեև ապստամբությունն ահագին ժողովուրդ եր գրավել, վերջիվերջո ամբողջ ապստամբությունը ճնշվեց, վորովհետև ներքին միություն, կապ չկար։ Հետո դաժան վրեժխնդրության ժամանակ 100 հազարից ավելի գյուղացիներ կոտորվեցին, իսկ ինքն ատաման Ստեփան Ռազինը գլխատվեց Մոսկվայում այժմյան Կարմիր հրապարակում։

1773 թվին Յեկատերինա II թագուհու ժամանակ նոր ապստամբություն բռնկվեց։ Այս անգամ Դոնի կազակ Յեմելյան Պուգաչովը, իսկապես իր նպատակին հասնելու համար, իրեն հայտարարեց Պետրոս III կայսր, վորն իբր թե ազատվել եր այն մարդասպանների ձեռքից, վոր ուղարկել եր նրա կին Յեկատերինան (հայտնի յե, վոր Պետրոս III-ին սպանեցին նրա ուղարկած մարդիկը)։ Պուգաչովը մի հրովարտակ հանեց, ուր «բոլոր իր հավատարիմ հպատակներին ազատություն եր շնորհում, առանց գլխահարկ և այլ զանազան տուրքեր տալու պետությանը և առանց զինվորներ տալու...։ Բացի դրանից ազնվականները Ռուսաստանում կոռ ու բեգյառով ու ամեն տեսակ աշխատանքներով էլ չեն նեղի գյուղացիներին, վորովհետև ամենքին ազատություն ե տրված»։ Բոլոր գյուղացիներին Պուգաչովը «մշտական կազակություն» շնորհեց։ Գյուղացիք խմբերով նրա շուրջն եյին հավաքվում։ Ժողովուրդը վրեժ եր առնում իր կրած վիրավորանքների համար։ Նորից հրդեհվեցին կալվածատիրական ագարակները։ Ճորտատիրական Ռուսաստանի համարյա մի յերրորդը միացավ ապստամբությանը։ Պուգաչովը հասավ Կազան քաղաքին, վերցրեց այդ քաղաքը։ Վերջերս գտնված փաստաթղթերը հաստատում են, թե վորքան խոշոր ծավալ ե ունեցել Պուգաչովի ապստամբությունը, թե Ուրալի շրջանի բանվորներն ինչպիսի գործադուլներ են կազմակերպել և ինչ ահ ու սարսափի մեջ են ընկել կառավարության զորականներն ու գեներալները։ Նրա դեմ ուղարկվեց գեներալ Սուվորովը։ Կազանի մոտ ցարի բանակը ջարդեց պուգաչովներին։ Հետո յել ինքը Պուգաչովը բռնվեց. վանդակի մեջ դրած տարան Մոսկվա։ Մոսկվայի տանջանքներից հետո նրան և իր ընկերներին մահապատիժ տվին այժմյան Բոլոտնի հրապարակում։

Ինչու վերացվեց ճորտատիրական իրավունքը

Ճորտատիրության գոյությունը շատ յերկար յետ պահեց մեր ժողովրդական տնտեսության զարգացումը։ Ուրիշ յերկրներում (արևմտյան Յեվրոպայի) արդեն վաղուց սկսեցին զավոդներ ու գործարաններ շինել, աճեց արդյունաբերությունը, առևտուրը, նույնիսկ գյուղատնտեսության մեջ սկսեցին մեքենաներ գործածել, պարարտացնել հողը, սկսեցին մեծ քանակությամբ հում նյութ արտադրել, վոր պետք եյին գործարաններին (ճակընդեղ—շաքարի զավոդների համար, կտավհատ—մանվածային գործարանների, բուրդ—բրդի արդյունաբերության)։ Իսկ մեր գյուղացու տնտեսությունն այնքան աղքատ եր, վոր վաճառքի համար վոչինչ չեր կարողանում արտադրել. կալվածատերն էլ բավականանում եր նրանով, ինչ վոր պատրաստվում եր ճորտերի ձեռքով՝ իր տնտեսական կարիքների համար։

Սակայն ուրիշ յերկրների արդյունաբերության զարգացումը մեր յերկրին էլ առաջ մղեց, վոր արհեստանոցներ շինեն, զինական, մանվածային և այլ գործարաններ կառուցեն։

Սկզբում պետական գործարաններ, պետական զավոդներ եյին շինվում, բայց հետո արդեն՝ կապիտալիստական և կալվածատիրական։ Բայց այդ գործարանները բանեցնելու համար ոգտվում եյին ճորտ գյուղացիների աշխատանքով, վորոնց կցում եյին գործարաններին։

Բայց վորքան զարգանում եր արդյունաբերությունը մեզ մոտ, այնքան ձեռնտու չեր հանդիսանում ճորտերին բռնությամբ աշխատեցնելը։ Ճիշտ ե, վարձու բանվորին պետք եր վճարել, բայց դրա փոխարեն նա լավ եր աշխատում, և նրա հետ գործ ունենալն ավելի հեշտ եր։ Բացի դրանից, ճորտատիրության ժամանակ գյուղացիությունը մնում եր աղքատ և գործարանների ու զավոդների արտադրած ապրանքը գնելու ունակություն չեր ունենում։ Դա հենց պետությանն էլ ձեռնտու չեր, վորովհետև հնար չկար գյուղացիներից մեծ քանակությամբ հարկ վերցնել։

Ճորտատիրության գոյությունը ձեռնտու չեր վոչ միայն

գործարանատերերի, այլև կալվածատերերի համար։ Կալվածատիրական մեծացած, աճած տնտեսությունն սկսեց հաց արտադրել ոչ միայն իրենց գործածության ու պետքերի համար, այլ գլխավորապես վաճառքի, արտասահման արտահանելու համար։ Կալվածատերերի շահը ոչ այնքան ճորտի ձրի աշխատանքից օգտվելն եր, որքան տնտեսության ընդլայնումը, արդյունքի խոշորացումը։ Դրան ավելի հեշտությամբ կարելի յեր հասնել վարձու բանվորների միջոցով, քան ստիպմամբ աշխատող ճորտերի։ Ուստի կալվածատերերնել եյին շահագրգռված ճորտատիրությունը վերացնելու գործում։

Դրան ավելացան և գյուղացիական ապստամբությունները։ Տարեցտարի աճում եր նրանց թիվը։ 1830 թվին 46 գյուղացիական ապստամբություն տեղի ունեցավ։ Հենց «ազատությունից» առաջ տարեկան 172 ապստամբություն եր լինում։ Չնայելով սոսկալի մահապատիժներին ու սարսափներին, գյուղացիք այրում և ավերում եյին կալվածատիրական ագարակները, կոտորում եյին կալվածատերերին։

Այս բոլոր պատճառներն ստիպեցին ազնվականներին, կալվածատերերին ու ցարին, վոր ինքն առաջին ազնվականն ու կալվածատերն եր, վերացնելու ճորտատիրությունը։

Ճորտատիրությունը Կովկասում

Ճորտատիրության դեմ գյուղացիական մեծ ապստամբություններ ու շարժումներ յեղել են հատկապես Վրաստանում, ուր անասելի կերպով ճնշում եյին ճորտ գյուղացիներին։ Ամենից աչքի ընկնող ապստամբությունը Վրաստանում պետք ե համարել Մինգրելիայի ապստամբությունը 1857 թվին դարբին Միքիայի ղեկավարությամբ։ Վրաստանի գյուղացիք ճորտատիրության հետևանքներից բոլորովին ազատվեցին միայն Վրաստանի խորհրդայնացումից հետո, վոր կատարվեց 1921 թ. փետրվարի 25-ին։ Իսկ մինչ այդ անպակաս եյին այնտեղ գյուղացիական հուզումներ։ 1905 թվին ամբողջ Գուրիան բռնկվեց ապստամբությամբ, վոր սկզբում հողատերերի դեմ եր, իսկ հետո կառավարության դեմ դարձավ, վորը և ճնշեց գեներալ Ալիխանով-Ավարսկու պատժիչ զորախումբը հրով ու

սրով։ Անգամ մենշևիկյան իշխանության ժամանակ (1918 մայիս —1921 թ. փետրվար) Վրաստանում տեղի ունեցան ամբողջ մի շարք գյուղացիական ապստամբություններ՝ Լեչխումի, Դուշեթի և այլ գավառներում։ Այս ապստամբություններն ուղղված եյին մենշևիկյան կառավարության դեմ, վորը չեր ուզում կալվածատեր ազնվականների հողային և այլ արտոնությունները վոչնչացնել։ Գյուղացիական շարժման մի ակտ եր նաև հողպատցիների ապստամբությունը 1903 թվին։

Հայաստանում ևս, անշուշտ, յեղել են գյուղացիական ապստամբություններ, բայց նրանց մասին իշխանական տների բարեկամ հոգևորական պատմագիրները (մեր պատմագիրները բացառապես հոգևորականներ են յեղել) վոչինչ չեն գրել։ Միայն Ստ. Որբելյան պատմիչն ասում ե, թե ինչպես, Ցուղեր բերդավանի բնակիչները 3 անգամ ապստամբեցին իրենց տերերի՝ Տաթևի վանքի կրոնավորների դեմ, և թե ինչպես այդ հոգևոր հայրերն աշխարհական իշխանների օգնությամբ 3 անգամ հող ու մոխիր դարձրին այդ ապստամբ բերդավանը։

Ցարն ու կալվածատերերն ինչպիսի «ազատություն» տվեցին գյուղացիներին

Սակայն կալվածատերն այնպես պետք ե ազատեր գյուղացիներին, վոր կարողանար դրա փոխարեն կապիտալ ստանալ իր տնտեսությունն ընդլայնելու, թեկուզ հողամասերը յետ գնելու ձևով։ Նրան պետք եր նաև այն, վոր ազատված գյուղացիների մի զգալի մասը բոլորովին հող չըստանա կամ այնպիսի աղքատիկ հողաբաժին ստանա, վոր ըստիպված լինի, իբրև միակ յելք, կամ ծառա մտնել կալվածատիրոջ մոտ կամ հողը բահրայով վերցնել նրանից։ Յեվ այդ ազատությունը տրվեց այնպես, ինչպես պահանջում եյին կալվածատերերի շահերը։ 1861 թվի փետրվարի 19-ին հրատարակվեց ցարի հրովարտակը, վոր իր «վողորմածությամբ» ազատություն եր շնորհում գյուղացիներին։

Հրովարտակը հենց այն տերտերը գրեց, վոր մինչև այդ ապացուցում եր, թե ստրկությունն աստված ե սահմանել։ Ըստ հրատարակված կանոնադրության, գյուղացիական հողա-

մասերի չափերը պետք է վորոշվեյին տեղերում, կալվածատերերի և գյուղացիների համաձայնությամբ։

Յեվ ո՞վ պետք է լուծեր վեճերը։

Հաշտարար միջնորդը, վոր ինքը հենց կալվածատերերից մեկն եր։ Ու բանից դուրս յեկավ, վոր 22 միլ. դես. հող, այսինքն շնչին մի դեսիատին, գյուղացիների մինչ այդ ազատությունն ոգտված հողերից, կտրվեց։ Ուրեմն, յեթե դրան ավելացնենք այն 22 միլ. դեսիատինը, վորից մինչ այդ ոգտըվում եյին կալվածատերերը (վոր առաջուց եյին խլել գյուղացիներից)—կստացվի վոր այդ ռեֆորմի ժամանակ գյուղացիք, կալվածատերերի ոգտին կորցրին 44 միլ. դեսիատին հող։ Սևահողային շրջանում, ուր հողն արգավանդ է, կալվածատերերը գյուղացիներին վողորմելի կտորներ թողեցին—մեկից մինչև մի յերրորդ դես. շնչին, իսկ վատ հող յեղած տեղում կալվածատերերը համարյա բոլորը թողնում եյին գյուղացիներին, բայց այդ վատ հողի փոխարեն յետգնման փող եյին ըստանում և այդ դեպքում լավ հող եյին հաշվում։

Բացի դրանից 600,000 գյուղական տնտեսություններ ազատվեցին յետգնման փող վճարելուց, վորովհետև սահմանված հողամասերի ընդամենը մի քառորդն ստացան. 720,000 գյուղացիներ ազատվեցին, բայց իսկի հող չստացան։ Կալվածատերերը միլիոնավոր բատրակներ ստացան միանգամից ու բազմամիլիոն սակավահող գյուղացիներ, վորոնք ապագայում նույն կալվածատիրոջը բահրա պիտի տային։

Կալվածատերը կտրում եր իր համար ամենալավ հողերը, նույնիսկ գյուղացիների ամենալավ հողամասերից կտորներ եր կտրում, վորպեսզի այդպիսով ստիպի գյուղացիներին իր հողը բահրայով վերցնել։

Յետգնման վճարումներ

Հողակտորները (կալվածատիրոջ ձեռքն յեղած) սոսկալի չարիք եյին. դրանք շղթաներ եյին, վոր ողակում եյին գյուղացու տնտեսությունը։ Ահա թե ինչու պայքարի հենց սկզբից մեր կուսակցությունը, Վ. Ի. Լենինի առաջարկությամբ, պահանջ եր դնում՝ յետ դարձնել գյուղացիներին 1861 թվի ազատության

ժամանակ կտրած հողի կտորները։ Բայց ավելի մեծ չարիք եր յետգնման վճարումը։ Գյուղացիներին տված ամբողջ հողն այն ժամանակ արժեր 648 միլ. ռ., բայց յետգնման վճարումներ հաշվեցին 867 միլ. ռ.։ Իրոք գյուղացիներից այնքան տոկոսներ եյին առել, վոր 1903 թվին արդեն մեկուկես միլիարդ (1.457 միլ.) յետգնման վճար եյին տվել, և կառավարության հաշվով գյուղացիք դեռ ելի 400 միլ. պարտ եյին։ Յեթե 1905 թ. հեղափոխությունը չլիներ, ապա հավանականաբար գյուղացիներն ելի մի միլիարդ (յեթե վոչ ավելի) կվճարեյին կալվածատերերին։ Յետգնման վճարները կալվածատերերը միանգամից եյին ստանում պետական գանձարկղից։ Նրանք կարող եյին ոգտագործել այդ. կամ ուղղակի ծախսում, վատնում եյին. իսկ գյուղացիներն ամբողջ 49 տարի պետք է վճարեյին այդ յետգնման վճարումներն ու հազար տեսակ տոկոսներ, վորովհետև ազնվականներին իրենց աղայական, անառակ կյանքի համար նորանոր գումարներ եյին պետք։ Հողակտորները, յետգնման վճարները, սակավահողությունը – այս բոլորը գյուղացիներին սոսկալի ստրկացման ու աղքատության մեջ եր պահում։ Այս շղթաներով եր ողակված գյուղական տնտեսությունը։

Բացի դրանից յետգնման վճարումներն այնպես եյին բաշխած, վոր թույլ, աղքատ գյուղացիներն ավելի շատ եյին վճարում։

Դրա վրա ավելացրեք ամեն մի տղամարդու 12—15 ռ. ուղղակի հարկ, ավելացրեք համայնական գյուղական տուրքերը, անուղղակի հարկերը (ծխախոտի, լուցկու, շաքարի վրա և այլն), հաշվեցեք, թե կառավարությունն ինչքան եր քամում ոգու մենաշնորհի միջոցով,—ու միայն այն ժամանակ կհասկանաք, թե ցարն ու կալվածատերերն ինչպիսի «ազատություն» տվեցին գյուղացիներին։

Ուղղակի և անուղղակի հարկերը, յետգնման վճարումները, բահրան և այլ տուրքերը քայքայում եյին գյուղական տնտեսությունները։

Վրաստանում ճորտատիրությունից ազատվեցին 1872 թվին և այն ել այն ձևով, վոր մինչև 1921 թիվը ել հետքերը կային Վրաստանում։

Կալվածատերերը շարունակում են ապրել գյուղացիների հաշվին

Կալվածատերերի միայն մի փոքրիկ մասը՝ մոտ մի վեցերորդ մասն՝ ստացած յետգնման վճարները գործադրում եր իր տնտեսությունը բարելավելու համար, հաց և անասուններ եր արտադրում շուկա, գլխավորապես արտասահման։

Իսկ կալվածատերերի մեծ մասն ստացած փողերը վատնում եր խմելու, քեֆերի, թղթախաղի և ամեն տեսակ շռայլության համար ու շատ քիչ եր գործադրում տնտեսության զարգացման համար։

Նրանք սկսեցին իրենց կալվածներն ու հողերը կապալով կամ կիսու տալ՝ մշակելու։ Բայց կալվածատերերին այդ ել քիչ եր, և կառավարությունը պետք է նրանց հսկայական փոխառություններ ու ոգնություններ տար, պետք եր նորանոր պաշտոններ հնարել ազնվական-կալվածատերերի համար, խոշոր չինովնիկներին մեծ ռոճիկ տալ, և ամեն տեսակ «անմեղ» արդյունքներ ունենալ թույլ տալ, ինչպես, որինակ, ահագին կաշառքները։ Ուրիշ խոսքով՝ կառավարությունը գյուղացիների հաշվին կերակրում եր կալվածատերերի այս ձրիակեր ամբոխը և՛ 1861 թվականից հետո, մինչև 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Սեվ կապալը

Գյուղական տնտեսությունը շարունակեց քայքայվել։ 1861 թվից սկսած ազգաբնակությունը յերկու և կես անգամ աճեց։ Իսկ գյուղացիների հողը մի շնչին միայն մի քառորդով ավելացավ, այնպես վոր այժմ ամեն մի շնչին ավելի քիչ հող եր ընկնում, քան թե կալվածատերերից ազատվելիս։ Տնտեսությունը չբարելավվեց։ Ուստի հասկանալի յե, վոր ամենաաղքատ գյուղացիությունը, վորը 1861 թվին վողորմելի հողամաս ստացավ, բոլորովին քայքայվեց և կամ ծառա դարձավ, կամ գնաց քաղաք գործարանում բանելու։ Նրանցից շատերը գյուղի հետ դեռ կապ եյին պահպանում, իրենց փոքրիկ հողերը տալիս եյին ավելի ունևոր գյուղացիներին, բայց հետզհետե կտրում եյին այդ կապը և զրկվում գյուղական տնտեսությունից։ 1905 թվին արդեն 2 միլ. 200 հազար հողագործ գյուղացի կար. 1916 թվին գյուղացիների յերկու յերրորդը սակավահող եյին։ Նրանք չեյին կարող հողը թողնել։ Գործարանային արդյունաբերական կյանքը մեր յերկրում այնքան զարգացած չեր, վոր բանվորների զգալի մասը կլաներ իր մեջ։ Բայց քաղցած մնալ չեր կարելի, պետք եր հարկեր ու տուրքեր վճարել, ուստի կամա-ակամա դիմում եյին սև կապալին (կամ, ինչպես ռուսներն են ասում, քաղցած կապալին), ուրիշ տեղ եյին գնում աշխատանքի, գաղթում եյին, ամեն տեսակ ձեռնարկատերերի ստրուկ եյին դառնում, ձմեռվա յերկար գիշերները մինչև լույս աշխատում եյին ամենավողորմելի աշխատավարձով։ Հողի կապալագինը, գյուղացիների կարիքի պատճառով, շարունակ ավելի ու ավելի յեր բարձրանում և դեսյատինը 15 ռ. հասավ։ 26 նահանգներում գյուղական ընտանիքի արդյունքի $^4/_5$-ը կապալի կամ բահրայի յեր գնում։ Գյուղացին որ ու գիշեր պետք է աշխատեր քաղցից չմեռնելու համար։ Ահա թե ինչ եր գրում գյուղացիների դրության մասին «ազատությունից» հետո Վլադիմիր Իլյիչը.

«Գյուղացիների ազատությունից դեսը 40 տարի յե անցել (Լենինը գրել է 1901 թվին)։ Բայց իսկապես գյուղացիները դրանով հողից ազատվեցին, վորովհետև այն հողամասերից, վորոնց գյուղացիք դարերից ի վեր տիրում եյին, հսկայական կտորներ կտրվեցին և հարյուր հազարավոր գյուղացիներ բոլորովին հողազուրկ մնացին — մի քառորդն ստացան սահմանված հողամասից»։

«Գյուղացիները կրկնակի կերպով թալանվեցին. բավական չե, վոր նրանց հողերը կտրեցին, նրանց դեռ ստիպեցին, վոր յետգնման վճար տան իրենց՝ գյուղացիների ձեռքը մնացած հողերի համար, վոր մինչ այդ միշտ ել նրանց եր պատկանում, և այդ յետգնման վճարն իսկական գնից շատ ավելի մեծ նշանակեցին»....։

«Հսկայական մասսան անպայման քայքայվում և պրոլետար եր դառնում, փոքրամասնությունից առաջանում եր մի խումբ կուլակներ և հարուստներ, վոր գյուղացիական տնտեսություններն ու հողերն իրենց ձեռքն եյին հավաքում և գյուղական ծնվող բուրժուազիայի հիմքն եյին կազմում։ Ամբողջ

այս քառասուն տարին գյուղացիությունից դուրս գալու տարիներ են յեղել, դանդաղ ու տանջալից մարելու տարիներ: Գյուղացին մուրացկի դրության եր հասել: Նա ապրում եր անասունների հետ, ցնցոտի յեր հագնում, խոտ եր ուտում. գյուղացին փախչում եր իր հողամասից, յեթե փախչելու տեղ եր լինում, վորովհետև այդ հողի ծախքն արդյունքից շատ եր: Գյուղացիները մշտապես կիսաքաղց եյին և տասնյակ հազարներով մեռնում եյին սովից ու համաճարակներից անբերրի տարիներում, վոր շարունակ ավելի ու ավելի հաճախ եր կրկնվում»:

Անդրկովկասում և Հայաստանում ևս հողի բահրաներն անասելի կերպով նեղում եյին գյուղացիներին: Վրացի, թուրք ու հայ — կնյազ, մելիք, բեկ ու աղալար հողատերերն արյունարբուն քամում եյին գյուղացու աչքերից նրա ամբողջ տարվա աշխատանքի $^{1}/_{3}$-ը, $^{1}/_{2}$-ը (և յերբեմն զանազան տուգանքներ էլ հաշվելով՝ $^{2}/_{3}$-ը) կալից խլելով ու տուն տանելով: Շամքորի և Գանձակի թուրք գյուղացիք շատ վատ են հիշում բեգերի անխիղճ հարստահարությունները, իսկ լոռու գյուղացիք Մռոնանց Վասլի մտրակն ու դագանակը, վոր սովկայի պատիժ եր ժամանակին բահրան չտվողի համար:

Դրսի աշխատանքը

Տեսնելով վոր իր տնտեսությամբ ապրել չի կարող, գյուղացին դրսի աշխատանքի յեր գնում: Բայց այդ աշխատանքն ինչ եր տալիս գյուղացուն: Կյանքի դառնությունից ստիպված գյուղացին դրսի աշխատանքի յեր գնում, յերբեմն ամենավատ յեղանակին: Աղջիկները, պատանիները, հասակավորները ծերունիները գնում եյին Դոն ու Կուբան՝ կազակների համար հունձ անելու (մեզ մոտ գնում եյին Բորչալուի թուրք ու հայ աղալարների մոտ), արևածաղկի, ծխախոտի ու ճակնդեղի դաշտերում աշխատելու:

18 — 20 ժամվա աշխատանքի համար գյուղացիք շատ չնչին աշխատավարձ եյին ստանում: Կային նահանգներ, ուր ազգաբնակչության մեծ մասը դրսի աշխատանքով եր ապրում:

Կնշանակե գյուղացու տնտեսությունն այնքան վատ դրու-

թյան մեջ եր, վոր ապրել չեր կարողանում և տարեկան հարյուր հազարավոր մարդիկ դուրս եյին գալիս գյուղից: Նրանց ընտանիքները մնում եյին գյուղում և շատ հաճախ դրանք էլ ապրում եյին այն վողորմելի կոպեկներով, վոր ուղարկում եյին դրսի աշխատանքի գնացած իրենց կերակրողները:

Գյուղական տնայնագործությունը: Ո՞ւմ յեվ ի՞նչ եր տալիս նա

Դեռ ճորտատիրության ժամանակ արհեստները շատ եյին տարածված: Շինում եյին ամաններ, կարասիք, կոշիկներ, շորեր, ձիու սարք և գյուղական տնտեսության համար անհրաժեշտ ամեն մի բան. զարգացած եր տնայնագործությունը: Ի հարկե արհեստով զբաղվում եյին այն գյուղացիները, վորոնց հողն ու գյուղական տնտեսությունը նրանց ապրուստ չեյին տալիս:

Բայց այդպիսի արհեստավորի համար չափազանց դժվար եր իր ինքնուրույնությունը պահպանել: Շուկան հեռու յեր, իր արհեստի արդյունքները վաճառելը դժվար եր, նյութեղեն գնելու համար փող եր հարկավոր: Յեվ ահա այդտեղ եր, վոր ոգնության եր հասնում «բարերար» գնողը: Նա մանր տնայնագործի պատրաստի ապրանքն արժան գնով հավաքում եր և թանգ գնով նյութեղեն հրամցնում: Վորպեսզի ապրանքի գինը հեշտությամբ գցեն, գնողները տնայնագործներին և արհեստավորներին շղթայում եյին վարկ տալով: Միջոցներից զուրկ, վարկի կարիքը մեծ, ապրանքի վաճառելն անհրաժեշտ. և ահա մանր տնայնագործների անհագին մեծամասնությունը մշտապես պարտապան եր լինում ամեն տեսակի վաշխառու գնողների:

Գյուղացին Փաբրիկայում յեվ գործարանում

Վոչ կապալը, վոչ տնայնագործական արդյունաբերությունը, վոչ դրսի աշխատանքը, սակայն, չեյին կարողանում գործ տալ ու կերակրել գյուղացիների այն հսկայական բազմությունը, վոր իր քայքայված, ցածր կուլտուրայով գյուղական տնտեսության մեջ վոչ ապրելու միջոց եր գտնում, վոչ իր ուժերը գործադրելու տեղ:

Յեթե մեր գյուղացիական տնտեսությունը դրված լիներ այնպես, ինչպես պետք է, ապա նա լիուլի կարող եր կերակ-

րել մի քանի անգամ ավելի շատ ժողովրդի, և բոլորն էլ գործ կունենային: Իսկ այդ տնտեսության ցածր աստիճանի շրջանում «ավելորդ բերանները», «բանվորական ազատ ձեռքերն» անխուսափելի յեն ու ստիպված են քաղաք գնալ—գործարաններում աշխատելու:

Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում

Ճորտատիրության վերացումը, վոր կապիտալիստական արդյունաբերության հետևանքն եր, պատճառ դարձավ կապիտալիզմի հետագա աճման համար:

Գործարանների ու գավոդների թիվը և նրանց պատրաստած ապրանքներն անդադար աճում են:

Ստորև գրված աղյուսակից դուք կտեսնեք, թե մի 15 տարում ստացած ածուխի, պողպատի և մանվածքի չափն ինչքան է ավելացել:

Վոր թվին	Քարածխի հանույթը	Նավթ և հանված	Յերկաթ ու պողպատ և պատրաստված	Մանվածք և յեղել
1895	280 մլ. փ.	116 մլ. փ.	65 մլ. փ.	7 մլ. փ.
1910	1500 » »	600 » »	500 » »	25 » »

Ածուխն ու նավթը գործարանների համար անհրաժեշտ վառելիք են: Դրանց մեծ քանակը ցույց է տալիս, վոր նրանց գործածող գործարաններն էլ են աճել: Այնպես էլ պողպատի և մանվածքի աճումը ցույց է տալիս, վոր մետաղագործությունն ու մանվածագործությունն է աճել, վոր շատ ավելի կարևոր նշանակություն ունեն:

Արևմտյան կապիտալը

XIX դարու վերջում Ռուսաստանում կապիտալիզմի այդպիսի հսկայական աճումը բացատրվում է նրանով, վոր հայրենական կապիտալին ոգնության հասավ և մեր յերկիրը մտավ ոտար կապիտալն այն յերկրներից, ուր կապիտալիզմն ավելի վաղ եր սկսել զարգանալ: Իր յերկիրը նրա համար նեղվածք եր, և նա սկսեց աշխարհում նոր ոտարերկրյա հարստություններ փնտռել՝ լույս աշխարհ հանելու, այլ և բանվորական արժան ձեռքեր:

Ոտար կապիտալն այդ բոլորը գտավ Ռուսաստանում: Մենք տեսնում ենք, թե Ռուսաստանի արդյունաբերության մեջ ոտար կապիտալի մասնակցությունն ինչպես անդադար աճում է:

Անշուշտ իրենց բարեսրտությունն ու դեպի Ռուսաստանն ունեցած սերը չեր, վոր հարկադրում եր ոտար կապիտալիստներին իրենց միլիոնները Ռուսաստան բերել, այլ այդ անում եյին, վոր յերկրի հյութը քամեն, սերը քաշեն:

Վոսկու, արծաթի, կապարի, պղնձի և այլ հարուստ հանքերն ոտար կապիտալիստների ձեռքին եյին. լեն-վոսկին, կիշտիմ-Ուֆալեյի շրջանի համարյա ամբողջ պղնձահանքերը, Ուրալի լուսնոսկին ձեռք բերելը, Ալտայի կապարի, արծաթի և ցինկի հանքերը, Կովկասի մանգանը, պղնձի, անգլիկի հանքերը—բոլորն ոտարների ձեռքին եր: Ամենախոշոր ելեկտրական կայանները, տրամվայի ցանցերը, ածխահորերը մեծ մասամբ ոտար կապիտալին եյին պատկանում: Մետաղ արտադրող ու մշակող մեր ամբողջ արդյունաբերությունն ոտար կապիտալի ձեռքին եր: Քարածուխի արդյունաբերության գոնե յերեք-քառորդն ոտարների ձեռքին եր: Բոլորն էլ գիտեն, վոր նավթը, մինչև պատերազմը, մինչև հեղափոխությունը, շվեդացի կապիտալիստ Նոբելի ձեռքին եր:

Այդ կապիտալներն ըստ յերկիրների բաժանվում եյին այսպես, մի յերրորդը (մոտ $33^{0}/_{0}$) Ֆրանսիայի բաժինն եր, համարյա մի քառորդը (մոտ $23^{0}/_{0}$) Անգլիայի բաժինն եր, մի հինգերորդը ($20^{0}/_{0}$) Գերմանիայի ու Ավստրիայի բաժինն եր իսկ մնացածը—մյուս յերկիրների:

Այս թվերին լավ ուշադրություն դարձնողը կհասկանա, թե ինչու իմպերիալիստական պատերազմի ժամանակ ռուս կառավարությունը, ռուս կապիտալիստներն ու կալվածատերերն առաջին հերթին Անտանտայի, այսինքն Ֆրանսիայի և Անգլիայի կողմն են բռնում: Դա նրա համար այդպես յեղավ, վոր Ռուսաստանի բոլոր ձեռնարկությունների կեսից ավելին այդ յերկիրների կապիտալիստներին եր պատկանում:

Կապիտալիզմի հետագա զարգացումն ազդեց նրա և գյուղական տնտեսության վրա: Կալվածատերերից շատերը հրա-

ժարվում են տնտեսություն վարելու հին, յետամնաց ձևերից, սկսում են արտասահմանից գյուղատնտեսական մեքենաներ բերել տալ, պարարտացնել հողերը, ավելի ձեռնտու բույսերի (ցորեն, ճակնդեղ, ծխախոտ) մշակությունն ընդլայնում են։

1905 թվին ամբողջ Ռուսաստանում հազար հինգհարյուրից ավելի կալվածատիրական աչքի ընկնող տնտեսություն կար, վեց միլիոն դեսյատին տարածությամբ։ Ռուսական հացի արտահանումը շարունակ աճում եր։

Գյուղացիական տնտեսությունն էլ ե սկսում հետզհետե ավելի ու ավելի մթերքներ արտահանել շուկա։ Բայց վաճառած մթերքների համար ստացած փողը գյուղացին չեր կարողանում օգտագործել իր տնտեսության բարվոքման ու ամրապնդման համար։ Դա կուլ եր գնում ահագին տուրքեր տալով, վոր օրեցօր ավելանում եյին, և կալվածատիրական հողի բահրան տալով։

Դե, գյուղացին շուկա չեր հանում վոչ թե իր բոլոր պետքերը լրացնելուց հետո մնացած ավելցուկը, և վոչ թե նրա համար, վոր նրա տնտեսությունն ավելի արդյունաբեր եր դարձել։ Նրանք իրենք էլ կուշտ չեյին, ուտում եյին անմաքուր հաճարի հաց, իսկ հաճարն ու ցորենն ստիպված եյին վաճառել։ Խոսք չի կարող լինել, վոր կաթնամթերքները, թռչնեղենը, ձուն գյուղացին ավելի շատ վաճառում եր, քան ինքն եր ուտում։

Ապրանքառուի յեվ կուլակի գերի

Գյուղացին, չկարողանալով տնտեսությունը վոտքի կանգնեցնել, շարունակ փողի կարիք զգալով—հարկեր վճարելու համար (վոր նրա արդյունքի կեսը կլանում եր), ստիպված եր գերի դառնալ քաղաքի ապրանքառուին և գյուղի կուլակին։ Կուլակը գյուղում, մի տեսակ, ֆաբրիկանտի և խոշոր կապիտալիստի ծառայողն (ագենտն) եր. նա միջնորդ եր ապրանքը վաճառելու, միջնորդ եր տնայնագործներին նյութեղեն բաժանելու՝ միջնորդ եր գյուղական տնտեսության մթերքները գնելու՝ շուկա կամ քաղաք տանելու համար։ Կուլակն օգնում եր կալվածատերերին գյուղում ազնվականների իշխանությունն անցկացնել,

օգնել գյուղացիներին։ Սովորաբար կուլակին եյին ընտրում շինական տանուտեր կամ գյուղապետ։ Նա յեր, վոր հավատարիմ հպատակության ուղերձներ եր գրում ցարին, նա յեր, վոր հանդեսների ժամանակ աղ ու հաց եր մատուցանում նահանգապետին, խոսում եր, թե ինչպես աղքատ ու կողոպտված գյուղացիները սիրում են ազնվական ցարին ու նրա կարգերը։

Շրջանում տեր ու տիրական դառնալով՝ կուլակը բավականանում եր նրանով, վոր իր ձեռքն եր առնում չքավոր ու միջակ գյուղացիների տնտեսությունները և իսկի չեր մտածում իր տնտեսությունն ավելի բարձր մակարդակի վրա դնելու մասին, մեքենաներ բերելու, լավ ցեղի անասուններ պահելու, դեն գցած հողերը մշակելու մասին և այլն։ Ինչ խոսք, վոր միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները մտածել անգամ չեյին կարող այդ բարելավումների մասին։

Ուստի և գյուղացիական տնտեսությունը մնում եր շատ ցած մակարդակի վրա, դեսյատինից ստացած բերքի քանակը չեր մեծանում։ Գլխավորապես սրանից էլ առաջ յեկավ այն մեծ տարբերությունը քաղաքի և գյուղի միջև. քաղաքում համալսարաններ, թանգարաններ, ելեկտրական լույս, տրամվայներ և կուլտուրայի այլ բարիքներ կային, իսկ գյուղը յետամնաց եր.—մութ ու ճրագ եր վառում, ապրում եյին ծղոտածածկ, ծռված խրճիթներում, իր անասունների կողքին, խավարի մեջ և միանգամայն յենթակա տերտերին, ուրյադնիկին, կալվածատիրոջն ու կուլակին։ Ավելի վատ դրության մեջ եր հայ գյուղացին—նա նույնիսկ դեռ գետնի յերես չեր դուրս յեկել և ապրում եր, հին դարերից սկսած, իր անասունների հետ, գետնի տակ։

Ցարի իշխանությունը իբրև կալվածատերերի իշխանություն, դաշնակցած օտար կապիտալի հետ

Տասնյակ ու տասնյակ տարիներ գյուղացիք կարծում եյին, վոր ցարը գյուղացիների կողմն ե. ամեն բանում մեղադրում եյին կալվածատերերին, յերբեմն էլ կապիտալիստներին. բայց հավատացած եյին, վոր ցարն այս ճնշումների մասին վոչինչ չգիտե, վոր ճշմարտությունը թագցնում են նրանից վոր յեթե իմանա, կմիջամտի ու կօգնի նրանց։

Ճիշտ է, բոլորը չէին այդպես մտածում. նույնիսկ շատ հնումը գյուղացիների մեջ կային հատ-հատ գիտակից մարդիկ, վորոնք հասկանում էին, վոր «շունը շանից, յերկուսը մի տանից», վոր ցարն ինքն էլ մի հարուստ կալվածատեր է, վոր կալվածատերերը նրա ազգականներն ու մտերիմներն են: Յերբ գյուղացիները չափազանց նեղվում էին, նրանք մտածում էին, վոր բավական է մոտենալ ցարին, ամեն բան պատմել և իրենց դրությունը կթեթևանա: Ցարի մոտ մարդիկ, պատգամավորներ էին ուղարկում: Դրանց մեծ մասը ճանապարհին բռնվում էին, բայց պատահում էր, վոր հասնում էին ցարի մոտ. սակայն վոչինչ չէր դուրս գալիս:

Բան դուրս գալ չէր էլ կարող, վորովհետև ցարը կալվածատերերի, ռուս և օտար կապիտալիստների հասարակ գործակատարն էր: Ցարի ամբողջ քաղաքականությունը բանվորների ու գյուղացիների դեմ էր ուղղած: Դրա համար էլ ցարի հրատարակած օրենքները հօգուտ կապիտալիստների ու կալվածատերերի էին: Ցարի ժամանակ վոստիկանությունը, դատարանը, յեկեղեցին, դպրոցը—բոլորը կապիտալիստների ու կալվածատերերի շահերին էին ծառայում:

Թե ինչպես անելանելի յեր գյուղացիության դրությունը կապիտալիզմի ժամանակ

Ցարի ժամանակ հրատարակված այդ օրենքներն այնպես էին կազմված, վոր սանձահարեն բանվորներին ու գյուղացիներին, նրանց հպատակ պահեն: Մինչև 1905 թիվը Ռուսաստանում հասարակության համախոսականով գյուղացիներին կարելի յեր ծեծել. մինչև 1903 թիվը զինվորներին մարմնական պատիժներ էին տալիս: Ամենահասարակ հանցանքի համար, գյուղացու կարիքներին, նրա դրությանը չնչին համակրանք ցույց տալու համար, իրեն պետին ասած ամենահասարակ խոսքի համար զինվորի վոչ միայն քիթ ու պռունկը ջարդում էին անպատիժ, այլ և ճիպոտներով ծեծում էին: Ուրյադնիկի, վոստիկանի, տեղական հասարակ պաշտոնյայի իշխանությունը համարյա անսահմանափակ էր: Իսկ ավելի մեծ պաշտոնյաները գյուղում աստված էին ու թագավոր: Իսկ մեծ պաշտոնյաները հենց ազնվականներն ու

կալվածատերերն էին. նրանք ցարի իշխանության հավատարիմ շներն էին:

Խռովություն սարքած գյուղացիներին պատժում էին շատ խիստ. կազակների, վոստիկանների, ոսերի և ինգուշների զորախմբեր էին ուղարկում: Բայց այդ բոլոր խռովություններն ու հուզումները վերջանում էին կոտորածով: Բազմամիլիոն գյուղացիությունը քայքայված էր, միմյանցից անջատված, ձեռքն ու վոտքը կապկապված. կապողները՝ ուրյադնիկն էր, տերտերի քարոզը. նա տկար ու թույլ էր ցարի, կալվածատիրոջ, գործարանատիրոջ հանդեպ: Ոգնության հույս չուներ և վոչ մի տեղից:

Նրա միակ դաշնակիցը կարող էր լինել և յեղավ բանվոր դասակարգը: Ու յերբ բանվոր դասակարգն աճեց, միացավ և պայքար սկսեց, նա վոչ միայն իր սեփական շահերի համար էր կռվում, նա կռվում էր ցարի, կալվածատիրոջ, կապիտալիստի կարգերի տակ ճնշված բոլոր աշխատավորների շահերի համար:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչն ստիպեց ցարին ու կալվածատերերին—գյուղացիներին ազատել:
2. Գյուղացիներին ազատելով կապիտալիստներն ինչ էին ուզում ստանալ և ինչ ստացան:
3. Ի՞նչ աշխատանքների յեր դիմում գյուղացին՝ յելք չը գտնելով իր տնտեսության մեջ՝ և նրանից ինչ էր ստանում:
4. Կապիտալիստական կարգերում ինչու գյուղացիական ամբողջ մասսան (շատ քիչ բացառությամբ) անելանելի դրության մեջ էր գտնվում, չէր կարողանում ամրացնել ու զարգացնել իր տնտեսությունը:
5. Թվեցեք այն պատճառները, վոր ցած մակարդակի էին հասցրել գյուղական տնտեսությունը Ռուսաստանում, մեր գյուղի աղքատության ու հետամնացության պատճառները:
6. Ցարի կառավարությունն ում շահերն էր պաշտպանում և ինչպես էր անում այդ բանը:

ԶՐՈՒՅՑ ՈՒԹԵՐՈՐԴ

ԳՈՒՂԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԸ

Ինչի՞ մասին է զրույցը

Այս զրույցի մեջ մենք պետք է վերլուծենք հետևյալ հարցերը.—գյուղացիներն և ինչու յեն շահագրգռված քաղաքի արդյունաբերությամբ. այժմ ինչ դրության մեջ է քաղաքի արդյունաբերությունը. ինչ ճանապարհներով է հաստատվում քաղաքի և գյուղի տնտեսական կապը, այդ կապի մեջ ինչ դեր պետք է խաղա կոոպերացիան:

Քաղաքի արդյունաբերությունն ի՞նչ էր տալիս գյուղին

Մինչև պատերազմը քաղաքի արդյունաբերությունը գյուղական ազգաբնակությանը մի միլիարդ 490 միլիոն ռուբլու լայն գործածության առարկաներ (մեխ, սապոն, ամանեղեն, ապակի և այլն) եր տալիս ամբողջ արդյունաբերության 2 միլիարդ 100 միլիոն ռուբլուց, այսինքն—քաղաքային ամբողջ արդյունաբերության առարկաների յերկու յերրորդը տալիս եր գյուղին: Բացի դրանից 40 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ և պարարտացման հանքային նյութեր եր գնում քաղաքից գյուղը, այլև 300 միլ. ռուբլու գործարանային առարկաներ: Այսպիսով մինչ պատերազմի արդյունաբերության ամբողջ ազգաբնակության համար արտադրածից գյուղացիությունն ստանում եր 1 միլիարդ 740 միլ. ռ.:

Արդյունաբերության փլուզումն

Իմպերիալիստական և քաղաքացիական կռիվների ընթացքում արդյունաբերությունը խիստ կրճատվեց: 1913 թվին ամբողջ արդյունաբերության մշակումը 5 միլիարդ 600 միլիոն ռուբլի յեր, իսկ 1922 թվին՝ միայն մի միլիարդ, այսինքն 6 անգամ քիչ: Շատ կրճատվեց մանավանդ 1920 թվին: Այն ժամանակ չորս անգամ քիչ ածուխ է հանվել, աղ՝ յերեք անգամ քիչ, չուգունի ար-

տադրությունը 40 անգամ եր քիչ, յերկաթ և պողպատ՝ 26 անգամ քիչ, շոգեմեքենաներ՝ 17 անգամ քիչ, գութաններ՝ 8 անգամ քիչ, մանվածք՝ 20 անգամ քիչ, կտորեղեն՝ 15—20 անգամ քիչ: Դա յեր պատճառը, որ ապրանքի այնպիսի սով եր.—նախապատերազմյան 20 արշին չթի տեղ միայն մի արշին եր գործվում, մի փութ մեխի տեղ մի գրվանքա յեր շինվում: Ընդհանրապես 1920 թվին բոլոր ֆաբրիկաներում ու գավոդներում մշակվում եր նախապատերազմյան արտադրության մի վեցերորդ մասը: Արդյունաբերության այդ փլուզումը շատ ծանր եր անդրադառնում և գյուղական տնտեսության վրա: Գյուղը քաղաքից ել չեր ստանում տնտեսության համար անհրաժեշտ առարկաները և ինքն էլ դադարեց վաճառքի համար բան արտադրել: Գյուղական տնտեսության և արդյունաբերության տնտեսական կապը կտրվեց:

Վերելքի սկիզբը

Ու միայն 1921 թվից սկսեցին նորից աշխատել, վերածնվել ֆաբրիկաները, գործարանները, հանքերը: Թե ինչպիսի թափերով է վերականգնվում մեր տնտեսությունը, յերևում է հետևյալ թվերից.—

Ապրանքներ արտադրված յեղել են (միլ. ռուբլիներով)՝

	1913 թ.	1920 թ.	$19^{23}/_{24}$ թ.	$19^{24}/_{25}$ թ.	$19^{25}/_{26}$ թ.
	5620	1000	2570	3950	5280
Որ անում է՝	100%	17%	46%	70%	94%

Այսպես, 25—26 թվին մենք համարյա արդեն հասել էինք նախապատերազմյան մակարդակին: Մեր գործարաններն աշխատում են լի թափով, մենք նոր գործարաններ ենք շինում այժմ՝ աճող կարիքներին բավարարելու:

Բայց բանը դրանով չի սահմանափակվում: Ապրանք մշակելը քիչ է: Դա սպառողին պիտի հասցնել: Իսկ մեր արդյունաբերության ամբողջ մշակածի գլխավոր սպառողը գյուղացին է: Հետևապես պետք է առարկան հասնի գյուղացուն, որ նա գնի: Այն ժամանակ ստացած փողով կարելի յե նոր հում նյութ ու վառելիք գնել, բանվորներին աշխատավարձ տալ և շարունակել արտադրությունը:

Բայց որպեսզի գյուղացին գնի, հարկավոր է նախ, որ

գյուղական տնտեսությունն այնպիսի ավելցուկներ տա նրան, վորով նա կարողանա գնել քաղաքի ապրանքները, և յերկրորդ, վոր այդ ապրանքը վաճառվի ձեռնտու գներով։

«Մկրատը» յեվ ինչպես են մոտեցնում նրա ծայրերը

Այստեղ, մեր արդյունաբերության հենց վերականգնման սկզբումն եր, վոր խոչընդոտ պատահեց։ Հացի գինը խիստ ընկավ, իսկ արդյունաբերական առարկաների գներն անասելի բարձր եյին։ Ստացվում եր այսպես կոչված մկրատ, այսինքն գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գների խիստ մեծ տարբերություն։

Այդ մկրատը հատկապես շատ ծանր եր գյուղի համար։ Յեթե հացի գինը յերկու, տեղ-տեղ հինգ-վեց անգամ ընկել եր, ապա գյուղացին կարող եր գնել յերկու, հինգ-վեց անգամ քիչ, քան թե սովորաբար կարող եր։

Իսկ յեթե, բացի դրանից, ապրանքների գներն ել բարձրացրած են (նախապատերազմյանի համեմատությամբ), ապա գյուղացին քաղաքի արդյունաբերության արտադրությունից ավելի քիչ կարող ե գնել. իսկ դա բանվորներին ել ե վնաս։ Հենց վոր հացի գինը բարձրացավ, և արդյունաբերական ապրանքների գներն իջեցրին, ապա մի յերեք ամսում յերկու տարի պահեստներում հավաքած պաշարը դատարկվեց. 1924 և 25 թվերին, չնայելով վոր ապրանքը պակաս եր, բայց մեր գործարանները շարունակեցին իրենց ապրանքների գներն իջեցնել։

Ի՞նչ ճանապարհով ե հնարավոր այդ բանը։

Նախ ձեռնարկության խիստ ծանրաբեռնումով։ Այժմ բոլոր պիտանի մեքենաներն ու դազգյահներն աշխատում են։ Այս յերեք տարվա ընթացքում մենք սովորեցինք հում նյութն ու վառելիքը խելացիորեն ծախսել, քիչ թվով ծառայողներով կառավարել։ Վերջապես բանվորների ջանքերի շնորհիվ հաջողվեց բարձրացնել մշակվածի քանակը։ Այս բոլորն իջեցնում են ապրանքի գինը։ Բայց և այնպես դեռ գների նախապատերազմյան փոխհարաբերությանը չենք հասել։ Մի փութ հացով դեռ ենքան չիթ չենք գնի, ինչքան հնարավոր եր գնել պատերազմից առաջ։ Դա ինչից ե առաջ գալիս։

Ճի՞շտ ե արդյոք, վոր թանկության մեղավորները բանվորներն են

Յերբեմն գյուղացիների մեջ խոսք ե լինում, թե քաղաքի ապրանքների թանկության պատճառը բանվորների մեծ աշխատավարձն ե և 8 ժամվա բանվորական օրը։ Իբր թե գյուղացին ծեգից ծեգ աշխատում ե, իսկ բանվորն 8 ժամ աշխատում ե ու պրծնում։ Բայց մի՞թե իսկապես այդպես ե։

Վո՛չ, այդպես չե։ Բանվորի աշխատավարձն իսկ յել մեծ չե։ Մինչև այժմ դեռ նույնիսկ նախապատերազմյանին չի հասել։ Ու պետք ե ձգտել ըստ հնարավորության մեծացնել աշխատավարձը, վորովհետև յերբ բանվորը լավ ե վարձատրվում, անհամեմատ ել լավ ե աշխատում, ավելի ձեռնտու յե հիմնարկության համար, ավելի շատ ե մշակում, արտադրածի վորակն ել բարձր ե։ Այդպես ել 8 ժամյա բանվորական օրը։ Գործարանի ծանր պայմաններում տևական աշխատանքն այնպես ե ուժասպառ անում բանվորին, վոր նրա աշխատանքից ավելի քիչ բան կստացվի, քան 8 ժամ բանող բանվորի աշխատանքից։ Հո զուր չե, վոր ուրիշ յերկիրների միքանի ավելի խելոք ու հեռատես գործարանատերեր 8-ժամյա բանվորական օր են մտցրել, և չեն սխալվել։

Մեր ցավն այն ե, վոր հիմնարկի աշխատանքը կանոնավորված չլինելու պատճառով, բանվորն այդ ժամը լրիվ կերպով չի աշխատում։ Մեր մեքենաներն ու դազգյահները հին են, մաշված։ Ցարի կռվի տարիներում գործարանատերերը չեն փոխել, չեն նորոգել գործիքները։ Քաղաքացիական կռվի տարիներում գործիքներն ել ավելի մաշվեցին. պետք ե կարկատել և նորոգել։

Ապրանքների գինը բարձրանում ե նաև այն բանի հետևանքով, վոր այն հում նյութերը, վորոնք մասամբ գնվում եյին արտասահմանից, որինակ՝ բամբակ, մեզ այժմ ավելի թանգ են նստում։ Ահա ինչի՝ միանգամից հավասարեցնել գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գները—անհնար ե։

Բայց միթե չի կարելի հացի գինը միանգամից բարձրացնելով գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գները հավասարեցնել։

Վո՛չ, այդ ճանապարհը վոչ մի օգուտ չեր բերել վո՛չ բանվորին, վոչ գյուղացուն։

Հացի այն գլխավոր մասը, վոր գյուղացին վաճառքի յեր հանում, մենք վաճառում ենք արտասահմանին, կնշանակի պետք է հաշվի առնենք համաշխարհային հացի գինը։ Մեր հացը այնտեղ շատ թանգ չի ծախվել։ Հետո գյուղատնտեսական մթերքների գնի բարձրացումն ամբողջ կյանքը կթանգացնի, արդյունաբերության ծախքերը կավելացնի, իսկ դա նորից կթանգացնի արդյունաբերական ապրանքները։ Այնպես վոր վերջին հաշվով հացի գինը բարձրացնելուց գյուղացին վոչ մի օգուտ չի ստանա, միայն բոլոր ապրանքները կթանգանան, և մեր փողի գինը կընկնի։ Բացի դրանից այն էլ չպետք է մոռանալ, վոր գյուղացիների մի խոշոր հատվածն ինքն ստիպված է հաց գնել։

Այնպես վոր քաղաքի ապրանքների գները գյուղատնտեսական մթերքների գներին մոտեցնելու միակ ճանապարհը—դա արտադրություն լավացնելն է, բանվորի աշխատունակությունը բարձրացնելը կամ, ինչպես ասում են, աշխատանքի արտադրականության բարձրացումը։

Ինչքան արագ վերականգնվեն մեր գործարաններն ու գավոդները, ինչքան շատ ու արագ նոր գործարաններ շինենք, այնքան կբարձրանա բանվորների աշխատանքի արտադրականությունը, այնքան արագ էլ արդյունաբերական ապրանքների գները կմոտենան հացի գնին։

Ապրանքի սով

Գյուղական տնտեսության աճումը, գյուղացու ավելցուկ (ճիշտ է, դեռ շատ քիչ) ունենալը, գների իջեցումը—այդ բոլորը գյուղացուն հնարավորություն տվեցին արդյունաբերական ապրանքների մեծ պահանջ գնելու։ Այս պահանջը մեծացավ մանավանդ 1925 թվի լավ բերքի պատճառով։ Չնայելով, վոր մեր գործարաններն ու գավոդները հետզհետե ավելի շատ ապրանք են արտադրում, բայց դա դեռ չի բավարարում գյուղացիության կարիքներին։

Այդ «ապրանքի սովից» օգտվում է մասնավոր առևտրականը և, ապրանքը գյուղը հանելով, գործարանային գնից յեռակի թանգ կվաճառի։ Դա ինչի՞ց է առաջ գալիս։ Դրա պատճառն այն է, վոր մենք դեռ ինչպես հարկն է չենք սովորել ապրանքը գործարանից գյուղացուն հասցնել։ Պետք է, վոր ապրանքը վոչ թե մասնավոր առևտրականի ձեռքով գնա, այլ կոոպերացիայի։

Կոոպերացիայի թերությունները և ինչպես պետք է լինի կոոպերացիան

Քաղաքի գյուղի հետ ունեցած առևտրի գործում շատ մեծ նշանակություն ունի կոոպերացիան, մանավանդ սպառողականը։ Արդեն այժմ սպառողական կոոպերացիայի միջոցով է գյուղն անցնում ամբողջ ապրանքի մի յերրորդ մասը, իսկ մի քանի ապրանքների կեսից ավելին (կտորեղեն, աղ և այլն)։ Բայց իհարկե, դա դեռ շատ քիչ է։

Ճիշտ է, վորովհետև ապրանքը գործարանից ուղղակի կոոպերացիային չի հասնում, այլ նախապես տասնյակ ձեռքերով է անցնում—ապա գյուղում յեռակի գին ունի։ Վորպեսզի կոոպերացիան գյուղացուն իրոք ազատի մասնավոր առևտրականից, կուլակից, վաշխառուից—ապա հարկավոր է, վոր նա ապրանքը գործարանից ուղղակի գյուղը հասցնի, միշտ ձեռք բերի պիտանի, գնայուն, գյուղացու տնտեսությանն անհրաժեշտ ապրանքներ, սովորի առուտուր անել առանց մեծ վերադիր ծախքերի։

Գյուղում կոոպերացիան վոչ միայն վաճառում է, այլ և գնում է։ Անցյալ տարի գյուղացիների շուկա հանած ամբողջ հացի յերկու յերրորդը կոոպերացիան գնեց։ Կնշանակի նա քաղաքի գործարանների արտադրությունները փոխանակում է գյուղատնտեսական մթերքների հետ։ Քաղաքի և գյուղի իսկական զոդումն կատարվում է կոոպերացիայի միջոցով։

Տնայնագործական արդյունաբերությունը

Արդեն տեսանք, վոր մեր արդյունաբերությունը, ինչքան էլ վոր աճում է, արդյունաբերական ապրանքներով չի կարողանում բավարարել գյուղացիության կարիքները։ Ուստի այժմ ստիպված ենք նոր աղբյուրներ փնտրել—ապրանքի սովը հաղթելու։ Ապրանքների զգալի մասը պետք է տնայնագործական արդյունաբերությունը տա։

Մինչև պատերազմը շուկայի համար աշխատող տնայնագործներ Ռուսաստանում հաշվում եյին 4 մլ. մարդ։ Գյուղական տնայնագործների մշակած ամբողջ ապրանքի արժեքը 1,390 մլ. ռուբլի յեր, այսինքն խոշոր արդյունաբերության ամբողջ տվածի մի չորրորդ մասը։ Վոչ-սևահողային շրջաններում տնայնագործությունը խիստ տարածված կողմնակի զբաղմունք եր։

Վերջին տարիներում արհեստը շատ տուժեց. Բայց այժմ, շնորհիվ գյուղական տնայնագործներին ու արհեստավորներին տված արտոնությունների, շնորհիվ նրանց ցույց տված աջակցության, շնորհիվ այն բանի, վոր տնայնագործները տնայնագործական-արդյունաբերական միություններ-կոոպերատիվներ են կազմակերպել,—տնայնագործական արդյունաբերությունն արագ վերականգնվում է և 1925—26 թվին նախապատերազմյան չափին է հասնում։

Սա մի կողմից լրացնում է արդյունաբերական ապրանքների պակասը, մյուս կողմից կողմնակի կերպով նեցուկ է հանդիսանում գյուղացիական տնտեսությանը, ազատ ձեռքերին գործ է տալիս։

Արտաքին առևտրի անհրաժեշտությունը գյուղացիական տնտեսության համար

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր գյուղական տնտեսության շահերը սերտորեն կապված են արդյունաբերության շահերին։

Գյուղացին իր մթերքները փոխանակում է արդյունաբերական ապրանքների հետ։ Լավ, իսկ յեթե գյուղատնտեսական մթերքներն ավելի շատ են, քան քաղաքի պահանջը։ Ի՞նչ անեն մնացածը։ Ձեռնտու գներով ինչպես վաճառեն։

Պետք է վաճառել արտասահմանում, ուր հացը պակաս է։

Նախքան պատերազմը Ռուսաստանից արտասահման արտահանում եյին տարեկան քիչը-քիչը մեկուկես միլիարդ ռուբլու ապրանք։ Դա գլխավորապես կերակրի մթերք և հում նյութեր եյին—յերկրագործական մթերքներ։ Գործարանի պատրաստի ապրանք մենք արտահանում եյինք միմիայն 3 տոկոս։

Քաղաքացիական կռվի ժամանակ, յերբ մենք շրջապատված եյինք, ենքան էլ արտահանելու անհրաժեշտություն չեյինք

զգում, վորովհետև գյուղացու տնտեսությունն ընկել եր, և իսկի արտահանելու բան չկար։ Բայց այժմ, յերբ գյուղացու տնտեսությունն արագությամբ լայնանում է, աճում, հասել է նախապատերազմյան չափին և նույնիսկ շուտով այդ չափից էլ կանցնի, այժմ արտահանելու գործը կանոնավոր ու լայն չափերով կազմակերպելու անհրաժեշտությունն որեցոր զգալի յե դառնում։

Հացն արտասահմանում վաճառելու անհրաժեշտությունը շատ պարզ զգացվեց մանավանդ 1925 թվի լավ բերքի շնորհիվ։ Գյուղացիության, քաղաքի, Կարմիր բանակի և այլ սպառողների կարիքը բավարարելուց հետո ելի միքանի հարյուր միլիոն փութ ավելցուկ եր մնում մեզ մոտ, վորն ավելի ձեռնտու յե արտասահմանում վաճառել, քան պահել։

Հասկանալի յե, թե ինչու յե Խորհրդային կառավարությունը ձգտում առևտրական կանոնավոր հարաբերություն սահմանել այն բոլոր պետությունների հետ, վորոնք մինչև պատերազմը մեր գյուղատնտեսական մթերքների սպառողներն եյին։ Դա ենքան էլ հեշտ չեր, վորովհետև կապիտալիստական պետությունները շարունակ հույս ունեյին, թե գուցե կհաջողվի Խորհրդային բանվորագյուղացիական կառավարությունը տապալել և պայման կապել այնուհետև կալվածատերերի ու կապիտալիստների հետ—ա՛յ թե հեշտ կպայմանավորվեյին։ Բայց մեր տոկունության շնորհիվ մենք մի շարք պետությունների ստիպեցինք պայման կապել մեզ հետ և առևտրական հարաբերություններ սկսել։

Ի՞նչ եյինք ներմուծում մենք և ի՞նչ արտահանում

Մեր մանվածքային գործարանների համար, որինակ, դեռ մինչև պատերազմն էլ բամբակը պակասում եր։ Մեր գործարանների համար մենք բամբակ եյինք ցանում Թուրքեստանում, Բուխարայում, Անդրկովկասում, բայց ստիպված եյինք մեզ համար անհրաժեշտ բամբակի 40%-ը գնել արտասահմանում—Յեգիպտոսում, Ամերիկայում։ Պատերազմից հետո մենք Ամերիկայից առաջին անգամ բամբակ ստացանք 1924 թվին։ Ռետին (կաուչուկ) մենք գնում եյինք և կարող ենք գնել միայն

արտասահմանում։ Մենք արտասահմանից էյինք ստանում մեր գործարանի մշակած բրդի մոտ կեսը, դաբաղելու նյութերի (կաշվի գործարանների համար) կեսից ավելին, արհեստական պարարտացման նյութերի $80^{0}/_{0}$-ը և մեզ անհրաժեշտ բոլոր մեքենաների մոտ կեսը։ Մեր գործվածքների համար ներկեր ստանում էյինք և այժմ էլ ստանում ենք մեծ մասամբ արտասահմանից։ Բացի դրանից չպետք է մոռանալ և այն, որ մինչև պատերազմը Ռուսաստանի մասերն էյին Լեհաստանը, Էստոնիան, Լատվիան, Լիտվան և Ֆինլանդիան։ Այդ պետությունները զարգացած արդյունաբերություն ունեյին, և մենք շատ բան էյինք ստանում այդ շրջաններից։ Այժմ մենք ստիպված ենք այդ բոլորն ստանալ արտասահմանից։

Արտասահմանից մենք գնում ենք տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ, գերանդիներ, մեր գործարանների համար նոր սարք ու կարգ ենք պատվիրում արտասահմանում։ Այս տարի ստիպված յեղանք նույնիսկ լայն գործածության ապրանքներ գնել արտասահմանում, օրինակ՝ կտորեղեն, որովհետև մերը մեզ չէր բավականանում։ Արտասահմանի հետ ամբողջ առևտուրը գտնվում է պետության ձեռքին և կատարվում է Արտաքին Առևտրի Ժող. Կոմիսարիատի միջոցով կամ նրա առևտրական գրասենյակների (առևտրական ներկայացուցչության) միջոցով, որ յեվրոպական շատ յերկրներում ու խոշոր քաղաքներում բացել է։ Առանց նրա թույլտվության չի կարող ոչ մի բան ոչ արտահանվել, ոչ ներմուծվել։ Ինչո՞ւ համար է այդպես արվում։

Ինչո՞ւ է հարկավոր արտաքին առևտրի մենաշնորհը

Յեթե մենք թույլ տայինք, որ ուրիշ յերկրներից ազատ կերպով ապրանք բերեյին մեզ մոտ, ապա կարճ ժամանակում ամ ինչ կրատացվեր․—արևմտա-յեվրոպական, ամերիկական, յապոնական և այլ ամեն տեսակ կապիտալներ ապրանք կթափեյին մեր գլխին։ Պատերազմի շրջանից նրանք ամեն տեսակ անպետք բաներ են հավաքել․ այդ բոլորը նրանք կարտահանեյին մեր յերկիրը։ Դրանց փոխարեն կտանեյին հաց, բուրդ, խոզի մազ, մորթի, կտավհատ, կաշի, կանեփ, բուսդ և ու-

րիշ գյուղատնտեսական, հողագործական և անասնաբուծական մթերքներ։ Էն ժամանակ մեր քայքայված գործարանները չէյին կարող ոտքի կանգնել, կնշանակի չէր կարող ոտքի կանգնել և մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը։ Այսպիսով քայքայելով մեր արդյունաբերությունը, օտար կապիտալիստները մեր յերկրի լիակատար տեր ու տնօրենը կդառնային։ Բոլոր յերկրների կապիտալիստները կհարստանային, իսկ դրանից մեր յերկիրը միայն կաղքատանար։ Ահա թե ինչու մենք եստեսակ կարգ ենք դրել, որ կոչվում է արտաքին առևտրի մենաշնորհ։

Քաղաքի և գյուղի կապը (զոդումը)

Գյուղական տնտեսությունն ուղղակի կախված է այն բանից, թե մեր գործարաններն ու գավոդներն ինչպես կաշխատեն։ Յեթե մենք առաջիկա տարիներում կարողանանք ինչպես հարկն է գնել ելեկտրիֆիկացիան, այսինքն գյուղին ելեկտրական լույս, ելեկտրական ուժ տանք, յեթե գյուղին ամենալավ գյուղատնտեսական մեքենաներ տանք, յեթե մեքենայով թեթևացնենք գյուղացու աշխատանքը—որ նա մեքենայով չորացնի ճահիճները, ջրանցքներ փորի, արմատներ (ծառերի) մաքրի, վարի, ցանի, հնձի, հարի—ապա գյուղացու աշխատանքն այսպես ծանր ու անշնորհակալ աշխատանք չի լինի։ Նա ուրախալի աշխատանք կլինի, որ ամենքին յերջանիկ կյանք է ապահովում, ավելացնում է հարստությունն ու բարօրությունը շատ-շատ անգամ, գյուղացուն հնարավորություն—ժամանակ կտա իր սեփական զարգացման մասին մտածելու, կազատի գեղջկուհուն ուժից վեր աշխատանքից, որ մեր կյանքի վատ կազմակերպված լինելու պատճառով դրված է նրա վրա։ Պետական արդյունաբերության կատարյալ զարգացումը գյուղացուն կտա լավ ու արժան կտոր, շոր, լավ կոշիկ, ձիու սարք, աման, հնարավորություն կտա ավելի ընդարձակ, առողջապահիկ ու լույս բնակարան շինել թե իր, թե իր անասունների համար։ Լավ կազմակերպված ու զարգացած պետական արդյունաբերությունը գյուղացուն արժան արհեստական պարարտացման նյութ կտա, հողն էլ չի քամվի, ուժասպառ չի լինի, ինչպես այժմ է։

Իսկ բանվորը, որ այժմ գործարանների տերն է, պակաս չէ շահագրգռված, որ գյուղական տնտեսությունը բարձրանա ու զարգանա։ Եթե գյուղական տնտեսությունը ինչպես հարկն է բարձրանա, ապա էլ եսքան գործազուրկներ չեն լինիլ, որոնք քաղաք են գնում՝ որևէ գործ փնտռելու։ Հողը կարող է յերեք չորս անգամ ավելի տալ, քան թե այժմ է տալիս. և բանվորին, և գյուղացուն լիուլի կբավականանա և ոչ թե հիմիկվա նման, որ հարյուր-հազարավոր, միլիոնավոր մարդիկ կիսաքաղց են ապրում։ Բանվորը շահագրգռված է, որ բարձրանա, զարգանա և լավանա գյուղական տնտեսությունը, որովհետև այն ժամանակ կարող է նա լայն կերպով զարգացնել արդյունաբերությունը և գյուղին գործարանային ապրանքներ տալ։ Բանվորը շահագրգռված է այդ բանում նաև նրա համար, որ մեր բանվորների մեծ մասի ընտանիքներն ապրում են գյուղում և գյուղական տնտեսությամբ են զբաղվում։

Ահա այս փոխադարձաբար շահագրգռված լինելը և արդյունաբերության ու գյուղական տնտեսության փոխադարձ կապը հիմք է ստեղծում քաղաքի ու գյուղի զոդման, բանվորի ու գյուղացու տնտեսական կապի համար։ «Անկասկած, ժողովրդական զանգվածների միության ուղին միակ ուղին է, որով գյուղացու ու բանվորի աշխատանքներն իրենց համար կլինեն, և ոչ շահագործողի։ Ու մեր պայմաններում այդ իրագործելու համար անհրաժեշտ է տնտեսական կապ, որը միակ հնարավորն է—կապ տնտեսության միջոցով»։ Այսպես էր ասում Լենինը։

ՀԱՐՑԵՐ

1. Գյուղացին ինչո՞ւ յե շահագրգռված քաղաքի արդյունաբերությամբ։
2. Ինչո՞ւ մեզ մոտ քաղաքի ապրանքները դեռ թանկ են։
3. Վո՞րն է ամենաձեռնատու ճանապարհը՝ գյուղական տնտեսության մթերքները քաղաքի սպառողին հասցնելու և արդյունաբերական ապրանքները՝ գյուղացուն։

4. Մտածեցեք՝ արդյոք բանվորների աշխատավարձն իջեցնելուց և բանվորական օրը յերկարացնելուց գյուղացիները, վերջին հաշվով, կշահվեին, թե չէ։
5. Ի՞նչ կստացվեր, յեթե մենք արտաքին ազատ առևտուր թույլ տայինք. — ո՞վ կշահվեր դրանից և ո՞վ կտուժեր։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մտածեցեք, թե կոոպերատիվի գործն ինչպես ավելի կանոնավոր կազմակերպենք։ Ինչո՞վ կարող եք օգնել վարչության աշխատանքներին, վերստուգիչ հանձնաժողովներին, խանութային հանձնաժողովներին։ Առանց մասնավոր շահադետի (սպեկուլյանտ) ինչպես կազմակերպենք գյուղատնտեսական մթերքների վաճառքը։

ԶՐՈՒՅՑ ԻՆՆԵՐՈՐԴ

1905 ԹԻՎԸ

Ինչի՞ մասին է զրույցը

Այս զրույցով մենք կծանոթանանք ռուսական առաջին հեղափոխության հետ։ Մենք կտեսնենք, վոր դեպքերն սկսեցին 1905 թ. հունվարին, յերբ բանվորները խնդրանքով գնում եյին ցարի մոտ, և վերջացան նույն թվի դեկտեմբերին Մոսկվայի բանվորների զինված ապստամբությամբ՝ ընդդեմ ցարական կառավարության։

Մենք կծանոթանանք 1905 թվի, 1906 թվի սկզբի գյուղացիական շարժմանը։ Կվերլուծենք բանվորների և գյուղացիների պարտության պատճառները. կիմանանք, թե ինչ դասեր առան բոլշևիկները, պրոլետարիատն ու գյուղացիությունը ռուսական հեղափոխության առաջին փորձից։

Բանվորների գնդակահարումը 1905 թ. հունվարի 9-ին (22-ին)

Կարծես թե փոքր բանից սկսվեց։ Վարպետի հետ ընդհարվելու պատճառով Պուտիլովի գործարանից յերեք բանվոր արձակվեցին։ Բանվորները պահանջեցին, վոր նրանց յետ ընդունեն։ Գապոնը, վոր բանվորներին բարեկամ եր ցույց տալիս իրեն, բայց ժանդարմների մարդն եր, ստիպված եր բանվորների անունից բանակցություններ վարել իշխանության հետ և շարունակ խոստանում եր, վոր կբավարարեն։ Իշխանությունը մերժեց։ Այն ժամանակ բանվորները գործադուլ արին։ Շուտով Պուտիլովի բանվորներին սկսեցին միանալ ուրիշ խոշոր ձեռնարկությունների բանվորներ, վորովհետև այն ժամանակ ընդհանրապես բոլորն էլ դժգոհ եյին կարգերից։ Յերեք օրում գործադուլավորների թիվը յերկու հարյուր հազարի հասավ։ Վորպեսզի բանվորներն իր ազդեցության տակից դուրս չգան, Գապոնը վորոշեց այդ շարժման գլուխն անցնել։

Նա դուրս եր գալիս Պետրոգրադի գործարանային շրջանի բազմամարդ հավաքույթներում և սկսում եր բանվորներին զգուշացնել հեղափոխությունից, կոչ անելով—հույս դնել ցարի վրա։ Ընդունվեց մի ընդհանուր վորոշում, վոր աղերսագրով պետք է գնալ ցարի մոտ. այդ աղերսագրում պետք է գրվեյին բանվորների բոլոր կարիքներն ու ցավերը։

Այդ աղերսագիրը կարդացին բանվորական բոլոր ժողովներում, և հարյուր հազարավորները համաձայնում եյին դրան։ Ահա ինչ եր գրված այնտեղ.

«Թագավոր, մենք, բանվորներս, մեր յերեխաները, կանայք և անօգնական ծերունի ծնողները քեզ մոտ ենք յեկել, Թագավոր, արդարություն ու պաշտպանություն գտնելու։ Մենք աղքատացել ենք, մեզ ճնշում են, ուժից վեր աշխատանքներով ծանրաբեռնում են, մեզ հայհոյում են, մեզ մարդ չեն համարում, մեզ հետ վարվում են ինչպես ստրուկների հետ, վորոնք պետք է տանեն իրենց այդ վիճակն ու լռեն։ Ու մենք համբերում ենք. բայց մեզ ավելի յեն մղում աղքատության ափի մեջ,—իրավազուրկ ենք մենք ու տգետ. մեզ խեղդում է բռնությունն ու կամայականությունը. մենք խեղդվում ենք, Թագավոր, համբերությունն էլ սահման ունի. մեզ համար հասել է այն սոսկալի րոպեն, յերբ մահը լավ է, քան այս անտանելի տանջանքները շարունակելը»։

Այնուհետև աղերսագիրը խնդրում եր ցարին 8-ժամյա բանվորական օր հաստատել, համապատասխան աշխատավարձ սահմանել, ներել բոլոր քաղաքական բանտարկյալներին ու աքսորվածներին, խոսքի ու այլ ազատություններ տալ, Հիմնադիր Ժողով հրավիրել, կամաց-կամաց հողը ժողովրդին հանձնել սկսել։ Այստեղ թված եյին բանվորների այն կարիքներն ու պահանջները, վոր կուտակվել եր բանվորների մեջ. այստեղ կային և այն պահանջներից շատերը, վոր այն ժամանակ դնում եյին սոցիալ-դեմոկրատները։ «Ահա, Թագավոր—վերջանում եր աղերսագիրը—մեր գլխավոր ցավերը, վոր մենք բերում ենք քեզ։ Հրամայիր և յերդվիր կատարել նրանք—ու դու Ռուսաստանը ուժեղ ու փառապանծ կդարձնես, քո անու-

որ հավիտենականապես կապվի մեր և մեր սերունդների սրտերում։ Իսկ յեթե չկատարես, մերժես մեր աղաչանքը, մենք կմեռնենք այստեղ, այս հրապարակում, քո պալատի դիմաց. մենք ել գնալու տեղ չունենք և դուր ել կգնանք։ Մենք միայն յերկու ճանապարհ ունենք կամ դեպի ազատություն, յերջանկություն, կամ դեպի գերեզման։ Ցույց տուր՝ թագավոր, նրանցից մեկը, և մենք անտրտունջ կգնանք նրանով, թեկուզ այդ ճանապարհը դեպի մահ տանի։ Թող մեր կյանքը զոհ լինի տառապող Ռուսաստանի համար, մենք չենք ափսոսում այդ զոհը և սիրով կզոհվենք»։

Այն ժամանակ սոցիալ-դեմոկրատներն իզուր եյին փորձում ապացուցել բանվորներին ցարի մոտ գնալու անոգուտ ու անհույս լինելը։ Նրանք զուր եյին բացատրում, վոր ցարն ու նրա կառավարությունը կապիտալիստների շահերի ջերմ պաշտպաններն են, վոր բանվորներն իրենց բոլոր պահանջները միայն ուժով կարող են կորզել տերերից ու ցարից։ Դեպի ցարն ունեցած հավատը շատ մեծ եր—հավատում եյին, վոր ցարը չգիտե ճշմարտությունը, վոր նրա պաշտոնյաները խաբում են նրան, վոր ինքը ցարը ժողովրդի կողմն ե։

Բանվորական շրջաններում սկսեցին պատրաստվել յերթին, վոր նշանակված եր կիրակի որը, հունվարի 9-ին (հին տոմարով կամ նոր տոմարով հունվարի 22-ին)։

Բայց ցարի կառավարությունն ել քնած չեր։ Նա վորոշել եր արյան բաղնիք սարքել, բանվորներին արյունոտ դաս տալ և դրանով նրանց ընդմիշտ սովորեցնել խռովություն չանել։ Ու թեև հայտնի չեր, վոր բանվորները բոլորովին անզեն կլինեն, ոգնության համար Պսկովից Պիտեր զորքեր կանչվեցին, հրանոթներ դրին։

Դեռ լույսը չբացված՝ բանվորներն սկսեցին հավաքվել շրջաններում։ Առավոտն անդեն բանվորների ահագին խմբերը (մի քանի հարյուր հազար) ծայրամասերից դեպի կենտրոն, դեպի Ձմեռային պալատը դիմեցին։ Յերթի առաջից խաչվառներ, պատկերներ—ցարի նկարներ եյին տանում։ Բանվորները «Տեր, պահյա զկայսրն մեր», «Ազատյա տեր», և ուրիշ յեկեղեցական

յերգեր եյին յերգում։ Բայց ցարի կառավարությունն արդեն պատրաստ եր։ Բակերում զինվորներ եյին թաքցրած, փողոցներում ամեն կողմ ձիով գնում-գալիս եյին ուլաններ ու կազակներ, պալատի հրապարակում թնդանոթներ ու գնդացիրներ եյին դրված։ Յեվ յերբ ծայրամասերից ամբոխն առաջ շարժվեց դեպի քաղաքի կենտրոնը, նրանց դիմավորեցին հրացանի ու գնդացիրի կրակով, սրերով ու մտրակներով։

Բայց և այնպես բանվորների մի մասն անցավ Ձմեռային պալատի կողմը, և յերբ այնտեղ շատ ժողովուրդ հավաքվեց, հանկարծ, առանց վորևե նախազգուշացման, լսվեցին համազարկեր, մեկ, յերկու։ Յերրորդ համազարկն ուղղեցին այն յերեխաների վրա, վորոնք հետաքրքրությունից վաղուց բարձրացել եյին հրապարակի շուրջը յեղող ծառերը։

Կազակներն սկսեցին հալածել փախչող ամբոխին։ Կրակում, կտրատում ջարդում եյին ամենքին — ով պատահում եր։

Հետո, յերբ սկսեցին սպանվածներին ու վիրավորներին հիվանդանոց տանել, ապա մի որվա մեջ 1.216 սպանված և 5.000 վիրավոր տարան։ Իսկ թե վատիկանությունն ինչքան թաղեց ծածուկ—եդ ել յերբեք չենք իմանա։ Բայց սրա հետևանքն ամենևին այն չեղավ, ինչ վոր սպասում եյին ցարն ու նրա արբանյակները։ Նրանք ուզում եյին արյան մեջ խեղդել սկսվող հեղափոխությունը, բայց դրա փոխարեն սպանեցին ժողովրդի ունեցած հավատը դեպի ցարը։

Բանվորները հասկացան, վոր նրանք վոչ մի տեղից վողորմություն չպիտի սպասեն, վոր նրանք հույս չպիտի դնեն ցարի վրա, վոր նրանց հույսն իրենց ուժը պիտի լինի։ Միայն ուժով կարող են բարվոքել նրանք իրենց դրությունը, և ճնշման ու շահագործման կարգերի դեմ մղած այս պայքարի ժամանակ նրանք ամենից առաջ պետք ե ջնջեն իրենց ճանապարհից ցարի ինքնակալությունը։ Նրանք հասկացան, վոր սոցիալ-դեմոկրատները, վոր այս բանն առաջուց եյին ասում, ճիշտ են ասում։

Այս մասին շուտով իմացան Ռուսաստանի բոլոր բանվորները։ Անմեղ բանվորների այս կոտորածը, 1905 թվի հունվա-

րի 9-ի այս արյունոտ կիրակին ամբողջ յերկրի համար պայքարի ազդանշան ծառայեց։ Ու յերբ այս շարժման մասնակից հազարավոր բանվորներ ուղարկվեցին գյուղերը, ապա գյուղը հասկացավ թե ինչ վոճրագործություն է կատարվել բանվոր դասակարգի նկատմամբ։ Ժողովրդի շարժումն սկսեց շարունակ ավելի ու ավելի աճել, բռնել բոլոր բանվորական շրջանները, անցավ գյուղացիական մասսաներին, բանակին ու նավատորմղին։

Լենինը արյունոտ կիրակվա նշանակության մասին

Այդ դեպքերի նշանակությունն ահա ինչպես եր գնահատում հետո Վլ. Իլյիչն իր ճառում, վոր նա ասաց արյունոտ կիրակվա տասներկույերորդ տարեդարձի առթիվ Սոցիալիստական Յերիտասարդության Միության ժողովում, Զվիցարիայի քաղաքներից մեկում։ Նա ասաց. «Մինչև 1905 թվի հունվարի 22-ը (հին տոմարով 9-ը) Ռուսաստանի հեղափոխական կազմակերպությունը մարդկանց փոքրիկ խմբակներից եր բաղկացած...

Միքանի հարյուր հեղափոխական կազմակերպիչներ, մի քանի հազար տեղական կազմակերպություններ, ամենաշատը ամիսը մի անգամ տպվող 6 հատ հեղափոխական թերթիկներ, վորոնք հրատարակվում եյին գլխավորապես արտասահմանում և ծածուկ, անհավատալի դժվարություններով ու բազմաթիվ զոհերի գնով ուղարկվում եյին Ռուսաստան.— այսպես եյին Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունները, առաջին հերթին հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան մինչև 1905 թվի հունվարի 22-ը։

Սակայն միքանի ամսվա ընթացքում պատկերը բոլորովին փոխվեց։ Հեղափոխական հարյուրավոր սոցիալ-դեմոկրատներն աճեցին, հազարավորներ դարձան, հազարավորները՝ յերկու-յերեք միլիոն պրոլետարների առաջնորդներ։ Պրոլետարական պայքարը մեծ խմորում, մասամբ և հեղափոխական շարժում առաջ բերեց 50—100 միլիոնանոց գյուղացիական զանգվածների մեջ։ Գյուղացիական շարժումն արձագանք տվեց բանակում և առաջ բերեց զինվորական ապստամբություններ, բա-

նակի մի մասը զինված ընդհարում ունեցավ մյուսի հետ։ Այսպիսով 130 միլիոն բնակիչ ունեցող վիթխարի յերկիրը հեղափոխության սկսեց։

Այսպիսով, ննջող (քնած) Ռուսաստանը հեղափոխական պրոլետարիատի յեվ հեղափոխական ժողովրդի Ռուսաստան դարձավ»։

Բանակն ու նավատորմիղը, իհարկե, այնպիսի ձևով եյին դաստիարակվում, վոր զինվորներն ու նավաստիները միայն մի բան գիտեյին. «ճիշտ այդպես», «վոչ յերբեք», «լսում եմ»։ Ահա այն բոլորը, վոր կարող եր պատասխանել այն ժամանակվա յետամնաց ծառայողը։ Բայց բանվորների ու գյուղացիների հուզումները չեյին կարող անհետ անցնել բանակի ու նավատորմղի համար։ Զորքի տրամադրության վրա մեծ ազդեցություն ունեցավ նաև պատերազմը։

Ամենից առաջ արձագանք տվեց նավատորմիղը։ Նավի վրա ծառայելու համար լավ գրագիտություն, զարգացում և տեխնիկական գիտություններ եր պահանջվում։ Ուստի նավերի վրա նշանակվում եյին ավելի գրագետ ու զարգացած գյուղացիներ կամ շատ բանվորներ, վորոնք ծանոթ եյին մեքենաների կազմությանը։ Հենց նրա համար, վոր նավատորմղի վրա բանվորներ շատ կային, նավատորմիղն առաջին ապստամբողն եր։ Հուլիսի 14—15-ին ապստամբություն սկսվեց Սև-ծովյան նավատորմղի «Իշխան Պատյոմկին» զրահակիր նավի վրա։ Ապստամբության առիթ ծառայեց հետևյալ դեպքը։ Նավաստիներին շատ վատ եյին կերակրում։ Մի անգամ նավաստիները նկատելով, վոր վորդերով լիքը միսը պղինձն են ածում յեփելու, հրաժարվեցին ճաշել։ Հրամանատարներն սկսեցին սպառնալ, բայց նավաստիներն իրենց ասածին մնացին։ Այն ժամանակ սպաները վորոշեցին գնդակահարել խռովարարներին։ Յերբ սպաներից մեկն սպանեց Վակուլենչուկ նավաստուն, նավաստիներն ապստամբեցին։

Ատված հրամանատարներին ծովը նետեցին, սպաներին ձերբակալեցին։ Նավի հրամանատարությունը նավաստիները հանձնեցին իրենց ընտրածին։ Նավը մոտեցավ Օդեսային, ուր այդ ժամանակ բանվորները գործադուլ եյին արել։ Սպանված

Վակուլինչուկին մեծ հանդիսավորությամբ թաղեցին. այդ թաղմանը մասնակցում էր ամբողջ քաղաքը։ Իշխանությունը չհամարձակվեց խառնվել, վորովհետև զրահակիրն իր թնդանոթներով կարող էր ջնջել ամբողջ քաղաքը։

Ցարը «Պատյոմկին» զրահակրի ապստամբությունը լսելով, սաստիկ վախեցավ։ Սև ծովի ամբողջ նավատորմիղն ուղարկվեց ապստամբների դեմ։ «Պատյոմկինը» համարձակ կերպով բազմաթիվ թշնամու դեմ գնաց։ Ու այստեղ պատահեց այն, վոր իշխանությունն իսկի չէր սպասում։ Բոլոր նավերի նավաստիները թողեցին իրենց տեղերը, հրաժարվեցին կրակել և «ուռա» աղաղակելով դիմավորեցին հեղափոխական զրահակրին։ Հրամանատարները չափազանց ուրախ եյին, վոր հաջողվեց իրենց նավերը հեռացնել «Պատյոմկինից»։ Բայց և այնպես «Գեորգի Պոբեդոնոսեց» զրահանավը միացավ ապստամբներին։

Բայց բոլոր նավերի նավաստիներն այնպես նախապատրաստված չեյին վճռական գործողությունների համար, ինչպես պատյոմկինցիները։ Բացի դրանից «Գեորգի»-ի վրա դավաճանություն ծագեց։ Նավի վրա մնացած հակահեղափոխականները նավաստիների մեջ քայքայող աշխատանք եյին տանում և վերջիվերջո նավը խրեցին ծանծաղուտի մեջ։ «Պատյոմկինը» մենակ մնալով՝ 12 որ կարմիր դրոշակով լողաց ջրերում և վերջն ստիպված յեղավ կանգ առնել Ռումինիայի ափերին և անձնատուր յեղավ Ռումինիայի իշխանությանը։

Այսպես վերջացավ Սև ծովի նավատորմղի ապստամբությունը։ Բայց հուզումները չդադարեցին, և բանվոր դասակարգի հեղափոխական գործունեյության աճման հետ աճում եյին նաև բանակի և նավատորմղի խմորումները։

Բանվորների պայքարը։ Համառուսական գործադուլ

Բանվորների պայքարի գլխավոր միջոցը գործադուլն էր։ Բայց արդեն գործադուլ եյին անում վոչ թե մի գործարանի բանվորներ, այլ ամբողջ քաղաքի բոլոր գործարանները միանգամից։ Բանվորները վոչ միայն իրենց անձնական կարիքների պահանջներն եյին դնում, այլ պահանջում եյին ամբողջ քաղաքական կարգերը փոխել, յերկրի կառավարության

կառուցվածքը փոխել։ Գործադուլն անցնում էր մի քաղաքից մյուսը։ Ամենախոշոր գործադուլներն եյին Իվանովո-Վոզնեսենսկինը, Լոձինը, Վարշավայինը, Թիֆլիսինը, Նիժնինը և այլ կենտրոններինը։ Շատ քաղաքներում այս գործադուլները վերջանում եյին նրանով, վոր բանվորներն արյունահեղ ընդհարումներ եյին ունենում վոստիկանության և զորքի հետ։ Բայց բանվորական շարժումն իր ամենամեծ ուժին հասավ հոկտեմբեր ամսին (1905 թ.), յերբ բռնկվեց ընդհանուր գործադուլը։

Գործադուլն սկսեցին Մոսկվայի տպարանների գրաշարները։ Ու շուտով ամբողջ յերկրում տարածվեց ընդհանուր գործադուլը, վոր պարզապես գրավեց բոլոր բանվորներին, վերջացրած յերկաթգծի և փոստ-հեռագրատան ծառայողներով։ Դա իսկական իմաստով քաղաքական ընդհանուր գործադուլ էր, վորովհետև այդ գործադուլի ժամանակ բանվորները շատ քիչ եյին առանձնակի պահանջներ դնում, այլ ընդհանուր պահանջներ եյին դնում, վոր ամբողջ բանվոր դասակարգին, ամբողջ աշխատավորությանն էր վերաբերում։ Այդ գործադուլի ժամանակ ժողովրդի բազմահազար մասսան կարմիր դրոշակներով քաղաքի փողոցներն էր դուրս գալիս։ Ամեն տեղ, հրապարակներում ու շենքերում բազմահազար ժողովներ ու միտինգներ եյին լինում, տեղ-տեղ ընդհարվում եյին կազակների, դրագունների, ժանդարմների և վոստիկանության հետ։ Տեղ-տեղ սկսեցին բարրիկադներ շինել. յերկաթգծի վրա կանգ առավ յերթևեկությունը. հեռագիրը դադարեց գործել։ Կառավարությունը տեսավ, վոր սա կատակ չի։ Նա զիջումներ արավ, վորովհետև գործադուլն սպառնում էր բուրժուազիայի շահերին, իսկ զինվորական ուժով հույս չուներ խաղաղացնել այդ ամբողջ ժողովրդական մասսան։ Բայց, բացի դրանից, կառավարությունն այդ զիջումներն այն հաշվով արավ, վոր, միենույն է, այդ զիջումները կամ արտոնությունները հետո կարող է յետ խլել։ Հոկտեմբերի 17-ին ցարը հրովարտակ հրատարակեց, վորի մասին ժողովուրդը յերգում էր այն ժամանակ. «Ցարը վախեցավ, հրովարտակ հրատարակեց,— մեռած-

ներին ազատություն, կենդանիներին—ձերբակալություն»։
Գործադուլը դադարեց։

Հենց հոկտեմբերի 17-ի հաջորդ օրը, յերբ ժողովուրդը ցնծում էր, ամբողջ յերկրում ջարդ սկսվեց։ Այդ ջարդերը կառավարությունն ուղղեց ինտելիգենցիայի և հրեաների դեմ։ 110 քաղաքներում ջարդ կազմակերպվեց, 4 հազար մարդուց ավելի սպանվեց, 10 հազար մարդ վիրավորվեցին։ Օրինակ՝ Տոմսկում սև-հարյուրակայինները (այն ժամանակ սպիտակ-գվարդիականներն այդպես եյին կոչվում) նահանգապետի և ավագ յերեցի աչքի առջև հազար մարդուց ավելի—գլխավորապես բանվորներ, փակեցին թատրոնում և այրեցին։ Հրովարտակը ժողովրդին խաբելու միջոց էր միայն։ Պայքարը վերսկսվեց էլ ավելի մեծ ուժով։

Բանվորական պատգամավոր-ների խորհուրդ Պիտերում Բանվորական Պատգամավորների Խորհուրդ կազմվեց. հետո նույնպիսի Խորհուրդներ կազմվեցին Մոսկվայում, Կրասնոյարսկում, Չիտայում և մի շարք այլ քաղաքներում (Իվանովո-Վոզնեսենսկում Խորհուրդ կազմվել էր դեռ օգոստոս ամսին)։ Այդ Խորհուրդներն առաջ եյին գալիս գործադուլը ղեկավարելու համար, բայց հետո արդեն նրանք ձգտում եյին ամբողջ շարժման ղեկավարությունն իրենց ձեռքն առնել, ու այն ժամանակ նրանք մի տեսակ բանվորական կառավարություն եյին դառնում։ Խորհուրդների բոլոր հրամանները կատարվում եյին։ Այսպես՝ Խորհուրդների հրամանով տեղի ունեցան ամենամեծ ցույցերը, գործադուլները. Խորհուրդների կոչի համաձայն, բոլորն իրենց ունեցածը վերցրին խնայողական գանձարկղից. դեկտեմբեր ամսվա ընթացքում հանվեց 86 միլիոն ավելի, քան մտցրած էր։

Խորհուրդների այս նշանակությունը, իբրև նոր, հեղափոխական, բանվորական կառավարության սաղմ, հատկապես ընդգծում էր Լենինը։

Բայց յեվ այնպես այն ժամանակվա Խորհուրդներն այնքան ուժեղ չեյին, որ վերջնական հարված հասցնեին հին կարգերին։ Կառավարությունը հավաքում էր իր ուժերը, որպեսզի այս անգամ կարողանա հաշիվ տեսնել քաղաքի և գյուղի բաժան-

բաժան շարժումների հետ։ Շարժումն այն ժամանակ շատ բարձր կետի հասավ։ Ապստամբեցին Կրոնշտադտի նավաստիները, ապստամբեցին Սևաստոպոլի նավաստիները լեյտենանտ Շմիդտի ղեկավարությամբ, որը հետո գնդակահարվեց Բերեզան կղզում, հուզվեցին զորամասերը Գրոդնոյում, Սամարայում, Կուրսկում, Ռիգայում, Վիբորգում, Լեհաստանում, Կովկասում, Վլադիվոստոկում, Չիտայում, Կրասնոյարսկում, Խարբինում։ Բայց և այնպես բանը զինված ապստամբության հասավ միայն Մոսկվայում և էլի մի քանի յերկրորդական կետերում։

Զինված ապստամբությունը Մոսկվայում. 1905 թ. դեկտեմբերին Մոսկվայում սկսվեց զինված ապստամբություն։ Այն ժամանակ բանվորներն առաջին անգամ կազմեցին կարմիր գվարդիայի զորամասեր, բանվորական ռազմիկ խմբեր։ Քաղաքի ամենակարևոր փողոցներում բարրիկադներ շինեցին, որոնց յետևից մարտական փոքրիկ խմբեր կարող եյին կռվել զորքի դեմ։ Շաբաթ ու կես տևեց փողոցներում այս անհավասար կռիվը։ Կառավարությանը հաջողվեց ուրիշ քաղաքներից զորքեր բերել։ Զորքերն անսահման անգամ գերազանցում եյին մարտիկներին թե իրենց թվով և թե զինվածությամբ։ Մոսկվայի զորքերի վրա կառավարությունը մեծ հույս չուներ. նրանց մեծ մասամբ զորանոցներում փակած էր պահում։ Նրանք հուսալի չեյին, որովհետև դրանից առաջ Մոսկվայում յեղող Մոսկվայի գրենադերյան և այլ գնդերում հուզումներ եյին առաջ յեկել։ Կառավարությունը ոչ մի բանից չէր քաշվում։ Օրինակ՝ Կուդրինսկի հրապարակում, յեկեղեցու զանգակատանը գնդացիր էր դրած, և զանգակի ղողանջի փոխարեն գնդացրի տկտկոցն էր լսվում։ Թնդանոթներից էլ եյին կրակում։ Ահագին բազմություն կոտորվեց ոչ միայն մարտիկներից, այլ պարզապես անցորդներից, որոնց գնդակահարում եյին, հենց որ յերևում եյին փողոցում։ Ավելի շատերին հետո ձերբակալեցին, աքսորեցին կամ բանտերը լցրին։ Բայց, թե Մոսկվայի զինված ապստամբությունը և թե նրան օգնող ապստամբությունները—Սորմովոյում (Նիժեգորոդսկի նահանգ), Գորլովկայում (Դոնի ավազանում), Ժմերինկայում (Ուկրայնա), Հյուսիսային Կով-

կասում, Սիբիրում և այլուր,—բոլորը պարտվեցին, ճնշվեցին։ Կառավարությունը ջարդ ու փշուր արավ այն ժամանակ ծագած բոլոր Խորհուրդները։ Պետերբուրգի Խորհուրդն ամբողջ կազմով ձերբակալվեց և Սիբիր աքսորվեց։

Սկսվեց բանվորական շարժման քայքայումը։

Գյուղացիական հուզումներ

Բանվորական շարժումը կրակ մտցրեց գյուղացիական զանգվածների մեջ։ Դրան պետք է ավելացնել հացի այն վատ բերքը, վոր 1905, 1906 թվերին խիստ հարվածեց գյուղացիներին։ 1905 թվին հացը 600 միլիոնով ավելի պակաս եր, քան 1904 թվին, իսկ 1906-ին ելի 300 միլիոնով պակաս։ Այնպես վոր յերկու տարում հացի ընդհանուր արդյունքը մի յերրորդով կրճատվեց։

Շարժումներն սկսեցին 1905 թվի գարնանից, բայց խիստ ուժեղացան նույն թվի աշնանը և հաջորդ 1906 թվին։ Շարժումներն սկսվում եյին այսպես. պայմանի համաձայն վորոշված որը շրջակա գյուղերից ամբոխն արագ հավաքվում եր կալվածատիրոջ պահեստի մոտ, կոտրում եյին հացի ամբարի կողպեքները, հացը բարձում եյին սայլերը և հանգիստ քշում իրենց տները։ Կալվածատերերին իրենց դեռ ձեռք չեյին տալիս։ Սկսեցին կալվածատիրական անտառներն անխնա կտրել.— չե՞ վոր այդ տեսակետից չափազանց նեղացնում եյին գյուղացիներին։ Քաղաքի բանվորներից որինակ վերցնելով՝ գյուղացիք սկսեցին պայքարի այնպիսի ձևեր բանեցնել, ինչպես— հրաժարվել կալվածատերերի հետ վորևե գործ ունենալ։ Ի. ենք չեյին գնում և ուրիշներին ել թույլ չեյին տալիս, վոր գնան նրանց մոտ բանեն. հրաժարվում եյին նրանցից հող վերցնել նույնիսկ ամենաձեռնտու պայմաններով։

Հետո սկսեցին կալվածատերերի մարգագետիններն արածացնել ու ինքնագլուխ հարել խոտը, տանել։ Գյուղացիներն սկսեցին ինքնակամ կերպով վարել կալվածատիրական, իսկ շատ տեղ նաև վանքական հողերը։ Չե՞ վոր այդ հողերը նրանցից եյին վերցրել, չե՞ վոր այդ հողերը միշտ իրենց ձեռքով եյին մշակվել. նրանք որենքով դա իրենցն եյին համարում։ Անտառների, մարգագետինների, հողերի պատճառով ունեցած

ընդհարումները վերջիվերջո հասցրին կալվածատիրական ագարակների (կործանման) ավերման։ Բոցավառվեցին հրդեհները։ Գյուղացիները հիմնովին այրում եյին շենքերը, վորպեսզի կալվածատերերը հնարավորություն չունենան կրկին վերադառնալու իրենց կալվածքը։

Ահա ականատեսներն ինչպես եյին նկարագրում գյուղացիների գլխավոր շրջանները — Սարատովի նահանգում.— «Կալվածատիրոջ իր ընտանիքով քշում եյին ագարակից, հավաքում ու բաժանում եյին հացն ու մթերքները, յերբեմն և տան շարժական իրերը, դուրս եյին բերում անասունները, գյուղատնտեսական բանվորների և տան ծառայողների հաշիվները վերջացնում եյին. տնտեսական շենքերն այրում։ Կալվածատիրոջ վրա բռնություն գործադրելը քիչ եր պատահում։ Դրա հետ միասին գյուղացիք վորոշում եյին կալվածատիրական հողը գարնանից տալ համայնքին՝ հավասարապես օգտվելու, վորի մասին շատ տեղ համախոսականներ եյին կազմում։ Ուրյադնիկները, չափարները թագնվում եյին, տեղ-տեղ նրանց ձերբակալում եյին։ Սովորաբար հարձակվող գյուղացիների գլուխն եյին անցած լինում մարտական խմբեր. իսկ բաշխումը տեղի յեր ունենում հատուկ կոմիտեների միջոցով։ Կալվածատիրոջ փողերից ձեռք գցածն ընդհանուրի սեփականություն եր դառնում։ Հրդեհումը յերկու պատճառաբանություն ուներ,—նախ կալվածատերը վերադառնալու տեղ չի ունենալ, հետևապես հողատիրության նոր կարգը հեշտությամբ կամրանա, յերկրորդ՝ կազակներին տեղավորելու տեղ չեր լինիլ»։

1905 թվի աշնանը մի կարճ ժամանակում վոչնչացրին և ավերեցին 2 հազար ագարակից ավելի։ «Դժբախտաբար, ասում եր ավելի ուշ Լենինը, գյուղացիներն այն ժամանակ վոչնչացրին մի տասնհինգերորդ մասն այն բանի, ինչ վոր պետք ե վոչնչացնեյին, վորպեսզի ռուս հողից ընդմիշտ ջնջեն ֆեոդալական (այսինքն ճորտատիրությունից մնացած) խոշոր հողատիրական խայտառակությունը։ Դժբախտաբար գյուղացիները գործում եյին չափազանց բաժան-բաժան, անկազմակերպ, վոչ ենքան հարձակողական ձևով, և հեղափոխության պարտության ամենահիմնական պատճառներից մեկը սա յե»։

Գյուղացիական շարժումներն ամենևին բավարար չեյին, վորպեսզի բանվորական շարժման հաղթությունը կատարելապես ամրանար: Այդ ժամանակ գյուղացիները պարզապես ձըգտում եյին դուրս քշել կալվածատերերին. իրենց դարավոր թշնամիներին, վորոնք խանգարում եյին գյուղացուն զարգացնել իր տնտեսությունը: Ընդսմին գյուղացիական շարժումն ամենևին ցարի իշխանության դեմ չեր ուղղված: Դա այնքան պարզ եր այն ժամանակ, վոր օրինակ, էս-էրները թռուցիկ եյին տարածել, վորի մեջ ասված եր, թե, յեթե լավ ցար լիներ, գյուղացիք չեյին կռվի ցարի միահեծանության դեմ, կապիտալիստական կարգերի դեմ, ինչպես այդ ժամանակ կռվում եյին արդեն բանվորները. գյուղացիք կկռվեյին սակավահողության դեմ, վորովհետև ուզում եյին քշել խոշոր հողատերերին, վորոնք խանգարում եյին իրենց: 1905 թվին առաջացած Գյուղացիական Միությունն ել ընկավ էս-էրների ձեռքը և սկսեցին պաշտպանել վոչ թե չքավորների շահերը, այլ ունևորների, կուլակների շահերը: Բացի դրանից գյուղացիական շարժումն իր ամենամեծ թափին հասավ այն ժամանակ, յերբ բանվորական շարժումը քաղաքում արդեն ջախջախվել եր: Ահա ինչու ցարի կառավարությունը կարողացավ հաղթել գյուղացիությանը: Խռովարարներին հանգստացնելու համար ամբողջ գնդեր ուղարկվեցին: Խավար, տխմարացած զինվորական զանգվածները—նույն գյուղացիները, բայց գորշ շինել հագած—նախապատրաստված չեյին, վորպեսզի միանան ժողովրդական շարժմանը, և խիստ պատժում եյին նրանց: Գյուղացիական շարժումները ճնշվեցին:

Համենայն դեպս, հեղափոխության ճնշման տակ, կալվածատերերը բահրան 30%-ով իջեցրին. Նույնպես գյուղացիության ճնշմամբ գյուղատնտեսական բանվորների աշխատավարձը 28—30%-ով բարձրացավ: Բացի դրանից՝ 1907 թիվը լավ բերք տվեց: Այդ բոլոր պատճառների ազդեցության տակ գյուղացիական շարժումը վոչնչացավ:

Այսպես, 1905 թվի ռուսական առաջին հեղափոխությունը վերջացավ աշխատավորների պարտությամբ:

1905 թ. Անդրկովկասում

1905 թվի հեղափոխական շարժումներն արձագանք տվին և մեզ մոտ, Անդրկովկասում: Կառավարությունը շատ լավ գիտեր, վոր ամենից վտանգավորն այդ տեսակետից Բագվի բանվորությունն ե: Սակայն նրա պաշտոնյաները մի գիվական միտք հղացան, վոր սկսելով Բագվից, կառավարության ու հողատերերի դեմ հավաքված թույնը—Անդրկովկասի ժողովուրդներն իրար դեմ ուղղեցին: Պրովոկացիոն կերպով հնարեցին հայ-թուրքական ընդհարումները, վորով նախ Բագվի բանվորության, ապա ամեն տեղի թուրք ու հայ աշխատավորության ուշքն ու միտքը դարձրին այդ ժողովրդակործան հարցի վրա: Մի տարուց ավելի հայ ու թուրք աշխատավորը քաղաքներում թե գյուղերում կոտորում, թալանում եյին միմյանց, ավեր ու հրդեհ սփռելով ամեն տեղ: Կառավարությունն ինքը սարքում եր այս քստմնելի գործը և յերբ ծայրահեղության եր հասնում, ուղարկում եր կազակների հրոսակներին «խաղաղացնելու» կամ շեյթանական հաշտություններ եր կազմակերպում: Ազգային կուսակցություններն ել, հատկապես Հ. Հ. Դաշնակցությունը, շովինիզմով կուրացած, յուղ եր ածում կրակի վրա և հայ ու թուրք աշխատավորության արյան գետեր հոսեցնում: Գյուղացիական շարժումն ամենից մեծ ծավալ ու լուրջ կերպարանք ստացավ Վրաստանում—Գուրիայում, ուր գյուղացիները դուրս քշեցին վոչ միայն կալվածատերերին, այլև իշխանության ներկայացուցիչներին: Սակայն Անդրկովկասի կառավարության խաղը հաջող եր անցել. հայերն ու թյուրքերն իրենք եյին իրենց կոտորում, և գեներալ-նահանգապետ Ալիխանով-Ավարսկին հող ու մոխիր դարձրեց գեղեցիկ Գուրիան:

Լոռում, ուր կալվածատիրական հողեր շատ կային, 1905 թվի ամառը, յերկու անգամ, 500 գյուղացիական պատգամավորներից բաղկացած ժողով գումարվեց, ուր գյուղացիությունը հաշվելով, վոր իր վարած հողերի գինն իրեն բահրա նա տասն անգամ ավել ե արդեն, վորոշեց ել բահրա չտալ «կնյազներին», անտառներն ել իրենցը համարել:

1905 թվի հեղափոխության պարտության պատճառները

Առաջին պատճառն այն էր, որ ինքը բանվոր դասակարգը կռվի ընթացքում բավականաչափ վճռական ու հետևողական չէր։ Բայց չմոռանանք, որ այդ տարվա սկզբում Պիտերի միքանի հարյուր հազար բանվորներ գնում էին խոնարհվելու ցարին, նրանք դեռ հավատում էին ցարին։

Հետո բանվորներն անցնում են գործադուլի միջոցով պայքարելուն և միայն տարվա վերջը բանը զինված ապստամբության է հասնում Մոսկվայում։ Բայց մյուս քաղաքներում այս ապստամբությունը թիկունք չունեցավ։

Յերկրորդ գլխավոր պատճառն այն է, որ գյուղացիությունն ինչպես հարկն է ընդառաջ չգնաց։ Ճիշտ է, գյուղացիական շարժումները բոլոր գավառների յերկու յերրորդը բռնեցին, բայց նրանք ծագում էին ոչ միաժամանակ, կալվածատիրոջ տնտեսությունն ավերելուց են կողմը չէր անցնում գյուղացին, և ավերեցին բոլոր կալվածատիրական տնտեսությունների միայն մի տասնհինգերորդ մասը։ Իսկ գլխավորն այն էր, որ գյուղացիների մի ահագին զանգված, որ գտնվում էր բանակում և բանակի գլխավոր ուժն էր կազմում, նախապատրաստված չէր, որ միանա հեղափոխությանը։ Ճիշտ է, բանակում և նավատորմղի վրա յեղած շարժումները բավական ջլատեցին ցարի կառավարության ուժերը, բայց և այնպես բանակի գլխավոր մասն օգտագործեցին ապստամբած բանվորներին ու գյուղացիներին ճնշելու ու պատժելու։ Բացի դրանից ազատամիտ բուրժուազիան, որ սկզբում ոգևորվելով ժողովրդական շարժումներից, սկսեց զանազան պահանջներ ներկայացնել ցարին, յերբ տեսավ, որ բանվորները թույլ չեն տալ խաբել իրենց, յետ դարձավ հեղափոխությունից։

Ու յերբ ադմիրալ Դուբասովը գնդակահարում էր բանվորներին Մոսկվայում, յերբ գեներալ Մինի, Ռիմանի, Մելլեր-Զակոմելսկու, Ռեննենկամպֆի, գրաֆ Օրլովի, Ալիխանովի և ուրիշների պատժիչ զորամասերն ամեն տեղ գնդակահարում էին բանվորներին, զինվորներին և գյուղացիներին, յերբ կառավարությունը հարյուրներով կախում էր հեղափոխականներին,—այդ պարոնները միայն շնորհակալություն էին հայտնում կառավարությանը, որ խաղաղացրեց։ Բուրժուազիան սահմանադրություն էր ուզում, բայց ամենից ավելի նա վախենում էր բանվորների ու գյուղացիների հեղափոխությունից։ Այդ պատճառով նա կարողացավ ընդհանուր լեզու գտնել կառավարության հետ, մեծ պահանջներ չդրեց, միայն թե կառավարությունը հաստատուն կարգը վերականգնի։ Իսկ յեթե այդ հաստատուն կարգը կախաղաններով ու գնդակահարություններով էր լինում, դա բուրժուազիային հոգս չէր պատճառում։

Այդ ամենից օգտվեց ցարի կառավարությունը։ Մանավանդ որ օտար կապիտալիստները (Ֆրանսիայի բանկերը) փողով օգնում էին։ Հեղափոխությունը պարտվեց։

1905 թվի հեղափոխության դասերը

Բայց 1905 թիվն անհետ չանցավ։ Բանվորներն ու գյուղացիները լավ դաս ստացան։ Հեղափոխական դեպքերն ու անհաջողությունները հաստատեցին այն, ինչ որ սովորեցնում էր Լենինը, ինչի կոչ էին անում բոլշևիկները։ Նրանք ցույց տվեցին, որ ազատագրման շարժման գլուխը միայն բանվոր դասակարգը կարող է լինել, որ միայն զինված ապստամբությամբ կարելի յե հաղթանակի հասնել, որ հեղափոխությունը միայն այն ժամանակ կհաղթի, յերբ գյուղացիությունն ամուր թիկունք կկանգնի նրան, որ առանց զինվորներին հեղափոխության կողմը գրավելու հաջողություն չի կարող լինել։ Բանվորներն ու գյուղացիներն այս դասերից օգտվեցին 1917 թվի հեղափոխության ժամանակ։ «Առանց 1905 թվի գլխավոր վերջնական փորձի Հոկտեմբերյան հեղափոխության հաղթությունն անհնարին կլիներ»։ Այսպես էր փորոշում Լենինը 1905 թվի նշանակությունը։

Մինիստր Ստոլիպինը յեվ «պինդ (ունևոր) գյուղացիությունը»

Յերբ գյուղացիական շարժումը բռնկեց, ցարի կառավարությունն սկսեց մտածել այն միջոցների մասին, որոնցով կարելի յեր գյուղացիական հեղափոխության առաջն առնել։ 1905—1906 թվերին հաջողվեց գյուղացիական շարժումը որոշ սահմանների մեջ պահել։ Ճիշտ է, ստիպված

էր միքանի զիջումներ անել։ Գյուղացիները յերկու հազարից ավելի կալվածատիրական տնտեսություններ վոչնչացրել եյին, կալվածատերերը յերկյուղից սկսեցին կորցնել իրենց հողերը և արագ-արագ վաճառել։ Յետգնման օրենքը վերացավ, ապառիկների մի մասը զեղչվեց. պետական և կայսերական տան հողերի մի մասը հանձնվեց գյուղացիական բանկին. բանկում 30% ով իջեցրին, աշխատավարձը բարձրացավ։ Կառավարությունը պետք է հետզհետե ավելի ու ավելի հրաժարվեր իր հանցավոր ճորտատիրական քաղաքականությունից։ Այդ ժամանակ կառավարության գլուխն էր մինիստր Ստոլիպինը։ Կալվածատերերի և ունևոր գյուղացիների ձայնին լսելով՝ նա, ինչպես և այն ժամանակվա կալվածատերերից շատերը, կարծում եյին, վոր հեղափոխությունը կարելի յե թուլացնել և կանգնեցնել, յեթե մեծ բազմաթիվ սեփականատեր գյուղացիների մի խավ ստեղծվի, վորը շատ հաստատուն կեսպով գիտակցի իր սեփականատիրական իրավունքը՝ հողի վրա։ Այդ վոգով եյին խոսում ագնվականներից շատերը։

Այսպես՝ Պավլով ագնվականն ասում էր. Մենք, հողի ագնվականներս այժմյան ժողովրդական հիվանդության ընթացքը գիտենք։ Սոցիալիզմի դեմ պայքարելը պարզ է, իսկ նրա դեմ միայն մի միջոց կա—սեփականություն»։ Ու կառավարությունն էլ հասկանում էր, վոր վատ չեր լինիլ, յեթե ցարի գահի համար նեցուկ շինեն այն գյուղացիներին, վորոնք պինդ կպած են հին կարգերին։ Ահա ինչու, 1906 թվի նոյեմբերին 1-ի (և 1910 թվի հունիսի 14 ի լրացուցիչ) Ստոլիպինի օրենքի համաձայն, ընդունվում էր, վոր ամեն մի գյուղացի իրավունք ունի բաժանվել հասարակությունից, թեկուզ հասարակության կամքին հակառակ։ Այս օրենքը ձգտում էր արևմտա-յեվրոպականի նման պինդ կուլակային տնտեսություն ստեղծել։ Ուստի խրախուսում էր, վոր գյուղացին կարող է բաժանվել և իր ագարակն ունենալ։ 4 միլիոն դեսյատինից ավելի բաժանված էր այն գյուղերին, վորոնք ուզում եյին ագարակներ ստանալ։ Այսպիսով հասարակական հողերից $13^{1}/_{2}$ դեսյատին հող անցավ ագարակներին։ Բայց կառավարության հաշիվները

սխալ դուրս յեկան։ Հենց այնտեղ, ուր գյուղացիական շարժումները շատ ուժեղ եյին, գյուղացիք չտարվեցին այդ բանով։ Ստոլիպինի մյուս միջոցն էր գաղթը—ուզում եյին գյուղացիների ուշադրությունը կալվածատիրական հողերից Սիբիրի հողերի վրա դարձնել։ 1905—1913 թվերին Սիբիր գաղթեցրին մոտ 3 միլիոն գյուղացի։ Իհարկե, դա մասամբ իջեցնում էր գյուղացիական անբավականությունը, միայն չափազանց քիչ, վորովհետև մի նոր առաջ յեկած «պինդ գյուղացու» հետ առաջ էր գալիս տասը քայքայված տնտեսություն։ Քայքայումն ավելի խորանում էր։ Հետևանքն այն յեղավ, վոր գյուղացիք սկսեցին ատելությամբ վերաբերվել կալվածատերերին և նախանձով ու անվստահությամբ նայել ունևոր-կուլակ գյուղացուն, վոր բաժանվում էր հասարակությունից։ Պետք է ասել, վոր բաժանվող կուլակն էլ շատ գոհ չեր, վորովհետև տեսնում էր, վոր, համենայն դեպս, փլավի ակը կալվածատերն է ուտում, գլուխն ինքը։ Այդ պատճառով կուլակները դեմ չեյին, վոր մյուս գյուղացիների հետ ջնջեն կալվածատերերին։ Այսպիսով կառավարության այն միտքը, վոր «ամուր գյուղացու» ուժով պնդացնի իր գահը, անհաջող դուրս յեկավ։ Վոչ քանակը համապատասխանեց նրանց հաշվին, վոչ գործի եյությունը։

1907—1911 թվի հակազդությունը (ռեակցիան)

Հինգ թվի հեղափոխական դեպքերի ժամանակ կես փտած կառավարությունը զիջումներ արավ. հրովարտակ հրատարակվեց, պետական դումա հրավիրվեց, ուր ժողովրդական ներկայացուցիչներ եյին ընտրվում։ Բայց հենց վոր կառավարությունն ուժ զգաց իր մեջ, խիստ միջոցների դիմեց։ Խոստացված «ազատությունների» հետքն էլ չմնաց։ Պետական դումայի մեծամասնությունը սև-հարյուրակայիններ եյին, վորովհետև բանվորներն ու գյուղացիներն իսկապես չեյին կարողանում իրենց պատգամավորներն անցկացնել։

Մինիստր Ստոլիպինի կառավարության ժամանակ մոտ յերկու հազար մարդ կախվեց ու գնդակահարվեց։ Այդ հանգստացնելու ճանապարհին թե ինչքան մարդ է ծեծվել, հաշվել էլ չի լինիլ։ Հազարավոր գյուղեր ջարդվեցին, հազարավոր

բանվորներ ու գյուղացիներ շղթայակապ տաժանակիր աշխատանքի դատապարտվեցին. բանտերը լիքն էին, աքսորվեցին տասնյակ հազարավոր բանվորներ, գյուղացիներ, զինվորներ, նավաստիներ և այնպիսի ինտելլիգենտներ, վորոնք բանվորների ու գյուղացիների կողմն էին։ Բանվորական կազմակերպությունները ջախջախվեցին, վոչնչացան։ Բուրժուազիան իր վոխն էր հանում բանվորներից։

Բանվորական շարժումն ընկավ։ Դա ցույց է տալիս տարեցտարի պակասող գործադուլավոր բանվորների թիվը։

Այդ ժամանակ ա՛ս մենշևիկներն սկսեցին խոսել այն մասին, թե պետք է վերջ տալ արգելված (անլեգալ) աշխատանքին, պետք է վերջ տալ (լիկվիդացիա անել) մեր ընդհատակյա բոլշևիկական կուսակցությանը։ Դրա համար մենք նրանց «լիկվիդատորներ» անվանեցինք։ Նրանք հեղափոխությունը վերջացած էին համարում։ Բայց բոլշևիկները համոզված էին, վոր բանվոր դասակարգը միայն ժամանակավորապես է նահանջել, վոր մոտենում է այն ժամանակը, յերբ բանվորական ու գյուղացիական շարժումները նորից կսկսվեն։

Այդ տարիներում բոլշևիկները բոլորովին հեռացան մենշևիկներից։ Ախար մինչ այդ ժամանակ մի կուսակցություն էին համարվում—Ռ.Ս.Դ.Բ.Կ., իսկ այժմ նրանք վերջնականապես բաժանվեցին միմյանցից։ Տրոցկին այդ ժամանակ խոսքով վոչ մի կողմին էլ չհարեց, նույնիսկ փորձում էր հաշտեցնել նրանց, բայց իսկապես սարի պես կանգնած էր մենշևիկների թիկունքում։

Նոր վերելք

Բոլշևիկների ասածը ճիշտ դուրս յեկավ։ Արդեն 1912 թվից սկսում է բանվորական շարժման նոր վերելք։

Մեր—բոլշևիկների կուսակցությունն սկսում է լեգալ հրատարակել ամենօրյա «Правда» թերթը։ Դրանով նա ապացուցում է, վոր նա անպատճառ չի ուզում միայն գաղտնի աշխատել, այլ ամենափոքր հանգամանքից էլ ոգտվում է, վորպեսզի լայն ու լեգալ ազատ աշխատանք տանի։ Բանվորներն սկսում են արհեստակցական միություններ, խմբակներ կազ-

մել։ Մեր կուսակցությունը նորից ամրանում է։ 1912 թվի ապրիլի 4-ին (նոր տոմարով 17-ին), Սիբիրի տայգայում վոսկի արդյունաբերողների ընկերության (Լենզոլոտո) Լենայի վոսկու հանքերում, աշխատանքի անտանելի ծանր պայմանների և աշխատավարձի պատճառով, գործադուլ բռնկեց։ Յերբ բանվորների անզեն ամբոխը գնում էր իրենց միասին մշակած պահանջները ներկայացնելու, զորական Տերեշչենկոյի հրամանով մի քանի համազարկ տվին։ 320 բանվոր սպանվեց և 150 մարդուց ավելի վիրավորվեց։ Այս գնդակահարման լուրը շատ արագ տարածվեց։ Յեվ ահա բանվորներն ամեն տեղ, զուտ զայրույթի զգացմունքից բռնկված, պայքարի յելան։ Միայն Պիտերում 200 հազարից ավելի մարդ գործադուլ արավ, իսկ ամբողջ Ռուսաստանում կես միլիոնից ավելի։ Այդ րոպեյից տեսնում ենք, վոր բանվորական շարժումը կրկին աճում է։

Այդ գործադուլներին արդեն մասնակցում էին 1 միլիոն 337 հազար մարդ. ըստ վորում պետք է նկատել, վոր այս գործադուլների պահանջների յերեք քառորդը քաղաքական էին։ Ոգոստոսի սկզբին բանն այնտեղ հասավ, վոր շատ քաղաքներ ու շրջաններ ամբողջովին ընդհանուր գործադուլ էին արել ու բանը հասնում էր բարրիկադներ շինելու ու զինված ապստամբության։ Այն ժամանակ այս նոր հեղափոխության դեմ հանվեց ամենաուժեղ բանը—համաշխարհային պատերազմը։

ՀԱՐՑԵՐ

1. Բանվորներն ինչ միջոցներով էին փորձում լավացնել իրենց դրությունը 1905 թվի սկզբին և ինչպես էին կռվում ցարի դեմ տարվա վերջը։
2. Ի՞նչպես էին անցնում 1905 թվի գյուղացիական շարժումները։
3. Արդյոք ամբողջ բանակը միացա՞վ բանվորների և գյուղացիների ապստամբությանը։
4. Ռուսական առաջին հեղափոխությունն ինչո՞ւ բանվորների ու գյուղացիների պարտությամբ վերջացավ։
5. Ի՞նչ դասեր ստացանք 1905 թվի հեղափոխությունից։
6. Ստոլիպինի բարեփոխությունններն ինչո՞ւ չէին կարող բավարարել գյուղացիական ամբողջ մասսային։

ԶՐՈՒՅՑ ՏԱՍԵՐՈՐԴ

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՌԻՎ ՅԵՎ ՄԻՆՉ-ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ինչի՞ մասին է զրույցը

Այս զրույցի մեջ կանգ կառնենք 14—18 թվի համաշխարհային պատերազմի մասին, պատերազմն առաջ բերող պատճառների և նրա հետևանքների մասին։

Յերբ զինվորներին հավաքում եյին պատերազմ տանելու, նրանց կռվի իսկական պատճառները չեյին ասում։ Ժողովրդին ասում եյին. «Գերմանացին ուզում է գրավել Ռուսաստանը, գերմարացին հարձակվում է, գերմանացին թշնամի յէ, գերմանացին գազան է, գնացեք մեռեք հավատի, ցարի և հայրենիքի համար»։

Մենք գիտենք, վոր կռվի իսկական պատճառն եր զանազան յերկիրների կապիտալիստների այն ձգտումը, վոր ուզում եյին նոր հարստություններ ձգել իրենց ձեռքը. նոր յերկիրներ հպատակացնել իրենց, ուր նրանք կարող եյին նոր հունձ սկսել։ Մենք կտեսնենք, թե ինչպես պատերազմը, վոր սոսկալի ավերում հասցրեց Ռուսաստանի արդյունաբերությանն ու գյուղական տնտեսությանը, միաժամանակ միացրեց ու զինեց բանվորներին ու գյուղացիներին ցարի իշխանության դեմ, թե ինչպես 1917 թվի փետրվարին տապալեցին ցարի իշխանությունը, թե ինչպես դրանից ութ ամիս հետո աշխատավորները բոլշևիկների ղեկավարությամբ ընդմիշտ թոթափեցին կալվածատերերի ու կապիտալիստների լուծը և Խորհրդային իշխանություն հիմնեցին։

Ո՞վքեր եյին համաշխարհային պատերազմի իսկական հանցավորները

Յեվրոպայի գլխավոր պետությունների և Ամերիկայի կապիտալիզմի զարգացումն այն տեղը հասցրեց, վոր այդ յերկիրների կապիտալիստներն սկսեցին ձգտել նոր յերկիրներ ձեռք բերել, թույլ պետություններից ավելի շատերն իրենց հպատակացնել։ Այդ յերկիրներում նրանք կարող եյին

ոգտվել ավելի արժան հում նյութից, ավելի արժան բանվորական ձեռքերից, իրենց ապրանքներն նրանց ավելի ձեռնտու գներով վաճառել։ Արդյունաբերության համար պետք են ածուխ, նավթ, յերկաթ։ Առանց նավթի ու ածուխի նա չի կարող զարգանալ—դա նրա արյունն է, դա նրա հյութն է, դա այն է, վոր նրան շարժում, լույս, տաքություն է տալիս։ Մանավանդ առանց յերկաթի նա չի կարող զարգանալ, վորովհետև առանց յերկաթի չի լինի վոչ գործիք, վոչ մեքենաներ, վոչ յերկաթուղի, վոչ նավեր, և վոչ էլ ժամանակակից քաղաքների հսկա շենքեր կշինվեն։

Զանազան յերկիրների կապիտալիստների միջև մեծ պայքար առաջացավ այն տեղերի համար, ուր նավթի, ածուխի, յերկաթի մեծ հանքեր կան, և ձեռք բերելն էլ ձեռնտու յէ։ Վորպեսզի հանկարծակի չգան, վորպեսզի եսոր չէ վաղը իրագործեն իրենց հափշտակողական ծրագիրները, կապիտալիստները, բանկիրները, գործարանատերերը, կալվածատերերն ու գավոդչիկները ստիպում եյին իրենց կառավարություններին մեծացնել բանակը, նավատորմիղը, ավելացնել զինվածությունը։ Ու գիտնական մեքենագետ ինժեներները նստած կոտրելու նորանոր սոսկալի գործիքներ են հնարում հեռու գցող թնդանոթներ, ահռելի ուժ ունեցող ավերիչ ռումբեր, սավառնակներ, ջրասույզ նավակներ, ամեն տեսակ խեղդող գազեր։ Բոլոր գլխավոր պետություններն իրար դեմ պատերազմի եյին պատրաստվում. ուզում եյին ոգտվել հարմար րոպեյից, վորպեսզի քաղցր պատառ թռցնեն։ Այսպես՝ Ֆրանսիայի կապիտալիստների խելքին փչում եր, վոր կարողանան գերմանացի կապիտալիստների տիրած հարստությունները ձեռք գցել։ Պատերազմից առաջ Ֆրանսիան իր տրամադրության տակ յերկաթի հանք ուներ, բայց քարածուխի հանք չուներ, և յերկաթի հանքն էլ չեր բավականանում շարունակ աճող արդյունաբերությանը։ Իսկ հենց իր կողքին յերկաթի հարուստ հանքեր կային, հենց ուղիղ իր մոտ եյին գերմանական ամենահարուստ քարածխահանքերը։

Անգլիական կապիտալիստներն ու արդյունաբերողները նա-

խանձում էին, տեսնելով թե ինչպես Գերմանիան ընդարձակում է իր ազդեցությունն Արևելքում, սպառնում է իրենց տիրապետությանը Տաճկաստանում, Պարսկաստանում և նույնիսկ Հնդկաստանում, ինչպես մոտենում է Միջագետքի նավթին։ Բացի դրանից վերջին տարիները գերմանացիք սովորեցին շատ ապրանքներ ավելի լավ ու աժան պատրաստել, քան թե անգլիացիք, ու շատ յերկիրներ, վոր առաջ միայն անգլիացիներից էին ապրանք գնում, սկսեցին գերմանական ապրանք գնել։ Յեվ ահա, տեսնելով, վոր խաղաղ ճանապարհով հնարավոր չե հաղթել իրենց հակառակորդին,—գերմանացի բանկիրին, կապիտալիստին և գերմանացի վաճառականին—խաղաղ շուկայում, տեսնելով թե ինչպես գերմանացի կապիտալիստները քաղցր պատառներ են ձեռք բերում, ֆրանսիացի և անգլիացի կապիտալիստները միանում են գերմանացի կապիտալիստների դեմ և վորոշում են ուժները չափել։ Իսկ գերմանացի կապիտալիստներն էլ իրենց հերթին նախանձում են հարևանների հարստությանը, նույնպես զինվում են վոտքից գլուխ և մտածում են, նույնպես ուժերը չափել։ Ու սա յել, նա յել տեսնում են, վոր պետք է ոգնողներ ունենալ, իրենց համար դաշնակիցներ են փնտրում—վոր յեթե կռիվ կլինի, մենակ չմնան, հայտնի ու գաղտնի պայմանագրեր են կապում այնպիսի պետությունների հետ, վորոնք նույնպես շահագրգռված են թե այդ կռվով և թե ապագա կողոպուտի բաժանմամբ, համաձայնության են գալիս, վոր պատերազմի ժամանակ միասին հանդես գան։

Անգլիան ու Ֆրանսիան այդպիսի դաշնակից գտան ի դեմս Ռուսաստանի։ Ինչու Ռուսաստանն Անգլիայի ու Ֆրանսիայի կողմը պահեց և վոչ թե Գերմանիայի։ Վորովհետև ինչպես գիտենք, Ֆրանսիայի, Անգլիայի, Բելգիայի և Ամերիկայի կապիտալիստները շատ ավելի մեծ գումարներ եյին դրել մեր յերկրի ձեռնարկություններում, քան թե մյուս յերկիրների կապիտալիստները։ Ցարի կառավարությունն արդեն վաղուց նրանց հասարակ ծառայողն եր դարձել, և յերբ ֆրանսիացիների ու գերմանացիների մեջ կռիվը սկսվեց, ապա ֆրանսիական կառա-

վարությունը, ընդդեմ գերմանացիների, ոգնության հասավ ցարի ռուսական կառավարությունը, նրա տրամադրության տակ դնելով ահագին քանակությամբ զինվորներ, վորոնց վրա նայում եյին իբրև թնդանոթի միս։ Միաժամանակ ռուս կալվածատերերը յերազում եյին խլել Տաճկաստանից Կ.-Պոլիսն ու նեղուցները, վորոնց միջով արտասահմանին վաճառած ռուսական հացը տանում եյին։

Ահա այսպես 1914 թվի պատերազմից առաջ կազմվեց Անտանտա միությունը (Անտանտա—ֆրանսերեն բառ է և նշանակում է միություն, համաձայնություն), վորի մեջ մտնում եյին Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, իսկ հետո, յերբ տեսան, վոր այդ կռվին միջամտելն ոգուտ կբերի իրենց կապիտալիստներին, միացան նաև Յապոնիան և Ամերիկան։ Մյուս կողմից Գերմանիան դաշնակիցներ գտավ—Տաճկաստանին ու Բուլղարիային։ Ամերիկան պատերազմի սկզբում զենք եր մատակարարում և Գերմանիային և Անտանտային և նրանից, թե նրանցից մեծ հարստություն դիզեց։ Պատերազմի ժամանակ ամենից շատ հարստացան ամերիկական կապիտալիստները։

Համաշխարհային պատերազմի գլխավոր և իսկական պատճառները սրանք են։ Կապիտալիստներին ավարը խաղաղ ճանապարհով բաժանել չէին կարող, նրանց շահերի բախումը շատ սուր էր. կապիտալիզմի զարգացումը—իրենց յերկիրներում մղում էր նրանց նորանոր նվաճումներ անել: Այդ նվաճումների ծրագրերը կատարելու ճանապարհին նրանք համաձայնության յեկան ուրիշ կապիտալիստների հետ, վորոնք նույնպես ցանկանում էին տիրել այդ հարստություններին. դրա հետևանքն էր համաշխարհային պատերազմը:

Կապիտալիզմի ժամանակ պատերազմներն ինչո՞ւ յեն անխուսափելի

Յերբ պատերազմ սկսվում եր, կապիտալիստները հայտարարում եյին՝ սա վերջին պատերազմն է։ Սա բոլոր վեճերը կլուծի, և սրանից հետո մշտական խաղաղություն կլինի։ Բայց իսկապես ի՞նչ ենք տեսնում։

Պատերազմը վերջացավ Անտանտայի հաղթությամբ։ Գերմանիան ջախջախվեց։

Ֆրանսիան բռնագրավեց Գերմանիայի հարուստ հողերը։ Ավստրիան համարյա դադարեց գոյություն ունենալուց. պատերազմին մասնակցելու համար նրան կտոր-կտոր նվեր ստացան Չեխո-Սլովակիան, Իտալիան, Ռումինիան. Գերմանիայի մի մասն անցավ Լեհաստանին, որն օգնեց Անտանտային Խորհրդ. Ռուսաստանին խեղդելու գործում։

Ամենքի համար էլ պարզ է, որ էն բոլոր խոսքերը հայրենիքի, հավատի և այլ բաների մասին, որ ասվում էր, պարզապես կապիտալիստների գիշատիչ շահերը ծածկելու համար էր միայն, ու ասում էին, որպեսզի ժողովրդին խաբեն միայն։

Պատերազմից հետո խաղաղություն չեղա՞վ արդյոք

Ո՛չ։ Առաջվա նման զինվորական նավեր են շինում, հեղձուցիչ գազեր են պատրաստում, բանակներն աճում են։ Մի քանի երկիրներում կատարյալ կռիվ է։ Այսպես՝ Ֆրանսիան ու Սպանիան կռվում են իրենց իշխանության դեմ ապստամբած Մարոկկոյի ժողովուրդների դեմ. Անգլիայի, Ֆրանսիայի, Յապոնիայի և Ամերիկայի կապիտալիստերն ուզում են խաղաղացնել հսկա Չինաստանը, որն սկսում է թոթափել օտար տիրապետողների շղթան։

Եվրոպայի կապիտալիստներն ամեն տեսակ միջոցներ են գործ դնում՝ խորտակելու չինական հեղափոխությունը։ Անգլիան ամենազզվելի, ամենաստոր միջոցներ է գործ դնում, Խորհրդային Միությունը պատերազմի կանչելու, ու այսպես անվերջ։

Քանի դեռ գոյություն ունի կապիտալիզմը, իմպերիալիստական (հափշտակողական) պատերազմներն անխուսափելի են։

Բանվորների առաջնորդները ինչպես դավաճանեցին բանվոր դասակարգին

Զանազան երկիրների սոցիալիստներն արդեն վաղուց քարոզում էին, որ բանվորները չպետք է մասնակցեն պատերազմին և բուրժուազիայի գրպանը պաշտպանելու համար իրենց արյունը թափեն։ Նրանք կոչ էին անում բանվորներին՝ թույլ չտալ որ պատերազմ լինի։

Բոլոր երկիրների սոցիալիստների միջազգային համագումարներում մեր ընկերները, և ամենից առաջ ընկ. Լենինը, պատերազմի մասին այն միտքն էին հայտնում, թե պատերազմ

ծագելու դեպքում պրոլետարիատը պետք է օգտվի զենքից, որ այդ զենքը դարձնի պատերազմի հանցավորների դեմ, այսինքն կապիտալիստների դեմ. ուրիշ խոսքով՝ պետք է ձգտել իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմ դարձնել։

Սակայն այնպես պատահեց, որ երբ համաշխարհային պատերազմն սկսվեց, ապա կապիտալիստական երկիրների սոցիալիստների առաջնորդները, փոխանակ բոլոր միջոցներով պայքարելու այդ պատերազմի դեմ, դավաճանեցին բանվոր դասակարգին ու սկսեցին օգնել կապիտալիստներին՝ կոչ անելով բանվորներին ու գյուղացիներին պաշտպանել կապիտալիստական «հայրենիքը»։

Միայն բոլշևիկներն էին պայքարում պատերազմի դեմ

Միայն շատ քիչ սոցիալիստներ հավատարիմ մնացին բանվոր դասակարգին և կարծում էին, որ պրոլետարիատն այս պատերազմը պետք է քաղաքացիական կռիվ դարձնի։ Պատերազմի հենց առաջին օրերին ընկ. Լենինը ընկ. Զինովևի հետ արտասահմանում սկսեց հավաքել այն սոցիալիստներին, որոնք պատրաստ էին կռվել պատերազմի դեմ։ Գերմանացի կոմունիստ Կարլ Լիբկնեխտի հետ Լենինը, առաջ 1915 թվին, հետո 1916 թվին Զվիցերիայում երկու կոնֆերանս հավաքեց, ուր փորձեց համաձայնության գալ, թե ինչ միջոցներով պայքարեն պատերազմի դեմ։ Լենինը գրում էր թերթերում, խոսում էր ժողովներում, կոչեր գրում պատերազմի դեմ։ Նույնն էր անում և Կարլ Լիբկնեխտը, որ գերմանացի զինվորների մեջ խոսում էր պատերազմի դեմ (նա ինքը զինվոր էր պատերազմի ճակատում)։ Դրա համար նրան բանտարկեցին, ուր մնաց նա մինչև Գերմանիայի հեղափոխությունը, երբ մենշևիկներն սպանեցին նրան։ Բայց Արևմտյան Եվրոպայում սկզբում շատ քիչ բոլշևիկ կար։ Բանվորների մեծ մասը գնում էր աջ սոցիալիստների ետևից, որոնց բոլշևիկներն սկսեցին սոցիալ-մատնիչներ ասել։ Դասակարգային պայքարի փոխարեն, պրոլետարիատի պայքարի փոխարեն ընդդեմ կապիտալիստների, նրանք քաղաքացիական խաղաղություն էին քարոզում, խա-

գազանություն կապիտալիստների ու պրոլետարների միջև, խաղաղություն գայլերի ու վոչխարների միջև։ Բանվորներին քաղցր ճառերով որոր եյին ասում այն մասին, թե սա վերջին պատերազմը կլինի, թե սրանից հետո կլինի «խաղաղություն աշխարհի և մարդկանց հաճություն»։ Այժմ բոլորը գիտեն, թե դա ինչ սուտ խաբեբայություն եր։

Դրանից ավելի լավ չեյին Ռուսաստանում աջ սոցիալիստները — մենշևիկներն ու ես-երները։ Աջ սոցիալիստները — մենշևիկներն ու ես-երները համոզում եյին բանվորներին մանել զին-արդյունաբերական կոմիտեները և ոգնել կապիտալիստներին մինչև պատերազմի վերջը վորքան կարելի յե շատ զենք ու փամփուշտ շինել։ Յերբ չորրորդ Պետական Դումայում վորոշվում եր պատերազմի հարցը, միայն բոլշևիկներն եյին պատերազմի դեմ։

Չորրորդ Պետական Դումայի հինգ բոլշևիկ պատգամավորներին դրա համար շատ դատեցին և Սիբիր աքսորեցին։ Բոլշևիկները թռուցիկներ եյին թողնում, ուր բացատրում եյին, թե ով և ինչու համար է անում այս պատերազմը։ Բոլշևիկները զինվորներին կոչ չեյին անում զենքը գցել կամ հրաժարվել զենքից։ Վո՛չ, նրանք իրենք եյին զենք վերցնում և պատերազմ գնում, բայց նրա համար միայն, վոր այդ զենքը վերջիվերջո ուղղեն բանվոր դասակարգի ու գյուղացիության հավիտենական թշնամու դեմ ու այդպիսով իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմ դարձնեն։ Այն ժամանակ բոլշևիկների և մենշևիկների մեջտեղն եր գտնվում Տրոցկին։ Նա խոսքով հանդիմանում եր մենշևիկներին, դեմ եր «պատերազմ մինչ հաղթություն» մտքին, բայց իրոք մենշևիկների հետ եր և դեմ եր լենինյան այն սկզբունքներին, թե իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմ պետք է դարձնել։

Ի՞նչ բերեց համաշխարհային պատերազմը

1914—18 թվերի համաշխարհային պատերազմը միլիոնավոր մարդկային զոհեր տարավ։ Տասնմեկ միլիոն մարդ ընկավ պատերազմում։ Միայն Ռուսաստանն այդ տարիներում 3 միլիոնից ավելի

մարդ կորցրեց։ Բացի դրանից ժողովրդի մի ահագին բազմություն ել մեռավ պատերազմի հետևանքով առաջացած տարափոխիկ հիվանդություններից։ Իսկ յեթե հաշվենք, թե ինչքան հարստություն վոչնչացավ, ինչ արժեյին ումբերը, թնդանոթները, վառոդը, ինչ արժեյին ավերված քաղաքները, պայթեցրած կամուրջները, կոխոտված դաշտերը, ապա կերևա, վոր այդ բոլորը 500 միլիարդ ռուբլուց ավելի կարժենա։ Ամեն մեկը հեշտությամբ չի կարող պատկերացնել, թե այդ հինգ հարյուր միլիարդն ինչքան է։ Յեթե այդ բոլոր փողն արծաթ ռուբլիանոցներ լցնենք, ապա նրանով 10 սաժ. լայնությամբ գոտի կարելի յե պատել յերկրագնդի շուրջը. բազմաթիվ քաղաքներ ավերվեցին, իսկ ավերված գյուղերին հաշիվ չկա։ Այդ կորուստների մեծ բաժինը Ռուսաստանին է ընկնում։

Բայց դա քիչ է։ Պատերազմն ամբողջ արդյունաբերությունը պատերազմի ձևի դարձրեց։ Գործարաններն ել գութաններ ու մեքենաներ չեյին շինում, այլ ումբեր, թնդանոթներ, զինվորական շինելի մահուդ։ Մեքենաները մաշվում եյին, գործարանները չեյին վերանորոգվում, պաշարները վերջանում եյին։ Արհեստը լավ իմացող հսկայական քանակությամբ բանվորներ սպանվեցին կռվում։ Պատերազմը պակաս փլուզում առաջ չբերեց և գյուղացիական տնտեսության մեջ։ 2 միլիոն ձի տարան կռիվ, բանվորական ձեռք չմնաց։ Հողը դատարկվեց, հացի բերքը կրճատվեց։

Պետական ծախքերն աճեցին, բառ վորում մի ռուբլու 84 կոպեկը պատերազմի վրա յեր ծախսվում։ Ցարի փողը չեր բավականանում։

Ստիպված եյին պարտք անել։ Դաշնակիցները — ֆրանսիացիք ու անգլիացիք փող եյին տալիս. նրանք այդ փողով մեր զինվորների արյունն եյին գնում. իսկ հիմա նրանք եդ պարտքերն ուզում են մեզնից։ Բայց դա յել չեր բավականանում։ Ստիպված եյին թղթե փող շատ կտրել։ Փողի գինն սկսեց ընկնել։ Թանկությունն աճեց։

Պատերազմի ժամանակ մեր կապն արտասահմանի հետ կտրվեց, մենք ել մեքենաներ, գյուղատնտեսական պարարտա-

ցուցիչ նյութեր և այլ մեզ անհրաժեշտ ապրանքներ չէյինք ստանում:

Պատերազմը միացրեց յեվ գինեց բանվորներին ու գյուղացիներին ցարի իշխանության դեմ. Փետրվարյան հեղափոխություն

Պատերազմն ամենից առաջ իր ամբողջ ծանրությամբ ընկավ բանվորների յեվ գյուղացիների վրա: Բանվորներն ու գյուղացիներն եյին ամենից շատ արյունոտ զոհ բերողները…: Կապիտալիստներն ու կալվածատերերը խորամանկությամբ հարստանում եյին պատերազմից: Բանակի համար հարկավոր ահագին քանակությամբ մթերքի, կերի, զգեստի, զենքի, գրահի պատրաստությունը պարոն կապիտալիստներին առասպելական օգուտներ եր տալիս: Բանվորների ու գյուղացիների արյունն ու արցունքը կապիտալիստների համար վոսկի յեր դառնում, վորով նրանք լցնում եյին իրենց սնդուկները: Ինչքան ավելի յեր շարունակվում պատերազմը, այնքան ավելի շատանում եյին պարտությունները, բանվորներն ու գյուղացիներն այնքան ավելի խիստ եյին զգում, վոր իրենք կռվում են կապիտալիստների շահի համար:

Նրանք պարզ տեսնում եյին, վոր յեթե բանն այսպես շարունակվի, ապա այս պատերազմը վերջ չի ունենալ: Մատնության, հրամանատարների անշնորհքության, պետական գումարները գողանալու պատճառով ամբողջ զորամասեր եյին կոտորվում. ծուղակի մեջ եյին ընկնում և մի յերկու-յերեք որում վոչնչանում ամբողջ բանակներ: Պարոն կապիտալիստները բանվորներից ու գյուղացիներից արյունոտ շաղախ եյին շինում:

Ահա այդ ժամանակ սկսեց առաջ գալ բանվորների ու գյուղացիների զայրույթը: Ծանր դրությունը բանվորներին վճռական պայքարի յեր մղում: Շուտով բանն այնտեղ հասավ, վոր մայրաքաղաքներում հացը չեր բավականանում: 1917 թվի փետրվարի վերջին բանվորների և մանավանդ բանվորուհիների (վորովհետև պատերազմից առաջացած թանկության գլխավոր ծանրությունը նրանց վրա յեր ընկնում) անբավականությունը ծայր աստիճանի հասավ.—բանվորներն ու բանվորուհիները փողոց դուրս եկան և սկսեցին հաց ու պատերազմին վերջ

պահանջել: Գործադուլներն սկսվեցին: Յերբ բանվորներն ու բանվորուհիները հանդիպեցին զորքին, զորքը միացավ սրանց. և Պիտերում Ժամանակավոր Կառավարություն հայտարարվեց: Շուտով ցարի ընտանիքը ձերբակալվեց, և նախկին ռուսական կայսրության վրա թագավորեց Ժամանակավոր Կառավարությունը: Ու հենց այդ ժամանակ ել առաջ յեկան Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհուրդները:

Փետրվարյան հեղափոխությունից հետո ուժը բանվորներին ու գյուղացիներին, իսկ իշխանությունը բուրժուազիայի ձեռքին եր

Ժամանակավոր Կառավարությունը կազմված եր կալվածատերերից ու կապիտալիստներից: Արժե հիշել միայն այնպիսի անուններ, ինչպիսին Ռոձյանկոն ե, վոր Դումայում շատ բարձր եր աղաղակում «մինչ հաղթական վերջ» պատերազմի մասին: Արժե հիշել Ժամանակավոր Կառավարության մինիստր հարուստ կապիտալիստ Տերեշչենկոյին, գործարանատեր Սմիրնովին կամ Գուչկովին, իշխան Լվովին: Ահա այս կապիտալիստներն ու կալվածատերերն եյին Ժամանակավոր Կառավարության ղեկավարները: Նրանք իսկի յել չեյին մտածում պատերազմը վերջացնելու մասին: Նրանք այն եյին անում, ինչ վոր հրամայում եյին դաշնակիցները—Անտանտան: Նրանք հրամայում եյին հարձակման քշել.—ու շարժման մեջ եր դրվում պետական ամբողջ մեքենան. թերթեր, պլակատներ, հռետորներ, հոգևորականություն,—բոլորը միաձայն ձգտում եյին հարձակում գոչել: Շուտով բանվորներն ու գյուղացիները տեսան, վոր ամեն բան մնում եր առաջվա նման, վոչ մի առանձին փոփոխություն չառաջացավ, հողը մնաց կալվածատերերի ձեռքին, բանկերն ու գործարանները՝ կապիտալիստների:

Մինչ այդ Բանվորների ու Զինվորների պատգամավորների Խորհուրդները ձգտում եյին պետական հարցեր վորոշելու իրավունք ունենալ, ձգտում եյին իշխանության մարմիններ դառնալ: Ամեն մի քիչ-շատ քաղաքականապես գրագետ մարդու համար պարզ եր, վոր շատ մոտ ապագայում պայքար պիտի սկսվի.—կամ Խորհուրդները պետք ե տիրեն իշխանությանը, կամ Ժամանակավոր Կառավարությունը նրանց իր ձեռքը պետք

է առնի և վոչնչացնի Խորհուրդները։ Բայց սկզբում Խորհուրդների մեջ մեծամասնությունը բոլշևիկների կողմը չէր. գյուղացիությունն էս-էռների ու մենշևիկների հետ էր։ Նա հավատում էր բուրժուազիայի հեքիաթներին, իբր թե բոլշևիկները գերմանական լրտեսներ են։ Բանվորներն սկսեցին զգալ ու հասկանալ, վոր յեթե իրենք իշխանությունն իրենց ձեռք չը վերցնեն, ապա նրանց կխաբեն, ինչպես արդեն խաբել են։ Այս գիտակցությունն սկսեց գյուղացիական մասսայի մեջ էլ մուտք գործել։ Գյուղացիական կոմիտեներ կազմվեցին։ Յերբ գյուղացիական հողային կոմիտեներն ուզում էին կալվածատերերի հողերը վերցնել, ապա Ժամանակավոր Կառավարությունը նրանց դեմ ուղարկեց պատժիչ զորախմբեր, վորպեսզի նրանք ձեռք չտան կալվածատերերին, վոր սպասեն Հիմնադիր Ժողովին, վորն իբր թե բոլորը կվորոշի, կդատի։ Գյուղացիներն ու բանվորները տեսան, վոր պետության գլխավոր ուժն իրենք են, իսկ իշխանությունը մնում է իրենց թշնամիների ձեռքին։

Աջ սոցիալիս մենշևիկներն ու էսէռներն ոգնում են բուրժուազիային՝ դիմադրելու բանվորներին ու գյուղացիներին պատերազմի, խաղաղության յեվ հողի հարցը վորոշելու գործում

Շուտով ժամանակավոր Կառավարությունը լցվեց մեծ թվով սոցիալիստներով։ Յեթե ժամանակավոր Կառավարությունն ամբողջապես կապիտալիստներից ու կալվածատերերից բաղկացած լիներ, ապա բանվորները հեշտ կհասկանային նրանց դեմ պայքարելու անհրաժեշտությունը. բայց վոր մինիստրների մեջ կային Կերենսկի, Չերնով, Ավկսենտև—էս-էռների գլխավորները—կամ մենշևիկ Ծերեթելին, վորին շատերն ազնիվ սոցիալիստ էին համարում,—դա խաբում էր բանվորներին և կատարյալ ազատության համար մղվելիք պայքարն ուշացնում։ Այդ խաբեբայությունը շատ շուտ իմացվեց. բանվորներն ու գյուղացիները հողային հարցի լուծումն էին պահանջում, իսկ նրանց ասում էին. «Սպասեք մինչև Սահմանադիր Ժողովը»։ Լենինը ծաղրում էր այդ սոցիալ մատնիչներին»։ «Ինչպես թե, ասում էր նա, հողի համար սպասեցեք մինչև Հիմնադիր Ժողովը, Հիմնադիր Ժողովին սպասեցեք մինչև պա-

տերազմի վերջը, պատերազմի վերջին սպասեցեք մինչև հաղթությունը.—այս թե ինչ է դուրս գալիս։ Կապիտալիստներն ու կալվածատերերը կառավարության մեջ մեծամասնություն լինելով՝ ուղղակի ծաղրում են գյուղացիներին»։

Իսկ Կերենսկին դեռ 1917 թվի ոգոստոս ամսին սպառնում էր յերկաթով ու արյունով հաշիվ տեսնել այն գյուղացիների հետ, վորոնք ինքնագլուխ կերպով կգրավեն կալվածատերերի հողերը։ Առաջվա նման գործարաններում կապիտալիստները քամում էին բանվորների քրտինքը։

Բոլշևիկների տակտիկան (գործելակերպը) բուրժուազիայի յեվ աջ սոցիալիստների դեմ

Ինչպես գիտենք, բոլշևիկները միակ կուսակցությունն էին, վոր հենց պատերազմի սկզբից վոչ միայն խոսքով էին պատերազմին դեմ, այլ և իրոք պայքարում էին նրա դեմ։

Լենինն իմանալով ժամանակավոր Կառավարության կազմվելու մասին, արտասահմանից գրում էր Ռուսաստան, վոր Բանվորների և Զինվորների Պատգամավորների Խորհուրդները «բանվորական կառավարության ծիլերն» են։ Նրանք խաղաղություն, հաց ու ազատություն ցանկացող ազգաբնակության, վոր ամբողջ ժողովրդի ինն տասներորդն է կազմում, այդ ամենաաղքատ ազգաբնակության շահերի ներկայացուցիչներն են։

Լենինը ցույց էր տալիս, վոր այդ Խորհուրդների խնդիրը միայն բանվորներին միացնելը չէ։ Նրանք պետք է իրենց կողմը գրավեն, բանվոր դասակարգի դաշնակիցը դարձնեն բազմամիլիոն գյուղացիությունը, սովորեցնեն նրան կռվել իր շահերի համար։

Լենինը հենց վոր Պետրոգրադ յեկավ, սկսեց բանվորների ու գյուղացիների ժողովներում դուրս գալ ու խոսել. նա տպեց իր թեզիսները (վորոշ սկզբունքներ—կետեր) այն մասին, թե ապագայում հեղափոխությունն ինչպես պետք է ընթանա։

Այս թեզիսները հիմք ծառայեցին բոլշևիկների համար, թե ինչպես պետք է վարվել բուրժուազիայի և աջ սոցիալիստների հետ։ Բոլշևիկները չվախեցան իրենց դեմ ուղղված զրպարտություններից. նրանք սկսեցին ջերմ ու համբերատարությամբ

բացատրել բանվորներին ու գյուղացիներին, թե ովքեր են իսկապես նրանց բարեկամները և ովքեր թշնամիները: Շուտով Բանվորական Պատգամավորների Խորհրդում մեծամասնությունը նրանց կողմն անցավ: Զինվորական մասսան, վոր սկզբում նրանց դեմ եր, հավատում եր, վոր նրանք մատնիչներ են, շուտով գործնականապես տեսավ, վոր դրանք են բանվորների ու գյուղացիների իսկական, իրական բարեկամները. յեվ միայն նրանք, բոլշևիկներն են, վոր ընդունակ են բուրժուազիայի, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ իսկական կռիվ մղելու ու այս իմպերիալիստական, հափշտակիչ պատերազմին վերջ տալու: Մենք միացրինք գործարանների բանվորական մասսային Բանվորների Պատգամավորների Խորհրդում, ուժեղ միջուկ կազմեցինք, բանվորական պատգամավորների մեծամասնություն կազմեցինք: Բանվորները հենց միանգամից ընդհարվեցին Ժամանակավոր Կառավարության հետ, իբրև կապիտալիստների պաշտպանի հետ: Յերբ մենք սկսեցինք առաջին բանվորական մարտական խմբերը կազմակերպել, այսինքն զինել բանվորներին, ապա Ժամանակավոր Կառավարությունը հրաման տվեց զինաթափ անել բանվորներին: Յերբ բանվորներն ու զինվորները Պիտերում ու Մոսկվայում հուլիսյան օրերին փողոց դուրս յեկան և բողոքում եյին պատերազմը շարունակելու դեմ, Ժամանակավոր Կառավարության արարքների դեմ, (վոր այն ժամանակ քշում եյին զինվորներին), ապա դրա պատասխանն այն յեղավ, վոր մահվան պատիժներ ավելցին, բոլշևիկների դեմ ջարդ կազմակերպեցին, մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեն օրենքից դուրս հրատարակեցին: Լենինը, Զինովյևը և մյուսներն ստիպված եյին թաք կենալ: Կամենևը, Տրոցկին և շատ ուրիշները բանտ դրվեցին:

Առաջին շրջանում բոլշևիկներին թշնամաբար եյին վերաբերվում մանավանդ գյուղացիները: Նրանց խաբելը հեշտ եր: Իսկ յերբ գյուղացիք տեսան, վոր պատերազմի, խաղաղության ու հողի խնդրում բոլշևիկներն իրենց ասածն եյին պաշտպանում, գյուղացիք սկսեցին փոխել իրենց կարծիքը: Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդները, վոր դեռ 1917 թվի

գարնանն եյին կազմվել, վոչ մի իշխանություն չունեյին. այն ժամանակ նրանց վորոշումները կյանքի մեջ չեյին կիրառվում: Յեվ ահա, յերբ գյուղացիք տեսան, վոր բոլշևիկները կողմնակից են, վոր Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդները, Բանվորական Պատգամավորական Խորհուրդների հետ, իշխանությունն իրենց ձեռքը վերցնեն, այն ժամանակ գյուղացիները հասկացան, վոր հենց բոլշևիկներն են գյուղացիության անկեղծ բարեկամները: Ահա ինչու 1917 թվի աշնանն սկսեցին բոլշևիկների շուրջը միանալ շարունակ ավելի ու ավելի շատ գյուղացիներ, նրանց կողմն անցավ բանակի մի զգալի մասը և բանվոր դասակարգի ահագին մեծամասնությունը:

Ժամանակավոր Կառավարության տապալումը յեվ իշխանությունը բանվոր դասակարգի ու նրա դաշնակից գյուղացիության ձեռքն անցնելը

Այն, ինչ վոր Լենինը 1917 թվի մարտին, ապրիլին եր ասում, այժմ, 1917 թվի հոկտեմբերին բազմաթիվ գյուղացիների ու բանվորների կյանքի գործը դարձավ: 1917 թվի հոկտեմբերի վերջին Պիտերում հավաքվեց Բանվորների ու Զինվորների Պատգամավորների Խորհուրդների համագումար. նրա յետևից հավաքվեց և գյուղացիական պատգամավորների համագումար, վորն առանձին նիստեր եր ունենում: Լենինը, վոր դրանից մի քիչ առաջ թաքնված եր Կերենսկու հալածանքներից, չհամբերեց, մայրաքաղաք յեկավ ու թաքնված տեղից ղեկավարում եր ապստամբության նախապատրաստությունները, կազմակերպում եր զինվորական ուժերը, հետևում եր աշխատանքի ամբողջ ընթացքին, ուղղություն եր տալիս բոլշևիկների կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի գործունեյությանը, ուշադիր ուսումնասիրում եր, թե ինչ ուժեր ունի հեղափոխությունը և ինչ ուժեր՝ հակառակորդները: Յերբ տեսավ, վոր մենք կարող ենք հաղթել, վոր բանվորներն ու գյուղացիները կարող են իշխանությունը վերցնել, նա բանվոր դասակարգի ապստամբությունը բարձրացրեց:

Այսպիսով տեսնում ենք, վոր բոլշևիկների կառավարությունը Լենինի ղեկավարությամբ կարողացավ իր յետևից տա-

նել բազմամիլիոն բանվորների, գինվորների ու գյուղացիների մասսան և տարավ դեպի հաղթություն։

Հոկտեմբերյան հեղափոխությունը Անդրկովկասում

Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հեղափոխության հաղթական ընթացքը 1918 թ. մարտին հասավ Անդրկովկաս։ Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ մարտի 5-ին ապստամբեց նավթարդյունաբերողների և բեգ-ագալարների իշխանության դեմ ու հաստատեց Խորհրդային իշխանություն։ Կազմվեց Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ ղեկավարությամբ ընկ. Ստ. Շահումյանի։ Բաքվի Խորհրդային իշխանությունն սկսեց տարածվել դեպ Ադրբեջանի խորքերը և սպառնում էր շուտով հաղթանակել ամբողջ Անդրկովկասում։ Սակայն Ադրբեջանի հակահեղափոխականներին օգնության է հասնում Անդրկովկասի Սեյմը (կազմված դաշնակցականներից, մուսավաթականներից, մենշևիկներից ու սոց.-հեղափոխականներից), որը զորքեր է ուղարկում Բաքվի Կարմիր բանակի դեմ։ Անդրկովկասի հակահեղափոխական այդ ուժերին շուտով օգնության են գալիս նաև գերմանական ու թյուրքական իմպերիալիստական զորքերը։

Բանվորական Բաքվի հերոսական ինքնապաշտպանության վերջին ամսին ներքուստ դավաճանական հարված են տալիս սոցիալիստ-հեղափոխականները, մենշևիկներն ու դաշնակցականները. այդ թուլացնում է Կարմիր բանակի դիմադրության ուժը։ Խորհրդային Ռուսաստանից համարյա կտրված Բաքուն չի կարողանում դիմադրել գերման-թյուրք. մուսավաթական զորքերի գրոհին և 1918 թ. սեպտ. 15-ին ընկնում է։

Անդրկովկասն ընկնում է սև ռեակցիայի մեջ մինչև 20 թ. ապրիլի վերջը։ Նույն ժամանակամիջոցում Անդրկովկասի յերեք ազգայնական հանրապետությունները՝ Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը՝ ղեկավար ունենալով Մուսավաթին, մենշևիկներին ու Դաշնակցությունը՝ մեկ մեկու դեմ մղում էին ամենակատաղի մրցություն, որը հաճախ ստանում էր արյունոտ ընդհարումների բնավորություն։ Բանվորներն ու գյուղացիներն ապրում էին ամենածանր պայմաններում հան-

րապետությունների ներսում կատարվում է վայրագ հալածողական քաղաքականություն ազգային փոքրամասնությունների դեմ։ Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում բանվորներն ու գյուղացիները կոմունիստների ղեկավարությամբ մի քանի հանդուգն ապստամբական փորձեր են անում տիրող ռեժիմի դեմ, սակայն անհաջող։ Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների և Դենիկինի ուղղակի կամ անուղղակի օգնությամբ այդ ապստամբությունները, օրինակ՝ Վրաստանում Դուշեթի, Լեչխումի գավառների, Հայաստանում՝ Ալեքսանդրապոլի, Նոր-Բայազետի, Ղարսի ապստամբությունները, Ադրբեջանում՝ Բաքվի բանվորների 1919 թ. մայիսի քաղաքական գործադուլը— այդ բոլոր հերոսական փորձերը՝ տապալելու ազգայնականների իշխանությունը՝ խեղդվում էին արյան մեջ։

Բայց ահա 1920 թ. ձմռան ամիսներին խորտակվում է դենիկինյան հակահեղափոխությունը, և Կարմիր բանակը գրավում է Հյուսիսային Կովկասը։ Թև առնելով Խորհրդային իշխանության մոտիկությունից՝ նույն թվականի ապրիլի 28-ին ապստամբում է բանվորական Բաքուն և Կարմիր բանակի օգնությամբ տապալում Մուսավաթի բուրժուա-բեգական լուծը։

Մի քանի օրվա ընթացքում ամբողջ Ադրբեջանում հաղթանակում է Խորհրդային իշխանությունը։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները՝ ոգևորվելով Ադրբեջանի հեղափոխության հաջողությունից՝ կոմունիստների ղեկավարությամբ կազմակերպում են մայիսյան ապստամբությունը, որը, սակայն, պարտվում է՝ դրսից օգնություն չստանալով։ Դաշնակցականները կատաղի հալածանքներ են սկսում հեղափոխական բանվորների ու գյուղացիների դեմ և այդպիսով կորցնում ամեն ազդեցություն մասսաների վրա։ Նույն 20 թ. աշնանն սկսած հայ-թյուրքական պատերազմին դաշնակցական կառավարությունը գլխովին ջարդվում է։

Հնչում է Հայաստանի բանվորա-գյուղացիական հեղափոխության ժամը։

[illegible] գավառի գյուղացիությունն ապստամբում է և նոյեմբերի 29-ին հայտարարում Խորհրդային իշխանություն։

Մյուս գավառները հետևում են Իջևանի օրինակին, և միքանի օրում ամբողջ Հայաստանը դառնում է խորհրդային յերկիր։

1921 թ. փետրվարի 18-ին դաշնակցականները մի նոր փորձ են անում վերադարձնելու իրենց կորցրած իշխանությունը, սակայն այս ավանտյուրան շուտով ջարդվում է։

Սույն այդ վրացյանական հակահեղափոխության ավանտյուրայի օրերին ապստամբում են վրաց մենշևիկների դեմ կարմիր Լոռին, Բորչալուն, արևելյան Վրաստանը։ Ապստամբ բանվորներն ու գյուղացիներն ստանում են Կարմիր բանակի օգնությունը և Վրաստանից քշում մենշևիկների վոհմակը։ Ապստամբները 1921 թ. փետրվարի 25-ին գրավում են Թիֆլիսը։

Այսպիսով ամբողջ Անդրկովկասում հաստատվում է Խորհրդային իշխանություն։

Պարտված մուսավաթականները, մենշևիկներն ու դաշնակցականներն արտասահմանում ինտրիգներ են լարում Խորհրդային իշխանության դեմ և Անդրկովկասում էլ աշխատում պղտորել բանվորների և գյուղացիների միտքը։ Բայց այդ բոլորը զուր ջանքեր են, քանի որ մեր յերկրին խաղաղություն և աշխատանքի հաղթանակ տված Խորհրդային իշխանությունը գտնվում է բանվորների և գյուղացիների արթուն պահպանության տակ։

Անդրկովկասի Կարմիր բանակը պատկառելի ուժ է, որ հաշվի յեն առնում մեր թշնամիները։

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վ է համաշխարհային պատերազմի իսկական հանցավորը։
2. Կապիտալիզմի ժամանակ պատերազմներն ինչու՞ յեն անխուսափելի։
3. Փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկներն ինչ պահանջներ եյին դնում։ Ո՞վ էր պայքարում նրանց դեմ։
4. Հոկտեմբերյան հեղափոխությունն ինչու՞ հաղթությամբ վերջացավ։

ԶՐՈՒՅՑ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունը, դա կալվածատերերի ու կապիտալիստների դարավոր իշխանության, դարավոր ճնշման անկումն էր.

Մենք գիտենք, թե կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը դարերով ինչի վրա յեր հիմնված։ Հողը կալվածատերերի ձեռքին էր. և յերկար ժամանակ, քանի մենք դեռ արդյունաբերություն չունեյինք, վաճառականության զարգացումը թույլ էր, իշխանությունն ամբողջությամբ պատկանում էր խոշոր հողատերերին—բոյարներին, ազնվականներին, կալվածատերերին։ Հենց որ սկսեց մեր առևտուրը զարգանալ, առևտրական դասակարգը, վաճառականությունը նույնպես իշխանության համար և նույնիսկ ճորտեր ունենալու իրավունք ստացավ։ Իսկ յերբ մեր աշխարհում զարգացավ արդյունաբերությունը, գործարանատերերն էլ իշխանության ձգտեցին։ Իսկ պետությունը—այն մարդկանց հավատարիմ գործակատարը ում ձեռքին էր տնտեսական ուժը—պետք է իշխանությունը բաժաներ կալվածատերերի ու կապիտալիստների միջև։ Իսկ գյուղացիներն ու բանվորները միշտ էլ իշխանությունից և իրավունքից զուրկ են յեղել։ Ուստի հեղափոխության հաջողությունն ապահովելու առաջին գործը պիտի լիներ.—ուժով խլել այն, ինչ որ կալվածատերերի ու կապիտալիստների տնտեսական հիմնավորումն է կազմում—հողը, գործարանները, բանկերը։

Հողերի ազգայնացումը չէր գյուղացիներին հանձնելը

Հողի հարցը, իբրև հիմնական հարց, մեր կուսակցությունը շատ վաղուց էր դրել, դեռ նախքան հեղափոխությունը։ 1917 թվին ապրիլի 15-ին «Սոլդատսկայա Պրավդա» թերթում Լենինը գրում էր. «Ամեն մի գյուղացի գիտե, թե ինչպես եյին ճնշում և ինչպես են ճնշում ժողովրդին կալվածատերերը, և ինչն

է կալվածատերերի ուժը—հողը։ Կալվածատերերը տասնյակ միլիոնավոր դեսյատին հողեր ունեն, ուստի գյուղացիների միլիոնավոր ընտանիքներ ուրիշ ճար չունեն, քան նրանց ստրուկը դառնալ։ Վոչ մի ազատություն չի ոգնիլ գյուղացիներին, քանի դեռ կալվածատերերը տասնյակ միլիոնավոր դեսյատին հողեր ունեն։ Պետք է պետության մեջ յեղող ամբողջ հողն ամբողջ ժողովրդի սեփականություն դառնա»։

Մեր կուսակցությունը—գործի կուսակցություն է և վոչ անուշ խոսքերի։ Հոկտեմբերի 25-ին իշխանությունն անցավ Խորհուրդներին, իսկ հոկտեմբերի 26-ին Խորհուրդների Համառուսական Յերկրորդ Համագումարը վորոշեց.

«Կալվածատիրական ունեցվածքները, ինչպես և բոլոր մյուս հողերը—թագավորական տան, վանքական, յեկեղեցական, իրենց մեռյալ ու կենդանի ինվենտարով, շենքերն ու բոլոր կահավորությունը, անհապաղ, առանց վորևէ յետգնման դրվում են շրջանային հողային կոմիտեների և գյուղացիական պատգամավորների գավառական խորհուրդների տրամադրության տակ»։

Այս որենքը հրատարակվելուց հետո իսկույն դադարեցին կալվածատիրական ագարակների ավերումները, վոր մինչ այդ կային։ Ճիշտ է, իզուր տեղը շատ բան փչացավ, շատ բան այրեցին, շատ վոչնչացրին, անպետքացրին։ Տեղ-տեղ ցեղական անասունները մորթեցին։ Բայց չպետք է մոռանալ այն հանգամանքը, թե վրեժխնդրության ինչքան թույն էր հավաքվել գյուղացիների սրտում կալվածատերերի դեմ։

Ուրեմն գյուղացիք հողի ազգայնացումից ինչ ստացան։ Մինչ հեղափոխությունը 100 դեսյատին հողից գյուղացուն հասնում էր 60 դես., իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ 96 դ.։ Մնացածից 3-ը խորհրդ. տնտեսություններն են և 1-ը գյուղացիական կոմմունաներն ու արտելները։

Կալվածատիրական ինվենտարի մի մասն էլ անցավ գյուղացիներին. իսկ գլխավորն այն է, վոր մի ամբողջ դասակարգի իշխանություն վոչնչացավ, բազմադարյան ծանր խնդիրը լուծվեց—հողի ստրկական բահրան և գյուղացուն ստրկացնելու

մյուս ձեռքը 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխության թափով ջնջվեցին և հոդս ցնդեցին։

Ֆաբրիկաների, գործարանների և բանկերի ազգայնացումը

Իհարկե, գյուղացիությունը կռվում էր կալվածատերերի դեմ հողի համար. իսկ բանվոր դասակարգը պայքար սկսեց կապիտալիստական դասակարգի դեմ, արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականության դեմ։ Բանվոր դասակարգն ու գյուղացիությունն ստրկությունից չէին ազատվի, յեթե բանկերն ու գործարանները մնային կապիտալիստների ձեռքին։ Գործարանատերերը չցանկանալով հաշտվել այն մտքի հետ, վոր իշխանությունն աշխատավորներին է անցել, սկսեցին շտապով վաճառել իրենց ունեցած հում նյութերն ու պատրաստի ապրանքները, վորպեսզի փող հավաքեն, արտասահման փախչեն ու էնտեղից կռիվ սկսեն Խորհ. իշխանության դեմ։ Ահա ինչու 1917 թվի նոյեմբերի 14-ին դեկրետ հրատարակվեց բանվորական հսկողության մասին։

Սակայն կապիտալիստները չէին ուզում յենթարկվել բանվորական հսկողությանը։ Նրանք գործարանները մեկը մյուսի յետևից փակում էին։ Այն ժամանակ գործարանները, զավոդները, հանքահորերը, հանքերն ազգայնացրին, անցրին պետության ձեռքը։ Գիտենք, վոր սկզբում մեր գործարաններում բանը լավ չէր գնում։ Շատ գործարաններ բոլորովին քայքայվել էին։ Նրանց բանեցնել չէր լինիլ, ու այնտեղի բանվորների դրությունն էլ շատ վատ էր։ Ահա ինչու մեր թշնամիները (չհասկացող «բարեկամներ» էլ կային) մեղադրում էին Խորհ. իշխանությանը, վոր իբր թե ինչու ազգայնացրին գործարանները, ինչու քշեցին առաջվա տերերին, քանի վոր իրենք չեն կարողանում բանեցնել։ Հեղափոխության սկզբում նույնպես էր.—Խորհ. իշխանության դեմ պայքարելիս, քաղաքացիական կռվում, կապիտալիստների ձեռքին մնացած ամեն մի գործարան կարող էր կապիտալի ամրոց դառնալ (տառացի իմաստով). այդ ամրոցները պետք էր առնել։ Իսկ յերբ թշնամու ամրոցն առնում ես, վորոշ չափով ավերվում է։

Յեթե կապիտալիստներն ընդդիմադրություն ցույց չտա-

յին, ազգայնացումը կանցներ հանգիստ, ծրագրած ձևով, ավելի քիչ կորուստներ կլինեյին, և այդ ազգայնացումից աշխատավորները միանգամից օգուտ կստանային:

Խորհ. իշխանությունը դուրս է գալիս պատերազմողների միջից: Բրեստի խաղաղությունը.

Զինվորական ու գյուղացիական մասսան Հոկտ. հեղափոխության կողմն եյին վոչ միայն նրա համար, վոր կռիվ եր կալվածատերերի դեմ, այլ և նրա համար, վոր խաղաղություն եյին պահանջում: Դա հոգնած ու տանջված գյուղացիության պայքարն եր խաղաղության համար: Ցեվ պրոլետարական հեղափոխության հենց առաջին որերին, առաջին ժամերին Խորհ. իշխանության ամենաառաջին գործն եր Խորհուրդների կողմից դիմել, խաղաղության առաջարկ անել: Բայց Անտանտան հաշտություն չեր ուզում, նա ուզում եր իր թշնամուն միանգամայն քայքայել: Այն ժամանակ ինքը, Խորհ. պետությունը դուրս յեկավ կռվողների շարքից: Ինչ էլ վոր լիներ, յերկիրը պետք ե մի քիչ շունչ քաշեր: Գերմանացիք մեզ շատ ծանր պայմաններ առաջարկեցին կամ, ինչպես այն ժամանակ եյին ասում, «անամոթ հաշտություն»: Նույնիսկ կոմմունիստների մեջ շատերը կային, վոր դեմ եյին այդ «անամոթ հաշտությանը»:

Վոմանք (այսպես կոչված «ձախ» կոմմունիստները) առաջարկում եյին մինչև վերջը կռվել գերմանացիների դեմ, վոմանք էլ, Տրոցկու գլխավորությամբ, առաջարկում եյին վոչ կռիվը շարունակել, վոչ «անամոթ հաշտություն» կապել: Լենինը թե սրանց, թե նրանց սխալ լինելն ապացուցեց: Նա բացատրում եր, վոր մենք չենք կարող գերմանացիների դեմ պատերազմը շարունակել, մենք ուժ չունենք, գյուղացիությունը կռվել չի ցանկանում, իսկ գյուղացիության դեմ գնալ—կնշանակե հեղափոխությունը կործանել: Ինչ գնով էլ լինի, պետք ե ազատվել գերմանացիներից, միայն թե մեր ձեռքին պահենք մեր տիրած ազատությունը, ամրացնենք մեր դաշինքը գյուղացիության հետ: 1918 թվի մարտի 3-ին Խորհ. իշխանությունը Բրեստում ստորագրեց հաշտությունը:

Կալվածատերերի, կապիտալիստների և ցարի գեներալների սկսած քաղաքացիական կռիվը գյուղացիների և բանվորների դեմ

Կապիտալիստները, կալվածատերերը և ցարի գեներալները վորոշեցին՝ ինչ գնով էլ լինի, իշխանությունը յետ վերցնել: Ցարի գեներալները, տասնյակ հազար սպաներ ու յունկերներ, վորոնք այնպես եյին դաստիարակված, վոր հավատարիմ պիտի լինեն կապիտալիստներին ու կալվածատերերին, պատերազմ հայտարարեցին մեզ: Խոշոր մասնագետները՝ ճարտարապետներն ու ուրիշները, վորոնք չեյին հավատում, թե Խորհ. իշխանությունը կարող ե տնտեսությունը վերականգնել, ինչպես հարկն ե կանոնավորել, այլ միայն կապիտալիստների ու կալվածատերերի ուժին եյին հավատում,—նույնպես դեմ եյին Խորհ. իշխանությանը: Գործարաններում, քաղաքային հիմնարկություններում, խորհրդային ձեռնարկություններում սկսվեց սաբոտաժը, այսինքն Խորհ. իշխանության հակառակորդները, վոր ծառայում եյին Խորհ. իշխանությանը, ամեն կերպ խանգարում, փչացնում եյին գործը. մտածում եյին այնպես անել, վոր խայտառակեն Խորհ. իշխանությունը, արտադրությունն ավելի վատացնեն, վորպեսզի բոլորը կարծեն, թե բանվոր դասակարգն ինքը վոչինչ չի կարող շինել: Զանազան վայրերում կուլակների ապստամբություն սկսվեց: Վորտեղ այդպիսի ապստամբություն եր սկսվում, նրանք կարողանում եյին իրենց յետևից քաշ տալ և քիչ գիտակից ու անգիտակից գյուղացիությունը:

Հակահեղափոխությանը մեծ աջակցություն եր ցույց տալիս միջազգային բուրժուազիան: Նա աջակցում եր կադետների, մենշևիկների ու ես-երների կուսակցություններին, ոգնում եր զանազան հակահեղափոխական կազմակերպություններ ստեղծվելուն: Ոտար լրտեսների ոգնությամբ ապստամբություններ կազմակերպվեցին Մուրոմում, Յարոսլավլում, 1918 թվի ամառը՝ Ռիբինսկում, Տամբովում և մի շարք այլ տեղերում:

Վորպեսզի այս բոլոր սպիտակ-գվարդիականների գործն ամուր լինի, ոտար կապիտալը մեր յերկրի բոլոր ծայրամասերում, ծովով, զորք հանեց: Բուրժուազիայի ծրագիրն եր—

ներսից ապստամբություն, իսկ դրսի օտար զորքերի խուժում (այսինքն ինտերվենցիա):

Քաղաքացիական պատերազմը և օտարերկրյա զորքերի խուժումը

Տեղական հակահեղափոխության օգնությամբ, ի թիվս վորոնց մենշևիկների ու ես-երների, Ուկրայինան գերմանական իմպերիալիզմի ձեռքը անցավ և կտրվեց Ռուսաստանից: Կտրվեց նաև Մերձբալթյան յերկիրը և Արևմուտքի բավական խոշոր շրջաններ:

Այնտեղ գերմանացիք ինչ ուզում եյին, անում եյին: Ամեն տեսակ ունեցվածք, ինչ վոր կարողանում եյին, տանում եյին, յերկիրն ավերում եյին:

Գերմանացիք Ուկրայինայում նստեցրին գետման Սկորոպադսկուն, իսկ սպիտակ գվարդիական գեներալ Կրասնովն օգնեց նրանց կտրել Ղրիմը և Դոնի շրջանը: Այստեղ արդեն չեխո-սլովակների բանակն էլ հանդես յեկավ (սրանք պատերազմի ժամանակ ավստրիացիների կողմից Ռուսաստանի կողմն եյին անցել և փոխադրվել Ռուսաստանի խորքերը): Ութսուն հազարանոց լավ զինված մի բանակ բռնեց յերկաթուղին—սկսած Սիզրանից մինչև Սիբիր: Չեխո-սլովակները կադետների, մենշևիկների ու ես-երների և սպիտակ-գվարդիական սպաների ու գեներալների օգնությամբ տապալեցին Խորհ. իշխանությունը Պենզայում, Սիզրանում, Սամարայում, Զլատոուստում, Չելյաբինսկում և այլ տեղերում: Հարավային Ռուսաստանն ընկավ հակահեղափոխական կազակների ձեռքը, վորոնց գլուխն եյին Կալեդինը, Կորնիլովը, Ալեքսեյևը, իսկ հետո արդեն Դենիկինը: Արևմուտքում կազմված Մերձբալթյան բուրժուական հանրապետությունների՝ Լատվիայի և Էստոնիայի օգնությամբ, հյուսիսում Ֆինլանդիայի օգնությամբ, հարձակում եր գործում սպայական զորամասը գեներալ Յուդենիչի հրամանատարությամբ և ձգտում եր գրավել Լենինգրադը: Հյուսիսում—Արխանգելսկում—անգլիացիների ու ամերիկացիների օգնությամբ կադետների ու ես-երների կառավարություն հաստատվեց: Սիբիրում էլ սպիտակ-գվարդիական կառավարություն կազմվեց «գերագույն կառավարող» ծովապետ Կոլչակի գլխավորությամբ:

Հենց միևնույն ժամանակ յերկրի ներսում աջ ես-երները հարվածներ եյին հասցնում Խորհ. իշխանությանը: Նրանք մահափորձ եյին անում հեղափոխության առաջնորդների վրա, կրակեցին Լենինի վրա, դավադրություններ եյին սարքում, կամուրջներ, ռումբերի պահեստներ պայթեցնում: Խորհ. Ռուսաստանի դրությունն անասելի ծանր եր: Մենք իրոք կրակե օղակի մեջ եյինք. և ահա այդ կրակե օղակի մեջ, առանց հացատու շրջանների, ուրեմն սովի դատապարտված, առանց նավթի ու ածուխի, կնշանակի գործարանները դատապարտված եյին անգործության, ապրանք չկար, հաղորդակցության միջոցներն ավերված, քաղաքները սառած,—ներսն ինտերվենցիայի մի մասը քայքայիչ սաբոտաժով է զբաղված, կուլակների ապստամբություններ են բռնկում.—և ահա բանվորագյուղացիական Խորհ. Ռուսաստանը պետք է հերոսաբար կռվեր բոլորի դեմ, պաշտպաներ Խորհ. իշխանությունը:

Կարմիր բանակի ստեղծում

Ամենից առաջ պետք եր մեր բանակն ստեղծել: Կարմիր գվարդիան կռիվներում շատ անգամ ցույց տվեց իր քաջությունն ու ռազմունակությունը, բայց յերբ հանդիպեցին լավ մարզված ու լավ զինված օտարազգի կանոնավոր զորքերին, ապա պարզվեց, վոր պետք է Կարմիր բանակ կազմակերպել, ըստ զինվորական արհեստի բոլոր կանոնների, մենք պետք է յերկար ու համառ կռիվ մղենք: Սկզբում Կարմիր բանակը կազմվում եր ինչպես կամավոր բանակ, բայց արդեն 1918 թվի հունվարի 15-ին Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը դեկրետ հրատարակեց՝ համառուսական ծավալով Կարմիր բանակ կազմակերպել: Իհարկե, մենք ստիպված եյինք կազմակերպելու գործին կանչել զինվորական գործի մասնագետներ, այսինքն հին բանակի մասնագետ սպաների: Բայց վորովհետև մենք նրանց վրա ըստամենայն հույս չունեյինք, ապա ամեն տեղ նրանց վրա նշանակվեցին զին-քաղաքական կոմիսարներ:

Շատ առաջնակարգ զինվորական առաջնորդներ դուրս յեկան բանվորներից ու գյուղացիներից—առաջին կարմիր հեծելազոր բանակի պետ Բուդյոննին, Վորոշիլովը, Չապայևը, Յեգորովը և ուրիշ շատերը:

Հասարակ գյուղացիներ գլուխ էյին կանգնում գնդերի, ավելի մեծ զորամասերի և ամբողջ բանակների ու ցույց էյին տալիս, որ հեղափոխությունը բանվորների ու գյուղացիների միջից իր հերոսներին է առաջ քաշում։ Կենտգործկոմը դեկրետ է հրատարակում կամավոր ձևից պարտադիր զորահավաքի անցնել. 1918 թվի հունիս 12-ին առաջին զորահավաքը հայտարարվեց բանվորների ու այն գյուղացիների, որոնք վարձու աշխատանքով չեն ոգտվում։ 1919 թիվը պայքարի ամենածանր տարին էր։ Կարմիր բանակը միլիոնուկես մարտիկներից էր կազմված—բաժանված 14 բանակի, և արդեն զինվորական գործի պահանջների համեմատ—կանոնավոր կառուցվածքով։ Այն ժամանակ Վլ. Իլյիչ Լենինը հարց դրեց.—հաղթության, թշնամուն ջարդելու, քաղաքացիական կռիվը վերջացնելու համար պետք է ստեղծել յերեք միլիոնանոց Կարմիր բանակ։ Այն ժամանակ շատերը չէյին հավատում, թե բանվորների և գյուղացիների միությունը կարող է այդպիսի մի ուժ առաջ քաշել։ Չէ՞ որ, իսկապես, մենք աղքատ էյինք, մերկ, քայքայված։ Բայց այդպես է հեղափոխության ուժը. մենք ոչ միայն այդ խնդիրը կատարեցինք, մենք դրանից էլ դենը գնացինք ու այդ զինված ուժի ոգնությամբ մենք ոչ միայն ջարդեցինք հակահեղափոխությունը, այլ և մեր բոլոր թշնամիներին հասկացրինք, որ մեզ ոչինչ չեն կարող անել։

Կոլչակի, Դենիկինի, Յուդենիչի, Վրանգելի բանակների ջախջախումը. Օտարերկրյա զորքերի դուրս քշելը

Քաղաքացիական կռվի առաջին շրջանում բոլոր ճակատներում մեզ հաղթում էյին. մեր հրամանատարներն անփորձ էյին. շատ անգամ սպիտակ սպաները դավաճանում էյին մեզ, թեև նրանց մեջ կային և այնպիսիները, որոնք հավատարմությամբ ծառայում էյին բանվորա գյուղացիական Խորհ. իշխանությանը։ Մենք ամեն բանի պակասություն ունեյինք, իսկ թշնամին ուժեղ էր, ավելի լավ էր զինված, ավելի լավ էր սնվում, ամեն կողմից նրան ոգնություն կարող էր գալ, ամեն կողմ նրա ճանապարհը բաց էր։ Ծանր էր մեր դրությունը մանավանդ 1919 թվին, թվում էր. թե մենք էլ ուժ չունենք, ամեն ինչ վերջացել է։

Բայց այդ միջոցին ժողովուրդը հասկացավ, որ պետք է վերջ տալ ցարի գեներալներին, պետք է վերջ տալ այս պաշարմանը, պատռել այդ կրակե ողակը։ Այդ ժամանակ գյուղացիությունը հեծելազոր մասեր է տալիս, նոր ու լավ հեծելագնդեր են կազմակերպվում, Կարմիր բանակը նորանոր գյուղացիական մասսաներ է ստանում։ Իսկ 1919 թվականի կեսերից մեր հաղթությունները անշեղ կերպով քաղաքացիական կռիվները դեպի վախճանն են տանում։ Կազանն առնելով՝ Կարմիր բանակը շարժվեց դեպի արևելք՝ Ուրալի կողմը։ Կարմիր բանակը վերցրեց Ուֆան, Չելյաբինսկը, թեև թանկ էյին նստում այս հաղթությունները։ Ծանր էր Կարմիր բանակի դրությունն արևելյան ճակատում. փամփուշտ չունեյին և շատ անգամ առանց փամփուշտի սվինամարտի էյին գնում։ Կամավոր զորահավաք հայտարարվեց, և գյուղացիները, որ հենց նոր էյին տեսել, թե ինչ է Կոլչակի իշխանությունը, հազարներով Կարմիր բանակ էյին մտնում և կռվում էյին Կոլչակի դեմ։ Կարճ ժամանակում Կոլչակին քշեցին շատ հեռու—արևելք։ Հետո վերցրինք Կոլչակի մայրաքաղաք Օմսկը։ Մեր կարմիր բանակը չեղած մի արշավանք կատարեց—Վյատկայից մինչև Բայկալ, բայց դրա փոխարեն Սիբիրը մաքրվեց։ Կոլչակին մեր ձեռքը տվեցին իր սեփական պահակները, և նա Իրկուտսկում մահվան պատժի դատապարտվեց։

Չպետք է մոռանալ, որ մեր Կարմիր բանակին շատ բանով ոգնում էյին գյուղացիական պարտիզանական զորքերը, որ Սիբիրում գյուղացիներն իրենք էյին հավաքում։ Դեռ Կարմիր բանակ չկար, բայց գյուղացիությունը, որ մինչ այդ թույլ էր տվել տապալել Խորհ. իշխանությունը, և իշխանությունը գրավել էյին սկզբում էս-էրներն ու մենշևիկները, իսկ հետո Կոլչակը, շուտով հասկացավ, թե ինչ սխալ է արել. բայց, յերբ պատժիչ արշավախմբերն սկսեցին ամբողջ գյուղեր ոչնչացնել, արդեն ուշ էր։ Այն ժամանակ իրենց միջից առաջնորդներ առաջ յեկան, որոնք և այդ պարտիզանական խմբերի հրամանատարներն էյին։

Բայց այն ժամանակ, յերբ վերջնականապես ջախջախվում

եր Կոլչակը, Դենիկինի զորքերը մոտենում էին Օրյոլին, սպառնում էին Տուլային։

Ցարի գեներալներն արդեն պատրաստվում էին Թեյ խմելու Մոսկվայում։ Այդ օրերին բանվորներն ու գյուղացիները սոսկալի վտանգ զգացին և մի շարք հարվածներով Դենիկինի զորքը յետ շպրտեցին մինչև Սև ծովը։

Նույնը պատահեց և գեներալ Յուդենիչի զորքերին, վորոնք մոտենում էին Լենինգրադին։ Նրանք բավական արագ էին առաջ շարժվում, մեծ աջակցություն էր ցույց տրվում նրանց, բայց նրանք չունեյին այն, ինչով ուժեղ էր Կարմիր բանակը—նրանց կողմը չեր բանվոր-գյուղացի ժողովուրդը։ Ուստի և Յուդենիչին էլ նույն բախտը վիճակվեց, ինչ վոր Կոլչակին ու Դենիկինին։ Նրա զորքը ջարդվեց ու գերի ընկավ։

Նույնը պատահեց և Արխանգելսկի կառավարությանը և հակահեղափոխական մյուս օջախներին, այնպես վոր 1920 թվի սկզբին միայն Դենիկինի զորքերի մնացորդներն էին կենում Ղրիմում- գեներալ Վրանգելի հրամանատարությամբ։

Կարծես թե հասել էր շունչ քաշելու ժամանակը, յերբ հնարավորություն կունենանք, վերջապես, խաղաղ աշխատանք սկսել։ Այսպիսի տանջալից կռվից ու փլուզումից հետո շատ բան կար կանոնավորելու, բայց դեռ 1920 թվին էլ ստիպված էինք յետ մղել Խորհ. Ռուսաստանի թշնամիների հարձակումները։

Լեհաստանի չե-լույքը չեվ պա-տերազմ Ռուս դեմ

Այս անգամ հանդես յեկավ Լեհաստանը։ Լեհաստանը բանի կերպով էր միացրած Ռուսաստանին։ Լեհաստանը շատ անգամ էր ապստամբել, և ցարի զորքերը խիստ կերպով հնազանդեցրել էին նրան։ Պարզ է, թե ինչու, հենց վոր հեղափոխությունն սկսվեց, Լեհաստանը բաժանվեց։ Բայց Լեհաստանում իշխանության գլուխն անցան կալվածատերերն ու կապիտալիստները։ Բացի դրանից Լեհաստանն անմիջապես կատարյալ կախման դրության մեջ ընկավ ֆրանսիական կապիտալից. իսկ ֆրանսիական կապիտալիստները, վորոնց մեր հեղափոխությունը զրկեց հարուստ տուրքից, իրենց բոլոր ուժերով

աշխատում էին կործել իրենց փողերը և տապալել իրենց ատելի Խորհրդային իշխանությունը։

Նրանք կարողացան Լեհաստանին մեր դեմ հանել։ Նրանց օգնության հասան Դենիկինի բանակի մնացորդները։ Դենիկինի այդ բանակը Ղրիմում հանգստացավ, կանոնավորվեց, զինվեց, ֆրանսիացիներից ու անգլիացիներից օգնություն ստացավ և ցարի բարոն Վրանգելի առաջնորդությամբ մեր դեմ դուրս յեկավ։ Դժվար էր մեզ համար նորից զենքի դիմել։ Բայց պետք է ինկատի ունենալ, վոր այդ ժամանակ բանվորներն ու գյուղացիներն սկսել էին շատ գիտակից վերաբերվել մեր դրությանը։ Նրանք տեսնում, հասկանում էին, վոր թշնամիների այդ նոր փորձը պետք է արագ ջարդել, թե չէ նորից յերկար ժամանակ կձգձգվի կռիվը։ Ահա ինչու այնպես շեշտակի յեր մեր զորքի, մանավանդ հեծելազոր բանակի հարվածը։

Լեհական զորքերն սկզբում շատ արագ առաջ շարժվեցին, գրավեցին Կիևը ու յերեք ամիս մնացին այնտեղ։ Մեր բանը միշտ եղպես է։ Յերկաթուղիները քիչ են, դանդաղ են շարժվում։ Մինչև զորքը յեկավ, մինչև կարմիր հեծելազորը մոտեցավ, թշնամու գնդերն առաջ անցան։ Բայց հենց վոր մի քիչ մոտեցանք, ու Բուդյոննու քաջերը «Վարշավան տուր» աղաղակելով ջարդ տվին, ապա լեհերին յետ շպրտեցին և քշեցին մինչև Վարշավա։ Մեր զորքերը Վարշավայից արդեն մի քանի վերստ էին հեռու. բայց ցավն այն էր, վոր մեր զորքերը շատ էին առաջ ցատկել, պատռել, առաջ էին անցել։ Յեթե բուրժուական իշխանությունն ընկներ Լեհաստանում, ապա անխուսափելի յեր և ամբողջ Լեհաստանի ու Գերմանիայի պրոլետարական հեղափոխությունը—իսկ դա կծավալեր հեղափոխությունն ամբողջ Արևմուտքում։ Բայց հենց այդտեղ էլ յերևաց մեր տեխնիկայի յետամնացությունը...։

Առաջ սլացած զորքերը բավականաչափ նեցուկ չունեյին և, չնայելով իրենց բոլոր հերոսությանը, ստիպված էին նահանջել։ Մենք չէինք կարող ձգձգել այս կռիվը, վորովհետև նորից բացվում, կենդանանում էին հեղափոխության բոլոր թշնամիների հույսերը։ Հարավից արդեն Վրանգելն էր շարժ-

վում։ Մենք հաշտություն կնքեցինք Լեհաստանի հետ և մեր կարմիր հեծելազորը և մեր ամբողջ Կարմիր բանակը շարժեցինք բարոն Վրանգելի վրա։

Վրանգելի ջախջախումը

Վրանգելին ջարդելը—դա մեր քաղաքացիական կռվի վերջին, ամենափայլուն շրջանն էր։ Պերեկոպի նեղ պարանոցում մեր կարմիր-բանակայիններից շատերն ընկան։ Միքանի շարք լարավոր ցանցապատերը, թնդանոթի կատաղի կռիվը, Վրանգելի ամենալավ զորքերը—բոլորին ջարդեց Կարմիր Բանակը։ Մինչև գոտին ջրի մեջ, մահվան աչքերի մեջ նայելով, մահվան, որ հարյուրներով ու հազարներով էր հնձում, կրակի անանցանելի պատի միջով առաջ շարժվեց կարմիր բանակը յև անխորտակելի հարվածով ավերեց թշնամու այս վերջին ամրությունը։ Ու բոլոր յերկրների բուրժուազիան ինչքան էլ ոգներ Վրանգելին, նա ամոթահար ոտարների նավերով պետք է փախչեր Ղրիմից տանելով իր հետ ռուսական վերջին նավերը։ Սպիտակ գվարդիական այդ ամբողջ փտությունն ու բորբոսը փախավ և հափշտակելով դաբերով կողոպտած վոսկին, արտասահման տարավ։ Այսպես վերջացավ սպիտակ գեներալների, կապիտալիստների ու կալվածատերերի մեր դեմ սկսած քաղաքացիական կռիվը։

Իսկ մինչ այդ, առաջ ցարի Ռուսաստանում ճնշված, ծայրամասերում ապրող ժողովուրդները, իրենց կաշվի վրա փորձելով վոչ միայն ցարի իշխանությունը, այլ և սոցիալ-համաձայնողականների և ոտար իշխանությունը, թոթափում էին իրենց բուրժուական կառավարություններին և Խորհուրդների իշխանություն էին ստեղծում։ Այսպես ազատվեց Ադրբեջանը և մեզ հետ միանալով մեզ հնարավորություն տվեց, մեր Միության հսկայական տնտեսության համար, մեր արտադրության ու հաղորդակցության համար, իսկ այժմ նաև գյուղական տնտեսության համար, ստանալ Բաքվի և Գրոզնու նավթը։ Այդպես էլ Հայաստանում դեն շպրտեցին դաշնակներին և Խորհ. իշխանություն հաստատեցին, ինչպես և Վրաստանում քշեցին մենշևիկներին և Խորհ. իշխանություն հաստատեցին։ Այդպես, մինչ այդ Արևելքի ճնշված յերկրներում՝ Թուրքեստանում,

Խիվայում, Բուխարայում հաստատվեց աշխատավորների իշխանություն, Խորհուրդների իշխանություն. և այժմ այստեղ յերկու մեծ Խորհրդային հանրապետություններ կան—Ուզբեկստանը և Թուրքմենստանը։ Այդպես ջախջախելով հակահեղափոխությունը, հաստատվեց Խորհրդ. իշխանություն միհսկայական յերկրում, վոր յերկրագնդի համարյա 1/6 մասն է կազմում։

Ռազմական կոմմունիզմ

Բանվորներն ու գյուղացիներն այդ հաղթությունը հեշտ ձեռք չբերին։ Դեռ չէյինք կարողացել իմպերիալիստական պատերազմից դուրս գալ, վոր նորից ստիպված էյինք մի քանի միլիոն աշխատավորներ կտրել տնտեսությունից և Խորհրդ. իշխանության պաշտպանության կոչել։

Բանակը պետք էր կերակրել, հագցնել, զենք ու ռազմամթերք մատակարարել։ Չպետք է մոռանալ, վոր ամբողջ տնտեսությունը մենք ստացանք քանդված, կիսավեր վիճակում։ Հենց սկզբից շատ գործարաններ զինվորական աշխատանքի անցան։ Տնտեսության համար պիտանի ապրանքների տեղ նրանք բանակի համար անհրաժեշտ իրեր էյին արտադրում։ Էլ պաշար չկար։ Հենց վոր ածուխ կամ նավթ բերելը մի փոքր կանգ էր առնում, արդեն գործարաններում ու յերկաթուղում փլուզումն զգալի յեր դառնում։ Հենց վոր հում նյութը մի քիչ պակասում էր, գործարաններն արդեն կանգ էյին առնում։ Ամեն տեսակի հափշտակիչ շահադետներ (սպեկուլյանտներ), վոր պատերազմի ժամանակ ամեն տեղ էլ շատ են լինում, ապրանքները թաքցնում էյին, գործարաններից ու գավառներից գողանում էյին՝ ինչ վոր հնարավոր էր։ Առևտրականները կապերը բաց էյին թողել, գները բարձրացնում էյին ամենաանխիղճ կերպով. առավոտը մի ապրանքի գին մի ռուբլի յեր, յերեկոյան դեմ յերկուսով էլ չես կարող գնել։ Այժմ շատերն արդեն մոռացել են այդ և այն, թե ինչպես փողի գինն ընկնում էր։

Այդպիսի հանգամանքներում ինչ կարող էր անել Խորհ. իշխանությունը։

Բոլորովին չխորտակվելու և մի քիչ բան պահելու համար ստիպված յեղան, առաջին շրջանում, ազգայնացնել առևտուրը և հավաքել ամեն ինչ, ինչ վոր հնարավոր եր՝ բանակին մատակարարելու համար։ Այդ պատճառով վոչ միայն խոշոր գործարանների ազգայնացումը, այլ և մանրերի ու առևտրի ազգայնացումն այն ժամանակ անհրաժեշտ միջոցներ եյին։ Ինարկե, կուլակ-խանութպաններն իրենց պաշարը պահեցին— դեռ սպասենք, տեսնենք ինչ կլինի։ Ծածուկ վաճառում եյին տասն անգամ ավելի եյին վերցնում, քան ապրանքն արժի. պետությունն, ինարկե, չեր կարող գյուղին ապրանք մատակարարել, քանի վոր իր պաշարը շատ քիչ եր։ Ուրեմն քանի վոր քաղաքը գյուղին ապրանք չեր տալիս, գյուղն ել հաց չեր տանում քաղաք։ Ահա այդ ժամանակ, 1918 թվին հրատարակվեց պարենմասնատրման մասին յեղած դեկրետը։ Ինարկե, պարենմասնատրումը չափազանց ծանր բան եր գյուղացու համար և շատ դեպքերում քայքայում եր նրան։ Թեև, պետք ե ասել, վոր պարենմասնատրման ժամանակ ընդհանուրի հաշվին շատերը հարստացան։ Շահագետները ճարպիկ կերպով իրենց ապրանքը թագցնելով, վոչ միայն չաղքատացան, այլ նույնիսկ հարստացան։ Բայց գյուղացիության մեծամասնության համար պարենմասնատրումն ավերիչ բան եր և բացատրվում ե միայն այն ժամանակվա ծայրահեղ անհրաժեշտությամբ։ Ցավն այն եր, վոր շատ տեղ պետությունը վոչ միայն ավելցուկն եր վերցնում, այլ և այն, առանց վորի գյուղացու տնտեսությունը քայքայվում եր։ Դրանից առաջացավ ցանքադաշտի կրճատում, և գյուղացու տնտեսությունն ել ավելի վատացավ։

Ու թեև ավերիչ եր պարենմասնատրումը, բայց նա փըրկեց մեր արդյունաբերությունը, ազատեց մեր Կարմիր բանակը—գյուղացիների միլիոնավոր զավակներ, վոր կռիվ եյին գնացել պաշտպանելու Խորհ. իշխանությունն ու չթողնելու, վոր կալվածատերերն ու կապիտալիստները յետ գան։

Բացի պարենմասնատրումից, գյուղացիների վրա ուրիշ ծանրություն ել եր ընկնում։

Դոնբասի գրավումը, ուր քարածուխն եր, և Անդրկովկասի

գրավումը, ուր նավթն ու բենզինն եր, մեզ առանց վառելիքի թողեց։ Գնացքների շոգեմեքենաները փայտի միջոցով եյին վառվում։ Փայտ եյին բանեցնում նաև գործարանները։ Ահա թե ինչու այնքան մեծ քանակությամբ փայտ եր հարկավոր, ահա թե ինչու աշխատանքի ու տեղափոխության պարհակ եր մտցրած։ Դա անսովոր ծանր բան եր։

Մենք ուրիշ յերկրների, մանավանդ Արեվմըտյան Յեվրոպայի պրոլետարիատի համակրությամբ ու աջակցությամբ հաղթեցինք.

Այս ծանր որերին իսկական հերոսներ դուրս յեկան վոչ միայն մեր բանվորներն ու գյուղացիները, վոր Կարմիր բանակ մտան, այլեվ թիկունքում մնացած բանվորներն ու գյուղացիները, վորոնք այդ ժամանակ աշխատում եյին գործարաններում, վերականգնում եյին հաղորդակցության միջոցները, փայտ եյին կտրում ու բերում, յերկաթգիծը մաքրում եյին ձյան հյուսերից, իրենց ունեցած վերջին հացը Կարմիր բանակին ու քաղցած քաղաքներին եյին տալիս։ Ինարկե, այդ բոլորն ամենքը կամովին չեյին անում, ուստի զինվորական խիստ միջոցներ եյին գործադրում, վորը յերբեմն զայրույթ ու անբավականություն եր առաջացնում, բայց առանց այդ զրկանքների ու զոհերի, առանց աշխատավորների բոլոր ուժերի այդ ամենամեծ ու հերոսական լարման, Խորհ. յերկիրը կկործանվեր և ցարի գեներալների յերկաթե կրունկի տակ կխեղդվեր իր արյան մեջ։ Քաղաքացիական պատերազմի տարիներին մենք բավական մեծ աջակցություն գտանք բոլոր յերկիրների բանվոր դասակարգի կողմից։ Բոլոր յերկրների բանվորները գործադուլներ և ապստամբություններ եյին սարքում իրենց կառավարությունների դեմ, պահանջելով, վոր դադարեցնեն մեր դեմ կռվել, պահանջելով, վոր ել ոգնություն չտան սպիտակ-գվարդիականներին։ Լեհական արշավանքի ժամանակ անգլիական բանվորները «Ձեռքներդ հեռու Խորհ. Ռուսաստանից» անունով մի ընկերություն կազմակերպեցին, մասսաներով փողոց դուրս յեկան և պահանջում եյին հաշտվել Ռուսաստանի հետ, վորով և մեզ մեծ աջակցություն ցույց տվին։ Բանվորական կազմակերպությունների ընդհանուր համագումարում, ուր վեց ու կես միլիոն կազմակերպված բանվորների

պատգամավորներ կային, անգլիական բանվորները վորոշեցին. յեթե անգլիական կառավարությունը շարունակի իր թշնամական վերաբերմունքը Խորհ. Ռուսաստանի դեմ, ընդհանուր գործադուլ հայտարարել: Ու այժմ էլ, յեթե անգլիացի պնդաճակատների կառավարությունն այնքան հիմարանա, վոր մեր դեմ պատերազմ հայտարարի, ապա Անգլիայի բանվորությունը, վորին այնպիսի մեծ ու յեղբայրական օգնություն ցույց տվինք մենք անցյալ տարվա գործադուլի ժամանակ, դեմ կգնա իրենց կառավարությանը, կծառանա մեր ու իրենց թշնամու դեմ, և այն ժամանակ վայ պնդաճակատներին:

Բոլորը հիշում են, թե ինչպես ֆրանսիական նավերով Օդեսայի դեմ ուղարկած ֆրանսիացի նավաստիները խռովություն բարձրացրին այդ նավերի վրա, հրաժարվեցին մեր դեմ գործել: Ստիպված յեղան այդ նավերը Ֆրանսիա յետ տանել: Յերբ յերկաթուղով ու նավերով մեր դեմ տարվող կռվի համար թնդանոթի ռումբեր եյին ուղարկում, Ֆրանսիայի, Գերմանիայի ու Անգլիայի բանվորները հրաժարվում եյին բարձել գնացքներն ու նավերը: Իրենց լրագիրներում ու ժողովներում նրանք ցույց եյին տալիս ժողովրդին, վոր Խորհ. կառավարության արածը ճիշտ է, փառաբանում եյին մեր հեղափոխությունը, դա իրենց գործն եյին համարում. այնպես վոր մենք բոլոր յերկիրներում միլիոնավոր դաշնակիցներ ունեյինք, վորոնք այդ պայքարում մեզ մեծ աջակցություն ցույց տվին:

Ռ. Կ. Կ. յեվ քաղաքացիական պատերազմը.

Այսպես, բանվորների ու գյուղացիների միացյալ ջանքերով, ամբողջ աշխարհի բանվորների աջակցությամբ, Խորհ. իշխանությունը հաղթող դուրս յեկավ քաղաքացիական պատերազմից: Այդ հաղթությունը տարանք, վորովհետև այս պայքարում բանվորներն ու գյուղացիները միացան յեվ այդ միությանը գլուխ եր կանգնած ամուր ու անսասան կոմմունիստական կուսակցությունը: Համ. Կ. Կ. վոչ միայն վոգևորում եր աշխատավորներին, վոչ միայն կռվի յեր կոչում նրանց, այլ և պայքարի ամենապատասխանատու և ամենադժվար մասերում ինքն եր տալիս իր ուժերը: Բոլորը գիտեն, թե ինչպիսի ուժ

ցուցադրեց, ինչպիսի տոկունությամբ ու անսահման անձնվիրությամբ տարավ հեղափոխության գործը կոմմունիստական կուսակցությունը (բոլշևիկների): Յերբ բանը դժվարանում եր, համարյա անհույս եր լինում պատերազմական ճակատի վորևե մասում, յերբ թուլանում, կոտրվում, պատռվում եր ճակատը, կոմ. կուսակցությունը (բոլշևիկների) կոմմունիստների զորահավաք եր հայտարարում, ու նրանք յերկաթե կարգապահությամբ, պողպատե վոգով նորից կապում եյին ճակատի կոտրված օղակները ու կռվում եյին մեռնելու, բայց պաշտպանելու բանվորների ու գյուղացիների գործը: Ու հաշվել չի լինի, թե ինչքան կոմմունիստներ (բոլշ.) ընկան հանուն խաղաղության, հանուն Խորհ. իշխանության, հանուն բանվոր-գյուղացու գործի:

ՀԱՐՑԵՐ

1. Թվեցեք Խորհ. իշխանության առաջին քայլերը:
2. Քաղաքաց. կռվի ժամանակ ո՞վ եր կռվում Խորհ. իշխանության դեմ, և ո՞վ եր աջակցում հակահեղափոխությանը:
3. Բանվորներն ու գյուղացիներն ինչո՞ւ հաղթեցին իրենց թշնամիներին: Ի՞նչ գնով դրան հասան: Դրա համար նրանք ի՞նչ եյին անում: Ո՞վ եր նրանց օգնում:

ԶՐՈՒՅՑ ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՅՈՒՂՈՒՄ

Ինչի՞ մասին է զրույցը

Այս զրույցում մենք կտեսնենք, թե գյուղացիական տնտեսություններն ինչպես են բաժանվում ըստ իրենց ունեցվածքի, ըստ իրենց տնտեսական դրության։ Ինչ հարաբերություններ կան այդ խմբերի միջև. կուլակներն ինչ ճանապարհներով են հարստանում ընդհանուրի հաշվին։ Ինչպես միջակ ու աղքատ տնտեսությունները կարող են պաշտպանել իրենց շահերը, կռվել կուլակների ճնշման դեմ և միացյալ ուժերով բարելավել իրենց տնտեսությունները։

Գյուղի բաժանումը (շերտավորումը) խմբերի, դասակարգերի մինչ հեղափոխությունը

Դեռ հին, նախահեղափոխական ռուսական գյուղը բաժանվում էր խմբերի—չքավորներ, միջակներ, ունևորներ կամ կուլակներ։ Այդ առանձին խմբերի տնտեսությունները տարբերվում էին միմյանցից և ցանքի քանակով, և կենդանի ինվենտարի (անասունների) քանակով, և մեռյալ ինվենտարի (գյուղատնտեսական գործիքների) քանակով։ Դրանից էլ ստացվում է տնտեսությունների նշանակությունը։

Չքավորի տնտեսությունը նույնիսկ կիսաքաղց գոյություն չէր ապահովում։ Այդ տնտեսությունը գյուղացուն չէր կերակրում, նա ստիպված էր գյուղատնտեսական բանվոր դառնալ, քաղաք գնալ աշխատանքի, դրսում աշխատանք փնտռել. ու այդ շերտերն ավելի ու ավելի էին ստրկանում ունևոր գյուղացիներին ու կալվածատերերին։

Միջակ գյուղացին ձգտում էր մնալ իր սեփական տնտեսության մեջ, բոլոր բարիքները բավարարել իր սեփական

ուժերով ու միջոցներով, կատաղի պայքար էր մղում, որ չքավորների դրությանը չհասնի։ Ամեն մի անբերրիություն, սով կամ որևէ դժբախտություն հրդեհ, անասունների սատկել—միջակին ցած էր գլորում դեպի գյուղական չքավոր խավերը։ Նա դեմ չէր (և ձգտում էր դրան) հարստանալու, ունևոր գյուղացի դառնալու և, առանձին դեպքերում, կարող էր նույնիսկ կուլակ դառնալ, բայց մեծ մասամբ (ընդհանրապես) այդ միջակ գյուղացին, այսպես կոչված աշխատավոր գյուղացին, ինքը կախված էր ունևոր կուլակից ու կալվածատիրոջից։

Ահա ինչ էր ասում Լենինը միջակ գյուղացու մասին.

«Կալվածատերերի ու կապիտալիստների ժամանակ միջին գյուղացիներից շատ քչերը—գուցե հարյուրից մեկը—հիմնավոր բարեկեցության էին հասնում, այն էլ միայն կուլակներ դառնալով, չքավորության վզին նստելով։ Իսկ միջակ գյուղացիության ահագին մեծամասնությունը կապիտալիստների ու կալվածատերերի որով անխուսափելիորեն կարիքի մեջ էր, հարուստների ծաղրին յենթակա»։

Գյուղի կուլակ խավը էնքան մեծ չէր, բայց նրա տնտեսական նշանակությունը մեծ էր։ Մենք արդեն գիտենք, որ մեկուկես միլիոն ունևոր գյուղացիներն ու կուլակները նույնքան ցանքի հող ունեյին, որքան $10^1/_2$ միլիոն միջակ գյուղացիները, որքան 30 հազար կալվածատերերը. կնշանակի այդ կուլակությունը բավական մեծ ուժ ուներ։ Միջակ գյուղացիությունը պետք է որևէ բան վաճառքի հաներ—հարկը վճարելու և այլ կարիքների համար։ Նա կարող էր ծայրը ծայրին հասցնել միայն շատ մեծ դժվարությամբ և ժամանակ առ ժամանակ քաղցածության գնով։

Միջակ գյուղացու ընտանիքի անդամները ձգտում էին տնական կերպով իրենք պատրաստել իրենց համար կոշիկ, շոր և այլ տնական իրեր (գործվածք, տանու սարք). կուլակը հաշվի յեր առնում, որ իր տնտեսությունը շուկայի համար պիտի պատրաստի. Նա օգտվում էր չքավորի վարձու աշխատանքով, «բարերարություն» էր անում չքավորին, ձմեռը մի չափ փոխ տալով՝ ամառը 3—4 անգամ ավելի յեր առնում նրա-

նից։ Այսպիսով նրա բերքն ապահովված եր, թեկուզ ինքը մասը մասին չխփեր իր վարուցանքի համար։

1917 թվի հեղափոխության սկզբին Յեվրոպական Ռուսաստանի 25 նահանգներում գյուղացիությունը հետևյալ շերտերի յեր բաժանվում. ամեն մի 100 տնտեսությունից 12-ը ցանքս չուներ, 20-ը մանր եր, 60-ը՝ միջակ և 8-ը՝ կուլակ։

Այսպիսով գյուղացիական տնտեսությունների հիմնական խմբերը կազմում եյին միջակները և չքավորները։

1917 թվի հեղափոխությունը.

Բոլոր գյուղացիները միակերպ ատում եյին կալվածատիրոջը։ Ուստի յերբ բոլշևիկները կոչ արին՝ կալվածատերերի հողը խլել, այդ բանին կողմնակից եյին վոչ միայն չքավորներն ու միջակները, այլ և կուլակները։

Բայց յերբ սկսեցին կալվածատերերի հողը խլել ու ավերել նրանց տնտեսությունը, չքավորությունը, վոր տարիներով ճնշվելուց վախկոտ եր, ավելի քիչ համարձակություն ուներ, քան հարուստ գյուղացիներ։

Հեղափոխության սկզբում կալվածատերերի ունեցվածքից նույնիսկ կուլակներն ավելի ոգտվեցին, քան չքավորները։ Նրանք յուրացրին և՛ հողը, և՛ ինվենտարը, և անասունները։

Մի խոսքով՝ հեղափոխության առաջին շրջանում գյուղի այդ հարուստների ու աղքատների բաժանվելը չվոչնչացավ, այլ տեղ-տեղ այդ բաժանումն ել ավելի ուժեղացավ։

Չքավոր գյուղացիների կոմիտեներ (կոմբեդներ).

Այն ժամանակ, վորպեսզի հեղափոխությունը կես ճանապարհին կանգ չառնի, Խորհրդային իշխանությունը հարց դրեց — գյուղական չքավորության միջոցով գյուղում հողի, ինվենտարի ու մթերքի նոր բաժանում կատարել։ Կազմվեցին չքավորների կոմիտեներ, ուր մտնում եյին այն գյուղացիները, վոր ավելցուկներ չունեյին, առևտուր չեյին անում և իրենց հողերը մշակում եյին առանց վարձու բանվորի։ Այդ կոմիտեները պայքար սկսեցին կուլակների դեմ, նորից բաժանեցին հողը, ավելի հավասարաչափ բաժանեցին ինվենտարն ու մթերքի պաշարը։ Լավ թե վատ, ոգնեցին մեզ պահպանելու մեծ քանակությամբ կալվածատիրա-

կան նախկին ագարակներ, վորպեսզի հետո հնարավոր լինի այնտեղ ցուցադրական-կուլտուրական տնտեսություններ սարքել։ Չքավորների այդ կոմիտեներից հետագայում կազմվեցին շատ կոմմունաներ ու արտելներ։ Այդ կոմիտեների գործունեության շնորհիվ վորոշ հավասարություն առաջ յեկավ տնտեսությունների միջև։ Ունևոր, կուլակ տնտեսությունների թիվը կրճատվեց և խիստ կրճատվեց, բայց դրա փոխարեն կրճատվեց նաև անկով ու անձի տնտեսությունների թիվը։ Այնտեղ, ուր 1905 թվականի 100 դեսիատինից պատկանում եր՝ աղքատներին 3,6, հողասակավներին 19, միջակներին 41,8 և կուլակներին 35,6, 1923 թվին ունեցան՝ առաջինները 5,2, յերկրորդները 24, միջակները 61,3 և կուլակները 9,5։ Չքավորների կոմիտեների մյուս խնդիրն եր՝ գյուղում Խորհ. իշխանություն ստեղծել ու պայքարել կուլակների դեմ, վորոնք ուժեղ դիմադրություն եյին ցույց տալիս այդ իշխանության հաստատվելուն։ Դրանից հետո չքավորների կոմիտեները լուծվեցին։ Սակայն մեծ քանակությամբ ելի մնացին անվար, անլծկան, անկով տնտեսություններ, դեռ մեծ քանակությամբ ազատ ձեռքեր մնացին, վորոնք չեյին կարող իրենց ուժերն իրենց տնտեսության մեջ գործադրել։

Կուլակներն ինչպես են հարստանում չքավորների և միջակների հաշվին

Գյուղում ունեցվածքային անհավասարություն կա, կան չքավորներ (պրոլետարներ և կիսապրոլետարներ), վորոնց տնտեսությունն իրենց և իրենց ամբողջ ընտանիքին չի կերակրում. այդ չքավորներն ստիպված են կողմնակի աշխատանք փնտռել — ուրիշների մոտ ծառայության մտնել կամ գյուղում աշխատանք վերցնել։ Գյուղում կան միջակ գյուղացիներ, վորոնց դրությունն էլ, ամենափոքր անհաջողությունից կամ տարերային դժբախտությունից, կարող ե տատանվել։ Գյուղացիության շարունակ կարիքի մեջ յեղող մասն ստիպված ե գյուղի ավելի ունևոր խավերի ոգնությանը դիմել։ Ստիպված ե դիմել կուլակին, ունևորին, վորը պաշար ունի, վորի տնտեսությունը բանվոր ուժերի կարիք ե զգում։ Մանավանդ գարնանը չքավոր և միջակ գյուղացին հաճախ դժվար

դրության մեջ է ընկնում. դե, աշնանը մի կերպ ապրում է, դուրս է պրծնում, բայց գարնանը...։ Բացի դրանից գյուղում հազար տեսակ դժբախտություններ են պատահում—հրդեհ, անասուն է սատկում, բերք չի լինում, արտերն արածացնում են, անձրևային կամ յերաշտ ամառ է լինում։ Այդ ամենը շատ նեղ դրության մեջ են դնում գյուղացուն։ Յեթե արժան վարկ չկա, որ կազմակերպել է ինքը հասարակությունը կամ պետությունը, յեթե գյուղացիների լավ կազմակերպված փոխադարձ օգնության ընկերություն չկա, յեթե ամեն տեղի լավ հիմքերի վրա դրված կոոպերատիվ չկա, ապա գյուղացին ստիպված է գլուխը կուլակի ցանցի մեջ դնել յեվ, թեկուզ մի փոքրիկ պարտք ստանալու համար, ինչ պայմանով ել լինի, ստրուկ դառնալ նրան։ Իհարկե, այդպիսի դեպքերում կուլակն իրեն բարերարի պես է պահում։

Կուլակը, հատկապես 1921—22 թվերի սովի ժամանակ, ուզում եր օգտվել գյուղացիների նեղ դրությունից։ Գյուղացին այն ժամանակ սերմի կամ ուղղակի մինչև նոր բերքն ուտելու հացի մեծ կարիք ուներ։ Պետությունը չեր կարող միլիոնավոր քաղցածներին ինքը մենակ կերակրել։ Յեվ ահա կարիք ունեցող գյուղացին ստիպված եր ստրկական պայմանագիր ստորագրել—իր հաջորդ տարվա բերքի վոչ միայն կեսը, այլ յերբեմն յերեք քառորդը տալով իրեն «փոխ տվող» կուլակին։ Ահա ինչու այդ ժամանակ Հմ. Կ. Գ. Կ. դեկրետ հրատարակեց թե այդ ստրկացնող գործարքներն օրինական չեն։ Փոխ տվողներին թույլատրվում եր յետ պահանջել իրենց տվածը և ամենաշատը 12% հավելում։

Ում պետք է կուլակ համարել

Գյուղական ժողովներում, հաճախ, հենց վոր կուլակ բառը լսվում է, աղմուկ ու աղաղակ է լսվում, թե մեզնում կուլակ չկա։ Հետո հաճախ հարց են տալիս թե ով է կուլակը, ինչ նշաններով ճանաչենք կուլակին։ Վոր մեզանում կուլակներ չկան—իհարկե դա ճիշտ չե։

Կարելի՞ յե արդյոք ասել, վոր ա՛յ, այս տնտեսությունը կուլակային է, նայելով թե տնտեսությունը վորքան անասուններ և այլ ունեցվածք ունի։ Ճիշտ է, ասած է, թե հալալ քըր-

տընքով հարստություն չի դիզվում, բայց, համենայն դեպս, լինում են կուլակ տնտեսություններ, վոր մի կով ունեն, և միջակ տնտեսություններ, վոր 3 կով ունեն։

Հարցն այն չե, թե տվյալ տնտեսությունը քանի անասուն կամ ինչքան այլ ունեցվածք ունի, այլ թե այդ ունեցվածքն ինչպես է ձեռք բերվում։ Յեթե տնտեսությունը հարստանում է ի հաշիվ վարձու ուժի, յեթե հարստանում է չունեցողին իր գործիքները կապալով տալով, կամ ձին է տալիս, վոր իր համար աշխատեն կամ մեծ տոկոս տան, յեթե հարըստանում է չունևորին կամ պարտք տալով կամ մեծ տոկոսով հաց տալով կամ նոր բերքին կրկնակի տալու պայմանով, կամ յեթե հարստանում է առևտրով, վաշխառությամբ և կամ այլ միջոցներով է քամում աղքատի արյուն քրտինքը,—ապա այդպիսի տնտեսությունը կուլակային է։

Յեթե մեկի տնտեսությունն ամրանում է ի հաշիվ հողի կուլտուրական ձևերի մշակման, վարկի, կոոպերացիայի օգնությամբ, առանց չքավորի քրտինքի շահագործման,—դա կուլակային տընտեսություն չի լինիլ։

«Ստիպված ենք պայքարել անփորձ մարդկանց դեմ,—ասում եր Լենինը,—յերբ նրանք կուլակին ու միջակ գյուղացուն խառնում են։ Կուլակը նա յե, ով ուրիշի աշխատանքով է ապրում, ով կողոպտում է ուրիշի աշխատանքը, ով ուրիշի կարիքն օգտագործում է իր համար. միջակ գյուղացին նա յե, ով չի շահագործում և ինքն ել շահագործման չի յենթարկվում, ով ապրում է իր փոքր տնտեսությամբ, ինքն իր աշխատանքով»։

Մեր նպատակն է—գյուղական բոլոր տնտեսություններն ել ամրացնել. և դա չի նշանակում, թե ամեն մի տնտեսություն կուլակային կլինի, վորովհետև մենք չենք ուզում տնտեսություններն ամրացնել հարևանի քրտինքով, այլ կոոպերացիա—միության կազմելու հաշվին, ինքնօգնության, մշակման ձևերի լավացման հաշվին։ (Յեթե այդպիսի տնտեսությունն աշխատող ձեռքերի պակասության պատճառով, որ. յերբ աշխատողը կարմիր բանակումն է, դաշտային աշխատանքի յեռուն

միջոցին աշխատողներ վարձի, – ապա դրանով դա դեռ կուլակային չի դառնա)։ Թեև չի կարելի չտեսնել և այն հանգամանքը, որ ամեն մի ամուր տնտեսություն (թեկուզ ուրիշի մեջքի քրտինքով չբարձրացած), համենայն դեպս միշտ կարող է օգտվել հանգամանքից, որ կապալով հող վերցնի կամ բանվորներ վարձի. հետո մեկ էլ կտեսնես, դեպքը ենպես բերեց, որ հարևանների հաշվին սկսեց դիզել, այսինքն կուլակների շարքն անցավ։

Ինչո՞ւ չի կարելի կուլակին «արգելել»

Ապա ինչու Խորհրդ. իշխանությունն ու կոմունիստական կուսակցությունը, որ տեսնում են, թե գյուղում ինչպես է աճում կուլակը, ինչպես է հարստություն դիզում, ինչպես սկսում է գյուղի աղքատ մասին խեղդել, ոչ մի միջոցի չեն դիմում, որ արգելեն կուլակ տնտեսությունների աճումը, չեն «արգելում» կուլակին։

Նույնիսկ, կարծես թե, ընդհակառակը, վերջերս այնպիսի միջոցներ են ձեռք առել, որ հեշտացնում են բանվորական ուժ վարձելը, հողը կապալով վերցնելը։

Չլինի՞ Խորհ. իշխանությունը կուլակի կողմն է անցել, չլինի՞ դավաճանել է չքավորությանը, որի վրա հենվում էր հեղափոխության ժամանակ և քաղաքացիական կռվի ծանր տարիներին, չլինի՞ յերեսը շուռ է տվել գյուղացիության հիմնական զանգվածից — միջակից։ Այդ հարցերին պատասխանելու համար պետք է լավ հասկանալ այն, ինչ որ կատարվում է այժմ գյուղում։

Դեռ առաջին գլուխի ժամանակ ասվեց, որ այժմ գյուղացիական տնտեսությունը վերականգնվում է։ Գյուղն սկսում է կուտակել՝ գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ գնել, բանվոր անասունների քանակն ավելացնել, աճում է ցանքի տարածությունը, մեծանում է տնտեսության արդյունավետությունը։

Սա լավ բան է. անպատճառ — այո։ Դա ձեռնտու յե և գյուղացուն, որովհետև գյուղական տնտեսության բարձրացման առաջին քայլերը ճանապարհ են բաց անում գյուղի բա-

րեկեցության ապագա աճման, նրա ամբողջ կյանքի բարելավման համար։ Դա ձեռնտու յե և բանվոր դասակարգին, որովհետև գյուղական տնտեսության աճմամբ աճում է և գյուղացու կարիքը քաղաքի արդյունքների նկատմամբ։ Դա ձեռնտու յե և մեր պետությանը։ «Այժմ հիմնական միտքն է, — ասում էր Լենինը, — մթերքների քանակն ավելացնել։ Մենք այնպիսի չքավորության, քայքայման պայմանների մեջ ենք, գլխավոր արտադրող ուժերը — գյուղացիներն ու բանվորներն այնպես են հոգնած ու ուժասպառ, որ ստիպված ենք առժամանակ ամեն ինչ յենթարկել այդ հիմնական մտքին — ինչ էլ որ լինի, մթերքների քանակն ավելացնել»։

Երբ 22 միլիոն առանձին գյուղացիական տնտեսություններ կան յեվ հավասար պայմանների մեջ չեն գտնվում, նրանց վերելքը չի կարող միակերպ, հավասարաչափ լինել։ Միանգամայն անխուսափելի յե. այն տնտեսությունները, որ բավականաչափ գործիքներ ու մեծ քանակությամբ բանվոր անասուններ ունեն, պետք է մյուս տնտեսություններից ավելի արագ աճեն։

Մեր յերկրում 40% լծկան չունեցող տնտեսություն կա։ Բանվոր անասուններ և գործիքներ չլինելու պատճառով հաճախ դրանց պատկանող հողը չի կարող մշակվել այդ տնտեսության ուժերով կամ այնքան վատ է մշակվում, որ տնտեսությունը ծայր ծայրին չի հասցնում։ Այստեղից անխուսափելիորեն — հողի մի մասն անմշակ է մնում, բանվոր ձեռքերն իրենց համար աշխատանք չեն գտնում։

Այդ հողի վրա առաջացան (նույնիսկ այն ժամանակ, յերբ դա դեռ արգելված էր) հողի կապալը յեվ վարձու աշխատանքի գործադրությունը։

Խորհ. իշխանությունն այժմ այնքան միջոցներ չունի, որով հնար լինի չքավոր տնտեսություններին այնպիսի աջակցություն ցույց տալ, որ նրանք միանգամից ոտքի կանգնեն։ Մյուս կողմից, միևնույն է, այսպիսի պայմաններում վարձու աշխատանք գործադրել արգելելը կամ հողը կապալով չտալը կամ կուլակների հարստանալու դեմ գնալը ոչ մի օգուտ չէր ունենա. այսինքն հեշտությամբ կարելի կլինի արգելքներին

չենթարկվել։ Ընդհակառակը, յեթե հողը կապալով տալը կամ գյուղատնտեսական բանվոր վարձելն ազատ լինի, կարելի կլինի հսկել, թույլ չտալ, վոր ստրկական պայմաններ կապեն։

Յերկյուղ կա՞ արդյոք, վոր այս հիման վրա կուլակը կը շահվի, նա մեծ քանակությամբ հող կհավաքի իր ձեռքը, շատ միջոցներ կկուտակի, չքավորությունը կճզմի իր բռունցքի մեջ, թույլ չի տալ, վոր նեղ դրությունից դուրս գան, միջակ տնտեսություններն ել իրենից կախված դրության մեջ կդնի, ու այսպես իր ուզածի համաձայն կտնօրինե գյուղի գործերը։

Ի՞նչպես կարելի յե յեվ պետք է պայքարել կուլակի դեմ

Այո, այժմյան պայմաններում անխուսափելիորեն այդպիսի վտանգ ծագում է։ Բայց դրա դեմ մենք բավականաչափ միջոցներ ունենք, վոր պաշտպանում են մեզ կուլակների ճնշումից։

Նախ՝ կուլակների իրավունքները սահմանափակված են։ Հողի կապալն ու բանվորներ վարձելը սահմանափակված են վորոշ պայմաններով։ Հողը պետության սեփականությունն է և չի կարող մեծ քանակությամբ մի մարդու ձեռքին հավաքվել։ Բայց գլխավոր միջոցն այն է, վոր պետության աջակցությամբ յեվ գյուղացիների ինքնօգնությամբ ազատենք գյուղացուն կուլակին դիմելու դառն անհրաժեշտությունից։ Գյուղացին ինչ՞ կարիք ունի, և նրա գլխավոր պակասն ինչն է։ Գլխավոր պակասը—բանվոր անասուններն են։ Մեր գյուղերում դեռ բավական շատ կան թույլ ու անլծկան տնտեսություններ։ Ահա այդպիսի գյուղացուն, յերբ նա ուզում է տուն ու տեղ անի, փորձում է վոտքի կանգնել, ոգնություն պետք է գա կամ պետությունը, կամ ՓՈԿ-ը, կամ կոոպերացիան։ Առանց այդ ոգնության, անշուշտ, նա գերի կդառնա։ Ասենք այդպիսի չքավոր գյուղացին մի լուծ յեզ պետք է առնի և ծախելու վոչինչ չունի։ Նա յերկու ճանապարհ գիտե—կամ կոմունակի աշխատանքի պիտի գնա, կամ կուլակի գերին պիտի դառնա, վորից նա պարտք կվերցնի ու հըսկայական տոկոսներ կվճարի։ Յեթե գյուղացին այդ բանը սիրտ չի անում, մի ճանապարհ է մնում - քրեհով, կապալով լծկան վերցնել։ Այժմ վարուցանքի ժամանակ լծկան ու գյուղատնտեսական գործիքներ քրեհով վերցնելը շատ հաճախ է պատահում։

Չքավոր գյուղացին հաճախ ցորենի պակասություն է զգում. վոչ միայն ցանելու համար, այլ և հենց ուտելու համար իրեն ունեցածը մինչև նոր հունձը չի բավականանում։ Գյուղացին միայն այն դեպքում կարող է կուլակի գերությունից ազատվել, յեթե պետությունը նրան (ապառիկ) վարկ տա։

Առանց գյուղատնտեսական վարկի այժմ անհնար է գյուղական տնտեսությունների վերելքն ու զարգացումը։ Գյուղատնտեսական բանկի միջոցով, տեղական գյուղատնտեսական կոոպերատիվ միությունների միջոցով այժմ արդեն այդպիսի վարկ տալիս են։ Ամեն տարի աշնանն ու գարնանը բավական մեծ քանակությամբ հաց են բաշխում - իբրև սերմի պարտք։ Այն տեղերում, ուր անցյալ տարի բերքը վատ եր, այդ սերմը անասունով եր պարտք տրվում, վորովհետև վտանգ կար, վոր գյուղացիները կարիքից ստիպված կսկսեն իրենց անասունները վաճառել, վորով և վերջնականապես կքայքայեն իրենց տնտեսությունները։ Ապառիկ ու մաս-մաս տալու պայմանով այժմ գյուղատնտեսական գործիքներ ել են տալիս, հատկապես մեծ և բարդ մեքենաներ։

Այս բոլոր միջոցներով պետությունը մեծ աջակցություն է ցույց տալիս գյուղացիական տնտեսություններին։ Բայց միայն պետությունը, պարզ է, չի կարող բոլոր կարիքները հոգալ։

Յելքը կոոպերացիան է

Վորպեսզի մեր բազմամիլիոն գյուղացիությունը, վոր այժմ նահատակվում է հողի համար, կարողանա լայն ճանապարհ դուրս գալ, կարողանա իր տնտեսությունն իր համար շատ ավելի ձեռնտու հիմքերի վրա դնել, վորպեսզի նա կարողանա մեքենաներ բանեցնել, հողը պարարտացնել, արդյունավետ կուլտուրական բույսեր ցանել, արդյունավետ անասուններ պահել,—այս բոլորի համար պետք է, վոր առանձին-առանձին, անջատված տնտեսությունները միանան յեվ կոոպերատիվ միություն կազմեն։

Կոոպերացիան—դա ամուր հենարան է, հուսալի պաշտպանություն շահագործման դեմ, գնողի ու կուլակի գերության դեմ. միևնույն ժամանակ կոոպերացիան գյուղացու հա-

մար իրեն տնտեսությունը բարձրացնելու միջոց է։ Գյուղատնտեսական կոոպերատիվները, ընկերությունները—մեքենաների, անասնապահության, կարտոֆիլի, յուղ պատրաստելու, այլ և արդյունաբերական կոոպերացիան—անկախ թե ինչն է չքավոր ու միջակ գյուղացուն կուլակի գերությունից ազատում։

Գյուղատնտեսական կոոպերացիայի զանազան տեսակները

Մեքենաների ընկերություններն ազատում են գյուղացուն մեքենաների ու գործիքների վաշխառուական վճարից և իրենց՝ աղքատ գյուղացիներին հնարավորություն են տալիս իրենց տնտեսության մեջ բանեցնել ամենաթանգ մեքենաները։ Իրենց մթերքները կամ մշակույթները վաճառելու համար զանազան տեսակի կոոպերատիվները, ինչպես կաթնատնտեսական, կարտոֆիլի, բամբակաբուծական, գինեգործական և այլն, գյուղացուն ազատում են վաճառականի թաթից և հնարավորություն են տալիս նախ իրենց արտադրածը շատ ավելի ձեռնտու գներով վաճառել և ապա հնարավորություն են տալիս իրենց անդամներին բարելավել իրենց տնտեսությունը (լավ ցեղի անասուններ ձեռք բերել, լավ տեսակի սերմ ցանել, լավ մեքենաներ բանեցնել)։

Կան և ուրիշ տեսակ կոոպերատիվ միություններ. որինակ՝ ջրաբաշխական ընկերություն, սերմի ընկերություն, տրակտոր գնելու միություն, ելեկտրիֆիկացիայի ընկերություն և այլն։ Վերջապես կան և սպառողական կոոպերատիվներ, վոր ոգնում են գյուղացուն կտորեղեն, ապակի, յերկաթ, սապոն, մեխ և գյուղում անհրաժեշտ իրեր գնել և ավելի աժան և լավ հատկությամբ, ու գնել ուղիղ հենց պահեստից կամ ուղղակի գործարանից։

Կոոպերացիան, իհարկե, դեռ շատ բանով լավ հիմքերի վրա չի դրված, դեռ նա քիչ ուժ ունի։ Բայց պետք է ձգտել, վորպեսզի կոոպերացիան իրոք փոխարինի կուլակին, անպետք դարձնի նրան էլ, վաճառականին էլ, և գյուղական հիմնական մասսային—միջակներին ու չքավորներին—ոգնի վոչ միայն իրենց ինքնուրույնությունը պահպանել, այլ և տնտեսությունը շատ ավելի ավելի բարձր աստիճանի հասցնել։

Փոխադարձ ոգնության կոմիտեներ

Չքավորությանն ու միջակին մեծ աջակցություն կարող են ցույց տալ փոխադարձ ոգնության կոմիտեները։

Գյուղական փոխադարձ ոգնության կոմիտեները կազմվում են գյուղի համայնական ժողովի վորոշմամբ, և նրանից հետո պարտավորեցուցիչ կերպով նրա մեջ են մտնում 18 տ. հասած յերկու սեռի բոլոր քաղաքացիները։ (Իհարկե, վաճառականները, նախկին վոստիկանական պաշտոնյաները և իրավունքից զրկված մյուս անձնավորությունները ընկերության անդամ չեն կարող լինել)։ Գյուղփոկերն ամեն տեսակ ոգնություն են ցույց տալիս կարմիր բանակայինների ընտանիքներին, տարերային դժբախտություններից վնասվածներին, կարիքի մեջ յեղողներին, վորբերին և առհասարակ չքավոր գյուղացիներին։ Նրանք ոգնում են զանազան արտելներ կազմվելուն, չքավոր և միջակ տնտեսությունների միություններին՝ նախնական աշխատանքների համար (միասին վար կամ հունձ անել, միասին գութան կամ լծկան գնել և այլն), ոգնում են չքավորին կոոպերատիվի անդամ դառնալ, նրա բաժին մուծումներն իրենք տալով և այլն։

Գյուղփոկը պաշտպանում է չքավոր տնտեսության շահերը, մասնակցում է ապառիկ ստացած սերմացուի բաժանմանը, իր թեկնածուներն է առաջարկում կոոպերատիվի վարչության և վերստուգիչ հանձնաժողովի համար։ Գյուղփոկի միջոցները կազմվում են անդամավճարներից, վորն այնպիսի ձևով են գանձվում, վոր ավելի ունևոր տնտեսություններն ավելի մեծ գումար են մուծում, իսկ չքավորները՝ փոքր։ Բացի դրանից գյուղփոկը հասարակական ցանք է կազմակերպում, կապալով ջրաղացներ է վերցնում և այլն։ Վերջապես ընկերության անդամները պարտավոր են իրենց անձնական աշխատանքով մասնակցել դաշտերի մշակմանը և այն աշխատանքային ոգնությանը, վոր գյուղփոկը ցույց է տալիս թույլ տնտեսություններին։

Հողանտառ միություն

Գյուղատնտեսական բանվորների շահերը պաշտպանելու համար կա հողանտառ միություն և նրա տեղական բաժինները։ Այդ միությունը միաց-

նում է նրանց, վորոնք վարձու աշխատանքով են ապրում։ Նա հետևում է, վոր ծառայողի և վարձողի միջև պայման կապվի, վոր այդ պայմանագրում վորոշ հիշված լինեն աշխատավարձը և այն հիմնական աշխատանքները, վոր պիտի կատարի ծառայողը։ Միությունը հետևում է նույնպես, վոր պայմանագրի պայմանները կատարվեն, վոր աշխատավարձը ժամանակին վճարեն, վոր ծառայողին կարգին բնակարան տան, վոր նրան շաբաթը մի որ ազատ թողնեն (հնձի ժամանակը բացառություն է), վոր մանկահասակ ծառայողին ուժից վեր աշխատանք չտան, չարգելեն դպրոց հաճախել և այլն։

ՀԱՐՑԵՐ

1. Գյուղական տնտեսությունները ըստ իրենց ունեցվածքի տնտեսական գրության ինչ խմբերի յեն բաժանվում։ Վորո՞նք են հիմնական խմբերը։
2. Հեղափոխության առաջին տարիներում ինչ փոփոխություններ առաջացան չքավոր, միջակ ու կուլակ տնտեսություններում և ինչպես են փոխվում նոր տնտեսական քաղաքականությունը մտցնելուց հետո։
3. Այժմ ում պետք է կուլակ համարել։
4. Թվեցեք, թե վոր կազմակերպությունները են ոգնում չքավոր և միջակ գյուղացիներին պայքարելու կուլակների ճնշման դեմ, և ինչն է այդ ոգնությունը։
5. Թվեցեք, թե կուլակն ինչ միջոցներով է գերի դարձնում չքավորին ու միջակին և ասացեք (գրեցեք), թե գյուղացիությունն ու Խորհրդ. իշխանությունն ինչ պետք է հակադրեն նրա ամեն մի միջոցի դեմ։

ՑԱՆԿ

I ԶՐՈՒՅՑ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ—ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ . . . 3—16

Ինչի՞ մասին է զրույցը. Մեզնում ում է պատկանում իշխանությունը. Ինչի՞ յե ձգտում Խորհրդային իշխանությունը. Խորհրդային իշխանության կառուցվածքը. Ումից է կազմված Խորհուրդը. Ո՞ւմ շահերն են պաշտպանում Խորհուրդները. Բանվորների ու գյուղացիների շահերն արդյոք միշտ նման են. Բանվոր դասակարգի ղեկավարության անհրաժեշտությունը. Ի՞նչպես է իրականացվում այդ ղեկավարությունը. Խորհուրդների աշխատանքում. գյուղխորհուրդների և շրջգործկոմների իրավունքներն ու պարտականությունները. Շրջանային բյուջե կազմելը. Ազգաբնակչությունն ինչպես քաշել Խորհուրդների աշխատանքին։ Հեղափոխական որինականություն. Հարցեր.

II ԶՐՈՒՅՑ. Խ. Ս. Հ. Մ. ՅԵՎ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ . . . . 17—26

Մեր յերկիրը. Ի՞նչպես եր կողոպտում ցարի իշխանությունը ժողովուրդներին. Թե ապրանքատներն ու գործարանատերերն ինչպես եյին հարստանում յետամնաց ժողովուրդների հաշվին. Ինչու յեր արգելք լինում ցարի իշխանությունը ժողովուրդների զարգանալուն. Ինչու յեր ցարի իշխանությունը թշնամություն սերմանում ժողովուրդների մեջ. Հոկտեմբերյան հեղափոխությունը և ժողովուրդների ազատագրումը. Խ. Ս. Հ. Մ. Խորհրդային հանրապետություններն ինչու միացան, մի միություն կազմեցին. Յետամնաց ժողովուրդների կուլտուրական և տնտեսական մակարդակի բարձրացումը. Խորհրդային յերկիրներում ազգային թշնամանքը տեղ չունի. Հարցեր.

III ԶՐՈՒՅՑ. Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ԳԱԼԸ . . . . . 27—41

Առաջին համագումարը. Եկոնոմիստները. «Իսկրա» (Կայծ) լրագիրը և նրա դերը բանվորական շարժման գործում. Բանվորական շարժման վերելքը. Գյուղացիական հուզումները. Գյուղացիական շարժման ջախջախումը և նրա անհաջողության պատ-

տաները. Յերկրորդ համագումարը։ Պառակտում. Բոլշևիկներ և մենշևիկներ. Լենինը բոլշևիկների գլուխն անցած պայքարում է բանվոր դասակարգի և գյուղացիության միության համար. **Հարցեր.**

IV ՉՐՈՒՅՑ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ **42—53**

Թե կապիտալիստներն ինչպես են շահագործում բանվորներին. Կապիտալիստական կուտակում և սոցիալիստական կուտակում. Պրոլետարիատի տարբերությունն արհեստավորից. Բանվոր դասակարգի ծանր ու իրավազուրկ դրությունը կապիտալիզմի ժամանակ. Պայքարի սկիզբը. Բանվորներն սկսում են գիտակցել դասակարգային շահերը և կազմակերպության անհրաժեշտությունը. Բանվորական առաջին կազմակերպությունները։ Հարավ-Ռուսական Բանվորական Միություն։ Ռուս Բանվորների Հյուսիսային Միություն։ Ի՞նչ է Մարքսի ուսմունքը. Առաջին ռուս մարքսիստները. Պայքար նարոդնիկների դեմ. **Հարցեր.**

V ՉՐՈՒՅՑ. ՄԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆ ՈՒԺԵՐԸ . **54—61**

Զրույցի նյութը. Նոր սերունդ պատրաստելու հարցը. ԼԿՅԵՄ-ի կազմ. ձևերը, նրա անդամների թիվը ԽՍՀՄ-ում, Անդրկովկասում և Հայաստանում. Կոմյերիտմիությունն իբրև շեֆ կարմիր նավատորմղի. Պիոներ կազմ. կառուցվածքը, պիոներների թիվը ԽՍՀՄ-ում և Հայաստանում. Ինչպիսի պաշտպաններ են այս կազմակերպությունները մեր Միության համար. Ով է բանվորների և գյուղացիների նվաճումների իրական պաշտպանը. Կյանքը կարմիր բանակում—ինչ է սովորում կ. բանակայինը. Կ. բանակում ծառայելու կարգը. Պաշ ընկերությունը, նրա դերն ու նշանակությունը. Կ. բանակն իբրև համաշխարհային հեղափոխության բանակ. Ի՞նչ էր ասում Լենինը նոր սերնդին պատերազմի մասին։

VI ՉՐՈՒՅՑ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ **62—77**

Ինչի՞ մասին է զրույցը։ Վատ բերք. Անասունների վորակի ցածությունը. Մեր և արտասահմանի գյուղը. Գյուղացու դարավոր ստրկությունը. Յետգնման վճարումները. Հարկերը. Կուլակ-ապրանքառուն. Գյուղացին իրավազուրկ. Տգիտություն և անգրագիտություն. Սակավահողություն. Ցարի պատերազմը. Քաղաքացիական պատերազմը. Փլուզում. Տնտեսության վերականգնման սկիզբը. Մեր գյուղական տնտեսության պայմանները. Գյուղական հարստության առաջին քայլերը. Սերմ ջոկելը. Վաղ ցել. Այս բոլորը ծախք պահանջում է. Բազմադաշտյան ցանքս. Անասունների խնամքը, Կոոպերացիա. Ի՞նչ կտա մեզ գյուղական տնտեսության բարձրանալը. **Հարցեր. Առաջադրություններ։**

VII ՉՐՈՒՅՑ. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ-ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ . . . **78—97**

Ինչի՞ մասին է զրույցը. Գյուղի դարավոր ստրկությունը կալվածատերերին մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը. Ճորտատիրական իրավունքի ժամանակ կալվածատերերն ինչպես եյին շահագործում գյուղացիներին. Կոռ, բահրա. Գյուղացիական հուզումներ. Ինչո՞ւ վերացվեց ճորտատիրական իրավունքը. Ճորտատիրությունը Կովկասում. Ցարն ու կալվածատերերն ինչպիսի «ազատություն» տվեցին գյուղացիներին. Յետգնման վճարումներ. Կալվածատերերը շարունակում են ապրել գյուղացիների հաշվին. Սև կապալը. Դրսի աշխատանք. Գյուղական տնայնագործությունը։ Ո՞ւմ և ի՞նչ էր տալիս դա. Գյուղացին փաբրիկայում և գործարանում. Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում. Արևմտյան կապիտալը. Ապրանքառուի և կուլակի դերը. Ցարի իշխանությունն իբրև կալվածատերերի իշխանություն, դաշնակցած օտար կապիտալի հետ. Թե ինչպես անելանելի յեր գյուղացիության դրությունը կապիտալիզմի ժամանակ. **Հարցեր.**

VIII ՉՐՈՒՅՑ. ԳՅՈՒՂԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԸ **98-109**

Ինչի՞ մասին է զրույցը. Քաղաքի արդյունաբերությունն ի՞նչ էր տալիս գյուղին. Արդյունաբերության փլուզումը. Վերելքի սկիզբը. «Մկրատը» և ինչպես են մոտեցնում նրա ծայրերը. Ճի՞շտ է արդյոք, վոր թանգության մեղավորները բանվորներն են. Ապրանքի սով. Կոոպերացիայի թերությունները և ինչպես պետք է լինի կոոպերացիան. Տնայնագործական արդյունաբերությունը. Արտաքին առևտրի անհրաժեշտությունը գյուղատնտեսության համար Ի՞նչ եյինք ներմուծում մենք և ի՞նչ արտահանում. Ինչո՞ւ յե հարկավոր արտաքին առևտրի մենաշնորհը. Քաղաքի և գյուղի կապը (զոդումը), **Հարցեր.**

IX ՉՐՈՒՅՑ. 1905 ԹԻՎԸ **110 129**

Ինչի՞ մասին է զրույցը. Բանվորների գնդակահարումը 1905 թ. հունվարի 9-ին (22 ին). Լենինը արյունոտ կիրակվա նշանակության մասին. Բանվորների պայքարը։ Համառուսական գործադուլ. Բանվորների Պատգամավորների խորհուրդ. Զինված ապստամբությունը Մոսկվայում. Գյուղացիական շարժումներ 1905 թ. Անդրկովկասում. 1905 թվի հեղափոխության պարտության պատճառները։ 1905 թվի հեղափոխության դասերը. Մինիստր Ստոլիպինը և «պինդ (ունևոր) գյուղացիությունը». 1907—1911 թվի հանգստությունը (ռեակցիան). Նոր վերելք. **Հարցեր.**

X ՉՐՈՒՅՑ. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՌԻՎ ՅԵՎ ՄԻՆՉ-ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ . . . **130—146**

Ինչի՞ մասին է զրույցը. Ո՞վքեր եյին համաշխարհային պատերազմի իսկական հանցավորները. Կապիտալիզմի ժամանակ պատերազմներն ինչո՞ւ յեն անխուսափելի. Պատերազմից հետո խաղաղություն յեղա՞վ արդյոք. Բանվորների առաջնորդներն ինչ-

ղես դավաճանեցին բանվոր դասակարգին. Միայն բոլշևիկներն էին պայքարում պատերազմի դեմ. Ի՞նչ բերեց համաշխարհային պատերազմը. Պատերազմը միացրեց և զինեց բանվորներին ու գյուղացիներին ցարի իշխանության դեմ։ Փետրվարյան հեղափոխություն. Փետրվարյան հեղափոխությունից հետո ուժը բանվորներինն ու գյուղացիներինն էր, իսկ իշխանությունը բուրժուազիայի ձեռքին էր. Աջ սոցիալիստ մենշևիկներն ու էսերներն օգնում են բուրժուազիային՝ դիմադրելու բանվորներին ու գյուղացիներին պատերազմի, խաղաղության և հողի հարցը լուծելու գործում. Բոլշևիկների տակտիկան (գործելակերպը) բուրժուազիայի և աջ սոցիալիստների դեմ. Ժամանակավոր կառավարության տապալումը և իշխանությունը բանվոր դասակարգի ու նրա դաշնակից գյուղացիության ձեռքն անցնելը. Հոկտեմբերյան հեղափոխությունն Անդրկովկասում. Հարցեր.

XI ԶՐՈՒՅՑ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ . . 147—163

Հոկտեմբերյան հեղափոխությունը, դա կալվածատերերի ու կապիտալիստների դարավոր իշխանության, դարավոր ճնշման անկումն էր. Հողերի ազգայնացումը և գյուղացիներին հանձնելը. Ֆաբրիկաների, գործարանների և բանկերի ազգայնացումը. Ռուս. իշխանությունը դուրս է գալիս պատերազմողների միջից։ Բրեստի խաղաղությունը. Կալվածատերերի, կապիտալիստների և ցարի գեներալների սկսած քաղաքացիական կռիվը գյուղացիների և բանվորների դեմ. Քաղաքացիական պատերազմը և օտարերկրյա զորքերի խուժումը. Կարմիր բանակի ստեղծում Կոլչակի, Դենիկինի, Յուդենիչի, Վրանգելի բանակների ջախջախումը. Օտարերկրյա զորքերի դուրս քշելը. Լեհաստանի յելույթը և պատերազմ նրա դեմ. Վրանգելի ջախջախումը. Ռազմական կոմմունիզմ. Մենք ուրիշ յերկրների, մանավանդ Արևմտյան Յեվրոպայի պրոլետարիատի համակրությամբ ու աջակցությամբ հաղթեցինք. Ռ. Կ. Կ. և քաղաքացիական պատերազմը. Հարցեր.

XII ԶՐՈՒՅՑ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՅՈՒՂՈՒՄ . . . . . 164—176

Ինչի՞ մասին է զրույցը. Գյուղի բաժանումը (շերտավորումը) խմբերի, դասակարգերի մինչ հեղափոխությունը. 1917 թվի հեղափոխությունը. Չքավոր գյուղացիների կոմիտեներ (կոմբեդներ). Կուլակներն ինչպես են հարստանում չքավորների և միջակների հաշվին. Ում պետք է կուլակ համարել. Ինչու չի կարելի կուլակին «արգելել». Ի՞նչպես կարելի յե և պետք է պայքարել կուլակի դեմ. Յելքը կոոպերացիան է. Գյուղատնտեսական կոոպերացիայի զանազան տեսակները. Փոխադարձ օգնության կոմիտեներ. Հողանտառ միություն. Հարցեր.

ՀՀ Ազգային գրադարան
NL0188428